



Երևան
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն
2021



ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հ Ս Յ Ո Ւ Թ Յ Ս Ն

Ո Ւ

Հ Ս Յ Ս Ս Տ Ս Ն Ի



Հոգևոր ու աշխարհիկ

Հ 94(479.25):327
ԳՄԴ 63.3(5Հ)+66.4
Հ 390

**Կազմեց և հրատարակության պատրաստեց
Վարդան Գրիչենցը**

Վարդան Գրիչենց

Հ 390 Հարաբերություններ հայության ու Հայաստանի, Եր.,
«Գիտություն» հրատ., 2021, 302 էջ:

Ազգերի, երկրների միջև հարաբերությունները, միշտ էլ կարևոր լինելով յուրաքանչյուրի համար, մեզ՝ հայերիս ու Հայաստանի համար հատուկ կարևորություն ունեն: Եվ այդ գիտակցությամբ գրվել ու նաև տարբեր աղբյուրներից համապատասխան նյութեր հավաքելով՝ կազմվել է սույն գիրքը՝ նպատակաուղղված նպաստելու հայ ընթերցողի պատմական հիշողության թարմացմանը և հանրային ու պետական քաղաքականության ազգային ծրագրմանն ու կիրառմանը, և դա՝ հատկապես հայ-ռուսական հարաբերություններում:

ՀՏԴ 94(479.25):327
ԳՄԴ 63.3(5Հ)+66.4

ISBN 978-5-8080-1460-2

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2021

© Հայք հաստատություն, 2021

Խ Մ Բ Ա Գ Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Պատմությունը վկայում է, որ ազգերի, երկրների և պետությունների ունեցած ուժը բազմապատկվում է ճիշտ հարաբերություններով և մասնավորապես ճիշտ արտաքին քաղաքականությամբ, և հակառակը՝ որևէ երկրի ներքին կյանքում ունեցած որոշակի ձեռքբերումներն իսկ ի չիք են դառնում սխալ արտաքին քաղաքականության հետևանքով:

Վարդան Գրիչենցի ներկայացվող գիրքը նվիրված է հայության և Հայաստանի՝ արտաքին աշխարհի հետ ունեցած ազգային, միջպետական ու հոգևոր-մշակութային շփումներին և առնչություններին: Նաև այն հարցն է արծարծվում, թե տարբեր երկրների հարաբերություններում ինչ դեր ունեն կամ կարող են ունենալ նրանց պատմականորեն ձևավորված հարաբերությունները և հոգևոր-մշակութային ընդհանրությունները:

Միանգամայն փաստարկված ձևով այն միտքն է հայտնվում, որ Ռուսաստանն իր բազմակողմանի, հսկայական կարողությամբ ու ներուժով հայ ժողովրդի ավանդական դաշնակիցը լինելով հանդերձ՝ ներկայումս հայ-ռուսական ազգային և պետական հարաբերություններում մեծ չափով անտեսված է և բացակայում են երկու կողմերի հավատամքից բխող հոգեբարոյական, գաղափարական ու աշխարհայացքային ընդհանրությունները, որոնք ի զորու են հիմք հանդիսանալ, ամրապնդել ու մեծագույն արդյունավետությամբ առաջացնել, երկկողմանի ցանկալի՝ ուրույն, բազմակողմանի, հարատև ու օգտաշատ ավելի մեծ գործակցություն:

Այս նպատակին է ծառայում գրքի առաջին բաժինը (հատվածը), ուր բերված են կազմողի՝ Վարդան Գրիչենցի հոդվածներ, հայ-ռուսական հարաբերություններին նվիրված հատվածներ պատմաբաններ Ծ. Աղայանի և Զ. Գրիգորյանի գործերից, ինչպես նաև հատվածներ «Հայկական Սովետական

հանրագիտարանի» հատորներից և «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանից:

Նույն այս նպատակադրմամբ է ներկայացվում Մոսկվայում 1993թ. ռուսերեն տպագրված «Армянская диаспора юга России»՝ «Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքը» գրքի հայերեն թարգմանությունը:

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մոսկվայի ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Ա. Ե. Տեր-Սարկիսյանցի և Վ. Ս. Խուդավերդյանի աշխատասիրությամբ և մոսկվայաբնակ Է. Ս. Գեյվանդովի խմբագրությամբ տպագրված այս գործում մատնանշվում են մի քանի շատ կարևոր հանգամանքներ, այն է՝ հայ-ռուսական դարավոր հարաբերությունների մեջ հայության ազգային և Ռուսիո պետական շահագրգռվածությունը և հայ-ռուսական հարաբերություններին ադրբեջանական ապօրինի, խարդախ ու հանցագործ միջամտության փորձերի գործոնը, որը Ռուսաստանի ներսում, հատկապես Ռուսաստանի հարավում և Կովկասում, սկսել է առանձնապես արտահայտվել 1980-ական թվականների վերջերից:

Վերջինիս նպատակն էր Ռուսաստանում և հատկապես հայկական հոծ բնակչություն ունեցող Հարավային Ռուսաստանում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում վարկաբեկել հայությանը՝ փորձելով ներշնչել այն միտքը, թե իբր հայերը տարածքային ինքնիշխանության հավակնություններ ունեն այնտեղ և փորձում են տնտեսական գերիշխող դիրքի հասնել տեղի ռուս ու այլ ազգաբնակչությունների նկատմամբ:

Առաջիններից մեկը, եթե ոչ առաջինը, Վարդան Գրիչենցն էր, որ արտերկրից Երևան և Մոսկվա եռանկյունում իր մտահոգ հայացքով զգաց այս վտանգը և կազմակերպեց գիտական փաստարկված հակազդեցությունը: Շնորհիվ նրա ջանքերի ուսումնասիրվեց, գրվեց և Ռուսաստանի հարավում ու մասնավորապես Ռուսաստանի Դոմայում լայնորեն տարածվեց այդ խնդիրներին նվիրված գիրքը: Այն մեր կարծիքով ավելին է, քան ազգագրական, սոցիոլոգիական և վիճակա-

գրական ուսումնասիրությունը: Հետազոտությամբ ձեռք բերված դրա արդյունքներն իրենց հերթին վերլուծվում են որոշակի քաղաքագիտական առումով, առկա տվյալները դիտարկվում են հնարավոր հետագա զարգացման և հայ-ռուսական հարաբերություններում թողնելիք հնարավոր ազդեցության տեսանկյունից:

Գրքում նաև ցույց է տրվում, թե ինչպես են Բաքվում կեղծ թռուցիկներ, դիմումներ, հայտարարություններ, անգամ Հարավային Ռուսաստանի «հայկական ճակատ» կազմավորելու դրանք մեծ մասամբ տարածել Ռուստովի մարզում և Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերում՝ հայերի հանդեպ թշնամանք հրահրելու նպատակով:

1993թ. Մոսկվայում ռուսերեն տպագրված այս գիրքը ժամանակին զգալի արձագանք ունեցավ ու դեր կատարեց Բաքվի հակահայկական հույժ վտանգավոր խարդավանքների ժամանակին բացահայտման համար: Հաշվի առնելով վերջինիս արդիական հնչեղությունը, Ռուսաստանում հայերի մասին եղած պատմական տեղեկությունները, ինչպես նաև հայ-ռուսական այժմյան հարաբերություններին վերաբերող հարցադրումները՝ Վարդան Գրիչենցը սույն հատորում զետեղել է հիշյալ հրատարակության հայերեն թարգմանությունը:

Բերված գիտատեղեկատվական գրականությանը հաջորդում է Վարդան Գրիչենցի՝ առաջին այս բաժնին (հատվածին) նվիրված ամփոփ խոսքը, որում դարձյալ ընդգծվում է հայ-ռուսական հարաբերությունների փոխադարձ կարևորությունը, որում հայ-ռուսական հարաբերություններն ընդհանրացված ձևով այսպես են բնորոշվում. *«Հայ-ռուսական հարաբերություններն իրենց խորքում սովորական կոնյուկտուրային չեն եղել և չեն էլ կարող լինել, քանի որ դրանք էապես բնական են: Ե՛հ՛շտ է, որ դրանք հիմնված են աշխարհաքաղաքական իրականության վրա, սակայն ամենակարևորը՝ հիմնված են իրենց անանց արժեքներով շահերի վրա՝ սկսած երկու կողմերի հավատքից ու հոգեկերտվածքից»:*

Սույն գրքի կարևոր արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ հայ-ռուսական հարաբերությունները դիտարկում են ո՛չ միայն երկու ազգերին ու երկրներին վերաբերող առնչությունները, այլև լայն աշխարհաքաղաքական ընդգրկմամբ՝ ներառում են Մերձավոր ու Միջին Արևելքը:

Գրքի երկրորդ բաժնում (հատվածում) վերահրատարակվել են «Հայք» հաստատության առաջին երեք «Տեղեկագրերը», որոնք սկզբնապես լույս էին տեսել Լոս Անջելեսում 1990-1991թթ., մի շարք նյութեր «Տեղեկագրի» 6-րդ և 16-րդ համարներից, ինչպես նաև հատվածներ Վարդան Գրիչենցի «Հայացքներսից և դրսից» գրքից: Այս հրապարակումները ուղղակիորեն և անուղղակիորեն կապվում են գրքի բուն հարցադրման՝ Հայաստանի արտաքին հարաբերությունների և հատկապես հայ-ռուսական հարաբերությունների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ «Տեղեկագրի» յուրաքանչյուր համար ոչ միայն գրանցում է (ֆիքսում է) հայության տվյալ պահի առկա վիճակը և հիմնախնդիրները տվյալ համարի լույս ընծայման պահին, այլև դեպքերի սրընթաց զարգացման պայմաններում մատնանշում է ապագա գործողությունների համապատասխան ծրագրեր, առաջարկներ ու առաջ քաշում տեսական դրույթներ:

«Տեղեկագրի» համարների հրապարակումների նյութերում երևում է «Հայք» հաստատության՝ Բաբկեն Վարդանյանի գլխավորությամբ կատարած հետևողական աշխատանքը, ում ռիսկային, համառ ջանքերով 1962 թվականի ապրիլի 25-ին երևանում հիմնադրվեց «Հայք» գիտահետազոտական հաստատությանը նախորդող հայ ազգային գիտահետազոտական ինստիտուտը: Վերջինիս նպատակն էր նախապատրաստել հայությանն ու Հայաստանը ԽՍՀՄ-ի փլուզումին և դրա հետևանքով առաջանալիք ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական, հոգեբարոյական նոր միջավայրին ու միջազգային հարաբերություններին: Դրա համար, այդ նպատակով մեծ ու բավականին վտանգավոր ջանքերից հետո, 1978թ. նա մեկնեց Սփյուռք, ուր մաս կազմեց, լայն հարաբերություններ ստեղծեց

ու բավականին ակտիվ գործունեություն ունեցավ սփյուռքյան (և ոչ միայն սփյուռքյան) կյանքում: Հեղինակի մտահոգությունները, դրանցից բխող ծրագրերն ու առաջարկությունները մինչև 1980-ական թվականների վերջերը, ցավոք, Սփյուռքի դեկավար շրջանակները ոչ այնքան իրատեսական և գործնական գտնելով՝ նաև անկարելի էին համարում: Ենթադրվում էր, որ Սփյուռքը հայապահպանության և Հայ Դատի հետ կապված ընթացիկ առօրեական ավելի առաջնահերթ խնդիրներ ունի:

Տասնամյակների հեռավորությունից այժմ կարդալով «Տեղեկագրում», «Հայացք ներսից և դրսից» գրքում տեղ գտած հոդվածները, որոնք գրվել են 1970-ական թվականների վերջերից սկսած, խոր ցավ ես զգում՝ տեսնելով մեր կորսված հնարավորությունների ավանդական շղթան, որը գուցե և շարունակվում է մեր օրերում՝ ներկայումս:

Սույն գիրքը, որպես հավաքական հիշեցում, նաև ահազանգում է մինչև այժմ մեր բացթողումների, զգալի կորուստների մասին և միաժամանակ նշում է եղածը պահպանելու ու այն զարգացնելու, բարձրացնելու նպատակով հայության ու Հայաստանի անհրաժեշտ կարողության ստեղծումը՝ հատկապես վերականգնելով ու նորոգ ամրապնդելով Հայաստանի և Ռուսաստանի ազգային ու պետական, հոգևոր և աշխարհիկ հարատև հարաբերություններն ու գործակցությունը:

Վարդան Դերիկյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Կ Ա Ջ Մ Ո Ղ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Հարաբերություններ ունենալը շա՛տ լավ է,
բայց ո՞ւմ հետ և ինչպիսի՞ հարաբերություններ:

Կան հարաբերություններ՝ երկարատև ու կարճահոս, բարի և վտանգավոր, վերամբարձ ու անկունային, լուսատու և խավարաբեր, ինչպես նաև կենսատու ու կորստաբեր: Մի խոսքով՝ կան դրական և բացասական հարաբերություններ՝ դրական ու բացասական հետևանքներով: Ու թեև յուրաքանչյուր կողմ, բնականաբար, շահագրգռված է և ձգտում է դրական հարաբերություններ ունենալ, այնուամենայնիվ, միշտ չէ, որ հաջողվում է դա՝ խուսափելով բացասականներից, որոնք կարող են լինել մինչև իսկ հոգեկան ու նյութական արժեքների՝ հոգեկերտվածքի, հայրենի տարածքի, ազատության, ինքնիշխանության, բարեկեցության նույնիսկ անփոխարինելի, անդառնալի, անվերականգնելի կորուստներով:

Այս առումով մեր ազգը պատմական և ներկայիս շատ պայմաններում գտնվել է վերոնշյալ բացասական հարաբերությունների մեջ՝ դրանց բոլոր կորստաբեր հետևանքներով: Եվ դա հիմնականում այն պատճառով, որ շատ հաճախ ի վիճակի չի եղել ինքը որոշելու, ընտրելու իր հարաբերությունները, այլ ուրիշներն են իր հետ հարաբերություններ ստեղծել՝ իրենց ուզած ձևով, հաճախ վատագույն պայմաններով ու հետևանքներով, որոնք համեմատաբար շատ-շատ էին, և հիմա էլ՝ մեր օրերում, դրանք պակաս չեն:

Եվ այս իրողության մեջ, որ ակնառու և ուշագրավ է նաև այսօր, այնուամենայնիվ, հարց է առաջանում. այդ բազում բացասական հարաբերությունների մեջ արդյո՞ք դրականներ ևս չէ՞ին կարող լինել՝ եթե ոչ ամբողջովին, ապա գոնե 50-60%-ով

դրական: Եվ մի՞թե հիմա էլ այդպիսի հնարավորություններ չկան կամ չեն կարող լինել, եթե մենք հարկ եղած ողջամտությունը, կամքն ու հմտությունը ցուցաբերենք՝ ստեղծելու և կամ ինչ-որ տեղ պահպանելու այնպիսի՝ մակարդակի հարաբերություններ, որոնք իրենց էությանը լինելով դրական՝ նաև նուրբ են, բեկվող և դժվարվերականգնելի...

Ու ահա այս ու նման խոհերը առիթ դարձան զգալու, մտածելու մեր հարաբերությունների վերատեսության անհրաժեշտության մասին, թե ո՛ւմ հետ ինչպիսի՞ն են դրանք ու ինչպիսի՞ն է դրանց դրական ու բացասական «հաշվեկշիռը»։ Ում հետ ենք և ո՛ւմ հետ չենք, ի՞նչ չափով ենք ու ի՞նչ ձևով։ Ով է ջանում լինել մեզ հետ և ով՝ ո՛չ, այլ վանում է մեզ կամ խուսանավում, շեղվում, հեռանում է մեզանից։ Եվ այդ տեսանկյունից ինչպիսի՞ն են նրանց հետ մեր հարաբերությունների վարքագրության անցյալն ու ներկան։

Բոլոր «տետրակները» բացելու ժամանակն ու հնարավորությունը չունենալով՝ հարկ զգացինք սեղմ ժամանակում գործածել եղածը՝ ճանաչելու կամ վերաճանաչելու իրականությունը և գուցե խելամիտ եզրակացությունների հանգելով՝ ջանանք գտնել, որոշել մեզ համար առավել դրական հարաբերությունները։

Եվ դրա համար «տարբեր կողմեր շրջելով»՝ հանդիպեցինք հեռավոր, սակայն և շա՛տ մերձավոր բարեկամի՝ ռուս ժողովրդին, Ռո՛ւսիային և ռուս պետությանը՝ անկախ վերջինիս ինչպիսի՞ն լինելուց՝ «կարմի՞ր, թե՞ սպիտակ» («դաշնա՞կ, թե՞ հնչակ»)։

* * *

Ժողովածուի տեսք ստացած սույն գիրքը նշված հարցերի վերաբերյալ ներկայացնում է հողվածներ, աշխատություններ, որոնցում վկայությունները, գնահատականները և հուշերը, լինելով հիմնականում պատմական բնույթի, կարող են նպաստել ընթերցողների պատմական հիշողության թարմացմանը և

մասնավորապես՝ հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ ստեղծել մի օգտաշատ առիթ՝ մտածելու, ավելի լավ պատկերացնելու, թե ո՞ւր ենք գտնվում, ո՞ւր ենք գնում, արդյո՞ք ճիշտ ենք գնում, նաև կողմնորոշվելու, թե ո՞ր ուղղությամբ, ո՞ւր պետք է գնանք՝ լավ մտածված անկեղծ որոշմամբ ու հաստատական ընթացքով։

Վարդան Գրիչենց

Հ Ա Տ Վ Ա Ծ

Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Այս նյութերի շուրջ մեր անդրադարձի համար, որպես նշանաբան, տեղին համարեցինք վկայակոչել հայ-ռուսական դարավոր հարաբերությունների էությունը խորհրդանշող՝ պատմական նշանակությամբ հետևյալ իրողությունները:

- Հայ ժողովրդի ու Հայաստանի և ռուս ժողովրդի ու Ռուսիո հարաբերությունները, երբ իսկական են, այսինքն՝ իրենց բնածին Աստվածային հատկությամբ են, այդ դեպքում այդ հարաբերությունները *բնական* են լինում՝ զերծ ամենայն *միակողմանիությունից, եսակենտրոնությունից ու շահադիտությունից*:
- Հայերը Ռուսիո հարավի ու առնվազն հարավկովկասյան ուղղությամբ նրա ազգային-պետական շահերի պաշտպանության, ամրապնդման ու տարածման «կազակներն» են, և Հայաստանը Ռուսիո հարավի ու առնվազն Հարավային Կովկասի ամրոցն է (թեև որոշ հայեր ու ռուսներ, չհաշված ուրիշներին, դժվարացել ու դժվարանում են ընկալել այդ իրողությունը և դրա իմաստն ու կարևորությունը): Իսկ Ռուսիան էլ հայության և Հայաստանի նախանձախնդիր ընդհանուր պաշտպանն է:
- Հայ և ռուս ժողովուրդներն ունեն հիմնական ընդհանրություններ, որոնցից են հավատքը, նվիրումը, քաջությունը, հերոսությունը և նրանց հարաբերություններին բնորոշ նարդասիրությունը՝ ակունք կողմերի կենսականության ավելացման: Հայ-ռուսական դարավոր և հատկապես ներկա հարաբերությունները եզակի են ժողովուրդների հարաբերություններում՝ մանավանդ հաշվի

առնելով այն խիստ տարբերությունը, որ առկա է Հայաստանի և Ռուսիո համընդհանուր հնարավորություններում, կարողություններում, միջոցներում:

Հայերն ու Հայաստանը, ռուսներն ու Ռուսաստանը ինչքան ճիշտ և շուտ հասկանան վերոնշյալ իրողություններն ու իրենց Աստվածաստեղծ լինելությամբ՝ իրենց ով լինելը, այնքան լավ՝ երկու կողմերի համար էլ, իսկ ինչքան սխալ և ուշ՝ այնքան վատ՝ նույնպես երկու կողմերի համար:

Սակայն կարևոր հարց. երկու կողմերն իրենց պատմական հարաբերություններում արդյո՞ք վերոնշյալը միշտ ճիշտ, ժամանակին ու հավասարապես են ընկալել, ըմբռնել, հասկացել ու ըստ այնմ վերաբերվել. և արդյո՞ք այժմ էլ այդպես է, ու ըստ այնմ ճշտվո՞ւմ են նրանց ներկա ու հեռագնա հարաբերությունները: Որովհետև եթե դա այդպես չէ՛, այդպես չի՛ արվում, ապա շատ բան է խախտվում, որից խուսափելը էական է իրենց համար:

* * *

Ռուսիո և Հայաստանի ներկայիս հատուկ սերտ հարաբերությունները, այժմ հիմնականում լինելով պետական, երկու պետությունների միջոցով են կիրառվում (համապատասխան քաղաքականությամբ ու ըստ այնմ՝ վերաբերմունքով, կեցվածքով, արարքներով ու տարբեր բնագավառների գործակցությամբ), սակայն բացի դրանից հայ-ռուսական հարաբերություններում *էական նշանակություն* ունեն գոնե երկու այլ բնագավառներ, *որոնք, դժբախտաբար, մինչև այժմ մեծապես անտեսված են.*

- առաջին՝ *հանրային դիվանագիտության ու պատմական փոխադարձ ծանաչման և մշակութային հարաբերությունների ավելի սերտացման բնագավառը,*

- երկրորդ՝ ամենակարևորը՝ *հայ-ռուսական հոգևոր ու ըստ այնմ՝ գաղափարաբարոյական բնագավառը:*

Եվ այդ բնագավառներն առավելապես կարոյունավորվեն դրանցում առօրյա ինտենսիվ կենսագործունեությամբ՝ մասնավորապես երկու կողմերի *կրիտիկական, այն է՝ հավատքին և ըստ այնմ՝ ազգային ու համամարդկային գաղափարներին և բարոյական արժեքներին հավատարիմ զանգվածների* համախորհուրդ, եղբայրական ծրագրերի և ջանքերի միջոցով:

Վարդան Գրիչենց

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր,

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

հայ-ռուսական հարաբերությունների

մասին

(տարբեր աղբյուրներից)

**«ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՃԱԿԱՏԱԳՐԵՐՈՒՄ»**

ԾԱՏՈՒՐ ԱՂԱՅԱՆ

Հայ-ռուսական հարաբերությունների *առաջին շրջանը* սկսվեց Կիևյան Ռուսիայում և տևեց մինչև 16-րդ դարը:

Երկրորդ շրջանը ներառում է 16-րդ և 17-րդ դարերը, որը համընկնում է Ռուսաստանի արևելյան և հարավային քաղաքականության ակտիվացման հետ: Այդ ընթացքում հայ-ռուսական տնտեսական և քաղաքական կապերն ընդունեցին ավելի կազմակերպված բնույթ, որոնցում հատկապես նշմարելի էր հայկական Սփյուռքի, մասնավորապես՝ Պարսկաստանի, Լեհաստանի, Ուկրաինայի, Ղրիմի և Ռուսաստանի հայերի գործնական մասնակցությունը: Այդ ժամանակաշրջանում մասնավորապես հզորացան առևտրական և մշակութային կապերը: Իսկ հայ վաճառականական խավը դարձավ հայության մեջ ռուսական կողմնորոշման ռահվիրան՝ ներկայացնելով Ռուսաստանը որպես հզոր պետություն, որը կարող է նպաստել հայ ժողովրդի ազատագրմանը:

Երրորդ շրջանում՝ 17-րդ դարի կեսերից մինչև 18-րդ դարի կեսը, ռուսական կողմնորոշումը դարձավ հայ ժողովրդի համոզմունքը, իսկ 18-րդ դարի սկզբին այն ձևավորվեց որպես հայության որդեգրած քաղաքականություն:

Այդ ընթացքում հայ-ռուսական համագործակցության առաջին պլան մղվեց ընդհանուր պայքարում ռազմաքաղաքական համագործակցությունը, որը թելադրվում էր երկու կողմերի փոխադարձ շահերից, այսինքն՝ ռուսական կառավարության արևելյան քաղաքականության և հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շահերից: Այդ պայքարի բովում

թրծվեցին մի շարք հայ անվանի գործիչներ՝ Իսրայել Օրի, Մի-
նաս Վարդապետ, Իվան Կարապետ, Դավիթ-Բեկ...

Հայ-ռուսական հարաբերությունների և համագործակցու-
թյան բարձրակետը հանդիսացավ Արցախի և Սյունիքի հայերի
ազատագրական պայքարը 18-րդ դարի 20-ական թվականնե-
րին: Սակայն Ռուսաստանի օգնության մասին հայերի հույսը
չարդարացավ մի շարք պատճառներով: Այդ պատճառները,
ըստ երևույթին, առաջանում էին ռուսական շահերի պաշտ-
պանության միակողմանիությամբ և հայության կողմից այդ
միակողմանիությունը փոխելու լծակների չգոյությունը:

*(Կազմողի կողմից. Այս առիթով, հավանաբար, ավելորդ
չի լինի նաև հարցադրել. իսկ այժմ հայությունն արդյոք ստեղ-
ծել է, ունի՞ այդպիսի լծակներ: Եվ եթե չունի, ապա նպատա-
կադրված է և աշխատող է ստեղծել դրանք: Եթե այո՝ ո՞ր է
փաստը, եթե ոչ՝ ինչո՞ւ է այդպես: Եվ ի՞նչ պետք է անել, ու
ովքե՞ր են պարտավոր անել, որպեսզի ստեղծվեն այդ լծակնե-
րը: Եվ ո՞չ միայն Ռուսաստանի հետ հարաբերությունների ներ-
դաշնակության, կենսունակության, հավասարակշռության հա-
մար՝ հօգուտ երկու կողմերի, այլ նաև ուրիշ երկրների հետ
այդպիսի՝ հարաբերությունների կայացման, բնականոնացման
համար:*

*Առանձին նշենք, որ մինչ հայության և Հայաստանի՝ այդ-
պիսի լծակների ստեղծումը, կարելի է և պետք է ստեղծել «փո-
խարհնող» լծակներ: Եվ դա կարելի է՝ կիրառելով ազգային
ուրույն սկզբունքներ և ուրույն միջոցներ... Կարևորը դրա հա-
մար գիտակցություն, լուրջ ցանկություն, հետևողականություն
և կամք ու հմտություն ցուցաբերելն է):*

Չորրորդ շրջանը 18-րդ դարի կեսերից մինչև 1828 թվա-
կանն է՝ մինչև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումը:

Այդ ժամանակաշրջանը նշանավորվեց հայ-ռուսական
քաղաքական և տնտեսական հարաբերությունների հեռանկա-
րային ակտիվացմամբ, որում նկատելի դերակատարություն
ունեցան Ռուսաստանում ապրող հայերը: Մշակվում էին Ռու-
սաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման և Ռուսաս-

տանի հովանավորությունը վայելող անկախ Հայաստանի
ստեղծման գործնական ծրագրեր:

Հինգերորդ շրջանը վերաբերում է Արևելյան Հայաստանի
հայերի օրինակից քաջալերված արևմտահայությանը, որը
հատկապես 19-րդ դարի վերջին զորեղ միտում դրսևորեց Ռու-
սաստանի օգնությամբ ազատագրվելու սուլթանական Թուր-
քիայի կեղեքումից՝ եթե ոչ անկախացմամբ, ապա գոնե ներքին
բարեփոխումների միջոցով: Իսկ Ռուսաստանի նպատակը
Արևմտահայաստանի զավթումն էր, որն աջակցություն էր
գտնում արևմտահայերի մեծամասնության կողմից, սակայն
բախվում էր արևմտյան երկրների շահերին և խոչընդոտվում
նրանց կողմից:

Օգտվելով եվրոպական երկրների միջև եղած հակասու-
թյուններից՝ երիտթուրքերի կառավարությունը 1915 թվին ձեռ-
նարկեց Աբդուլ Համիդի՝ 19-րդ դարի 90-ական թվականներից
սկսած հայերի զանգվածային կոտորածները ցեղասպանու-
թյան վերածելու իր ոճրագործությունը:

**«ՀԱՅ ԵՎ ՌՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ»**

ՁԱՎԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայերի և ռուսների միջև բանակցություններն սկսվում են Պյոտր Առաջինի օրոք: Պյոտրի հետ բանակցություններ են սկսում Ղարաբաղի հայ մելիքները, որոնց անվանի ներկայացուցիչն էր Իսրայել Օրին: Իսրայել Օրու միջոցով Ղարաբաղի հայերը Պյոտր Առաջինից խնդրում էին օգնել հայերին՝ թոթափելու պարսից լուծը: Իսրայել Օրին համոզում էր նրան, որ բավական է ռուսները հայերին օգնեն 25 հազար զինվորով, որ հայերը միացած վրացիների հետ՝ դուրս մղեն Անդրկովկասից պարսիկներին...

Պյոտր Առաջինը նույնիսկ 1724 թվի նոյեմբերի 10-ին հատուկ հրովարտակ հրապարակեց, որով խոստացավ հայերին տեղ տալ իր նոր գրաված Մերձկասպյան շրջաններում՝ Թերեք և Սուլաք գետերի ափերին...

Հայ-ռուսական հարաբերություններն իրենց նոր զարգացումն ապրեցին Եկատերինա 2-րդի թագավորության շրջանում, և ռուսական թագուհին իր նվաճումների ծրագրում որոշակիորեն դրեց նաև Անդրկովկասի հարցը...

Անդրկովկասի ռազմաստրատեգիական նշանակությունը ցարիզմի համար մեծ էր նաև այն տեսակետից, որ Անդրկովկասն իրեն միացնելով՝ Ռուսաստանը մեկընդմիջտ ապահովվում էր կովկասյան լեռնականների հարձակումներից...

Եկատերինան մեծ հետևողականությամբ նախապատրաստվում էր Ռուսաստանին միացնել Ղրիմը և ամրացնել Սև ծովի ափերը, այդ նպատակով նա իր առաջ խնդիր դրեց Ղրիմից գաղթեցնել հայերին դեպի Դոն և այնտեղ հիմնել հատուկ հայկական գաղութ...

Ոչ միայն Հովսեփ Էմինն էր իր համակրանքով հակվում դեպի Ռուսաստան. Եկատերինա 2-րդը և նրա պալատականները իրենց հերթին հանձին Էմինի տեսնում էին մի գործունյա և հեղինակավոր անձնավորություն, որին կարող էին օգտագործել Անդրկովկասում ամրանալու համար...

Ռուս-թուրքական երկրորդ պատերազմն սկսելուն պես (1787թ.) իշխան Գր. Պոտյոմկինի հետ ճակատ է մեկնում նաև արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, որը պատերազմի ամբողջ ընթացքում իշխան Գր. Պոտյոմկինի ամենավստահելի խորհրդատուներից մեկն էր...

Հայերի կողմից Կովկասյան կորպուսի զորամասերին ցույց տրված ռազմական օգնությունն այնքան ծավալուն բնույթ ստացավ, որ նրա մեջ ներգրավվեցին հասարակական գրեթե բոլոր խավերն ու նախ և առաջ ժողովրդական-աշխատավորական մասսաները: Թշնամու դեմ զենքի դիմեցին երիտասարդները և ծերերը, տղամարդիկ և կանայք: Հայ աղջիկների ու կանանց ջերմ հայրենասիրությունը, որը հաճախ նրանց մղել է թշնամու դեմ զինված պայքարի՝ հանուն իրենց հայրենիքի ազատության, դարերի ընթացքում խոր արմատներ էր գցել, բուռն կերպով պոռթկաց ռուս-պարսկական երկրորդ պատերազմի առաջին օրերից: Շիրակում ու Փամբակում, Ջանգեզուրում ու Ղարաբաղում իրենց հայրերի, եղբայրների ու ամուսինների հետ կողք կողքի թշնամու դեմ անձնագոհ կերպով կռվում էին նաև շատ աղջիկներ ու կանայք: Դրանցից էին՝ Լոռի-Փամբակում լեգենդար հերոսուհու անուն հանած հայ գեղջկուհի Մանուշակը, Ղարաբաղում՝ Հաթային և ուրիշներ:

«ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդային Միության կազմաքանդման սկզբին՝ 1990-ական թվականներին, Ռուսաստանի հարավի զգալի թվով հայ ազգաբնակչության նկատմամբ առաջացած հակառակությունները նկատի ունենալով՝ ՀԱՅՔ հաստատությունը նախաձեռնեց «Армянская диаспора юга России» աշխատության հրատարակումը և բավականին լայն տարածումը՝ հատկապես Ռուսաստանի հարավում և Պետդումայում:

Նպատակը Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերի և Ռոստովի մարզի հայ բնակչության հանդեպ հատկապես կազակների և տեղական իշխանությունների դեպի անբարյաղակամ փոխվող վերաբերմունքը կասեցնելն էր:

Այդ աշխատությունում (որի մասնակի կրճատումներով թարգմանությունը ներառված է այս հատորում) եզրակացվում է, որ թեև այդ վերաբերմունքն առանց մութ կողմերի, մութ նպատակներից բխող սադրանքների չէր լինում, բայց այն ուներ նաև տգիտության մեծ բաժին, և չէր գիտակցվում, որ հայերը առաջին բնակիչներն էին այդ տարածքներում: Եվ հայերի բնակեցումն այդ վայրերում կատարվել է ռուսական պետական հաշվարկներով, նպատակներով և ռուսական պետության ղեկավարության կողմից ամենաբարձր նակարդակով՝ ի շահ, մասնավորապես, պետության հարավի տնտեսական զարգացման, տարածքային ընդարձակման և ամրապնդման: Այսինքն՝ հայերի այնտեղ լինելը եղել է պետական ծրագիր՝ երկրի բարօրության համար: Եվ, մեղմ ասած, անհեթեթ կլիներ, որ իրենց հայրենասեր համարող ռուս մարդիկ այսօր առնվազն բացասաբար, էլ չասած՝ թշնամաբար վերաբերվեին այդ պետական ու պատմական կարևորության ծրագրի հիմնական կատարողների՝ հայերի սերունդների ներկայությանը...

Եվ այդ ըմբռնումից ելնելով, չեզոքացնելու համար հակառակորդներին և լուսաբանելու համար տգետներին՝ ՀԱՅՔ հաստատությունը նպատակադրվեց լույս ընծայել բարձր մակարդակի մի աշխատություն ու լայնորեն տարածել Ռուսաստանի հատկապես շահագրգիռ շրջանակներում:

Եվ այդ գործը կատարվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի շնորհալի մասնագետ ու հայրենասեր երկու հայ ավագ գիտաշխատողների՝ Ա. Է. Տեր-Սարկիսյանցի ու Վ. Ց. Խուրավերդյանի գիտահետազոտական բժախնդիր աշխատանքների, ՀԱՅՔ հաստատության մուսկովյան մասնաճյուղի ղեկավար Է. Ա. Գեյվանդովի կազմակերպական ու խմբագրական ջանքերի, ինչպես նաև հասարակական կարգավիճակով ուրիշ ցվիրյալների միջոցով:

**«ՀԱՅՔ» ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅՔ Հաստատության
մոսկովյան մասնաճյուղ

Ա. Ե. Տեր-Սարկիսյանց
Վ. Ց. Խուդավերդյան

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ**

ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
(Է. Ա. Գեյվանդովի խմբագրությամբ)

ENGEL
Մոսկվա, 1993

Ա. Ե. Տեր-Սարկիսյանց, Վ. Ց. Խուդավերդյան, Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքը. – Մ. ENGEL, 1993, 56 էջ
ISBN 5-231-00068-X

Գրքում տրված է Ռուսաստանի հարավի հայերի էթնոփոլորդագրական բնութագիրը: Հատուկ ուշադրություն է դարձվել տարածաշրջանում ստեղծված էթնոքաղաքական համապատկերին, նրա այժմյան դրությամբ: Գիրքը նախատեսված է էթնոսոցիոլոգների, փոլորդագիրների, քաղաքագետների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ու հատկապես Ռուսիայում ապրող հայության խնդիրներով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ЛР № 062012

6Ж8(03)-93

Համակարգչային էջադրումը Ռ. Ա. Հարությունյանի

ISBN 5-231-00068-X

© ՀԱՅՔ, 1993

Չեղինականների կողմից

Ռուսաստանի հարավի հայերի դրության և խնդիրների ուսումնասիրումն առավել քան արդիական է, քանի որ Ռուսաստանի հայկական սփյուռքի հիմնական մասը կոմպակտ կերպով բնակվում է հատկապես այնտեղ: Թեմայի ուսումնասիրությունն արդիական է նրանով, որ հատկապես Ռուսաստանի հարավը (այսինքն՝ հայերի կոմպակտ բնակության շրջանները) մեր օրերում հանդիսանում է ամենամահանգիստը: Եվ խնդիրն այստեղ ամենևին էլ միայն կազակական միջավայրում ընթացող գործընթացները չեն (կոնֆլիկտները կազակների և հայերի միջև), ինչպես հաճախ ներկայացվում է:

Այս աշխատության նպատակն է վերլուծել հայերի ներկայիս դրությունն այս տարածաշրջանում և փորձել բացահայտել ազգամիջյան հարաբերություններում առկա լարվածության պատճառները: Մասնավորապես մենք ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ ազգամիջյան արյունալի բախումների հիմնական մոտիվներից մեկը հաճախ որոշ ուժերի ձգտումն է էթնոժողովրդագրական իրադրության բռնի փոփոխության միջոցով ստեղծելու մոնոէթնիկ պետություն:

Նման ձգտումները, ում կողմից էլ որ հանդես բերվեն և որտեղ էլ դրսևորվեն, անխուսափելիորեն հանգեցնելու են ազգամիջյան բախումների, և Ռուսաստանի հարավն այս առումով բացառություն չէ:

Ազգային միատարրության խնդիրը վերլուծելիս պարզ երևում է, որ հայերն ավելի ցրված են, քան նախկին ԽՍՀՄ-ի որևէ այլ «տիտղոսակիր ազգ», այսինքն՝ առավել են ենթակա իրենց իրավունքների ոտնահարման:

Չէ՞ որ անօրինականությունը (որի տարածվածության աստիճանը նախկին ԽՍՀՄ տարածքում քաջ հայտնի է) առաջին հերթին սպառնում է ազգային փոքրամասնություններին:

Աշխատանքում քննարկվում են ճակատագրի բերումով հավերժ փախստական, ներգաղթյալ դարձած և հարկադրաբար տեղահանված հայկական ազգային փոքրամասնության գոյատևման որոշ ուղիներ: Միաժամանակ, առաջարկվում են մի քանի խորհուրդներ, որոնք կարող են օգտագործվել նաև այս կամ այն ազգամիջյան խնդրի քննարկման ընթացքում: Ուսումնասիրության հանգամանք: Որոշ հետևություններ ու առաջարկներ հավանաբար արդար են ոչ միայն հայկական սփյուռքի, այլև այլ ժողովուրդների, էթնիկ խմբերի համար, որոնք նույնպես մեծ սփյուռք ունեն: Խոսքը հիմնականում վերաբերվում է ռուսներին, թաթարներին, ուկրաինացիներին, գերմանացիներին, կորեացիներին, տաջիկներին, մորդովիներին և ուրիշներին: Չե-տևաբար այս աշխատանքն անդրադառնում է ինչ-որ առումով տիպական խնդիրների:

1. ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայերը Ռուսաստանի հարավում բնակություն են հաստատել պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Այսպես, ներկայիս Ռոստովի մարզի տարածքում հայերը կոմպակտ կերպով բնակություն են հաստատել 1779 թվականին, երբ Եկատերինա II կայսրուհու հրովարտակով կազմակերպվեց Ղրիմի խանության քրիստոնյա բնակչության հիմնականում հույների (18407 մարդ) և հայերի (12598 մարդ) զանգվածային վերաբնակեցում: Դրա նպատակը ոչ միայն Ղրիմի խանության թուլացումն էր (1783 թվականին խանության հողերը ներառվեցին Ռուսական կայսրության կազմում), այլև հարավուսական տափաստանների բնակեցումը հողագործության, առևտրի և արհեստների ասպարեզներում փորձառություն ունեցող մարդկանցով: Մեկուկես տարի ձգված և բազմաթիվ մարդկա-

յին կյանքեր խլած տանջալից երթից հետո՝ 1779 թվականի վերջին, հայ վերաբնակները, Ա. Վ. Սուվորովի ղեկավարությամբ, հասան Դոնի ստորին ավազան (դժվարին այդ երթը վերապրեց 9050 մարդ), ուր նրանց կայսերական պարգևագրով Սուրբ Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մերձակայքում հատկացվեց 86 հազար դեսյատին հողատարածություն և թույլատրվեց հիմնել մեկ քաղաք ու հինգ գյուղ: Նույն պարգևագրով վերաբնակներին տրամադրվեցին մի շարք արտոնություններ և առանձնաշնորհումներ, մասնավորապես՝ նրանք տասը տարով ազատվեցին պետական հարկերից, զինապարտությունից՝ հարյուր տարով, թույլատրվեց կառուցել եկեղեցիներ և եկեղեցական ծեսերը կատարել սեփական օրենքներով ու ավանդույթներով, պետության ներսում և դրսում զբաղվել ազատ առևտրով: Հայերն իրավունք ստացան սեփական ուժերով կառուցել ֆաբրիկաներ, գործարաններ, առևտրական ծովային նավեր [1]:

12,6 հազար վերաբնակների գերակշիռ մեծամասնությունը՝ 11,4 հազարը, նախկինում ապրել էին Ղրիմի քաղաքներում՝ Կաֆայում (Թեոդոսիա), Կեդլովում (Եվպատորիա), Բախչիսարայում, Ղարասուբազարում (Բելոգորսկ), Ակմեչետում (Սիմֆերոպոլ) և այլուր: Դոնի ափին նրանց հիմնած քաղաքը ստացավ Նոր Նախիջևան անունը, որը հետո վերանվանվեց Դոնի Նախիջևան: Իսկ 1,2 հազար գյուղացի վերաբնակները քաղաքի մերձակայքում հիմնեցին հինգ գյուղեր՝ Չալդրըրը, Ղրիմը, Մեծ Սալան, Սուլթան Սալան և Նեսվետայը:

Գաղութը հնարավորություն ստացավ ինքնուրույն լուծել իր ներքին խնդիրները: Բոլորին ղեկավարում էր քաղաքագլուխը՝ մագիստրատի միջոցով: Իսկ գյուղերում իշխանությունը պատկանում էր հողևտնտեսությանն ու ընտրովի ավագանիներին, որոնք ենթարկվում էին մագիստրատին: Գաղութն ուներ սեփական զինանշան, կնիք և դատարան: Գաղութի տարածքում գործավարության լեզուն հայերենն էր:

Քաղաքում արագորեն զարգանում էին արդյունաբերությունն ու առևտուրը, աճում էր դպրոցների թիվը, բացվեց գա-

վառական ուսումնարան: Նորակառույց Սուրբ Խաչ վանքում 1790 թվականին բացվեց Ռուսաստանի հարավում առաջին տպարանը, ինչպես նաև հիմնվեց դպրոց-պանսիոնատ՝ չքավոր հայերի երեխաների համար: Ավելի ուշ քաղաքում սկսեցին գործել իգական և արական գիմնազիաները, ևս մի քանի դպրոց, ազնվական օրիորդաց ուսումնարանը, որը հետագայում վերակազմավորվեց սեմինարիայի, աղքատ հայերի խնամակալության միությունը, հիմնվեց թանգարան, կառուցվեցին քաղաքային զբոսայգիներ և ջրմուղ:

Այսպիսով, հիմնադրումից կարճ ժամանակ անց Դոնի Նախիջևանը դարձավ Ռուսաստանի հարավի կարևորագույն մշակութային և տնտեսական կենտրոններից մեկը: Ավելի ուշ՝ Ռոստովի տնտեսական հզորացմանը զուգընթաց, հայ առավել ազդեցիկ արդյունաբերողներն ու վաճառականներն սկսեցին տեղափոխվել այնտեղ: Ռոստովն ու Նախիջևանն աստիճանաբար կազմավորվելով միաձուլվեցին՝ դառնալով խոշոր արդյունաբերական ու մշակութային կենտրոն, իսկ 1928 թվականի դեկտեմբերին ԽՍՀՄ համամիութենական կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությանն առընթեր Վարչական հանձնաժողովի որոշմամբ՝ Դոնի Նախիջևանը միացվեց Դոնի Ռոստովին, իսկ հետո վերանվանվեց վերջինիս Պրոլետարական շրջան [2]: Այդ ժամանակներից էլ քաղաքի պատմական անունն այլևս չի հիշատակվում:

1930-ական թվականներին սկիզբ առած զանգվածային բռնությունների արդյունքում մեծապես տուժեց տեղի մտավորականությունը, սկսեցին ոչնչացվել նաև պատմաճարտարապետական հուշարձանները և մասնավորապես՝ պաշտամունքային կառույցները: Ուղղափառ եկեղեցիների, մզկիթի և սինագոգի հետ միասին ավերվեցին քաղաքի յոթ հայկական տաճարներից վեցը: Աստիճանաբար նվազեց հայկական ուսումնական հաստատությունների թիվը (մինչ պատերազմն այդպիսիք 15-ն էին, այդ թվում նաև Հայկական մանկավարժական տեխնիկումը), դադարեց գործել հայկական թատրոնը, և քա-

դաքն սկսեց կորցնել այս տարածաշրջանում հայկական մշակութի կարևոր օջախի իր դերը [3]:

Հայ վերաբնակների կողմից 1779 թվականին հինգ գյուղերի հիմնումից հետո և ողջ XIX դարի ընթացքում նրանց բնակչությունն ավելի քան ութ անգամ աճեց (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

Հայկական գյուղերի բնակչության աճի դինամիկան (մարդ)¹

Գյուղը	Տարեթվեր			
	1793	1835	1850	1900
Չալդըր	405	1375	1744	5904
Ղրիմ	372	1289	1715	4766
Մեծ Սալա	262	695	949	3155
Սուլթան Սալա	248	397	472	1163
Նեսվետայ	254	341	413	1118
Ընդամենը	1541	4097	5399	13106

1920-ական թվականներին Ղրիմ և Չալդըր գյուղից դուրս եկածները՝ որպես աշխատանքային կոմունացներ, կազմավորեցին երեք նոր գյուղեր՝ Լենինականը, Կռասնիյ Ղրիմը և Լենինավանը: 1926 թվականի սկզբին բնակչության ցանկությամբ

¹ Կազմված է ըստ 1793-1850թթ. տվյալների (ավելի վաղ տվյալների չենք տիրապետում), ըստ Ղրիմ գյուղի երկրագիտական ժողովրդական պատմության թանգարանի, 1900 թվականի տվյալները՝ Ե. Շահագիզ, Նոր Նախիջևանը և նախիջևանցիները, պատմական ակնարկ, Ազգագրական հանդես, 1903, Թիֆլիս (հայերեն լեզվով): Ռուսերեն թարգմանությունը՝ Շ. Մ. Շահինյանի, էջ 119: Թարգմանության բնագիրը պահպանվում է նրա այրու՝ Օ. Մ. Շահինյանի մոտ՝ Ռոստովի մարզի Մյասնիկովսկի շրջանի Չալդըր գյուղում:

բոլոր հայկական գյուղերը դուրս բերվեցին Ռոստովի մարզի Ակսայսկի շրջանի կազմից և ձևավորեցին առանձին Հայկական ազգային շրջան, որը 1928 թվականին ստացավ Մյասնիկովսկի անվանումը (ականավոր պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի անունով, ով ծնունդով այդ կողմերից էր): Սկզբում շրջկենտրոնը Ղրիմ գյուղն էր, հետո՝ Չալդըրը:

Շրջանի բոլոր գյուղերն այդ ժամանակ ունեին հայոց լեզվով ուսուցմամբ դպրոցներ, իսկ հին գյուղերում պահպանվել էին եկեղեցիները, որտեղ մինչ հեղափոխությունը գործում էին ծխական դպրոցներ: 1920-ական թվականների վերջերից շրջանում սկսեց լույս տեսնել (սկզբում ոչ պարբերաբար) հայալեզու «Կոմունար» թերթը, որի կանոնավոր լույսընծայումն սկսվեց 1931 թվականին՝ շաբաթական երկու անգամ, բայց արդեն երկլեզվյա՝ հայերեն և ռուսերեն տարբերակով (հայոց լեզվով՝ յուրաքանչյուր համարի մինչև 30%-ը): 1950-ական թվականների սկզբից դպրոցներում սկսեցին գործել զուգահեռ՝ հայոց և ռուսաց լեզուներով ուսուցմամբ դասարաններ, ուր ընդունելությունը կատարվում էր ծնողների ցանկությամբ: Սակայն հայկական կրթություն ստացած երեխաները ռուսաց լեզվի թույլ իմացության պատճառով զրեթե ոչ մի հնարավորություն չունեին ընդունվելու Ռոստովի բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչի հետևանքով տեղի հայերը դարձան ռուսաց լեզվի դասավանդման ընդլայնման և ի հետևանս դրա՝ հայոց լեզվին հատկացված ժամաքանակի կրճատման կողմնակիցներ: Սկսած 1956-1957 թվականներից՝ բոլոր դպրոցներն աստիճանաբար անցան միայն ռուսաց լեզվով ուսուցման, իսկ հայոց լեզուն անգամ որպես ճանաչողական առարկա ընդհանրապես հանվեց դպրոցական ծրագրերից: Սակայն հայերը բողոքեցին դրա դեմ՝ պահանջելով վերականգնել մայրենի լեզվի ուսուցումը: Ի վերջո 1965 թվականին շրջանի դպրոցներում վերականգնվեց հայոց լեզվի ուսուցումը 2-րդից 9-րդ դասարաններում՝ շաբաթական երեք դասաժամ, իսկ 10-րդ և 11-րդ դասարաններում՝ շաբաթական երկու դասաժամ ծավալով: Հարկ է նշել, որ տեղի բնակչությունը միան-

գամայն գոհ է և չի պահանջում դպրոցական ողջ ուսուցումն իրականացնել հայոց լեզվով: Ընդհակառակը, որոշ ծնողներ (հատկապես թույլ առաջադիմություն ունեցող երեխաների ծնողները և կամ եթե վերջիններս տարբեր ազգություն ունեն) համարում են, որ հայոց լեզուն իրենց երեխաներին «տան շեմից այն կողմ պետք չի գալու» և ընդամենն ավելացնելու է երեխաների ծանրաբեռնվածությունը, քանի որ հայերենի ուսուցումն իրականացվում է գրական հայերենով, իսկ իրենք կենցաղում խոսում են դրանից մեծապես տարբերվող արևմտահայերենի բարբառներից մեկով:

Տեղի հայերը գոհունակությամբ ընդունեցին 1989 թվականին կայացված որոշումը՝ 8-րդ և 9-րդ դասարաններում «Հայ ժողովրդի պատմություն» առարկան անցնելու մասին (թեև շաբաթական մեկ անգամ և ֆակուլտատիվ ուսուցմամբ): Ի պատիվ տեղական իշխանությունների, հարկ է նշել, որ վերջին ժամանակներս Ռոստովում բացվել են կիրակնօրյա հայկական դպրոցներ:

Ցավոք, միշտ չէ, որ «Հայոց լեզու» և «Հայ ժողովրդի պատմություն» առարկաները դասավանդվում են անհրաժեշտ մակարդակով: Ձգացվում է դասագրքերի և պատրաստված ուսուցիչների պակաս: Տեղի դպրոցների շրջանավարտները երկար տարիներ գործնականում զրկված էին Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու հնարավորությունից, և միայն սկսած 1988 թվականից՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտն սկսեց շրջանին հատկացնել երկու արտամրցութային տեղ:

Դպրոցական ծրագրերից հայոց լեզվի տևական ժամանակով անհետանալը պայմանավորված էր նաև մարզում իրականացված վարչատարածքային փոփոխություններով. 1962 թվականին մի շարք գյուղական շրջանների միացման արդյունքում Մյասնիկովսկի շրջանը ներառվեց գերազանցապես ռուս բնակչություն ունեցող Նեկլինովսկի շրջանի կազմում՝ կորցնելով ազգային շրջանի իր կարգավիճակը: Դադարեց լույս տեսնել նաև տեղական թերթը: Թեև հայերի միջնորդությամբ

1965 թվականին այս երկու շրջանները կրկին անջատվեցին, և Մյասնիկովսկի շրջանը վերստին դարձավ առանձին վարչատարածքային միավոր, սակայն նրա հայկական կոմպակտ բնակչության ազգային շրջանի կարգավիճակը կորսվեց, քանի որ նրանում ընդգրկվեցին ռուսական բնակչությամբ երեք գյուղխորհուրդներ, և շրջանում հայերի տեսակարար կշիռը նվազեց մինչև 59%: 1965 թվականին շաբաթական երեք անգամ պարբերականությամբ վերականգնվեց նաև շրջանային թերթի հրատարակումը, որն արդեն կրում էր „Заря коммунизма“ անունը, և շաբաթական մեկ համարի մեկ էջը լույս էր տեսնում հայերեն լեզվով: Թերթն ուներ բազմաթիվ ընթերցողներ և սկսել էր տարածվել նաև Ռոստովում, ուր մեծ թիվ են կազմում այն մարդիկ, ովքեր ծնունդով այս շրջանից են:

1990 թվականին՝ մեր այնտեղ գտնվելու ընթացքում, հարց բարձրացվեց տեղական ռադիոյով հայոց լեզվով հաղորդումներ պատրաստելու մասին, և համաձայնություն ձեռք բերվեց ամսական մեկ անգամ հայոց լեզվով 20 րոպեանոց ռադիոհաղորդման հեռարձակման մասին:

1960-ականների վերջերին և հատկապես 1970-ական թվականների ընթացքում շրջանում սկսեց ավելանալ այլազգի, հիմնականում ռուս բնակչությունը՝ Ռուսաստանի այլ մարզերից: Հատկապես մեծ էր հոսքը 1977 թվականին՝ պայմանավորված Չալդրում թեջնաֆաբրիկայի և նրա աշխատողների ընտանիքների համար ինըհարկանի չորս շենքերից կազմված «Դոն-25» բնակելի զանգվածի (երկու հազար բնակչի համար) շինարարությամբ:

Այլազգի բնակչության թիվը շրջանում ավելանում է նաև ի հաշիվ բավական մեծ թիվ կազմող խառը ամուսնությունների: Այսպես, խառը ազգային ամուսնական զույգերի բաժինը, որոնց ամուսնությունները գրանցվել են տարբեր տարիների, բայց առավելապես վերջին երկու տասնամյակների ընթացքում, 1990 թվականին մեր կողմից հետազոտված 5593 ամուսնական զույգերի շրջանում կազմում էր 11,6% (մինչև 10% Դրին և մինչև 22%՝ Սուլբան Սալա գյուղերում): Որոշ ընտանիքներում

հանդիպում էին նաև երկու նման զույգեր: Խառն ազգային ամուսնությունների գերակշիռ մասը հայ-ռուսական են՝ 61,9% (49,5% Մեծ Սալա գյուղում, մինչև 92,3%՝ Նեսվետայ գյուղում) և ռուս-հայկական՝ 13,9% (Նեսվետայ գյուղում 7,7%-ից մինչև 24,8%՝ Մեծ Սալայում): Խառն ազգային կազմ ունեցող ընտանիքներում երեխաների ազգությունը, որպես կանոն, գրվում է ըստ հոր ազգության: Շրջանում խառն ազգային ամուսնությունների մեծ կշիռն առաջին հերթին բացատրվում է այս տարածաշրջանում հայերի և ռուսների բացառիկ բարեկամական և լոյալ փոխհարաբերություններով, ինչում դրական դեր ունի այս հողում դարերով միմյանց հետ կողք կողքի համերաշխ ապրելու մասին ժողովուրդների պատմական հիշողությունը, ինչպես նաև Մյասնիկովսկի շրջանի բնակչության ազգային կազմը, ուր 1989թ. տվյալներով՝ 32,4 հազար ընդհանուր բնակչության մեծամասնությունը կազմում են հայերը (17,8 հազար կամ 54,9%) և ռուսները (12,6 հազար կամ 38,9%): Այլ ազգերի ներկայացուցիչներից բոլորից մեծ թիվ են կազմում ուկրաինացիները (3,1%), բելառուսները (0,7%) և մոլդովացիները (0,15%):

Բազմազգ է դարձել նաև հայկական գյուղերի նախկինում (մինչև 1960-ական թվականները) գրեթե միատարր բնակչությունը, հատկապես Չալդըր շրջկենտրոնը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մյասնիկովսկի շրջանի հայկական գյուղերի ազգային կազմը (գյուղերը միավորված են ըստ գյուղխորհուրդների)²

ԱԶԳՈՒԹՅՈՒՆ	ԳՅՈՒՐԸ							
	Չալդըր, Սոկրիյ Չալդըր		Դրիմ		Մեծ Սալա, Նեսվետայ		Կռասնիյ Դրիմ, Լենինական, Լենինական, Սուլթան Սալա	
	թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
Չայեր	10507	79,6	3276	85,3	2621	84,9	2219	86,4
Ռուսներ	2358	17,9	467	12,2	348	11,3	259	10,1
Ուկրաինացիներ	108	0,8	51	1,3	9	0,3	70	2,7
Բելառուսներ	63	0,5	11	0,3	-	-	6	0,2
Կոմի-պերմյացիներ	55	0,4	-	-	-	-	-	-
Մոլդովացիներ	25	0,19	2	0,05	37	1,2	2	0,07
Ադրբեջանցիներ	18	0,13	-	-	34	1,1	3	0,12
Ուզբեկներ	13	0,1	1	0,02	-	-	1	0,04
Այլ	50	0,38	31	0,78	37	1,19	9	0,34

Մեր այնտեղ գտնվելու ընթացքում գյուղերից հայ երիտասարդության արտահոսք գործնականում չկար, քանի որ կոլտնտեսություններից բացի, շրջանի տարածքում գործում էին ոչ քիչ տարատեսակ արդյունաբերական ձեռնարկություններ և հաստատություններ, ուր աշխատում էր տեղի բնակչությունը: Ձգացվում էր նաև Ռոստովի մոտ լինելը (ամենահեռավոր գյուղն ընդամենը 18 կիլոմետր էր հեռու քաղաքից) և նրա հետ կանոնավոր ավտոբուսային հաղորդակցությունը:

² Կազմված է ըստ գյուղական խորհուրդների 1990թ. ընթացիկ վիճակագրական տվյալների: Տոկոսները հաշվարկված են հեղինակների կողմից:

Ժամանակին գաղթած լինելով նույն վայրերից (Անի, հետո՝ Ղրիմ)՝ էթնոգրաֆիկ առումով Դոնի հայերը կազմում էին միատարր լոկալ խումբ, որն ընդհուպ մինչև մեր օրերը պահպանել է բազմաթիվ պատմական ավանդույթներ. դրանցից մի քանիսը բնութագրական են ողջ հայկական էթնոսի համար, իսկ մյուսները հատուկ են միայն տվյալ խմբի մշակութային ավանդույթներին և ի հայտ են գալիս մասնավորապես նրանց լեզվի բարբառում, տեղական բանահյուսության, մի շարք սովորույթունների և ծեսերի մեջ: Մշակութային նման առանձնահատկությունների պահպանմանը ոչ քիչ չափով նպաստել է այս խմբի ապրելը հիմնական էթնոսից տևական կտրվածության պայմաններում ու այլազգիների շրջապատում, և այդպիսով՝ էթնիկ նույնականացման հնարավորությունը: Միաժամանակ նոր միջավայրը, կողքին ապրող ռուս ժողովրդի ավանդույթները չէին կարող ազդեցություն չունենալ էթնոգրաֆիկ այս խմբի էթնոմշակութային զարգացման վրա: Դա դրսևորվում է տեղացի հայերի շրջանում ռուսաց լեզվի լայն տարածվածությամբ, նյութական մշակութային, մասնավորապես բնակարաններում, հագուստում և անգամ սննդում, ընտանեկան կենցաղային ոլորտում նահապետական բարքերի առավել արագ անհետացմամբ: Վերը նշվածը նկարագրենք կոնկրետ օրինակներով:

Դոնի հայերի համար ռուսաց լեզվի իմացությունը վերաբնակեցումից անմիջապես հետո շրջակա բնակչության հետ հաղորդակցվելու համար դարձավ կենսական անհրաժեշտություն: Դրա համար հայ-ռուսական երկլեզվությունը որպես մայրենի լեզու՝ հայերենի հստակ պահպանման պայմաններում (արևմտահայերենի բարբառի տեսքով), վաղուց ի վեր լայն տարածում ունի Դոնի հայության շրջանում, ընդ որում՝ ոչ միայն քաղաքաբնակների, այլև գյուղաբնակների միջավայրում: Հետագայում, պայմանավորված քաղաքում հայկական ուսումնական հաստատությունների փակմամբ, քաղաքաբնակներն աստիճանաբար սկսեցին մոռանալ մայրենի լեզուն և հաղորդակցվել ռուսաց լեզվով: 1989 թվականին անցկացված

մարդահամարի տվյալները վկայում են, որ Ռոստովում բնակվող 31,2 հազար հայության կեսից հազիվ փոքր-ինչ ավելին՝ 53,2%-ն է մայրենի համարում իր ազգային լեզուն, և ընդ որում, 1979-1989 թվականներին նրանց թիվը կրճատվել է 2,2%-ով, և համապատասխանաբար ավելացել է ռուսերենը մայրենի լեզու համարող հայերի թիվը: Հատկանշական է, որ Դոնի Ռոստովի Պրոլետարական շրջանում, այսինքն՝ հին Դոնի Նախիջևան քաղաքում բնակվող 9,5 հազար հայերի շրջանում նույն այս ժամանակահատվածում տեղի է ունեցել հակառակ գործընթացը, և հայերենը մայրենի լեզու համարող անձանց թիվն ավելացել է 7,0%-ով՝ հասնելով 60,4%-ի: Իսկ ահա Մյասնիկովսկի շրջանի 17,8 հազար գյուղաբնակ հայերի միջավայրում նախկինի պես պահպանվում է մայրենի՝ հայոց լեզվի պահպանման բարձր մակարդակը (97,4%): Միաժամանակ, հարկ է նշել տեղի հայերի շրջանում ռուսաց լեզվի լայն տարածվածությունը՝ քաղաքաբնակների մոտ կան որպես մայրենի (Ռոստովում՝ 46,5%, այդ թվում՝ Պրոլետարական շրջանում՝ 39,2%, իսկ Մյասնիկովսկի շրջանի գյուղերում՝ 2,6%), կան որպես երկրորդ լեզու, որին ազատորեն տիրապետում են (համապատասխանաբար՝ 48,9%, 54,4 % և 84,3%): Եվ եթե հաշվի առնվեն նաև ռուսաց լեզվին ոչ այնքան ազատ կերպով տիրապետողները, ապա ռուսերենը երկրորդ լեզու համարողների թիվն զգալիորեն կմեծանա:

Ռուսաստանյան հայերի ավելի քան մեկ երրորդը բնակվում է Կրասնոդարի երկրամասում, որի տարածքում տարբեր ժամանակաշրջաններում հիմնվել են մի քանի հայկական գաղթօջախներ: Ավելի վաղ ժամանակներում արևմտյան ադիգեյների մոտ բնակվել են չերքեզյան հայերը կամ չերքեզահայերը: Ըստ ավանդության՝ առաջին վերաբնակները հայ տղամարդ ռազմիկներն էին, ովքեր Չերքեզիայի լեռներում հայտնվելով XI-XII դարերում, պատիվներով ընդունվեցին տեղական բնակչության կողմից և շուտով բարձր դիրքի հասան նրանց դասային հիերարխիայում: Ամուսնանալով չերքեզուհիների հետ՝ հայերը ցրված կերպով սկսեցին բնակվել Հյու-

սիսարևմտյան Կովկասի տարածքի զգալի մասում և հիմնականում զբաղվում էին առևտրով: Կյանքի տարբեր ոլորտներում աշխույժ շփումները չերթեզների հետ ցրված բնակության պայմաններում մեծացրեց միջէթնիկ ամուսնությունների թիվը և հանգեցրեց նրան, որ չերթեզական մշակույթի տարրերը ոչ միայն ներթափանցեցին նրանց կյանքի բոլոր ոլորտները, այլև դարձան գերակշռող, ընդհուպ մինչև լեզվական բարբառները: Սակայն նրանց լրիվ ձուլմանը խոչընդոտեցին նվիրվածությունը Հայ լուսավորչական եկեղեցուն և սոցիալական բարձր կարգավիճակը [4]:

XVIII դարավերջից, բայց հիմնականում XIX դարի առաջին կեսին չերթեզահայերն սկսեցին հեռանալ լեռներից և անցնելով ռուսական տարածք՝ բնակություն հաստատեցին Գրիվենսկի, Պերեյասլովսկի ստանիցաներում, Պաշկովյան կուրենի (գապորոժյան գործերի ստորաբաժանման բանակատեղի) մերձակայքում, իսկ ավելի ուշ՝ Նովոռոսիյսկում, Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) և այլուր [5]: Վերաբնակների հիմնական մասը 1839-ին հիմնեցին առանձին Հայկական աուլը, որը 1841-ին, ի պատիվ պատմական Հայաստանի մայրաքաղաքներից մեկի, վերանվանվեց Արմավիր: Եթե սկզբնական շրջանում նրանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու առևտուրն էին, մասամբ նաև հողագործությունը և հատկապես այգեգործությունը, ապա XIX դարի 70-ական թվականներից լայն տարածում ստացավ հողագործությունը, այդ թվում և՛ առևտրային հողագործությունը:

XIX դարի 70-ական թվականներին Կովկասի սևծովյան ափերում սկսվեց նաև փոքրասիական հայերի, հիմնականում համալեռահայերի վերաբնակեցումը (անվանումը գալիս է հին հայկական Համալեռ գավառի անունից, որը գտնվում է Տրապիզոնից մինչև Բաթում ընկած տարածքներում): Հայերով էին բնակեցվում Կուբանի և Սև ծովի առափնյա հատվածի քաղաքներն ու գյուղերը, ուր XIX դարի 80-ական թվականներին նրանց թիվը հասնում էր 10 հազարի [6]:

1894-1895 թվականներին, պայմանավորված Թուրքիայում հայերի հալածանքների ահագնացմամբ (համիդյան ջարդերով), փոքրասիական հայերի հոսքը մեծացավ և ուղղվեց հիմնականում դեպի Տուրապետի, Սոչիի, Ադլերի, Անապայի, Նովոռոսիյսկի, Մայկոպի շրջաններ: 1894 թվականին հիմնվեց Եկատերինոդարի հայկական գաղութը [7]: Թուրքիայից հատկապես մեծ թվով հայ գաղթականներ ապաստան գտան Սև ծովի առափնյա հատվածներում և Հյուսիսային Կովկասի այլ շրջաններում 1915-1916 թվականներին՝ Հայոց ցեղասպանության բարձրակետի ժամանակաընթացքում, իսկ 1918 թվականին՝ Անդրկովկասից: 1920 թվականին Կուբանի և սևծովյան մարզերի հայ բնակչությունը կազմում էր համապատասխանաբար 45,3 և 13,0 հազար մարդ, որոնցից 65,1% և 41,3%-ը քաղաքաբնակներ էին, ովքեր հիմնականում զբաղվում էին առևտրով ու արհեստներով: Առավել մեծ թվով հայություն կար Մայկոպի, Եկատերինոդարի (16,7 հազար մարդ), ինչպես նաև Սոչիի և Տուրապետի բաժանումներում (8,5 հազար մարդ) [8]:

1926 թվականին Մայկոպի օկրուգում կազմավորվեց Հայկական ազգային շրջանը: Կենտրոնը Ելիսավետպոլսկի ստանիցան էր, որը հետագայում վերանվանվեց Շահումյան: Շրջանի կազմում ընդգրկվեցին յոթ գյուղխորհուրդների (Չեռնիգոլսկի, Կուբանո-հայկական, Ռեժետի, Գոյտխսկի, Ելիսավետպոլսկի, Գունայսկի (Մայկոպի օկրուգի Ապշերոն-խողիժենսկի շրջան) և Սադովի (Կուբանյան օկրուգի Գորյաչեկյուլսկի շրջան) 68 գյուղեր և խուտորներ, ուր բնակվում էր 6026 հայ շրջանի ընդհանուր բնակչության 74%-ը: Շրջանում գործում էին հայկական դպրոցներ, հեռարձակվում էին հայերեն ռադիոհաղորդումներ, լույս էր տեսնում հայերեն թերթ: 1953 թվականին Կրասնոդարի երկրամասում 24 շրջանների լուծարման արդյունքում լուծարվեց նաև Հայկական շրջանը, որի տարածքը բաժանվեց Տուրապետի և Ապշերոնի շրջանների միջև [9]: Հետագայում Կրասնոդարի երկրամասում հայերի թիվն արագորեն աճելով՝ 1979 թվականին արդեն կազմում էր 120,8 հազար մարդ [10]:

Երկրամասում բնակվող ընդհանուր թվով 182,2 հազար հայերից (ըստ 1989թ. մարդահամարի) բարձրագույն, թերի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեին 25,4%-ը, ընդհանուր միջնակարգ կամ թերի միջնակարգ՝ 58,6%-ը, տարրական՝ 11,3%-ը, որից քաղաքներում համապատասխանաբար՝ 31,3, 55,6 և 9,1 տոկոսը, իսկ գյուղերում՝ 17,3, 62,7 և 14,3 տոկոսը [11]:

Ներկայումս քաղաքներում հնաբնակ հայերի շրջանում մեծ թիվ են կազմում ծառայողները, այդ թվում նաև մտավորականությունը, որոնք հաճախ զբաղեցնում են բարձր պաշտոններ, ինչպես նաև տարբեր մասնագիտությունների արհեստավորները (կոշկակարներ, ժամագործներ, ներկարարներ, վարսավիրներ, եռակցողներ), իսկ համեմատաբար վերջերս (1970-ականների վերջին, 80-ականների սկզբին) երկրամասում բնակություն հաստատածների շրջանում գերակշռում են ձեռներեցներն ու կոոպերատորները: Գյուղերում հայ հնաբնակներն ապրում են Անապայի, Գորյաչեկյուչևսկի, Բելորեչենսկի, Ապշերոնի, Տուապսեի, Լազարևսկի, Խոստինսկի և Ադլերի շրջանների ավելի քան հարյուր բնակավայրերում (չհաշված վերը նշված 74 արդեն նախկին գյուղերն ու խուտորները):

Կրասնոդարի երկրամասում հայերի առավել կամ պակաս կոմպակտ բնակեցումը, հատկապես գյուղական վայրերում, և մեկուսացված լինելը էթնիկ հիմնական միջուկից՝ Հայաստանից, մեծապես նպաստել են որպես հայկական էթնոսի պատմաէթնոգրաֆիկ խմբերից մեկի (Համշենի) էթնոմշակութային առանձնահատկությունների պահպանմանը: Մինչև ժամանակ, նրանց ամենօրյա կենցաղի վրա նկատելի ազդեցություն են թողել շրջակա բնակչության ավանդույթները: Պահպանելով հանդերձ մայրենի լեզվի՝ Համշենի բարբառը՝ ժամանակակից հայերի գերակշիռ մեծամասնությունն այս կամ այն չափով տիրապետում է ռուսաց լեզվին, իսկ նրանցից շատերը, հատկապես տղամարդիկ, որպես երկրորդ լեզու՝ ազատորեն տիրապետում են ռուսերենին: Ընդ որում, նրանց մի մասի, հատկապես քաղաքաբնակների համար ռուսերենը հաճախ դառ-

նում է մայրենի լեզու. 1989 թվականի մարդահամարի տվյալներով՝ Կրասնոդարի երկրամասի 182,2 հազար հայերի 75,2%-ը մայրենի էին համարում իրենց ազգության լեզուն, 24,7%-ը՝ ռուսերենը՝ որպես երկրորդ լեզու, որին ազատորեն տիրապետում էին, հայերի 68,2%-ը նշել էր ռուսերենը, 9,8%-ը՝ հայերենը, իսկ գյուղաբնակ հայերի շրջանում համապատասխանաբար՝ 84,0, 73,8 և 5,74 տոկոսը [12]:

2. ՀԱՅԵՐԸ ԲԱԶՄԱԷԹՆԻԿ ՖՈՆԻՆ

Կրասնոդարի երկրամասի ներկայիս էթնիկ կազմի ձևավորումն սկսվեց համեմատաբար ուշ՝ XVIII դարի երկրորդ կեսից, բայց այդ գործընթացն առավել արագացավ XIX հարյուրամյակի երկրորդ կեսին: Այս տարածաշրջանում 1864 թվականին Կովկասյան պատերազմի ավարտից հետո տեղի բնիկ ժողովուրդների՝ ադիգեյների, այդ թվում նաև շապսուզների և սաձերի՝ հարավային աբխազների հարյուրհազարավոր ներկայացուցիչներ վերաբնակություն հաստատեցին Թուրքիայում և Մերձավոր Արևելքի երկրներում, ինչից հետո այս ժողովուրդների՝ Կովկասի սևծովյան առափնյա գոտու հողերը նկատելիորեն դատարկվեցին: Պայմանավորված դրանով՝ XIX դարի 60-ական թվականների երկրորդ կեսին և 70-ականների սկզբին այստեղ մնացած ադիգեյներին, ինչպես նաև շապսուզներին, այդ թվում նաև XVIII դարի վերջից այստեղ բնակվող ռուսներին, ուկրաինացիներին, հայերին ցարական կառավարության որոշմամբ հավելվեցին նաև հույներ, գերմանացիներ, մոլդովացիներ, էստոնացիներ, բուլղարներ, չեխեր, լեհեր և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ:

Վերը բերված տվյալները վկայում են, որ Կրասնոդարի երկրամասում էթնիկ միավորումների մեծ մասը ձևավորվել է ավելի քան մեկ դար առաջ: Դրա համար՝ այս տարածաշրջանը պատմականորեն հանդիսանում է էթնիկ ակտիվ շփումների գոտի:

Բազմազգ ֆոնը բնութագրական է նաև Ստավրոպոլի երկրամասի համար, 1989 թվականի մարդահամարի տվյալներով 2 825 349 բնակիչների 78%-ը ռուսներ էին, 5%-ը՝ կարաչայներ, 2,6%-ը՝ հայեր, 2,4%-ը՝ ուկրաինացիներ: Երկրամասում բնակվում են նաև բելառուսներ, թուրքմեններ, չեչեններ, չերքեզներ, գերմանացիներ, նոգայներ, հույներ, աբազներ, վրացիներ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ:

Բազմաէթնիկությունը որոշ չափով բնորոշ է նաև Ռոստովի մարզին: 1989 թվականի տվյալներով այստեղ բնակվում էին բազմաթիվ ժողովուրդների ներկայացուցիչներ, ուր բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 89%-ը, ռուսներ էին:

Սարգի բնակչության այսչափ բազմազգ կազմը տեղական իշխանություններին պարտավորեցնում է ստեղծել համապատասխան բարենպաստ միջավայր: Հարկ է նշել, որ 1990 թվականին՝ Ռոստովի մարզում մեր գտնվելու ընթացքում, տեղական իշխանությունները բավականին ուշադրությամբ և ընթացողությամբ էին մոտենում այս խնդրին, ընդհանուր առմամբ մարզում քիչ թե շատ պահպանվում էր կայուն իրավիճակ, և ազգամիջյան լարվածության լուրջ օջախներ գործնականում չհայտնվեցին:

Դրանով հանդերձ աններելի բարեհոգություն կլիներ աչք փակել այս տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը նպատակաուղղված փորձերին: Ստորև մենք կներկայացնենք ազգամիջյան անհանդուրժողականության բացահայտ հրահրման մի քանի օրինակներ: Եվ այստեղ սկզբունքային հարցը հետևյալն է. ովքե՞ր, ո՞ր ուժերն են այսօր շահագրգռված Ռուսաստանի հարավում իրավիճակը շիկացնելու մեջ:

3. ՀԱԿԱՐԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Համաշխարհային պատմական փորձը վկայում է, որ տեղի բնիկ բնակչությանն ազգային փոքրամասնությունների դեմ զրգռելու համար շատ հաճախ ինչ-որ հատուկ գաղտնի և նուրբ մեթոդներ չեն պահանջվում: Կենսամակարդակից, տնտեսական դժվարություններից, համընդհանուր անորոշությունից ու տազնապից առաջացած դժգոհության պայմաններում կիսագրագետ արհեստավորների կողմից «թխված» պարզունակ սուտը կարող է միանգամայն «արդյունավետ» լինել և լուրջ հետևանքներ ունենալ: Ստորև խոսքը հենց այդպիսի կեղծիքների մասին է:

1990 թվականի փետրվարին Ռոստովում անակնկալ կերպով հայտնվեցին թռուցիկներ, որոնք իբրև թե ստորագրված էին Ռուսաստանյան ժողովրդական ճակատի կողմից, և որոնց բովանդակությունն ուղղակի չէր կարող ազգամիջյան թշնամություն և բախումներ չհարուցել: Այդ թռուցիկներում կոչ էր արվում Դոնի տարածքից դուրս քշել բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և առաջին հերթին՝ հայերին ու հրեաներին: «Ռուսաստանը ռուսների համար». այսպիսին էր թռուցիկների հեղինակների հռչակած կարգախոսը, ինչը, բնականաբար, տազնապ ու անհանգստություն առաջացրեց: Որոշ շենքերի մուտքերում պոկվեցին բնակարանատերերի ազգանունները նշող ցուցանակները: Հայերը դժվարանում էին հավատալ, որ այդ թռուցիկները գրվել են ռուսների ձեռքով, ովքեր այս տարածաշրջանում միշտ էլ բարեկամաբար են տրամադրված եղել այլ՝ հարևան ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ, հատկապես՝ հայերի: Առավել ևս, որ նույն այդ ժամանակ մեծ փաստեր արձանագրվեցին նաև նախկին ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում. տեղի բնակչության շրջանում կեղծ լուրեր էին տարածվում, իբրև թե Բաք-

վից հազարավոր հայ փախստականների հերթից դուրս տրամադրվելու են բնակարաններ, ինչի արդյունքում բազմաթիվ քաղաքներում, հատկապես Ֆրունզեում և Դուշանբեում բողոքի բազմահազարանոց հանրահավաքներ կայացան [13]:

Ստորև ներկայացնում ենք հայերի անունից Ռուսաստանի հարավում տարածված սադրիչ բովանդակությամբ թռուցիկների նմուշներ:

Նյու Յորք, Միավորված ազգերի կազմակերպություն,
գլխավոր քարտուղար Բուտրոս Դալիին

ԴԻՄՈՒՄ

Ռուսաստանի Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խմբից

Հարգարժան պարոն գլխավոր քարտուղար.

Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խումբը դիմում է Ձեզ՝ որպես ամենահեղինակավոր միջազգային կազմակերպության ղեկավարի, խնդրելով մեծ ուշադրություն դարձնել Ռուսաստանի Հյուսիսային Կովկասի հայերի ծանր դրությանը:

Աշխարհի բոլոր հայերն ապրում են Մեծ Հայաստանի վերածննդի անմահ գաղափարով, իսկ Հյուսիսային Կովկասը պատմականորեն հանդիսանում է նրա անքակտելի մասը:

Մենք հասկանում ենք, որ մեր տարածաշրջանում դեպքերի զարգացման պատմական ընթացքը թույլ չի տալիս միաժամանակ լուծել այս ցավոտ խնդիրը:

Ըստ այդմ, հենվելով առողջ բանականության վրա, խնդրում ենք Ձեզ, պարոն գլխավոր քարտուղար, համակողմանի աջակցություն ցուցաբերել Ռուստովի մարզում, Կրասնոդարի և

Ստավրոպոլի երկրամասերում ստեղծելու հայկական ինքնավարություններ:

Երևան, Հայաստանի Հանրապետության նախագահ
պարոն Լևոն Տեր-Պետրոսյանին

ԴԻՄՈՒՄ

Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խմբից

Հարգարժան պարոն նախագահ.

Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խումբը դիմում է Ձեզ՝ խնդրելով ուշադրություն դարձնել Ռուստովի մարզում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ապրող հայերի վիճակին: Ապրելով Մեծ Հայաստանի վերածննդի անմահ գաղափարով՝ մենք հանդես ենք գալիս որպես Հյուսիսային Կովկասի հողերը Հայաստանի հետ վերամիավորելու նախաձեռնողներ: Վստահ ենք, որ այս սրբազան պայքարը կպսակվի հաջողությամբ:

Մենք, ինչպես և ողջ աշխարհի հայերը, հասկանում ենք, որ չի կարելի մեկ ժամում լուծել այս խնդիրը, հասկանում ենք, որ կարող ենք անուղղելի վնաս հասցնել համաշխարհային հայկական շարժմանը:

Դրա համար մենք թախանձագին խնդրում ենք Ձեզ, օգտագործելով Ձեր բարձր հեղինակությունը, ազդեցություն գործել ռուսաստանյան իշխանությունների վրա, որպեսզի Ռուստովի մարզում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում կազմավորվեն հայկական ինքնավարություններ:

Հյուսիսային Կովկասում հայկական ինքնավարությունների ստեղծումը կդառնա առաջին իրական և կարևոր քայլը հայկական պետության տարածքի ընդարձակման ճանապարհին:

Հավատացած ենք, որ Դուք, պարո՛ն նախագահ, չեք դավաճանի Ձեր սկզբունքներին և անգնահատելի ծառայություն կմատուցեք մեզ և ողջ հայ ժողովրդին:

Նախաձեռնող խմբի անունից՝ Ա. Մելիք-Թևոսյան

Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խմբի

ԴԻՄՈՒՄԸ

Ռուստովի մարզի,

Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի ղեկավարներին

Հարգելի՛ պարոնայք. ձեզ վստահված տարածքները բազմաթիվ դարերի ընթացքում վարչականորեն գտնվել են Մեծ Հայաստանի կազմում: Այնուհետև պատմությունն այնպես տնօրինեց, որ վաղեմի հայկական հողերը զավթվեցին Ռուսաստանի կողմից, որը հարյուրամյակներ շարունակ իրագործում է հայերին տարբեր տեղերից հալածելու քաղաքականություն:

Այժմ պատմությունը բազմաչարչար հայ ժողովրդին հնարավորություն է ընձեռել կյանքի կոչելու Մեծ Հայաստանի վերածննդն անմահ գաղափարը: Ներկայումս հայ ազգը բավական լավ է կազմակերպված, տնօրինում է հսկայական ֆինանսական, նյութական ու մարդկային ռեսուրսների և պատրաստ է պայքար մղել՝ հասնելու իր նվիրական նպատակներին:

Մենք գիտակցում ենք, որ ձեզ համար ծայրահեղ ծանր կլինի գիտակցել պատմական իրականությունը: Սակայն դուք պետք է հասկանաք, որ այլ ճանապարհ չկա:

Ռուստի թախանձագին խնդրում ենք՝ ըստ ամենայնի օժանդակել հայկական ինքնավարությունների ստեղծմանը ձեզ վստահված տարածքներում, որոնք կայունացնող գործոն են հանդիսանում ազգամիջյան հարաբերություններում:

Ա. Մելիք-Թևոսյան

**Հյուսիսային Կովկասի
հայկական ազգային-ազատագրական ճակատի
նախաձեռնող խմբի
ԴԻՄՈՒՄԸ
Հայաստանից դուրս բնակվող հայերին**

Թանկագին հայրենակիցներ. մենք՝ Հյուսիսային Կովկասի հայերս, դարերի ընթացքում չենք մոռացել Մեծ Հայաստանի վերածննդն անմահ գաղափարը:

Նվաստացումներն ու վիրավորանքները, որոնք կրում են Հյուսիսային Կովկասում բնակվող հայերը, իրավազրկությունն ու կայսերական Ռուսաստանի հալածանքները մեզ գործնականում հասցրել են հուսահատության:

Ծավալելով Հյուսիսային Կովկասի հողերը Հայաստանին վերամիավորելու քարոզչական աշխատանքները՝ մենք զգացինք մեր միայնակությունն ու անօգնականությունը: Մենք հստակ օգնության խնդրանքով դիմել ենք Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին և հույս ունենք նրա կողմից համակողմանի աջակցության:

Մեր թանկագին հայրենակիցներ, դիմում ենք ձեզ՝ խնդրելով համակողմանի, այդ թվում նաև ֆինանսական, նյութական և գաղափարախոսական օգնություն, որպեսզի նվիրական նպատակին հասնելու առաջին փուլում կարողանանք հայկական ինքնավարություններ ստեղծել Ռուստովի մարզում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում:

Հավատում ենք, որ դուք անտարբեր չեք մնա Մեծ Հայաստանի ճակատագրի հանդեպ:

Նախաձեռնող խմբի անունից՝ Ա. Մելիք-Թևոսյան

**«Ռուսաստանում հայերի ազատագրության
հայկական գաղտնի քանակ»**

Եթե Դուք ցանկանում եք աջակցել Ռուսաստանի Ռուստովի մարզը, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերը Հայաստանին վերադարձնելու գործին, ապա եռօրյա ժամկետում մարզի և երկրամասերի ղեկավարություններին ուղարկեք հետևյալ բովանդակությամբ նամակներ.

«Ես, ----- համերաշխություն հայտնելով հայ մեծ ժողովրդին, պահանջում եմ, որ Ռուստովի մարզը, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերը միացվեն Հայաստանին:

Ստորագրություն -----»

Չմոռանա՛ք նշել Ձեր անունը, ազգանունը, հայրանունը և ճիշտ հասցեն: Նամակի պատճենը պարտադիր ուղարկե՛ք „Вечерний Ростов” թերթի խմբագրություն: Մատուցած ծառայության համար երաշխավորում եմք Ձեզ ամենամսյա պարգևատրում՝ 200 ամերիկյան դոլարի չափով: Տարադրամը Ձեզ կուղարկվի փոստով: Մոնթե Մելքոնյան [14]:

Այնուհետև թռուցիկների բովանդակությունը փոխվում է, թեև, ինչպես նախկինում, դրանք շարունակում են կրել սադրիչ բնույթ: Այժմ արդեն Ռուսաստանի ողջ հարավում տարածվում են այս թռուցիկների երկու տարբերակներ՝ գրված ռուսների անունից և հայերի անունից, սակայն երկուսի իմաստն էլ նույնն է. հայերը ուզում են վերականգնել Մեծ Հայաստանը, որի մեջ իբրև թե մտնում էր նաև Հյուսիսային Կովկասը, որը հետագայում զավթվել է Ռուսաստանի կողմից, և ըստ այդմ՝ կոչ են անում Հայաստանին փոխանցել Ռուստովի մարզը, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերը՝ նախապես այնտեղ հիմնելով հայկական ինքնավարություններ: Թեև պատմական և

գրական տեսանկյուններից ունեցած անգրագետ շարադրանքին՝ այս թռուցիկները նկատելի ազդեցություն են թողնում բնակչության սակավ տեղեկացված շերտերի վրա և ավելի են շիկացնում առանց այն էլ լարված իրավիճակը: Նման սադրանքները քաղաքական շահարկումների նպատակով հեշտությամբ կարող են օգտագործվել անմաքուր «հասարակական գործիչների» կողմից:

Սակայն գործը չսահմանափակվեց միայն պատճենված թռուցիկների տարածմամբ: Կիրառվեց նաև ավելի հզոր միջոց՝ մոսկովյան մամուլը: „Советская Россия” թերթում հրապարակվել էր Վոլոդիմիր Բացահայտ հակահայկական հոդվածը, որը այստեղ ներկայացվում է մասնակի կրճատումներով (*կրճատված հատվածները նշված են բազմակետերով*):

Ազգայնականությունն առանց գրիմի

ՔԱՐԵ ԴԱՐԻ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

(„СОВЕТСКАЯ РОССИЯ”, 21.11.1992թ.)

Եթե հեռուստացույցով ձեզ ցույց են տալիս հացի համար հերթեր Երևանում, չհավատա՛ք ձեր աչքերին: Չհավատա՛ք այն գրչակներին, ովքեր հայտնում են, թե Հայաստանը մեկ ամիս էլ չի ապրի, եթե Ռուսաստանից գազը փակեն: Ուշադրություն մի՛ դարձրեք նողկալի ասեկոսեներին անդրկովկասյան այս հանրապետության-պետության տնտեսության լիակատար փլուզման մասին: Եթե իրականում ամեն ինչ այդպես լիներ, նրա «ազգային առաջնորդները» կմտածեին խաղաղության վերականգնման, տնտեսական կապերի հաստատման, աշխատանքի արտադրողականության մասին: Բայց նրանք մտածում են այլ բաների մասին: Մտածում են Մեծ Հայաստանի մասին, և թքե՛ք նրանց աչքերին, ովքեր համարում են թե իբրև այդ «մեծությունը» տարածվում է միայն Անդրկովկասի տարածքի վրա:

Իմ առջև «Պատմական տեղեկանքն» է՝ հրատարակված «Արցախի» կողմից՝ Ստեփանակերտում, 1992 թվականին, գրված ոչ անհայտ Ֆ. Շելով-Կովեդյանի կողմից, որը մինչև վերջերս Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության գործերն էր տնօրինում... Գնալով Հյուսիսային Կովկասի բնիկ ժողովրդի որոնումների ետևից՝ նա «հայտնաբերել է», որ սկսած քարե դարի և խաշնարածության ժամանակներից՝ այդ բնիկները եղել են հայերը՝ ո՛չ ավել, ո՛չ պակաս...

...Բայց արտգործնախարարության նախկին դիվանագետի պաշտոնեական պարտականությունները պարտավորեցնում են շարադրել քաղաքական եզրահանգումները, որոնց հանգել է Ֆ. Շելով-Կովեդյանը: Դրանցից կարևորը հետևյալն է. «Հյուսիսային Կովկասի տարածքները, ներառյալ ռուստոլյան և արմավիրյան հողերը, վաղմջական հայկական հողեր են հանդիսանում», և որ «Ռուսներն ու մյուս ազգությունները, որոնք ապրում են այս տարածքներում, եկվորներ կամ իրենց միջավայրերից վտարվածներ են»: Եվ որպես եզրափակում՝ «Ռուսները պետք է Հյուսիսային Կովկասի, Ռոստովի և Արմավիրի հողերը վերադարձնեն իրենց վաղեմի տերերին և կամ համաձայնվեն ապրել այդ տարածքներում, որոնք անխուսափելիորեն մտնելու են Մեծ Հայաստանի կազմի մեջ»:

Ահա այսպես, թանկագին հյուսիսկովկասցիներ, կազակներ, դրսեցիներ և հավելեմ՝ հայեր...

Ռուսաստանի Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի նախաձեռնող խումբը, Ա. Մելիք-Թևոսյանի ղեկավարությամբ, հենվելով շելով-կովեդյանյան գիտաքաղաքական պլատֆորմի վրա, արդեն գործում է և գրոհում ՄԱԿ-ը, ԱՄՆ Մեմատը, ՌԴ նախագահությունը, Ռոստովի մարզի, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի ղեկավարությանը՝ նպատակ ունենալով լեզալացնել նախկին դիվանագետի գաղափարները և իրենց բաղձանքները: «Ճակատն» արդեն բջիջներ է ստեղծում 37 բնակավայրերում, կապեր է հաստատել Երևանի և հայկական սփյուռքի հետ՝ նպատակ ունենալով ձեռք բերել անհրաժեշտ կշիռ և տնտեսական բազա: Նրանք արդեն հովանա-

վորներ են գտել ռուսաստանյան իշխանությունների միջանցքներում, նրանց ծափահարում է «Ժողովրդավարությունը»: Չառանցանքն աստիճանաբար դառնում է իրականություն, և ես սարսափում եմ, որ ազգայնականության նոր փուլում բնիկ ռուսական հողերում ապրող և այս ամենում ոչ մի մեղավորություն չունեցող հայերը կդառնան ազգայնական խելահեղության պատանդները: Հայաստանի ազգայնականներն ու Ռուսաստանի շելով-կովեդյանականները պատրաստում են ևս մեկ ազգամիջյան մսաղաց, և անհրաժեշտ է այդ մասին ուղիղ ասել...

...Բայց մենք պետք է նախազգուշացնենք բազմազգ Ռուսաստանի մեր եղբայրներին, որ ազգայնականությունը մահացու վտանգ ներկայացնող զենք է դարձել էժանազին քաղաքական գործիչների ձեռքում, ովքեր արդեն որոշել են, որ ռուս ժողովրդի հետ ամեն ինչ վերջացած է...

ԷԴՈՒՄՐԴ ՎՈՒՈՂԻՆ

Ուշադրություն դարձնենք այս հողվածի հետևյալ առանձնահատկություններին.

1) Հողվածը, ըստ էության, նախկինում Ռուսաստանի հարավում տարածված թռուցիկների ընդարձակված տարբերակն է, ուր ավելացվել են հակահայկական նոր երանգներ՝ կոչված հակակրանք առաջացնելու հայերի և Հայաստանի նկատմամբ:

2) Հրապարակման ողջ տեքստը մատուցվում է այնպես, որ ընթերցողի մոտ տպավորություն ստեղծվի, թե իրականում գոյություն ունեն ինչպես Ա. Մելիք-Թևոսյանը, այնպես էլ ինչ-որ հայկական կառույց, որը գործնականում արդեն պայքարում է Հյուսիսային Կովկասը Հայաստանին միացնելու համար:

3) Հողվածը կառուցված է լրացումների սկզբունքի վրա. եթե թռուցիկներում շարադրված է «ուղղակի խոսք»՝ գոյություն չունեցող հայերի կողմից, ապա հողվածում կան մեկնաբանություններով ուղեկցվող հավելումներ, որոնք կոչված են

ուժեղացնելու և ամրապնդելու հակահայկական տրամադրությունները:

4) Հողվածում պարունակվում են անթաքույց սպառնալիքներ հայերի նկատմամբ. հեղինակը կանխատեսում է «...հայերի ևս մեկ ազգամիջյան ջարդ»:

5) Նկատի առնելով վերը բերված թռուցիկների ծայրահեղ պարզունակությունը, որի վրա հեղինակը կառուցել է իր հողվածը՝ տարակույս չի մնում, որ նա հրաշալիորեն կողմնորոշվում է դրանց որակի և ուղղվածության հարցերում (այս թռուցիկներից գլուխ հանելու համար փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր լինելու կարիք չկա): Այլ կերպ ասած՝ խոսք անգամ չի կարող լինել «բարեխիղճ մոլորվածության» մասին:

Ներկայացնենք նաև հիշյալ թռուցիկների տարածմանը զանգվածային լրատվամիջոցների արձագանքների մի քանի օրինակներ:

Այս հրապարակման առնչությամբ Ֆ. Շելով-Կովեդյակը թերթի խմբագրություն էր ուղարկել հետևյալ նամակը:

«Քարե դարի փաստարկների» առնչությամբ

Նամակ „Советская Россия” թերթի խմբագրությանը

(„Советская Россия”, 11.02.1993թ.)

1992թ. նոյեմբերի 21-ին ձեր թերթում հրապարակվել է «Քարե դարի փաստարկներ» հողվածը, որում հեղինակն ինձ է վերագրում ինչ-որ «Պատմական տեղեկանքի» կազմումը:

Ես չծուլացա հետաքրքրվել, թե դա ինչ աշխատություն է, և դա ինձ հաջողվեց շնորհիվ անվտանգության նախարարության, որը սիրահոժար կերպով ինձ տրամադրեց ութ էջանոց մի փոքրիկ գրքույկի պատճենը: Իսկ թե ինչ է իրենից ներկայացնում այդ կեղծարարությունը, պարզ է թեկուզ միայն նրանից, որ ես այնտեղ

ներկայացված են որպես մի ինստիտուտի աշխատակից, որտեղ չեն աշխատում դեռ 1990 թվականից: Բացի դրանից, ինձ հայտնեցին, որ այդ «ստեղծագործության» երկու հազար օրինակ Դոնի Ռոստովում առգրավվել է Բաքու-Մոսկվա գնացքի ուղեկցորդներից մեկի մոտից: Պարզ է, որ այդ օրինակները Ստեփանակերտից չէին կարող հայտնվել ուղեկցորդի մոտ: Հետևաբար ակնհայտ է, որ այս կեղծիքը տպագրվել է Բաքվում:

Չարմանք է հարուցում այն փաստը, որ հողվածի հեղինակը ներություն չի կրել հարցի ճշտման նպատակով դիմել անձամբ ինձ (քանի որ այդ ժամանակ ես գտնվում էի Մոսկվայում) կամ անվտանգության նախարարությանը, ինչը չծուլացան անել Ստավրոպոլի ու Կրասնոդարի երկրամասերի և Ռոստովի մարզի վարչակազմերի ղեկավարներն ու որոշ բնակիչներ: Երկու դեպքում էլ հողվածագիրը մերժում չէր ստանա:

Եվ քանի որ, բացի մնացյալից, հողվածում կան նաև կոպիտ վիրավորանքներ իմ հասցեին, ուստի պահանջում եմ.

1) Չեր թերթում հրապարակել պաշտոնական հերքում՝ ամբողջությամբ ստահող հողվածի համար:

2) Վոլոդիմիր՝ ձեր թերթի միջոցով ներողություն խնդրել ինձնից՝ իմ հասցեին թույլ տված վիրավորական արտահայտությունների համար:

Ֆ. Շելով-Կովեդյակ

Ռուսաստանի քաղաքացիները կարող են ունենալ միանգամայն տարբեր քաղաքական հայացքներ, բայց կա մի ոլորտ, որտեղ բոլորի կարծիքները համընկնում են, եթե, իհարկե, նրանց նպատակը Ռուսաստանի թուլացումը չէ: Այդ ոլորտը Ռուսաստանում ազգամիջյան խաղաղությունն է: Դժվար է անգամ պատկերացնել այն բոլոր հետևանքները, որոնց բազմազգ երկրում կհանգեցնի ազգամիջյան ջարդերի հրահրումը: Մենք հեռու ենք այն մտքից, որ „Советская Россия” թերթի խմբագրությունում հավաքվել են մարդիկ, ովքեր գիտակցաբար ցանկանում են վնաս հասցնել Ռուսաստանին: Սակայն

թերթի հրապարակումները ցույց են տալիս, որ երկրում տիրող ընդհանուր դիմակայությունը, քաղաքական պայքարի «տրամաբանությունն» ու ինտերցիան, թիրախների ընտրության պայմանավորումն այսրոպեական նկատառումներով և այլ գործոններ մի շարք դեպքերում մարդկանց դուրս են բերում առողջ բանականության և պատասխանատվության այն սահմաններից, որոնց պահպանումը պարտադիր է ռուսաստանյան պետության ապագայով անկեղծորեն անհանգստացող յուրաքանչյուր քաղաքացու համար:

Հայտնի է, որ 1992 թվականի սեպտեմբերի կեսերին Կրասնոդարի երկրամասի անվտանգության մարմինները Բաքու-Մոսկվա զննարկում առգրավեցին նշված թռուցիկների խմբաքանակ: Դրանց հեղինակների և ծագման վրա լրացուցիչ լույս է սփռում ներքոշարադրյալ փաստաթուղթը, ուր դրա ստեղծման վայրը չի էլ թաքցվում: Այն Բաքուն է: Այդ փաստաթուղթը նույնպես հրապարակվել է „Советская Россия” թերթում:

ՉՄՈՌԱՆԱՔ ՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ („Советская Россия”, 29.09.1992թ.)

Ադրբեջանի ռուսական բնակչության լիազոր ներկայացուցիչների հավաքը մեզ հանձնարարել է թերթի միջոցով դիմել Դոնի, Կուբանի և Ստավրոպոլի կազակություններին:

Աստված մեզ հետ է: Թանկագին բարեկամներ, պարոնա՛յք կազակներ: Մենք՝ Ադրբեջանական Հանրապետության ռուսներս, իսկ դա ավելի քան 450 հազար քաղաքացիական բնակչություն է, շառավիղներն ենք սպաների, կազակների, մտավորականների, բանվորների ու գյուղացիների, ճակատագրի բերումով հայտնվել ենք Ադրբեջանում, և դիմում ենք ձեզ՝ որպես ռուս մարդկանց և ռուսական ոգու պաշտպանների:

Ինչպես ձեզ հայտնի է, այժմ ընթանում են իրանա-ադրբեջանական սահմանում սահմանապահ զորքերը կազակական զորամասերով փոխարինելու նախապատրաստական աշխատանքները, որի նպատակն է խոչընդոտել Հարավային և Հյուսիսային Ադրբեջանների վերամիավորումը: Դրա շահագրգիռ կողմերն Իրանն ու Հայաստանն են, և ընդ որում, հաշվի չի առնվում Ադրբեջանական Հանրապետության և այնտեղ բնակվող ռուսների կարծիքը: Մեզ մոտ տեղի ունեցող իրադարձությունները հիշեցնում են 1990 թվականի հունվարի 17-18-ին պահեստագործի մարտիկների «մաքուր ռուսական զորակոչը» Ստավրոպոլից, Կրասնոդարից և Ռոստովից, որից հետո ռուս զինվորները խաբեությամբ նետվեցին Բաքու՝ գնդակահարելու խաղաղ բնակչությանը:

Այժմ նույնպես ցանկանում են գնդակների տակ ուղարկել երիտասարդությանը՝ Դոնի, Կուբանի և Ստավրոպոլի տղամարդ բնակչության լավագույն հատվածին, ինչն ուղղակիորեն կհանգեցնի գեներալիտետի ոչնչացմանը:

Ներկայումս, երբ դեռևս չեն հաստատվել ռուսական պետության արտաքին և ազգամիջյան քաղաքականությունների դոկտրինաները, հայ ազգայնականները փորձում են Ռուսաստանի ուժերը ծառայեցնել իրենց շահադիտական նպատակներին: Միաժամանակ ընթանում է մեր ամենահարուստ երկրամասերի տոտալ վերաբնակեցում հայերով: Արդեն իսկ Ռուսաստանում բնակվում են ավելի քան 500 հազար հայեր, այդ թվում՝ 250 հազարը՝ Մոսկվայում և մոտ 200 հազարը՝ Հյուսիսային Կովկասում: Հայերի կողմից հավաքագրված քաղաքական գործիչները հասել են իշխանության վերին էշելոններ և հաջողությամբ փորձում են Ռուսաստանի քաղաքականությունն ուղղել Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի դեմ: Ռուսաստանը եվրասիական տերություն է, և դա բնորոշում է նրա աշխարհաքաղաքական շահերը...

Մեր օրերում, իրենց փաստաբանների ճնշման ներքո, Ռուսաստանի խորհրդարանում ու կառավարությունում ստորագրել տալով «Բարեկամության և անվտանգության մասին» ռուս-հայկական համաձայնագիրը՝ Հայաստանը փորձում է Ռուսաստանն օգտագործելով կյանքի կոչել ԽՍՀՄ-ն ազգամիջյան հողի վրա կոր-

ծանելու և նրա փլատակների վրա «Մեծ Հայաստան» ստեղծելու իր գառնանցելի գաղափարները, որոնք ընդունվել են հայկական ազգայնական Դաշնակցություն կուսակցության՝ 1985 թվականին Աթենքում գումարված XXIII համագումարում:

Նկարագրենք «Մեծ Հայաստանի» ընդլայնման փուլերը, որոնք, կարելի է ասել, տեղի են ունեցել մեր աչքի առջև:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. տարածքների վերաբնակեցում: Մեկ հայկական ընտանիքի ժամանմանը, որպես կանոն, հետևում է ևս մի քանի ընտանիքների ժամանում:

ԵՐԿՐՈՐԳ ՓՈՒԼ. հայերը, որպես կանոն, տնավորվում են բարեբեր հողերում: Տնավորվելը նշանակում է կաշառել իշխանություններին, զնել եկամտաբեր տեղերն առևտրի, ծառայությունների և այլ ոլորտներում: Միաժամանակ, մամուլով և հեռուստատեսությամբ իրականացվում է տեղեկատվության վերահսկողություն և հայերին ձեռնառու ապատեղեկատվության տարածումը:

ԵՐՐՈՐԳ ՓՈՒԼ. վերաբնակման վայրերից տարբեր սաղարանքների միջոցով բոլոր ոչ բնիկ ժողովուրդների դուրս մղումը, ինչպես դա փորձեցին անել Կրասնոդարի երկրամասում, որտեղ հայերը փորձում էին կազակներին հանել թուրքերի և մեսխեթցի թուրքերի դեմ:

ՉՈՐՐՈՐԳ ՓՈՒԼ. բնիկ ժողովուրդներին իրենց ապրելակերպի պարտադրումը և հրնթացս հայոց լեզվի ուսուցման պարտադիր ներառումը տեղի դպրոցների և բուհերի ուսումնական ծրագրերում: Դրան հետևում է լրիվ հայկական դպրոցների և լուսավորչադավան եկեղեցիների բացումը: Այդ ամենը եղել է մեզ մոտ՝ Ադրբեջանում, Վրաստանում, մնան փորձեր կատարվեցին Կրասնոդարի երկրամասի Դինսկի շրջանում և Արմավիրում:

ՀԻՆԳԵՐՈՐԳ ՓՈՒԼ. գաղափարախոսական, իսկ այնուհետև ռազմաքաղաքական պայքարի ծավալում՝ հայերով վերաբնակեցված տարածքներում հայկական ինքնավարության ստեղծման, իսկ հնարավորության դեպքում՝ լրիվ անկախացման համար՝ նպատակ ունենալով ստեղծել ծովից ծով և ընդհուպ մինչև Վրոնեժ տարածվող «Մեծ Հայաստան» (մնան օրինակ է մարիոնե-

տական Լեռնային Դարաբադի Հանրապետության ստեղծման փորձը Լեռնային Դարաբադում):

Հայ մեծապետականների (շովինիստների) ոսկյա երազանքն է միմյանց դեմ հանել քրիստոնյաներին և մահմեդականներին...

Մոսկվայում հայկական գործակալների և էմիսարների գործունեությունն այժմ նպատակաուղղված է ռուս-ադրբեջանական, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կովկասյան պատերազմ հրահրելուն, որի նպատակն է հասնել իրենց տարածքային հավակնությունների իրականացմանը: Հայաստանից վտարվել են ավելի քան 200 հազար ադրբեջանցիներ, իրենց բնիկ հողերից դուրս է մղվել գրեթե ողջ ռուս բնակչությունը: Այսօր հայկական զորքերն ավերում են ռուսական գյուղերը (Մարատովկա, Սլավյանսկ և այլ):

Հայ ազգայնականների բոլոր այս գործողությունները մենք համարում ենք վիրավորանք Ռուսական կայսրության կառավարության այն մարդասիրական ակտի հիշատակին, որով XIX դարում հայերին թույլատրվեց բնակություն հաստատել Ռուսաստանի տարածքներում:

Ադրբեջանում այսօր բնակվում է նվազագույնը 100 հազար ռուս ընտանիք:

Պարոնա՛յք կազակներ, խնդրում ենք ձեզ չմոռանալ, որ մեզ՝ Ադրբեջանի ռուսներին, Ռուսաստանը պատրաստ չէ ապաստան տրամադրել: Մտածե՛ք նաև ձեր, ձեր կանանց և երեխաների մասին:

Վ. ԶՈՏՈՎ, Ադրբեջանի ռուս բնակչության լիազոր ներկայացուցիչների հավաքի և «Համագործակցություն» միության նախագահ

Ա. ՍՈԼՈՎՅՈՎ. նախագահի տեղակալ

Ընդամենը՝ 73 ստորագրություն

Ամենևին կարիք չկա որևէ տեքստաբանական վերլուծություն կատարել՝ համոզվելու համար այս թուլցիկների և հող-

վածների լրիվ առուևով գաղափարական և մասնակիորեն տեքստային նույնության մեջ:

Հետաքրքիր է, որ ողջ աշխարհում ընդունված նորմերը, որոնք սրբորեն պահպանվում են տարբեր երկրների բազմաթիվ ազգային համայնքների մոտ (այդ թվում նաև արտասահմանում՝ ռուսական համայնքների մոտ), մասնավորապես մայրենի լեզուն սովորելը և եկեղեցիներ կառուցելը, այս նամակում համարվում են հայերի նենգ ծրագրերի ապացույցներ: Անհմաստ է նման իրավիճակում քննարկել այս կեղծիքների պատվիրատուների բարոյականության և կատարողների ծառայամտության ու հաճոյակատարության աստիճանը, օգտվել խրատաբանական ասացվածքներից և այլն: Բայց մի դիտարկում անհնար է չկատարել. դա այն զգացողությունն է, որը մարդ ապրում է՝ կարդալով Բաքվում գրված այդ նամակները: Ադրբեջանի ռուսական համայնքը, ինչպես մյուսները, հսկայական ավանդ է ներդրել այն ամենի ստեղծման մեջ, ինչով այսօր հարուստ է Ադրբեջանը (նույնը վերաբերվում է և նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններին): Գործարաններ, ֆաբրիկաներ, ջրամբարներ, շենքեր, անհնար է թվարկել այն ամենը, ինչը ռուս մարդու ձեռքով ստեղծվել է Ադրբեջանում (կրկնում ենք՝ Ադրբեջանը բացառություն չէ): Եվ դառն է գիտակցել, որ այնտեղ այսօր ռուսական համայնքի ներկայացուցիչները, որոնք հսկա ժողովրդի մի մասնիկն են, ստիպված են դիմել նման հնարքների՝ արժանանալու հանրապետական իշխանությունների բարեհաճությանը:

Նման կեղծիքների տարածումը Կրասնոդար քաղաքի և Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքներին, ի դեմս երկրամասի հայկական համայնքների համակարգող խորհրդի նախագահ Ռ. Քամայանի և Կրասնոդար քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան հայկական մշակույթի և գթասրտության ընկերության նախագահ Վ. Կուկոյանի, ստիպեց տեղի մամուլով դիմել Կուբանի ու Գյուլիսային Կովկասի ողջ բնակչությանը և ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, որ *«ինչպես Կրասնոդարի երկրամասում և Հյուսիսային Կովկասում, այնպես էլ*

Հայաստանում գործող հայկական և ոչ մի հասարակական կամ քաղաքական կազմակերպություն չի մշակում նման զառանցազին ծրագրեր: Հայաստանը և հայերը երբեք ոտնձգություն չեն կատարել ուրիշի տարածքների նկատմամբ, այլ միայն արյունահեղ պայքարով փորձում են պահպանել բոլշևիկյան «սև բաժանման» ընթացքում իրենցից խլված Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հարազատ հողը:

Ռուսաստանում ապրող հայերը պայքարել են, պայքարում են և կպայքարեն մեծ Ռուսաստանի և մասնավորապես՝ նրա հարավային սահմանների վերածնման ու բարգավաճման համար:

Հայերը հանդես են եկել և կշարունակեն հանդես գալ Ռուսաստանի հարավում բոլոր ժողովուրդների խաղաղ և ստեղծարար համագործակցության օգտին: Հայերի ու ռուսների միջև թշնամանքի սերմանումը և Հյուսիսային Կովկասում պատերազմի հրդեհների բորբոքումը բխում են միայն նրանց շահերից, ում ձեռնառու է իրենց սահմանների մոտ ունենալ թուլացած Ռուսաստան» [15]:

Առժամանակ անց այս սադրանքների մասին հաղորդեցին նաև Ռուսաստանի հեռուստատեսությունը («Вести» ծրագիրը) և կենտրոնական մամուլը («Ձարդեր արտահանման համար», «Московские новости» 1992թ., 1-ը նոյեմբերի): Այս հոդվածում ասվում է, որ Ստավրոպոլում տարածվում է ինչ-որ «Հյուսիսային Կովկասի հայկական ազգային-ազատագրական ճակատի» փաստաթղթերի պատճենների մի ծավալուն անհասցե թղթածրար, որի մեջ փաստաթղթերի պատճեններով առաջարկվում է ճանաչել պատմական ճշմարտությունը. «Դարեր ի վեր Կովկասը եղել է Մեծ Հայաստանի կազմում, իսկ հետո զավթվել Ռուսաստանի կողմից»... Եվ այս «պատմական աշխատության» տակ Ֆ. Շելով-Կովեդյակի ստորագրությունն է, ով վերջերս հրաժարական տվեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալի պաշտոնից: Այս փաստաթղթերն ապշեցնում են պարունակած արսուրդ պնդումներով և քարանձավային կոչերով: Եվ սա առաջին դեպքը չէ: Միջակայք, զոյություն չունեցող հայկական «ճակատի» անունից կեղծիքներ տարածելու փաստով Դոնի Ռոստովի դատա-

խազութիւնը հարուցվել է քրեական գործ: Ռուսաստանի դատախազութեան համաձայնութեամբ՝ հետաքննութեանը մասնակցում է նաև Հայաստանի ներքին գործերի նախարարութիւնի գործուղված խումբ:

Ինչպիսիք կլինի հետաքննութեան արդիւնքը՝ ցույց կտա ժամանակը: Բայց փաստը մնում է փաստ: Հյուսիսային Կովկասում նախկինում տարածված կեղծիքներից որևէ մեկի աղբյուրն առ այսօր բացահայտված չէ:

Նոյեմբերի վերջին „Аргументы и факты” թերթը (№ 46-47) հայտնեց, որ Ռոստովի մարզի, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի բնակչութեանը շարունակում է վրդովեցնել իբրև թէ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի նախկին առաջին տեղակալ Ֆ. Շելով-Կովեդյանի հեղինակած և Ստեփանակերտում հրատարակված ինչ-որ բրոշյուր, որտեղ նշված հոդերն անվանվում են բուն հայկական տարածքներ: Ինքը՝ Ֆ. Շելով-Կովեդյանը, այդ բրոշյուրն անվանել է բացահայտ կեղծիք: Նրա խոսքերով՝ բրոշյուրի գրութեան ոճը շատ նման է ինչ-որ ադրբեջանցի ակադեմիկոսի գրութեան ոճին:

Նման սադրանքները, չնայած իրենց ծայրահեղ պարզունակութեանը, առավել քան բարդացնում են Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքի վիճակը: Հարկ է նաև նշել, որ տարածաշրջանի առավել քան բազմազայն էթնիկ խճանկարը ևս հաճախ շուռ է գալիս ազգային փոքրամասնութիւնների մեջ թվով ամենամեծը համարվող հայերի դէմ (թվաքանակով նրանք երբեմն զիջում են միայն ուկրաինացիներին): Խնդիրն այն է, որ բնիկ բնակչութեան հակահայ տրամադրութիւններ ունեցող հատվածն անգամ այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների կատարած ցանկացած իրավախախտում իսկույն վերագրում է հայերին:

Այսպիսով, Կրասնոդարի երկրամասի էթնոքաղաքական իրավիճակը բնութագրող գործոններն առավել քան բազմազան են: Դրանցից առաջինը բնակչութեան բարձր աստիճանի էթնիկ բազմատարրութիւնն է, ապա՝ որոշ էթնիկ խմբերի կոմպակտ տեղաբաշխումը, բնակչութեան կրոնական բազմատարրու-

թիւնը, ակտիվ ներհոսքը նախկին խորհրդային հանրապետութիւններից, այդ թվում՝ ազգամիջյան հակամարտութիւնների տարածքներից, երկրամասի սահմանամերձ դիրքը, որն ամեն անգամ պարտադրում է անմիջականորեն արձագանքել հարևան Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասի ազգային կազմավորումներում տեղի ունեցող իրադարձութիւններին (դրանք և՛ միգրացիայի հերթական ալիքներն են, և՛ տնտեսական կայտերի խզումը, և՛ շահագրգիռ կողմերի հասարակական կարծիքների ակտիվացումը. օրինակ՝ վրաց-աբխազական հակամարտութիւնում ադիգեյներն ունեն արխազամետ կողմնորոշում, հայերը շահագրգռված են դարաբաղյան խնդրի հայամետ լուծմամբ): Եվ ողջ այս բարդ համապատկերի պայմաններում կոնկրետ ուժերի կողմից իրականացվում են ազգամիջյան հարաբերութիւնների ապակայունացմանը նպատակաուղղված գործողութիւններ:

1991 թվականի ապրիլին Կրասնոդարի երկրամասային խորհրդի պատգամավորների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման ընթացքում ի հայտ եկան երկրամասի էթնիկ խմբերի հնարավոր կոնֆլիկտային զույգերը՝ հայեր-ռուսներ (նկատի են առնվում կազակները), մեսխեթցի թուրքեր-ռուսներ, ադիգեյներ-ռուսներ:

4. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՆՈՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Թեև Ռուսաստանի հարավի հայերի էթնիկութեան մակարդակը քիչ թէ շատ բարձր է, սակայն նրանց, ինչպես և այլ ժողովուրդների շրջանում նկատելիորեն բարձրացել է հետաքրքրութիւնը իրենց ազգային մշակույթի նկատմամբ, հատկապես 1988թ. սկսված դարաբաղյան շարժումից հետո: Ազգային մշակույթի վերածննդն առաջին նկատելի դերակատարութիւն է վերապահված հայերի կոմպակտ բնակութեան վայ-

րերում հիմնադրված կրթամշակութային միություններին. «Մեսրոպ Մաշտոցի անվան հայկական մշակույթի և գթասրտության միություն» (ք. Կրասնոդար), «Նոր Նախիջևան» (ք. Ռոստով), «Էրեբունի» (ք. Ստավրոպոլ), «Արմավիր» (ք. Արմավիր), «Ցանք» (ք. Անապա), «Արարատ» (ք. Աբխնսկ), «Վերածնունդ» (ք. Ապշերոնսկ), «Անի» (ք. Գելենջիկ), «Հայք» (ք. Եյսկ), «Վան» (ք. Կուրգանինսկ), «Համշեն» (ք. Տուապսե), «Սևան» (ք. Սոչի), «Լույս» (ք. Նովոռոսիյսկ), «Յ. Շիրազի անվան միություն» (ք. Կուբանի Սլավյանսկ), «Վ. Տերյանի անվան միություն» (ք. Պյատիգորսկ), «Կռունկ» (ք. Կիսլովոդսկ), «Հայք» (ք. Միներալնիե Վոդի) և այլք:

Մշակութային միությունների կողմից մեծ ուշադրություն է դարձվում ազգային դպրոցների, դասարանների, մայրենի լեզվի ուսուցման դասընթացների բացմանը: Հայտնի է, որ Կրասնոդարի երկրամասի տարածքում հայկական ուսումնական հաստատություններ գոյություն են ունեցել դեռևս XIX դարում: Այսպես, 1847 թվականին Արմավիրում բացվեց առաջին հայկական արական դպրոցը, իսկ 1871 թվականին՝ ևս երկու՝ արական և իգական դպրոցներ [16], 1863 թվականին հայերը դպրոց կառուցեցին Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար): Բայց առավել մեծ թվով դպրոցներ բացվեցին 1920-ական թվականներին, օրինակ՝ Սոչիի շրջանում՝ 29, ուր մինչ այդ արդեն իսկ գործում էին հայկական 12 դպրոցներ և ուսումնարաններ, Մայկոպի օկրուգում՝ 15, Նովոռոսիյսկում՝ 26: Սակայն հետագայում Կրասնոդարի երկրամասում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ այլ տարածաշրջաններում ազգային դպրոցների թիվը նկատելիորեն նվազեց. եթե 1951 թվականին երկրամասում գործում էր 140 հայկական ուսումնական հաստատություն, ապա 1967 թվականին դրանք 12-ն էին [17], իսկ 1992 թվականին մնացել էին ընդամենը 3-ը (Մեծ Սոչիի շրջանի Սերգեյ-Պոլե, Մուրովկա ու Ներքին Շիլովկա գյուղերում) և 20 դպրոցներում հայերենը դասավանդվում էր որպես ճանաչողական առարկա:

Հարկ է նշել, որ հայկական դպրոցում սովորելը տեղի հայերի համար առաջացնում է մի շարք դժվարություններ, քանի

որ հայերենը դասավանդվում է մեծ մասամբ արևելահայերենի հիմքի վրա ձևավորված գրական լեզվով, իսկ երեխաներն ու մեծահասակները խոսում են արևմտահայերենին պատկանող Համշենի բարբառով: Ըստ այդմ՝ հաճախ ծնողներն իրենք չեն ցանկանում երեխաներին ուղարկել հայկական դպրոց: Վերջին ժամանակներում երկրամասի մի շարք քաղաքներում բացվել են կիրակնօրյա հայկական դպրոցներ (երեքը՝ Կրասնոդարում), ֆակուլտատիվ խմբեր, լեզվի ուսուցման դասընթացներ: Սոչիի մանկավարժական ուսումնարանում 33 աղջիկներ (Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայկական դպրոցների տարրական դասարանների ապագա մանկավարժները) սկսել են սովորել մի խմբում, ուր դասավանդվում են հայոց լեզու, հայերենով՝ նաև պատմությունն ու գրականությունը, իսկ մնացած առարկաները ռուսերեն լեզվով:

1991 թվականի նոյեմբերի 23-ին լույս տեսավ համշենահայերի «Չայն համշենյաց» ամսաթերթի առաջին համարը (հայերեն և ռուսերեն լեզուներով): Ամսաթերթը հրատարակում է «Սևան» մշակութային միությունը (ք. Սոչի): Այս միությունը Հայաստանի Հանրապետության Սևան քաղաքի մշակույթի վարչության աջակցությամբ 1991 թվականին հիմնեց «Համշեն» ազգագրական համույթը, որում ընդգրկված են Սև ծովի ափին՝ Գագրայից մինչև Տուապսե ընկած տարածքում բնակվող 60 հայեր: Համույթի բոլոր համերգներն անցնում են մեծ հաջողությամբ: Իսկ 1992թ. սեպտեմբերին հրատարակվեց «Լույս» թերթի առաջին համարը (ք. Նովոռոսիյսկ):

Վերջին ժամանակներս մի շարք վայրերում, օրինակ՝ Կրասնոդարում, Սոչիում, Ադլերում բացվել են հայկական աղոթատներ, իսկ Ադլերում և Շահումյան գյուղում հայկական եկեղեցիների կառուցման համար կատարվել են հողահատկացումներ: 1992թ. մայիսին Անապայի շրջանի Հայկաձոր գյուղում տեղադրվեց խաչքար, որի վրա պատկերված են հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող երկու փյունիկ թռչուններ, և փորագրված են «Միամանք առ Աստված տանող ճանապարհին» բառերը: Նույն տեղում նախատեսվում

է կառուցել Սուրբ Գևորգ անունը կրող եկեղեցի: Ներկայումս հայկական միությունները դիմել են տեղական իշխանություններին՝ Կրասնոդար քաղաքում 1960 թվականին ավերվածի փոխարեն կառուցելու նոր հայկական եկեղեցի, ինչպես նաև ևս մեկ եկեղեցի՝ Սոչի քաղաքում:

Հայկական մշակութային ընկերությունները բարեգործական զգալի օգնություն են ցուցաբերում փախստականներին, մանկատներին և համայնքի կարիքավոր անդամներին:

Ինչ վերաբերում է Ռոստովի մարզի հայերին, ապա նրանց և ռուսների ավելի քան երկուհարյուրամյա հարաբերությունները բարիդրացիական են, հաճախ նաև ազգակցական:

Վերջին ժամանակներս բարձրաձայնվում են Մյասնիկովսկի շրջանին ազգային շրջանի կարգավիճակ շնորհելու ցանկություններ: Չնայած 1960-ական թվականներից ի վեր փոփոխված ժողովրդագրական իրավիճակին՝ հայերը շարունակում են կազմել շրջանի բնակչության 54,9%-ը, այսինքն՝ կեսից ավելին: Ենթադրվում է, որ ժամանակի ընթացքում այս կարգավիճակի վերականգնումն ավելի իրական կդառնա: Հայ բնակչությունը խոր գոհունակությամբ կընդունի նաև Նոր Նախիջևան տեղանվան վերականգնումը, թեև ներկայիս Պրոլետարական շրջանն ընդգրկում է առավել մեծ տարածք, քան հին Նոր Նախիջևան քաղաքը: Այս հարցում, սակայն, մեր կարծիքով, որոշիչ պետք է համարվեն ոչ թե քանակական ցուցանիշները, այլ ավելի քան երկու հարյուր տարի առաջ այս քաղաքը կառուցած, այդպես անվանած և այսօր էլ այդտեղ ապրող ժողովրդի ազգային շահերը (1989թ. մարդահամարի տվյալներով՝ Ռոստովում բնակվում է ավելի քան 31 հազար հայ, որոնց մոտ մեկ երրորդը՝ Պրոլետարական շրջանում):

Պատմական հայկական անվանման վերականգնումը, անկասկած, կունենա բարոյական մեծ նշանակություն: Այսօր ողջ երկրում ընթանում է փողոցների, շրջանների ու քաղաքների պատմական անվանումների վերականգնման գործընթաց, և ուզում ենք հավատալ, որ այն կվերաբերվի նաև Ռոստովին: Կարծում ենք, որ դա կարող է տեղի ունենալ այն մեծ

ուշադրության շրջագծում, որը տեղական իշխանությունները տածում են մարզում բնակվող ժողովուրդների կողմից իրենց մշակութային ավանդույթների վերածնման և պահպանման աճող ձգտման հանդեպ: Այսպես, 1985 թվականին Մյասնիկովսկի շրջանում հիմնվեց Դոնի հայերի «Անի» համույթը, որի հիմնական նպատակն է հայկական բանահյուսության հավաքումը և ուսումնասիրումը, նրա հետագա զարգացումն ու տարածումը: Համույթը կատարումներով հանդես է գալիս ոչ միայն հայկական գյուղերում, այլև քաղաքում, ինչպես նաև մարզի սահմաններից դուրս:

1988թ. վերջին Ռոստով քաղաքում Մշակույթի համառուսաստանյան ֆոնդին կից հիմնադրվեց «Նոր Նախիջևան» հայկական կրթամշակութային միությունը, որը միավորում է տարբեր տարիք և սոցիալական կարգավիճակ ունեցող շուրջ 150 մարդու: Բացվել են տարբեր՝ մայրենի լեզվի, ազգագրության, գրականության, ազգային ճարտարապետության սեկցիաներ: Մեծ ուշադրություն է դարձվում հայոց լեզվի ուսուցմանը: Միությունը կազմակերպել է հայոց պատմությանը, պոեզիային, երաժշտությանը, ճարտարապետությանը նվիրված մի քանի երեկոներ, ցուցահանդեսներ, «գուրաշ» ազգային ըմբշամարտի տոն: Առանձնահատուկ հիշատակության է արժանի միության նախաձեռնությամբ 1989թ. սեպտեմբերին տեղի հայ համայնքի կազմավորման 210-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությունը: Միությունը գործում աջակցություն է ցուցաբերել Սպիտակի երկրաշարժից տուժած հայերին, իսկ ընդունման և կեցությանը ապահովման հարցերում՝ Ադրբեջանից հայ փախստականներին:

5. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Ռուսաստանի, ինչպես և մերձավոր արտասահմանի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը, ճակատագրի բերումով, գտնվում է ազգամիջյան սուր լարվածության և բախումների մեծ վտանգավորություն ունեցող գոտիներում: Մենք նկատի ունենք ոչ միայն Ստավրոպոլի ու Կրասնոդարի երկրամասերը և Ռոստովի մարզը, այլև Վրաստանը, Աբխազիան, Յուսիսկովկասյան հանրապետությունները, Ղրիմն ու Միջին Ասիան: Նման իրավիճակը լուրջ դժվարություններ է առաջացնում կենցաղի, մշակույթի զարգացման, մայրենի լեզվի տիրապետելու ասպարեզներում՝ սպառնալով հայերի ֆիզիկական և հոգևոր գոյությանը: Հայերը երբեմն հայտնվում են այնպիսի իրավիճակներում, որ նրանց ոչ մի հրաշք չի կարող փրկել՝ ոչ ամենագոր չեզոքությունը հակամարտող կողմերի նկատմամբ, ոչ դիմադրելու համար անհրաժեշտ ուժը, ոչ շրջահայաց պահվածքը: Սա այն դեպքն է, երբ հանգամանքներն ավելի զորեղ են, քան մարդկային բանականությունն ու կարողությունները:

Ի՞նչ անել: Այսօր հաճախ է խոսվում ողջ մարդկությանը սպառնացող գլոբալ վտանգների մասին, բայց եթե դիտարկենք մեր փոքր ազգին պատուհասող վտանգները, կհանգենք այն եզրակացության, որ հայկական սփյուռքը կարող է անհետանալ ավելի շուտ տեղային կործանարար պատերազմների և ազգամիջյան ջարդերի պատճառով շատ, քան այդ գլոբալ սպառնալիքների հետևանքով:

Այս առնչությամբ տեղին է նշել (թեև մի քիչ դուրս գալով զուտ հայկական հարցի շրջանակներից), որ ցանկացած ազգային փոքրամասնության մեջ է թաքնված հակամարտության պատճառը: Փորձենք բացատրել այս միտքը:

Ազգային փոքրամասնությունները միշտ ավելի շատ աշխատանք, էներգիա, հաճախ էլ հերոսական ջանքեր են ներ-

դնում՝ այլազգի միջավայրում գոյատևելու համար: Ինքնապահպանման բնագործ նրանց ստիպում է աշխատել կրկնակի, եռակի եռանդով: Ազգային փոքրամասնության յուրաքանչյուր ներկայացուցիչ ունի ինչ-որ ներքին պաշտպանական մեխանիզմ, որը մշտապես նախապատրաստում է նրան սոցիալական, աշխատանքային, ինտելեկտուալ ակտիվության:

Հայերը ևս բացառություն չեն: Շնորհիվ բնածին աշխատասիրության՝ նրանց ընտանիքները բավական բարեկեցիկ են ապրում: Ընդ որում այդ բարեկեցությունը արդյունք է ոչ միայն սեփական աշխատանքի, այլև ողջամիտ, երբեմն բավական համեստ ծախսերի ու սպառման: Բնավորության այս գիծը ձևավորվել է դարերի ընթացքում՝ որպես դաժան կենսափորձի հետևանք՝ հայերին ստիպելով մշտապես մտածել վաղվա օրվա մասին: Հին ժամանակներից ի վեր հայերի մեջ զարգացել են հոգատար տանտիրոջը և սեփականատիրոջը բնորոշ գծերը: Հետաքրքիր փաստ. Հայաստանը նախկին խորհրդային հանրապետություններից առաջինը սեփականաշնորհեց հողը: Եվ եթե չլինեին երկրաշարժը, շրջափակումը, պատերազմը, ապա երիտասարդ պետությունը շատ կարճ ժամանակահատվածում զարգացման հսկայական ցատկ կկատարեր:

Բայց վերադառնանք հակամարտության անխուսափելիությանը: Պարադոքս է, սակայն հենց հայերի լավագույն որակները՝ աշխատասիրությունը, ձգտումը, ողջամիտ սպառումը դառնում են նրանց նկատմամբ նախանձի, իսկ երբեմն էլ՝ արհամարհանքի ու թշնամանքի պատճառ: Այսպես, Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը հենց նախանձն էր: Արևմտյան Հայաստանում հայերն ավելի շատ ունեցվածք և կրթություն ունեին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ներքին առևտրի շուրջ իննսուն, իսկ արտաքին առևտրի մոտ հիսուն տոկոսը կենտրոնացած էր հայերի ձեռքում: Սովորողների թվով հայերը հինգ անգամ գերազանցում էին թուրքերին: XX դարասկզբին Թուրքիայի եվրոպական և ամերիկյան համալսարաններում ավելի քիչ թուրք էր սովորում, քան հայ (հայերն ունեին մոտ 15 հազար ուսանող):

Ռուսաստանի Գերագույն խորհրդի հանձնաժողովի տվյալներով՝ Կրասնոդարի երկրամասի արդյունաբերական ոլորտում, ուր աշխատավարձը ցածր է, հայերի տեսակարար կշիռը կազմում է 3-4%, իսկ ահա ոչ արդյունաբերական ոլորտում այդ ցուցանիշը հասնում է 25%-ի [18]: Այս միտումը նկատվում է հայերի կոմպակտ բնակության մյուս շրջաններում ևս: Հենվելով այս տվյալների վրա՝ բնիկ բնակչության որոշ մասը, ամենից առաջ կազակները, այս փաստարկը բացահայտ օգտագործում են հայերի դեմ. ինչո՞ւ են նրանք գրավում առավել օգտաշահ դիրքեր: Նման հռետորական հարցին հետևում են համապատասխան գործողություններ, ինչի վկայությունն են վերը բերված փաստերը:

Հայերը, ինչպես նաև Կովկասի մյուս ժողովուրդները, ունեն ազգային մի բնութագրական գիծ, որն ի վերջո շրջվում է նրանց դեմ: Դա վաղ ժամանակներից հայտնի նրանց հյուրընկալությունն է: Հայերը հաճախ են հյուր կանչում գործընկերներին, հարևաններին, այդ թվում՝ նաև այլ ազգերի ներկայացուցիչների: Սիրում են առանց ետին մտքի հյուրասիրել, ուրախանալ: Ինչպես ընդունված է ասել, նրանք սրտաբաց մարդիկ են: Ամենը, ինչը լավն է, ինչը թանկ է կամ չի ճարվում, նախատեսված է հյուրերի համար: Հյուրը, իհարկե, գնահատում է ցուցաբերված այդ հարգանքը, բայց հետո նրան սկսում են տանջել կասկածները, թե ինչո՞ւ է «եկվորն» ավելի հարուստ, տունը՝ ընդարձակ, կինը և երեխաները՝ ավելի լավ հագնված: Մնում է միայն առիթ գտնել և սկսել գործել: Իսկ առիթ միշտ գտնվում է:

Ի թիվս մնացյալի՝ նման զգացումները ներքուստ ունենում են գաղափարական, դասակարգային մոտիվ: Հեղափոխությունը վաղուց ավարտվել է, Խորհրդային Միությունը՝ փլուզվել, սակայն դեռևս զգացվում է հարուստ, բարեկեցիկ մարդկանց նկատմամբ հակակրանքի սինդրոմը: Հսկայական թվով մարդասպանություններ, հարձակումներ, գողություններ և անձի դեմ ուղղված այլ հանցագործություններ կատարվում են

սոցիալական հենց այս հարմարանքի «օգնությամբ». «Ինչո՞ւ նա ունի ամեն ինչ, իսկ ես՝ ոչինչ»:

Այնուհետև. վերջին տարիներին հայկական սփյուռքն ապրում է մեծ լարվածություն, որի պատճառը հայտնի է ողջ աշխարհին: Դա ղարաբաղյան հակամարտությունն է, որը հեղաշրջեց հայկական սփյուռքի ազգային ինքնագիտակցությունը: Մինչ այդ դանդաղ, բայց հաստատուն ընթացքով մարում էր ինքնանույնականացման զգացումը, մոռացվում ամեն ինչ՝ լեզուն, ավանդույթները, մշակույթը: Բայց շատերի համար անակնկալ կերպով, որպես ուժգին ահազանգ, պայթեց Ղարաբաղյան շարժումը՝ արթնացնելով նրանց էթնիկ ինքնությունը (ի դեպ՝ ոչ միայն հայերի): Այս ալիքի արդյունքում հազարավոր երիտասարդներ ու տարեցներ սկսեցին հետաքրքրվել իրենց մայրենի լեզվով, պատմությամբ և սեփական ժողովրդի ճակատագրով: Նախկին Խորհրդային Միության տարածքում, հատկապես կոմպակտ բնակության վայրերում, հիմնադրվեցին տասնյակ, եթե ոչ հարյուրավոր հայկական միություններ: Հիմնը վում են մշակութային կենտրոններ, բացվում կիրակնօրյա դպրոցներ, կառուցվում կամ վերականգնվում են եկեղեցիները, հրատարակվում են թերթեր:

Որպեսզի ազգային ինքնագիտակցության ձեռք բերված մակարդակը չսկսի նվազել, անհրաժեշտ է ամրապնդել այդ առաջընթացը, անհրաժեշտ են լիարժեք գործունեություն ծավալող ազգային մշակութային ընկերություններ, լայնորեն տարածվում է տեղական պարբերական մամուլը, իսկ ժամանակի ընթացքում՝ նաև զարգացած ազգային գրահրատարակչական մշակույթը: Սա հատկապես կարևոր է, եթե նկատի առնենք, որ գալիս է մի ժամանակ, երբ մայրենի լեզուն, պատմությունն ու ավանդույթներն ինացող տատիկներն ու պապիկները հեռանում են կյանքից՝ չհասցնելով այդ անգին ժառանգությունը փոխանցել թոռներին, ովքեր, իրենց հերթին, չեն կարող դրանք յուրացնելու գործում լուրջ հույսեր կապել այս ամենին լույս անկերեսորեն ծանոթ իրենց ծնողների հետ:

Սփյուռքի գոյության համար անհրաժեշտ են մշտական շփումներ հիմնական էթնիկ միջուկի՝ Հայաստանի հետ: Ընդ որում՝ խոսքը չի վերաբերում Հայաստանի հետ սփյուռքի ազգային կամ քաղաքական ինտեգրմանը: Այստեղ կարևորը տարրացրված հայկական համայնքներում նման կապերի միջոցով լեզվի, մշակույթի, ավանդույթների պահպանումն է:

Ոչ պակաս կարևոր նախապայման են ներքին ռեզերվներն ու ինտելեկտուալ ներուժը: Եվ որպեսզի այս օրգանիզմը նորմալ զարգանա ու ամրապնդվի, անհրաժեշտ են հասարակական-սոցիալական ինստիտուտներ: Մասնավորապես, վաղուց հասունացել է Ռուսաստանի հայկական համայնքների լիարժեք գործող ասոցիացիայի ստեղծումը և հայերի կոմպակտ բնակության վայրերում գործող համապատասխան բուհերում հայոց լեզվի և պատմության ամբիոնների հիմնման անհրաժեշտությունը:

Վերադառնալով դարաբաղյան հարցին՝ ավելորդ չէ նշել, որ նախկին ԽՍՀՄ զանգվածային լրատվության միջոցների ջանքերով դարաբաղյան խնդրի գործոնն ուժեղացրեց հակահայկական տրամադրությունները: Ցավոք, նրանց զգալի չափով հաջողվեց նենգափոխել այս ողբերգական խնդիրը՝ ստեղծելով հայերի բացասական կերպար: Համենայն դեպս, այդ մասին են վկայում հասարակական կարծիքի ուսումնասիրման որոշ արդյունքներ: Ղարաբաղյան իրադարձությունների ծավալման անցած ավելի քան հինգ տարիների ընթացքում զանգվածային լրատվության միջոցները բազմաթիվ նախկին խորհրդային հանրապետությունների բնակչության գիտակցության մեջ կարողացան արմատավորել խռովարար և անշնորհակալ հայի կերպարը: Ղարաբաղը դարձավ բացասական իմաստով խորհրդանշական օրինակ. «Մեզ Ղարաբաղ պետք չէ», «Սա դարձյալ Ղարաբաղ է», «Մենք չենք ուզում երկրորդ Ղարաբաղ» և համանման այլ արտահայտությունները դարձել են այլաբանություններ: Եվ ընդ որում՝ շատերն օգտագործում են դրանք՝ առանց խորամուխ լինելու հարցի բովանդակության մեջ:

Դժվար է արագորեն հաղթահարել հակահայկական տրամադրությունները: Հայկական համայնքների օգնությամբ հարկավոր է համբերատար բացատրական աշխատանք: Միայն վարքով և կենսակերպով կարելի է հերքել անընդհատ հնչող զրպարտանքները, վերացնել այն ստերեոտիպը, թե հայերը հաճախ ստեղծում են քրեածին միջավայր:

Հայերի, ինչպես և այլ ժողովուրդների մեջ ամբարտավանությունը և կոպտությունը համարվում են աններելի արատներ: Բայց երիտասարդները հաճախ մոռանում են մեծերի ավանդույթները: Ուստի շրջապատի հարգանքին արժանանալու համար անհրաժեշտ է բացատրական աշխատանք ծավալել հայ երիտասարդության շրջանում՝ բացառելու պարծենկոտությունը, ամբարտավանությունը, ինքնագերագնահատումը և սնապարծությունը: Դեռևս մեծ տարբերություն է առկա սփյուռքի և շրջապատի կողմից «միջին մարդու» կերպարի ընկալումների միջև: Ճշմարտությունն ինչ-որ տեղ մեջտեղում է, և այն կարելի է արտահայտել միանգամայն պարզ բանաձևով. «Հայերը մյուսներից ո՛չ լավն են և ո՛չ էլ վատը»:

Ի՞նչ սպասել Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայերից: Ինչպե՞ս կզարգանան իրադարձություններն այս տարածաշրջանում: Կկարողանա՞ գոյատևել հայկական ազգային փոքրամասությունը: Կատարենք մի քանի ենթադրություններ, թեև գիտակցում ենք, որ կանխատեսումներով զբաղվելն անշնորհակալ գործ է, ինչպես օրինակ՝ գերմանացի պայծառատեսներից մեկը Գերմանիաների վերամիավորումից հաշված շաբաթներ առաջ հայտարարել էր, թե նման բան առաջիկա հիսուն տարիների ընթացքում տեղի չի ունենա:

Բայց և այնպես, կարծում ենք, որ մեծ ռիսկի չենք դիմի, եթե ասենք, որ առաջիկա տասնամյակների ընթացքում ազգամիջյան հակամարտությունները չեն վերանա: Քանի դեռ մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունի «բնիկ» և «ոչ բնիկ» բնակչության հստակ բաժանում («տիտղոսակիր ազգ» ու ազգային փոքրամասնություններ), և ամենակարևորը՝ բնական է համարվում տարբերությունը «բնիկների» և «ոչ բնիկների»

ունեցած իրավունքների միջև, ազգամիջյան հակամարտություններն անխուսափելի կլինեն. դրանք կշարունակվեն և ավելի կսաստկանան: Փաստ է, որ այսօր նախկին ԽՍՀՄ պետությունները կազմված են ազգային սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր պետությունում կա «գլխավոր» ազգ և կան ազգային փոքրամասնություններ: Վերջիններս այդ պետություններում այսօր շուրջ 60 միլիոն են: Նրանցից առավել մեծաթիվ են և հետևաբար ենթակա են առավել իրավազրկման ռուսները, ուկրաինացիները, հայերը, թաթարները, զերմանացիները, կորեացիները, հույները, լեհերը, տաջիկները և այլք:

Շատ ժողովուրդների մոտ վերջին տարիներին ծագած հույսերը արդարության վերականգնման և ավանդական էթնիկ արժեքներին վերադարձի վերաբերյալ հիմնականում չարդարացան: Փոխադարձ վիրավորանքները, հավակնությունները, անցած տասնամյակների ընթացքում կատարված անարդարությունների վայրի արձագանքը ԽՍՀՄ փլուզումից հետո ակնթարթորեն ջրի երես ելան: Ողջ սրությամբ ի հայտ եկավ էթնոսների փոխհարաբերությունների վերահսկման անհրաժեշտությունը: Նոր առաջնորդները ոչ միայն չկարողացան կարգավորել ազգամիջյան հարաբերությունները, այլև, ինչպես պարզվեց, պատրաստ չէին դիմելու պատասխանատու քայլերի: Արդյունքում՝ էթնիկ հիմքի վրա առաջացան լարվածության շուրջ երկու հարյուր օջախներ, որոնք կարող են իրենց շրջապատույտի մեջ ներքաշել նորանոր շրջաններ:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում գոյություն ունեցող միտումների պահպանման դեպքում Ռուսաստանի հայկական սփյուռքը կարող է էլ ավելի ստվարանալ: Հայերի թվով Ռուսաստանն այսօր աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը: Ըստ այդմ՝ առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում Ռուսաստանի հետ հարաբերությունների խնդիրը: Օբյեկտիվորեն Հայաստանը Ռուսաստանից ավելի շատ է շահագրգռված ամենասերտ և բարեկամական հարաբերությունների հաստատման մեջ: Այս հարաբերությունների բնույթով է

մեծապես պայմանավորված Ռուսաստանի հայերի ճակատագիրը: Հետևաբար, Հայաստանն իր միջպետական հարաբերությունները կառուցելիս պիտի հաշվի առնի այս իրողությունները և մեծ հոգատարություն հանդես բերի Հայաստանի ռուսական համայնքի նկատմամբ: Իսկ Հայաստանի ռուսական մշակութային միությունը շատ բան կարող է անել միջպետական շփումների բարելավման ասպարեզում:

Կենցաղային, մշակութային, սոցիալական, քաղաքական և այլ խնդիրների վերաբերյալ կարծիքների և տեղեկատվության փոխանակման նպատակով կարելի է ուղիղ կապեր հաստատել Հայաստանի ռուսական համայնքի և Հարավային Ռուսաստանի ու Մոսկվայի հայկական համայնքների միջև:

Միաժամանակ, մեր կարծիքով, օրվա հրամայականն է վերացնել լարվածությունը հայերի և կազակների միջև: Այս խնդրի լուծումը Հարավային Ռուսաստանում հայկական կոմպակտ էթնիկ խմբի գոյատևման կարևորագույն նախապայմանն է: Ինչպես վկայում են վերոշարադրյալ նյութերը, շատ հայեր վաղուց ի վեր ապրում են այս տարածաշրջանում, շատերն էլ հետպատերազմյան ժամանակահատվածում այստեղ են տեղափոխվել Ադրբեջանից, Վրաստանից, ուր վերադառնալն այլևս անհնար է: Մնում է միայն մի ելք՝ համաձայնության գալ և ընդհանուր լեզու գտնել կազակության հետ:

Կարևոր նշանակություն ունի տեղերում ազգային համայնքների և հեղինակություն վայելող անձանց օգնությամբ ժողովրդական դիվանագիտության զարգացումը, այնպիսի համատեղ նախագծերի իրականացումը, որոնք նկատելի օգուտ կբերեն շրջանի ողջ բնակչությանը, գործնական շփումը մեծաթիվ անդամներ ունեցող կազմակերպությունների և ազգային համայնքների միջև, համագործակցության և փոխօգնության հաստատումը տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ:

Նպատակահարմար կլինի նաև հայկական համայնքների նախաձեռնությամբ կազակների հետ համատեղ կազմակերպել միջոցառումների շարք՝ նվիրված ընդհանուր քրիստոնեական

ավանդույթներին, սովորություններին, ընտանիքի, կանանց աշխատանքի նկատմամբ վերաբերմունքին, հայերի և կազակների պատմական ճակատագրի ընդհանրություններին:

Նման հանդիպումների կազմակերպման առաջին փորձերն արդեն իսկ արվում են. այսպես՝ 1992թ. փետրվարի 13-ին Արմավիր քաղաքում կայացավ տեղի կազակության ղեկավարների հանդիպումը «Արմավիր» հայկական մշակութային միության վարչության անդամների հետ, որին ներկա էին նաև հայկական Սուրբ Ուսպենսկի եկեղեցու ավագ քահանա տեր Ղևոնդը և ուղղափառ Սուրբ Տրոհիցկի եկեղեցու ավագ քահանա հայր Սերգիյը: Երկու կողմերի ելույթներում էլ նշվեց միմյանց հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման և միմյանց ավանդույթներն ու սովորույթները հարգելու կարևորությունը: Քննարկվեցին նաև իրավապահ մարմիններին օգնություն ցուցաբերելու հարցում երկու հասարակական կազմակերպությունների փոխգործակցության վերաբերյալ հնչած առաջարկները: Լուրջ քննարկման առարկա դարձավ հայ, ռուս և այլ ազգերի փախստականների խնդիրը, որն ապակայունություն և անվստահություն է սերմանում տեղական խնդիրների լուծման գործում: Երկու հոգևորականներն էլ հանդես եկան խաղաղության և համաձայնության կոչով: «Արմավիր» միության նախագահ, մշակույթի վաստակավոր աշխատող Ա. Գ. Օվանեսովը, դիմելով կազակներին, վստահեցրեց, որ Արմավիրի հայերն ամենակտիվ մասնակցություն կունենան քաղաքում ուղղափառ եկեղեցու կառուցմանը, իսկ վերջում նրանց նվիրեց Ստոկհոլմում հրատարակված հայերեն Աստվածաշունչ և ճենապակե թեյնիկ՝ համատեղ թեյախմության համար: Նոյեմբերին ծրագրված է նման հանդիպում Անապա քաղաքում:

Վերջում հարկավոր է ընդգծել, որ անհրաժեշտ է այլազգի միջավայրում հայերի գոյատևման հստակ ռազմավարություն, որի մշակման համար պետք է օգտագործել տեղական բնակչության հետ համագործակցության բոլոր ուղիներն ու եղանակները:

Մերձեցման և փոխըմբռնման կարևորագույն նախապայմաններ են հանդիսանում ռուսաց լեզվին անթերի տիրապետելը, հարգանքը բնիկ ժողովրդի պատմության, ավանդույթների, մշակույթի, սովորությունների և ծեսերի նկատմամբ, այլազգի գործընկերներին հայկական մշակույթին և պատմությանը ծանոթացնելու ունակությունները: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է ողջամիտ և չափավոր ինտեգրմանը ազգամիջյան հարաբերությունների համակարգին, որը վերջնարդյունքում ծառայելու է գլխավոր նպատակին՝ հայության հեղինակության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին թույլ կտա այլազգի միջավայրում գոյատևել և պահպանել իրենց էթնիկ կերպարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուսաստանն աշխարհում առաջին տեղն է գրավում իր տարածքում ապրող հայերի թվով, և ընդ որում՝ Ռուսաստանի հարավը նրանց առավել կոմպակտ բնակության վայրն է: Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի այլ քաղաքներում ու շրջաններում հայկական համայնքների վերացումից հետո հայերի համար Ռուսաստանի հարավի սփյուռքի դերն ու նշանակությունն էապես մեծացել է:

2. Ինչպես վկայում է հայ ժողովրդի պատմական փորձը, Ռուսաստանում իրավիճակի ապակայունացումը, քաղաքական, սոցիալական և սոցիալ-տնտեսական ցնցումները հաճախ ողբերգական հետևանքներ են ունենում հայերի համար:

Եվ ընդհակառակը, Ռուսաստանում (ինչպես և աշխարհի բազմաթիվ պետություններում) հայկական սփյուռքի գոյության պատմությունն ու փորձը միանշանակ վկայում են, որ երբ հյուրընկալ երկրները խաղաղ, հանգիստ և կայուն իրավիճակում են, այնտեղ ապրող հայերը հասնում են առավել մեծ հաջողությունների՝ բացահայտելով և դրսևորելով իրենց ազգային բնավորության ուժեղ գծերը՝ նպատակասլացությունը,

եռանդը, կենսունակությունը, նախաձեռնողականությունը, նվիրվածությունը տանը և ընտանիքին, հարգանքը գիտելիքի և կրթության նկատմամբ:

ԽՍՀՄ փլուզումը և դրանով պայմանավորված Կովկասի անկայունությունը նոր վտանգներ առաջացրին հայկական սփյուռքի համար: Հայերը մեծապես շահագրգռված են իրավիճակի կայունությամբ ոչ միայն Ռուսաստանում, այլև նրան սահմանակից պետություններում, մասնավորապես՝ Վրաստանում, ուր տեղի ունեցած արյունալի իրադարձությունները քանիտերորդ անգամ հանգեցրին փախստականների նոր հոսքի՝ ապակայունացնելով իրավիճակը հայերի կոմպակտ բնակության վայրերում՝ Հարավային Ռուսաստանի հարավում:

3. Հյուսիսային Կովկասում ռուսների (մասնավորապես կազակների) և հայերի միջև «ճակատագրով նախասահմանված» լարվածության օբյեկտիվ հիմքեր գոյություն չունեն: Ծագած ու դեռևս պահպանվող լարվածությունը պայմանավորված է հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոններով, ինչին դրսից տրվել է ազգային գունավորում:

4. Հայերի և ռուսների (մասնավորապես Հյուսիսային Կովկասի կազակության) ազգային շահերը Ռուսաստանի համար ամենազլխավոր՝ ռուսական պետության՝ որպես հզոր և բարգավաճող երկրի վերածնման հարցում լիովին համընկնում են: Այս եզրակացությունը, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ է ոչ միայն Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող հայերի, այլ նաև Հայաստանի Հանրապետության համար:

5. Կազակության քաղաքական ակտիվության դրսևորման կոնկրետ ձևերը կարող են և պետք է դառնան մանրակրկիտ վերլուծության առարկա, բայց միևնույն ժամանակ չի կարելի անուշադրության մատնել երեք կարևոր գործոն՝

ա) այն առանձնահատուկ դերը, որ կազակությունն ունեցել է ռուսական պետության կայացման գործում (հատկապես Ռուսաստանի հարավում),

բ) հեղափոխությունից հետո իրականացված կազակության ցեղասպանությունը.

գ) կազակական շարժման եության, ընտրվելիք ուղղությունների, ակտիվության դրսևորման ոլորտների դեռևս չհստակեցվածությունը:

6. Պատմական հիշողությունը, կազակության ցեղասպանության գիտակցումը, նախկինում ճնշված դասային գիտակցության բացահայտ արտահայտելու հնարավորությունը և կոնկրետ գործողությունների ձգտումը պայմանավորեցին կազակության հատուկ ռեակտիվ հոգեվիճակը, ինչը բնորոշ է նախկին ԽՍՀՄ բազմաթիվ բռնադատված ժողովուրդներին: Սակայն այդ վիճակը ոչ թե պատճառ, այլ բարենպաստ միջավայր է ազգայնական տրամադրությունների արմատավորման համար:

7. Հակահայկական տրամադրությունների բորբոքումը, որի արմատները ձգվում են մինչև ԽՍՀՄ գոյության վերջին տարիները, կրում էր միանգամայն «գործիքային» բնույթ և քաղաքական զենք հանդիսանում կազակությունից դուրս գտնվող միանգամայն որոշակի ուժերի ձեռքին:

Իշխանության գալու կամ իշխանությունը պահպանելու և ամրապնդելու նպատակով կոնկրետ քաղաքական ուժերի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ ատելության հրահրումը բավական հաջող փորձարկում անցավ մինչպատերազմյան Գերմանիայում, և նման գործելակերպի արդյունավետությունը հետագա տարիներին տարբեր ընդգրկումներով կիրառման ընթացքում բազմիցս հաստատվեց մի շարք պետություններում: Հետևաբար, միամտություն կլինի ներկա լարվածության պատճառները որոնել կազակության բնույթի և նրանց կենցաղի մեջ, թեև վերջիններս կարող են ազդեցություն գործել լարվածության արտահայտման ձևերի վրա (ի դեպ, ինչպես նաև հայ բնակչության կենցաղի առանձնահատկությունները):

8. Ինչպես միշտ, երբ իշխանության կառույցները թուլանում են կամ նրանցում ընթանում են դրամատիկ փոփոխություններ, որոնք ուղեկցվում են նոր շարժումների ի հայտ գալով, ոչ ֆորմալ ակտիվությամբ և այլև, այդ ընթացքում

հայտնվում է մարդկանց մի շերտ, որը ձգտում է ազդեցության և բարեկեցության հասնել ոչ թե կոմպետենտության, գիտելիքի, կրթության, այլ ակտիվության ցուցադրման, աղմկոտ ակցիաների, այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ բռնի գործողություններ իրականացնելու «վճռականության» (մանավանդ, եթե անպատիժ են մնալու) և նման այլ ճանապարհներով: Ցավոք, կազակական շարժումը բացառություն չէր ընդհանուր կանոնից, և այս առումով կարելի է խոսել մի շարք հակահայկական ելույթների «երկրորդային գործիքայնության» մասին:

9. Քննարկելով Ռուսաստանի հարավում լարվածության ակունքներն ու վերացման հեռանկարները՝ չի կարելի թերագնահատել Ադրբեյջանի ժայրահեղ ազգայնական ուժերի նպատակամղված գործողությունները: Նրանք բացահայտ կերպով շեշտը դրել են Հյուսիսային Կովկասում հակահայկական տրամադրությունների բորբոքման վրա: Դրա համար օգտագործվում են տարբեր միջոցներ՝ սկսած Ռուսաստանի հարավում պրովոկացիոն թուղիկների տարածումից մինչև Ադրբեյջանի ռուս բնակչության անունից ոգեշնչված հայտարարություններ այն մասին, թե իբր հայերը պատրաստվում են հայկական ինքնավարության հասնել Հյուսիսային Կովկասում:

10. Հատուկ դեր ունի տեղական իշխանությունների դիրքորոշումը: Ազգամիջյան հակամարտությունների տխուր փորձը վկայում է, որ ազգայնականության առանձին դրսևորումներն ինքնին այնքան վտանգավոր չեն, որքան տեղական իշխանությունների անգործությունն ու ամենաթողությունը՝ ըստ ազգային հողի վրա կատարվող խտրականության և բռնության փաստերի: Աշխարհում բոլոր ջարդերն սկսվել են կամ տեղական իշխանությունների անգործությամբ, կամ ջարդարարներին բացահայտ օգնությամբ: Հետևաբար, ազգային փոքրամասությունների նկատմամբ ճնշումների փաստը ծառայում է որպես տեղական իշխանությունների կարևորագույն և վտանգավորագույն նպատակաուղղված ազգայնական գործողությունների նշան:

11. Նկատի առնելով կենցաղային մակարդակի չնտածված և սպոնտան հակազդեցությունների վտանգավորությունը, ինչպես նաև հայերի ազգային-մշակութային պահանջունքները՝ հատուկ նշանակություն է ձեռք բերում Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների կազմակերպչական ձևակերպման և զարգացման հարցը, որոնք ղեկավարեն հայկական միջավայրում հեղինակություն և տեղական իշխանությունների հետ պատշաճ երկխոսություն վարելու կարողություն ունեցող անձինք:

12. Ռուսաստանի հարավի սփյուռքի ընդհանուր խնդիրը պետք է լինի հայկական համայնքների համախմբումն ու զարգացումը, նրանց միասնականության ապահովումը և միաժամանակ՝ համայնքների անդամների ակտիվության դրսևորման ձևերի բազմազանության ապահովումը: Նկատի առնելով հայկական սփյուռքի դերը՝ համախմբող կարևոր գործոն կարող է դառնալ Ռուսաստանի հայկական համայնքների լիարժեք և գործուն ասոցիացիայի կայացումն ու զարգացումը:

Անհրաժեշտ է Հայաստանի հետ կապի զորացումը, հատկապես կրթության ոլորտում (Հայաստանում արտասահմանի համար մանկավարժների պատրաստում, հատուկ դասագրքերի, լեզվի ուսուցման մեթոդների ստեղծում և այլն):

13. Հայկական մշակութային միությունների առաջ կարևոր խնդիր է դրված ամենատարբեր ոլորտներում սերտորեն համագործակցել տեղական իշխանությունների հետ:

ա) օրինականության և կարգուկանոնի պահպանման հարցերում (իշխանությունների հետ՝ այս ասպարեզում տիրող իրավիճակի վերլուծությունը, համայնքների ներսում՝ իրավապահ մարմիններին աջակցող խմբերի ձևավորումը, որը լրացուցիչ բացատրական աշխատանք կծավալի համայնքի անդամների շրջանում և այլն):

բ) մշակույթի, կրթության, կրոնի հարցերում:

գ) հասարակական-քաղաքական հարցերում և այլն:

14. Թեև հայկական համայնքների անդամները բոլոր ռուսաստանցիների պես կարող են հարել ամենատարբեր քաղա-

քական շարժումների և հոսանքների, համայնքների համար ամբողջության մեջ նպատակահարմար չէ և վնասակար է չափազանց քաղաքականացումը: Հայկական համայնքները շահագրգռված են ամենատարբեր հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ՝ անկախ քաղաքական գունավորումից և նպատակներից, եթե, բնականաբար, նրանց գործունեությունը չի կրում ծայրահեղական բնույթ: Այլ կերպ ասած՝ պատկանելությունը տարբեր քաղաքական կուսակցությունների և հոսանքների չպետք է խոչընդոտ հանդիսանա բնականոն, գործնական համագործակցության համար:

15. Իշխանությունների հետ համակողմանի գործակցելով և համայնքի անդամների հետ բացատրական աշխատանք վարելով հանդերձ՝ հայկական միությունները չեն կարող անտարբեր մնալ ազգային նվաստացումների նկատմամբ:

Ռուսաստանյան օրենքների անշեղ պահպանումը որպես Ռուսաստանի քաղաքացու, յուրաքանչյուր հայի պարտքն է: Բայց ո՛չ մի հասարակական կազմակերպություն, ո՛չ մի շարժում իրավունք չունի (մասնավորապես՝ ըստ ազգային հատկանիշի) սեփական հայեցողությամբ բնակչության մի մասի նկատմամբ կիրառել օրենքով չնախատեսված լրացուցիչ սահմանափակումներ, նվաստացնել ազգային փոքրամասնություններին: Նման նվաստացումների դեպքերին լուռ համաձայնությունն անխուսափելիորեն հանգեցնում է երիտասարդ սերնդի դաստիարակության ձևախեղման, էթնիկ և անձնային հիմնական արժեքների, ազգային և անձնային ինքնահարգանքի, իր՝ որպես տանտիրոջ զգացման, ազատ և արժանավոր գոյության զգացողության կորստյան:

16. Իշխանությունների հետ արժանավայել համագործակցությունը պետք է հենվի այն ամուր համոզման վրա, որ Ռուսաստանի հարավում ազգամիջյան նորմալ հարաբերություններն անհրաժեշտ են ոչ միայն հայերին և մյուս ազգային փոքրամասնություններին, այլև հենց Ռուսաստանի ռուս բնակչությանը: Բազմազգ Ռուսաստանում ազգային հողի վրա պա-

ռակտվածությունը կարող է կատալիզատորի դեր խաղալ ապակայունացնող գործընթացներում և ծայրաստիճան վտանգավոր գործընթացներ առաջացնել հենց ռուսական պետականության համար:

Իրադրության առողջացման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ ազգամիջյան հարաբերություններն ապակայունացնող արմատական տարրերի մասին օրենքի ընդունումը և խստիվ կիրառումը:

Վերլուծություններ կատարելիս և քաղաքական գնահատականներ տալիս, ցավոք, չի կարելի բացառել այն իրողությունը, որ գոյություն ունեն Ռուսաստանի թուլացմամբ և փլուզմամբ շահագրգիռ ուժեր, որոնք իրավիճակի ապակայունացման նպատակով խաղարկելով «ազգային խաղաքարտը», հույս ունեն ԽՍՀՄ փլուզումից հետո կոնկրետ օգուտներ ստանալ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հայերեն և ռուսերեն լեզուներով գրված այս պարզակազիրը պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (ք. Երևան):

2. Հ. Խ. Խալիփախյան, Դոնի Նախիջևանի ճարտարապետությունը, Երևան, 1988, էջ 10:

3. Срмакешян Г., У самого Тихого Дона. Жизнь диаспоры, „Коммунист“ Երևան, 1990թ., 23-րդ մայիսի:

4. Առավել մանրամասն տե՛ս՝ Առաքելյան Գ. Խ., Չերքեզահայեր (պատմաագագրական ուսումնասիրություն), «Կովկասը և Բյուզանդիան», 4-րդ թողարկում, Երևան, 1984:

5., Волкова Н. Г., О расселении армян на Северном Кавказе до начала XX века, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1966, № 3, էջ 263-264:

6. Նույնը, էջ 266:

7. Մինասյան Ս. Գ., Մերձսևծովի հայերը, Երևան, 1990, էջ 96:

8. Волкова Н. Г., Գշվ. աշխտ., էջ 267:

9. Тверитинов И. А., Национально-территориальное строительство в Северо-Восточном Причерноморья и на Кубани, „Этнографическое обозрение“ 1992, № 1, էջ 24:

10. Бондарь Н. И., Этнокультурная ситуация на Кубани. - Материалы научно-практической конференции „Традиционные национальные культуры Кубани; состав, состояние, проблемы“, Краснодар, 1991, էջ 17:

11. Национальный состав населения Краснодарского края по данным Всесоюзной переписи населения на 12. 01. 89, Краснодар, 1990, էջ 83-84:

12. Նույնը, էջ 38, 43-44, 47-48, 51-52, 68-69:

13. Значит, это комунибудь нужно, „Комсомолец Кубани“, 1992, 9-րդ հոկտեմբերի:

14. Տե՛ս, Эхо Баку, „Комсомольская правда“, 1990, 13-րդ փետրվարի, Разум или безумие?, „Советская культура“, 1990, փետրվարի 17:

15. Осторожно; фальшивка, „Кубанские новости“, 1992, 9-րդ հոկտեմբերի:

16. Մինասյան Ս. Գ., Մերձսևծովի հայերը, էջ 148:

17. Նույնը, էջ 154:

18. Краснодарский край вооружен и очень опасен, „Независимая газета“, 1992, 17-րդ սեպտեմբերի:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՑ»

Հատոր 13, Երևան 1987, էջ 126-144

Հայ ազատագրական շարժումները XVII-XVIII դդ.

XVII դ. 2-րդ կեսին Հայաստանը գտնվում էր արևելյան բռնատիրական պետությունների լծի տակ: Սակայն հայկական շատ գաղթավայրեր ընդգրկվել էին սկզբնավորվող կապիտալիստական հարաբերությունների ոլորտը, և կազմավորվող հայ բուրժուազիան, որ շահագրգռված էր համազգային շուկայի ձևավորմամբ, արժարժում էր ազատագրական պայքարի խնդիրներ: Գաղթավայրերում ծավալված գրական-լուսավորչական շարժումը նպատակ ուներ արթնացնել և բորբոքել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը: Նպաստավոր էր նաև միջազգային իրադրությունը. այդ ժամանակաշրջանում կաթոլիկական եկեղեցին ջանում էր կազմակերպել եվրոպական պետությունների, Ռուսաստանի և Իրանի հակաթուրքական կռաւիցիա:

Այդ պայմաններում Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ 1677-ին էջմիածնում գումարված գաղտնի ժողովը որոշեց պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ վերստին արժարժելու Հայաստանի ազատագրության հարցը: Սակայն պատվիրակությունը գլխավորող Հակոբ Դ Ջուղայեցին 1680-ին վախճանվեց Կոստանդնուպոլսում, և խափանվեց պատվիրակության հետագա ընթացքը:

Միայն Մելիք Իսրայելի որդի Իսրայել Օրին, որ իրեն ներկայացնում էր Պոռոչյան իշխանական տան հետնորդ, նույն պատվիրակության անցաթղթով մեկնեց Վենետիկ: Երեք տարի հետո նա անցավ Ֆրանսիա, կամավոր ծառայեց ֆրանսիական բանակում, 1695-ին գերի ընկավ անգլիացիներին: Ազատվելով

գերությունից՝ Օրին ներկայացավ Պֆալցի կուրֆյունտ Յովհան-Վիլհելմին և նրա օգնությամբ Դյուսելդորֆ քաղաքում ծառայության անցավ՝ որպես մատակարարման կոմիսար:

Յոթնոսյան Պֆալցը մասնակցում էր հակաթուրքական կռիվների և պաշտպանեց Յայաստանն ազատագրելու՝ Օրու ծրագիրը, որը հանգեցնելու էր հակաթուրքական նոր ճակատի ստեղծմանը՝ Արևելքի քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայերի և վրացիների մասնակցությամբ:

1699-ի գարնանը Օրին ժամանեց Արևելյան Յայաստան՝ վրաց Գիորգի XI թագավորին, Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսներին և հայոց մելիքներին ուղղված Յովհան-Վիլհելմի գրություններով: Սակայն միայն Անգեղակոթ ավանում գումարված 10 հայ մելիքների խորհրդաժողովը Օրուն համապատասխան գրություններով լիազորեց՝ շարունակել հետագա բանակցությունները: Նա Մինաս վարդապետ Տիգրանյանցի հետ մեկնեց Դյուսելդորֆ և իր ուղևորության արդյունքների վերաբերյալ 1699-ի սեպտեմբերի 22-ի զեկուցագրում Յովհան-Վիլհելմին ներկայացրեց «Պֆալցյան ծրագիրը»:

Օրին առաջարկում էր Պֆալցի կուրֆյուրստի գլխավորած զորքով, ինչպես նաև գերմանական կայսեր, Յոնի պապի ու Տոսկանայի մեծ դքսի դաշնակցությամբ, 1700-ի մայիսին ազատագրել Արևելյան Յայաստանը: Արևելյան Յայաստանում հայկական պետականության վերականգնման շնորհիվ պետք է ազատագրվեր նաև Արևմտյան Յայաստանը:

Ազատագրական պայքարում Օրին կարևոր դեր էր հատկացնում հայ և վրաց ժողովուրդների համագործակցությամբ: Կանխատեսելով Օսմանյան Թուրքիայի հնարավոր թշնամական միջամտությունը նրանց ազատագրական պայքարին՝ ծրագրի հեղինակը հույս էր հայտնում, որ այդ դեպքում կաջակցեն հակաթուրքական կռիվների անդամներ Լեհաստանն ու Մոսկովյան պետությունը: Սակայն Օրու «Պֆալցյան ծրագիրը» չիրագործվեց. և կուրֆյուրստի խորհրդով նա մեկնեց Ռուսաստան: Այնտեղ նա ձեռնամուխ եղավ պարսկական դեսպանագնացության կազմակերպմանը, որի նպատակն էր

տվյալներ հավաքել Պարսկաստանի ռազմաքաղաքական վիճակի վերաբերյալ և մոտավորապես ազատագրության հավատով հուսավառել հայերին:

Իսրայել Օրին մեկնեց Պարսկաստան՝ քողարկվելով որպես Յոնի պապի դեսպան՝ քրիստոնյաների հալածանքները մեղմացնելու խնդրագրով: Այնուհանդերձ, նրա դեսպանագնացությունը հարուցեց ինչպես Պարսկաստանում ֆրանսիական դեսպանորդի, այնպես էլ կաթոլիկ միսիոներների ընդդիմությունը, որոնք Օրուն ներկայացնում էին իբրև ռուսական գործակալ, որը կամենում է վերականգնել հայկական թագավորությունը: Սակայն երկյուղելով Ռուսական կայսրությունից՝ առերես Յոնսեյն շահը պատշաճ ընդունելություն ցուցաբերեց դեսպանությանը:

Իսրայել Օրու դեսպանագնացությունը ոգեշնչեց հայ ազատագրական շարժումը, ամրապնդեց նրա ռուսական կողմնորոշումը: Այդ են վկայում Էջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցու նամակը Պետրոս Մեծին և Գանձասարի Յայոց կաթողիկոս, հայ ազատագրական շարժման գործիչ Եսայի Յասան-Ջալալյանի՝ Մոսկվա ուղևորվելու մտադրությունը, որի իրագործումը խափանվեց՝ Աստրախանում Օրու անակնկալ մահով (1711-ի սեպտեմբեր):

Յյուսիսային պատերազմի հաղթական ավարտից (1721) հետո ռուսական կառավարությունը վճռեց արշավանք ձեռնարկել պարսկական տիրապետության տակ գտնվող Անդրկովկաս և, մասնավորապես, տիրանալ Գիլանին՝ պարսկական մետաքսարտադրության կենտրոնին: Մշակվեց քաղաքական մի ծրագիր, որի կենսագործումը պետք է հանգեցներ հայ-վրացական միացյալ թագավորության ստեղծմանը, հայ և վրացական ռազմական ուժերի համախմբմանը, որոնք պետք է աջակցեին Անդրկովկաս մուտք գործող ռուսական զորքերին:

1722-ի օգոստոսին ռուսական զորքերը մտան Դարբանդ՝ նպատակ ունենալով գրավել Կասպիականի արևմտյան ծովեզերքը և Շամախիում միանալ հայ-վրացական ապստամբների: Վրացական 30 հազարանոց զորքը՝ Վախթանգ VI թա-

գավորի, և հայկական 10 հազարանոց զորքը՝ Եսայի կաթողիկոս Յասան-Ջալալյանի առաջնորդությամբ, 1722-ի սեպտեմբերի 22-ին միացան Գանձակի մոտ՝ Չոլակի դաշտում, և սկսեցին սպասել ռուսական զորքերի՝ Շամախի մտնելուն: Սակայն պայմանների բերումով Պետրոս Մեծը հարկադրված ընդհատեց արշավանքը և վերադարձավ Աստրախան:

Օգտվելով իրավիճակից՝ Պարսից նոր շահ Թահմազ II-ը Վախթանգ VI-ին գրկեց Վրաստանի վալիի ու Պարսկաստանի ամիրսպասալարի իրավունքներից և դրանք հանձնեց Կախեթի մահմեդականացած թագավոր Կոստանդինին (Մահմադկուլի խան): Վերջինս լեզգիների օգնությամբ 1723-ի մայիսին Վախթանգ VI-ից գրավեց Թիֆլիսը, որը նույն թվականի ամռան սկզբին զավթեցին Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերը: Վախթանգ VI-ն ապաստանեց Ռուսաստանում:

Նման իրավիճակում ապստամբած հայ ժողովուրդը միայնակ մնաց պարսկական և թուրքական գերակշիռ ուժերի դեմ: Ինքնապաշտպանության նպատակով Արցախում ստեղծվեցին ամրություններ (սղնախներ): Յուրաքանչյուր սղնախ ուներ որոշակի քանակությամբ մշտական զորաջոկատներ, որոնք անհրաժեշտության դեպքում համալրվում էին աշխարհագորայիններով (զորքերի թիվը հասնում էր 30-50 հազար մարդու): Սակայն վատ սպառազինության և սղնախների միջև գոյություն ունեցող ներհակությունների հետևանքով պայքարը հիմնականում կրում էր ինքնապաշտպանական բնույթ:

Թիֆլիսը գրավելուց հետո թուրքական զորքերը շարժվեցին դեպի Գանձակ՝ ծրագրելով զավթել Անդրկովկասը և ռուսներին դուրս մղել մերձկասպյան շրջաններից: Սակայն 1723-ի ամռանը Գանձակի հայերը, ադրբեջանցիները և հայկական սղնախների զինական ուժերը պարտության մատնեցին թուրքական զորքերին և նրանց օգնության շտապող լեզգի հրոսակներին՝ ձախողելով Գանձակը և Երևանը գրավելու՝ թուրքերի մտադրությունը:

Չգտելով ամրապնդվել Կասպիականի ափերին, բայց միաժամանակ խուսափելով օսմանյան սուլթանության դեմ

պատերազմից՝ Ռուսաստանը 1724-ի հունիսի 12-ին Կ. Պոլսում Թուրքիայի հետ կնքեց մի պայմանագիր, որով Կասպիականի առափնյա շերտը (Դարբանդից մինչև Մազանդարան) ճանաչվում էր ռուսական, իսկ Անդրկովկասի մնացած շրջանները՝ թուրքական տիրապետություն: Այդ պայմանագիրը ծանր հարված հասցրեց անդրկովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի ազատագրական շարժմանը:

Թուրքական մի բանակ Կարս-Գյումրի ուղղությամբ մտավ Արարատյան դաշտ և պաշարեց Երևանը: Թուրքերն այդ ընթացքում զավթեցին Նախիջևանը, Օրդուբադը, Գողթնը: Իսկ Ատրպատական ներխուժած թուրքական զորքերը գրավեցին Յամադանը: Եռամսյա համառ կռիվներից հետո թշնամին գրավեց Երևանը, 1725-ի ամռանը՝ Լոռու բերդը, հոկտեմբերին՝ Գանձակը: 1725-ի փետրվարին Վարանդայում հայկական ուժերը գլխովին ոչնչացրին թուրքական 6 հազարանոց զորաջոկատը: Միաժամանակ հայ ազատագրական շարժման ղեկավարները պատվիրակներ և օգնություն հայցող դիմումներ էին հղում ռուսական արքունիք:

Ստեղծված իրավիճակում որոշ մեղիքություններ առերես հնազանդվեցին, իսկ լեռնային վայրերում շարունակվում էր թուրքերի դեմ պայքարը: 1728-ին վախճանվեց Արցախի ազատագրական պայքարի ոգեշնչող և ղեկավար Եսայի Յասան-Ջալալյանը: 1729-ին հարկադրաբար Արցախը լքեցին զորահրամանատարներ Ավան յուզբաշին և նրա եղբայր Թախան յուզբաշին: Պայքարը շարունակում էր Գյուլիստանի զորահրամանատար Աբրահամ սպարապետը: Արցախի մեղիքները պարսից զորքերի օգնությամբ թուրքերին Անդրկովկասից վտարեցին 1730-ական թթ. կեսին: Խամսայի մեղիքություններից կազմված նահանգը («Մահալ-ե խամսե») ճանաչվեց ինքնավար և անկախ Գանձակի բեկլարբեկությունից:

1720-ական թթ. հայ ժողովրդա-ազատագրական շարժման մյուս խոշոր կենտրոնը Սյունիքն էր, որտեղ նվաճողների դեմ պայքարը գլխավորում էր Դավիթ-Բեկը: Նա նախ ջախջախեց Սյունիք խուժած թուրքական վաչկատուն ցեղերին

(կարչոռու, ջիվանջիր և այլն), ապա մահապատժի ենթարկեց ժողովրդի ազատագրության գործին դավաճանած հայ մելիքներին, իսկ 1724-ի սկզբին ազատագրեց Ձեյվա և Որոտան բերդերը, Փոքր Ղափանը և այլ շրջաններ, ստեղծեց հայկական մի իշխանություն, որը ճանաչեց Պարսից Թահմազ II շահը: 1725-ին ետ շարտվեց Սյունիք ներխուժած թուրքական բանակը: 1726-ի գարնանը թուրքերը կարողացան թափանցել Ղափան: Հալիձորի բերդում պաշարված հայ ազատամարտիկները՝ Մխիթար սպարապետի և Տեր Ավետիսի գլխավորությամբ, հակահարձակումով պարտության մատնեցին թուրքերին և նրանց դաշնակցող բաշիբոզուկներին, շուտով ազատագրեցին նաև Մեղրու բերդը:

1728-ին անսպասելիորեն վախճանվեց Ղավիթ-Բեկը, և ազատագրական պայքարի գլուխ անցավ Մխիթար սպարապետը, որը 2 տարի համառ կռիվներ մղեց նվաճողների դեմ: Նրա դավադրական մահից (1730) հետո Սյունիքում պայքարը շարունակվեց մինչև թուրքական զորքերի վտարումն Անդրկովկասից:

XVIII դ. 20-ական թթ. հայ ազատագրական շարժման յուրահատուկ դրսևորումներից էր մերձկասպյան մարզերում գտնվող ռուսական զորքերի կազմում հայկական զորաջոկատների ստեղծումը, որոնցից ավելի ուշ կազմավորվեց ռուսական բանակի հայկական հեծյալ էսկադրոնը: Այդ զորաջոկատների ստեղծմանը նպաստեցին հատկապես հայ վաճառականներ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը, Այվազ Աբրահամյանը, Ալազար դի Խաչիկը, Պողոս Ջենենցը: Նրանցից հայկական էսկադրոնի հրամանատար Ալազար դի Խաչիկին շնորհվեց գեներալ-մայորի զինվորական աստիճան: Ավելի քան 2 հազար հայ մարտիկներ զործուն մասնակցություն ունեցան մերձկասպյան մարզերում ծավալված ռազմական գործողություններին:

Արևելյան Հայաստանում իրավիճակը ծանրացավ Նադիր շահի սպանությանը (1747) հաջորդած անիշխանության տարիներին, երբ հաճախակի դարձան մահմեդական վաչկատուն ցեղերի խժժությունները: 1750-ական թթ., օգտագործելով Վա-

րանդայի Մելիք Շահնազարի դավաճանական դիրքորոշումը, նրանք հաստատվեցին Արցախի Շոշ գյուղում և Փանահի գլխավորությամբ հիմնեցին խանություն: Փանահի որդին և հաջորդը՝ Իբրահիմ-Խալիլը, զանազան խարդավանքներով իրեն ենթարկեց հայկական մելիքությունները:

Դրությունը բարվոք չէր նաև թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանում: Օսմանյան սուլթանության խորացող տնտեսական, քաղաքական և ռազմական ճգնաժամի պայմաններում թուրքական փաշաներն ու քուրդ բեկերը կողոպտում, քայքայում և ամայացնում էին Արևմտյան Հայաստանը: Հայ աշխատավոր ժողովուրդը, չլիքնալով սոցիալական ճնշմանը, հարստահարություններին, ազգային և կրոնական հալածանքներին, զանգվածաբար արտագաղթում էր հայրենի գավառներից:

XVIII դ. 2-րդ կեսին նոր վերելք ապրեց հայ ազգային-ազատագրական շարժումը, որի գաղափարախոսը և ղեկավարը դարձյալ գաղութահայ բուրժուազիան էր: Հնդկաստանի հայ գաղութում մշակվեցին և հրապարակվեցին Հայաստանի ազատագրության ու ապագա կացության ծրագրային երկեր՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ», «Որոգայթ փառաց», «Նշավակ»: Ռուսաստանում գործող հայ բուրժուազիան ևս առաջադրեց ազատագրական ծրագրեր: Եռանդուն գործունեություն ծավալեցին հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ Արղությանը, Մովսես Սարաֆյանը և ուրիշներ:

Գաղութահայ բուրժուազիայի գաղափարախոսները, Հայաստանի նվաճման և հայկական պետականության անկման հիմնական պատճառ դիտելով ներքին ավատատիրական գժտություններն ու երկպառակությունները, ապագա ազատագրված երկրում տեղ չէին թողնում ֆեոդալիզմին: Նրանք ազգային-ազատագրական շարժման մեջ կարևոր տեղ էին հատկացնում լուսավորությանը, որով կբարձրանային հայերի ազգային ինքնագիտակցությունն ու ազատագրական ձգտում-

ները: Ստեղծվելիք նոր դպրոցներում բացառվելու էր միջնադարյան սքոլաստիկական ուսուցումը, պետք է ուսումնասիրվեին բնական և հումանիտար գիտություններ, լեզուներ:

«Որոգայթ փառաց» երկում առաջադրվում էր Հայաստանում բուրժուական սահմանադրական հանրապետություն ստեղծելու խնդիրը: Այդ հանրապետությունը պետք է կառավարեր պառլամենտը («Տունն հայոց»), որի պատգամավորները («տանուտերերը») հաստատելու էին օրենքները՝ «հասարակաց իրավունքների պաշտպանության և արդարության ոգով»: Հանրապետության նախագահը պիտի լիներ հայ լուսավորչական: Գործադիր իշխանությունն իրականացնելու էր նախարարությունը: Հայաստանի բոլոր բնակավայրերում բացվելու էին դպրոցներ: Եկեղեցին անջատվելու էր պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց: Առաջադրվում էր օրենքի առաջ հանրապետության բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքը:

Գաղութահայ ազատագրական շարժման գործիչները Ռուսաստանը համարում էին այն իրական ուժը, որը քաղաքական, տնտեսական և աշխարհագրական հանգամանքների բերումով կարող էր նպաստել Հայաստանի ազատագրությանը, աջակցել զենքի դիմած հայ ժողովրդին: Նրանք ընդգծում էին, որ ապագա հայկական պետությունը Ռուսաստանի հետ կապված կմնա հավերժական դաշնակցային կապերով և փոխօգնության պարտավորությամբ: Օտար նվաճողների դեմ պայքարում կարևոր տեղ էր վերապահվում նաև հայ և վրաց ժողովուրդների համագործակցությանը:

XVIII դ. 2-րդ կեսի հայ ազատագրական շարժման առաջին գաղափարախոսն էր համադանցի վաճառականի որդի Հովսեփ Էմինը (1726-1809): Պատանի հասակից նվիրվելով հայրենիքի ազատագրության գործին՝ նա Անգլիայում զինվորական կրթություն ստացավ, այնուհետև ռազմական գործնական գիտելիքներ ձեռք բերեց 1756-63-ի յոթնամյա պատերազմում: 1759-ին Հայաստանում ծանոթանալով քաղաքական իրադրությանը՝ հանդգնեց, որ հայ ազատագրական շար-

ժումը կարող է հաղթանակել միայն քրիստոնյա հզոր պետության, առաջին հերթին՝ Ռուսաստանի օգնությամբ:

1761-ի գարնանը Լոնդոնում հանձնարարական և ռուսական դեսպանից անցագիր ստանալով՝ Էմինը նոյեմբերին ժամանեց Պետերբուրգ և կանցլեր Վորոնցովին ներկայացրեց իր այցելության շարժառիթները: Համապատասխան գրություններով Էմինը մեկնեց Անդրկովկաս, սակայն նրա՝ շուրջ վեցամյա գործունեությունը (նպատակն էր՝ լուսավորության տարածում, ֆեոդալական անիշխանության հաղթահարում, Ռուսաստանի օգնությամբ հայ-վրացական միացյալ պետության և եվրոպական հիմունքներով կազմակերպված գործը բանակի ստեղծում և այլն) ապարդյուն անցավ, և նա հուսախաբված հեռացավ Հնդկաստան:

Այդ նույն ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում (Տարոնում) ազատագրական շարժման ղեկավարն էր Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովհան Եպիսկոպոսը, որը նաև կազմակերպական կապեր ուներ Հովսեփ Էմինի հետ: Նրա ծրագրի համաձայն՝ հայ-վրացական միացյալ զորքը պետք է մուտք գործեր Արևմտյան Հայաստան, որին հետևելու էր Տարոնի հայերի ապստամբությունը: Հովհան Եպիսկոպոսը ջանում էր ազատագրական շարժման մեջ ընգրկել նաև ասորիներին և եզդիներին:

1768-74-ի ռուս-թուրքական պատերազմը վերստին հուսադրեց ազատագրական շարժման հայ գործիչներին: Ռուսաստանի հայ բուրժուազիայի ներկայացուցիչներից Մովսես Սարաֆյանը, ազդեցիկ հայերի հավանությամբ, ռուսական կառավարությանը ներկայացրեց Հայաստանի ազատագրության և Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետության ստեղծման մի նախագիծ, որը նույնպես մնաց անիրագործելի:

1768-74թթ. պատերազմից հետո Ռուսաստանն ուշադրությունը սևեռեց Պարսկաստանի հետ առնչված խնդիրներին: Օգտվելով նոր իրադրությունից՝ 1780թ. հունվարի 1-ին Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղությանը բանակցություններ սկսեցին ռուսական կառավարության ներկայացուցիչներ Գ.

Պոտյոմկինի, Ա. Սուվորովի, Ի. Գորիչի հետ, իսկ հունվարի 10-ին ներկայացրին մի ծրագիր («Պարոն Յովհաննես Լազարյանի հուշագիրը»), որով առաջարկվում էր ռուսաց հավանությանը ու աջակցությանը ազատագրել Հայաստանը: Փոխարենը՝ վերականգնված հայկական պետությունը դաշնակցային սերտ կապերի մեջ էր գտնվելու Ռուսաստանի հետ:

1780-ին Ա. Սուվորովը՝ հայերի աջակցությամբ, Աստրախանում սկսեց նախապատրաստվել պարսկական արշավանքին, բայց այն տեղի չունեցավ: Ռուսական կառավարությունը, անսալով Ղարաբաղի հայ մելիքների 1783-ի մարտին կայացած համաժողովի դիմումին, որոշեց Գ. Պոտյոմկինի հրամանատարությամբ արշավանք կազմակերպել Անդրկովկաս, տապալել Ղարաբաղի Իբրահիմ խանին և այնտեղ հիմնել հայկական իշխանություն, բայց այդ արշավանքը ևս տեղի չունեցավ:

1780-ական թթ. Հ. Արղությանը և Հ. Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրին դաշնադրության երկու նախագիծ:

Ըստ առաջինի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը դառնալու էր ինքնուրույն հանրապետություն՝ հայազգի նախարարի գլխավորությամբ: «Հայոց տունը» (պառլամենտը) երկիրը կառավարելու էր հայկական օրենքներով, Հայաստանը և Ռուսաստանը կապված էին լինելու անխախտ բարեկամությամբ: Անհրաժեշտության դեպքում Հայաստանն իր դաշնակցին պետք է տրամադրեր վեց հազար զինվոր: Նույնչափ ռուսական զորք էր տեղակայվելու Հայաստանում՝ երկիրը պաշտպանելու համար (ծախսերը հոգալու էր «Հայոց տունը»): 20 տարում այդ զորքը մաս առ մաս հանվելու էր Հայաստանից: Երկու կողմի վաճառականները, համապատասխան մաքս վճարելով, փոխադարձաբար ստանալու էին ազատ առևտրի իրավունք:

Մյուս նախագիծն առաջարկում էր վերականգնել հայոց թագավորությունը՝ թագավորի (հայ կամ ռուս) ընտրության իրավունքը վերապահելով ռուսաց կայսերը: Անկախ ազգու-

թյունից՝ հայոց թագավորը պետք է ընդուներ հայկական եկեղեցու դավանանքը և օժվեր էջմիածնում: Թագավորության մայրաքաղաք էր լինելու Վաղարշապատը կամ Այրարատյան երկրի որևէ այլ նշանավոր բնակավայր: Հայաստանն ունենալու էր իր պետական կնիքը, դրոշը, պատվո նշանները, հատելու էր սեփական դրամ: Ռուսական կայսրությունը և հայկական թագավորությունը կապված էին լինելու հավիտենական բարեկամությամբ: Երկրի պաշտպանության նպատակով Հայաստանում պահվելու էր ռուսական մշտական զորք: Հայաստանը վասալական կախման մեջ էր լինելու Ռուսաստանից: Նրանց միջև կնքվելու էր առևտրական պայմանագիր, առևտրի համար Հայաստանին տրամադրվելու էր նավահանգիստ՝ Կասպից ծովի ափին: Երկրում պահպանվելու էին ֆեոդալական-մուլքադարական հարաբերությունները: Երկու նախագծերն էլ չիրագործվեցին:

1794-ին իրեն Պարսկաստանի շահ հռչակած Աղա Մահմեդ խան Կաջարը 1795-ին արշավեց Ղարաբաղ և Վրաստան: Շուշի քաղաքի չորսամսյա ապարդյուն պաշարումից հետո, նա սեպտեմբերին գրավեց և ավերեց Թիֆլիսը: Ի պատասխան՝ ռուսական զործող կորպուսը՝ զեներալ Վ. Ջուբովի հրամանատարությամբ, 1796-ի գարնանը ձեռնարկեց պարսկական արշավանքը: Ռուսական զորքերի հետ էր Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Հ. Արղությանը, որը նպաստեց արշավանքի հաջողությանը: 1796-ի ապրիլի 18-ին ռուսական զորքերը Ղզլարից շարժվեցին հարավ, մայիսի 10-ին գրավեցին Դարբանդը, այնուհետև՝ Ղուբան և Բաքուն: 1796-ի աշնանը Գանձակ արշավող ռուսական զորքին Հ. Արղությանի կոչով օգնեցին տեղի հայ գյուղացիները, որոնք նրանց մատակարարեցին պարեն և իրենց սայլերով տեղափոխեցին զինամթերքը: Դեկտեմբերի 13-ին Գանձակը ևս հանձնվեց, սակայն շուտով Եկատերինա II-ին փոխարինած Պավել I-ը դադարեցրեց արշավանքը և ետ կանչեց իր զորքերը, որը ծանր հարված հասցրեց, մասնավորապես, հայերի ազատագրական պայքարին:

XIX դ. սկզբին Հայաստանը բաժանված էր երկու բռնապետությունների՝ սուլթանական թուրքիայի և շահական Պարսկաստանի միջև: Արևելյան Հայաստանի տարածքը, որը մտնում էր Պարսկաստանի կազմի մեջ, վարչականորեն բաժանված էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի խանությունների և Քարթլի-Կախեթի թագավորության (գոյատևել է մինչև 1801-ը) միջև: Խանությունները բաժանվում էին մահալների: Երևանի խանությունում, որը կառավարում էր սարդարը, կար 15 մահալ, Նախիջևանի խանությունում՝ 5, Ղարաբաղի խանությունում՝ 21, իսկ Օրդուբադի գավառում՝ 4: Մահալները կառավարում էին նախքան կամ միջոցառումները, դրանք կամ մահմեդական բեգեր էին կամ հայ մելիքներ: Քարթլի-Կախեթի թագավորության մեջ մտնող Հայաստանի «Յուսիսային կողմանց» գավառների (Բորչալու, Լոռի, Փամբակ, Շամշադին) գլուխ կանգնած էին մուրավները, իսկ 1801-ին Ռուսաստանին անցնելուց հետո, մուրավներին կից նշանակվում էին պրիստավներ՝ ռուս սպաներից: Նրանք անմիջապես ենթարկվում էին Վրաստանի գլխավոր կառավարչին:

Արևելյան Հայաստանից գատ՝ զգալի թվով հայ ազգաբնակչություն ապրում էր Անդրկովկասի մյուս մարզերում, այսպես. Թիֆլիսում՝ 15 հազար, Թիֆլիսի գավառում՝ 4432, Թելավում և գավառում՝ 5233, Սղնախում, Գորիում և Դուշեթում՝ 21316, Ելիզավետպոլում (Գանձակ)՝ 9884: Քարթլի-Կախեթում և Ելիզավետպոլի օկրուգում քրիստոնյա բնակչության մեկ երրորդը հայեր էին: Հայերը բնակվում էին նաև Շամախիում և հարակից 38 գյուղերում, Նուխիում և հարակից 47 գյուղերում, Բաքվում, Դերբենդում, Ղուբայում և այլուր:

* * *

XIX դ. սկզբին Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական հողերում կառավարման ձևերը տարբեր էին: Եթե հյուսիսային շրջաններում, որոնք գտնվում էին Վրացական գերագույն կառավարության կառավարման ներքո, մտցվեց կառավարման ռուսական սիստեմ, ապա Ղարաբաղում, ընդ-

հույ մինչև 1823-ը, պահպանվեց խանական կարգը: Խաների Պարսկաստան փախչելուց հետո Ռուսաստանին ենթակա խանություններում մտցվեց պարետային վարչակարգ: Սակայն պարետների լիազորությունների վերաբերյալ կանոններ չստեղծվեցին, և փաստական դրությունը չփոխվեց, թեև որոշակի տեղաշարժեր եղան տնտեսական կյանքում՝ չափ ու կշռի միասնական համակարգ մտցնելու շնորհիվ, որը նպաստեց ավատական մասնատվածության հետևանքների վերացմանը:

Արևելյան Հայաստանի հողատիրական համակարգի մեջ ուրույն տեղ էր գրավում Էջմիածնի եկեղեցական հողատիրությունը: Էջմիածնի վանքը մուլքադարական և թիուլային իրավունքներով ժառանգաբար տիրում էր մի շարք գյուղերի: Պարսից շահերի հրովարտակներով Էջմիածնին իբրև «ռայա և ամալա» (այսինքն՝ հպատակներ և ծառաներ) հանձնված գյուղերի ամբողջ հասույթը հատկացվում էր Էջմիածնին և նրա հոգևորականությանը: Սակայն Երևանի խանը և նրա պաշտոնյաները հաճախ խախտում էին հրովարտակներով տրված իրավունքներն ու արտոնությունները:

XIX դ. սկզբին Արևելյան Հայաստանում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում էին ֆեոդալական շահագործման հետամնաց ձևերը, արտադրության նախնական գործիքները, երկրի քաղաքական անկայուն կացությունը, անընդմեջ պատերազմները: Մեծ վնաս էին ազգաբնակչության կամավոր և հարկադրական գաղթերը, որոնց հետևանքով բազմաթիվ գյուղեր ամայանում էին: Երևանի խանության 1111 գյուղերից 359-ը լիովին ավերվել էին:

Գյուղատնտեսական արտադրության առավել զարգացած շրջանը Արարատյան դաշտն էր: Հիմնական գյուղատնտեսական կուլտուրաներն էին ցորենը, գարին, բրինձը, բամբակը, ծխախոտը, վուշը, քնջութը և այլն: Ձարգացած էին խաղողագործությունը և այգեգործությունը:

Տեխնիկական կուլտուրաներից առավել կարևոր տեղ գրավում էր բամբակը, որը արտահանվում էր հարևան երկրներ: Տեխնիկական կուլտուրաների, ինչպես նաև բրնձի, մրգատու ծառերի, խաղողի մշակումը նպաստում էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը:

Հայաստանի հյուսիսային շրջաններում հիմնականում մշակվում էին հացահատիկային կուլտուրաներ, Ղարաբաղի խանությունում՝ ցորեն ու գարի, թթի ծառեր՝ հում մետաքս ստանալու համար: Ջարգացած էր ձիաբուծությունը. ղարաբաղյան նժույգները մեծ պահանջարկ ունեին հատկապես Պարսկաստանում:

Երկրում մեծ թվով թաթարական ու քրդական վաչկատուն ցեղերի առկայությունը նպաստում էր անասնապահության զարգացմանը: Անասնապահությունը արհեստավորներին ապահովում էր անհրաժեշտ հումքով՝ բրդով, կաշվով, մորթիներով և այլն:

Գյուղատնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ուներ արհեստական ոռոգումը:

Հայաստանում յուրաքանչյուր գյուղական համայնք առանձին տնտեսական և վարչական միավոր էր: Համայնքի հիմնական բջիջը «ծուխն» էր:

* * *

Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում կարևոր դեր էր խաղում արհեստագործությունը: Արհեստագործական հիմնական կենտրոններն էին Երևանը, Նախիջևանը, Շուշին, Վաղարշապատը, Օրդուբադը: Վրաստանի քաղաքների արհեստավորության ճնշող մեծամասնությունը հայեր էին: Գոյություն ունեին հարյուրից ավելի արհեստներ, որոնցից կարևորներն էին՝ կոշկակարությունը, բրուտությունը, կաշեգործությունը, դարբնությունը, պղնձագործությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, վրանագործությունը և այլն: Արհեստների մեջ կարևոր տեղ էր գրավում կաշեգործությունը: Երևանում կային

32, Օրդուբադում՝ 12, Նախիջևանում և Ղարաբադում՝ մեկական կաշեգործարաններ (արհեստանոցներ), որոնք բոլորն էլ կապալով էին տրվում:

Մեծ թիվ էին կազմում ներկատները, որոնք նույնպես պետության կողմից տրվում էին կապալով: Մանուֆակտուրաներ չկային՝ չհաշված Երևանի ապակու, վառողի և թնդանոթածուլական արհեստանոցները:

Չնայած հարուստ օգտակար հանածոների առկայությանը՝ լեռնագործությունը զարգացած չէր: Բացառություն էին կազմում Կողբի, մասամբ նաև Նախիջևանի աղահանքերը:

Արհեստավորները միավորված էին համքարություններում: Հայ համքարությունների առանձնահատկությունն այն էր, որ նրանց «կանոնադրությունները» հաստատում էր Ամենայն հայոց կաթողիկոսը (դա վկայում է, որ Էջմիածնին էին վերապահվում պետական իշխանության որոշ ֆունկցիաներ): Համքարության գլուխ կանգնած էր ուստաբաշին, որին (և նրա օգնականին) ընտրում էր համքարության ընդհանուր ժողովը: Համքարական աստիճանակարգում հիմնական դեմքերն էին՝ վարպետը, վարպետացուն և աշակերտը:

XIX դ. առաջին երեսնամյակին առևտուրը Արևելյան Հայաստանում բավականին աշխույժ բնույթ էր կրում և վկայում էր ապրանքադրամական հարաբերությունների որոշակի զարգացման մասին: Առևտրի կարևոր կենտրոններ էին Երևանը և Շուշին, որոնք կապված էին Թավրիզի, Թիֆլիսի, Բաքվի, Կարսի, Կարինի ու Բայազետի հետ և տարանցիկ առևտրի կենտրոններ լինելուց բացի, իրենք էլ էին արտահանում տեղական արտադրության մթերքներ՝ մետաքս, չորացրած մրգեր, կաշեգործական իրեր, բուսական յուղ, բամբակ, աղ, բրինձ, ձիեր և այլն:

Չնայած 1804-1813-ի ռուս-պարսկական երկարատև պատերազմին՝ առևտուրը շարունակվում էր, քանի որ երկու կողմերն էլ շահագրգռված էին դրանում: Այդ շահագրգռվածությունն արտացոլում գտավ Գյուլիստանի հաշտության պայմանագրում. սահմանվեց ընդհանուր մաքս՝ ապրանքների արժե-

քի հինգ տոկոսի չափով: Դրա հետևանքով առևտրական շրջանառությունը երկու երկրների միջև զգալիորեն մեծացավ:

Վաճառականները նույնպես ունեին իրենց համաքարությունները: Վաճառականությունը բաժանվում էր (ըստ դրամագլխի մեծության) չորս կատեգորիայի:

Հայ վաճառական կապիտալը առաջատար դեր էր խաղում Անդրկովկասում և իր գործունեությամբ նպաստում էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը՝ չնայած ֆեոդալական անիշխանության և բռնակալության հարուցած բազում խոչընդոտներին: Դրա համար էլ հայ առևտրական բուրժուազիան աջակցում էր Ռուսաստանի ծավալմանը հարավում, որպեսզի լավ պայմաններ ստեղծի իր գործունեության համար:

Երկրի ֆեոդալական մասնատվածության հետևանքով հարկային համակարգը բավականին խայտաբղետ պատկեր էր ներկայացնում:

XIX դ. առաջին երեսնամյակին Երևանի խանությունում փոքր-ինչ փոխվեց հարկերի գանձման կարգը: Բոլոր գյուղերը բաժանվեցին երեք կատեգորիայի:

Նախիջևանի խանությունում, որն անմիջականորեն ենթարկում էր Ատրպատականի փոխարքային, տիրում էր Պարսկաստանում ընդունված հարկային համակարգը, ուղղակի հարկերը գանձվում էին ինչպես ծխերից, այնպես էլ շնչերից, ինչպես նաև հայկական եկեղեցիներից: Ամուրիները 15 տարեկանից սկսած վճարում էին բաշփուլի (գլխահարկ), ծխերը վճարում էին էվփուլի (ծխահարկ), ընդ որում հայերը վճարում էին կրկնակի ավել՝ մահմեդականների համեմատությամբ: Յուրաքանչյուր հայկական եկեղեցի վճարում էր 4 թուման, մյուս հարկերն ու տուրքերը նույնական էին Երևանի խանությունում գանձվող հարկերին ու տուրքերին:

Ղարաբաղի խանությունում նստակյաց բնակչությունից և վաչկատուն ցեղերից գանձվող հարկերն ու տուրքերը տարբեր էին: Նստակյաց բնակչությունը վճարում էր մալուջիաթ բոլոր երկրագործական արդյունքների 1/5-ի չափով, միրզայանի,

կուլլուղի, թահվիլանի և դարդալըղ, որոնք գանձվում էին խանական պաշտոնյաների ծառաների և զորքի վարձատրության համար: Գանձվում էր դրամական հատուկ տուրք, որից կազմվում էր խանի կողմից ռուսական պետությանը վճարվող 8 հազար ռուբլու տուրքը և այլն:

Վրաստանում և նրա կազմի մեջ մտնող Հայաստանի հյուսիսային շրջաններում գանձվում էին սուրսաթ՝ զորքը հացով ապահովելու համար, դալա՝ արքունի գյուղացիներից՝ հացահատիկի 1/7 կամ 1/10 չափով, մախթա (դրամական հարկ) վճարում էին քաղաքացիները (մոքալաքներ) և արքունի գյուղացիները: Կալվածատիրական գյուղացիները վճարում էին դրամական և բնամթերային բահրա, կատարում կոռ:

* * *

XIX դ. սկզբին Արևմտյան Հայաստանը, որը գտնվում էր օսմանյան տիրապետության տակ, վարչականորեն բաժանված էր փաշայությունների. 1. Երզրումի փաշայություն՝ Երզրում (Կարին), Թեքման, Բասեն, Թորթում, Սպեր, Բաբերդ, Դերջան, Երզնկա, Կամախ, Քելքիթ, Ղուզուջան, Մանազկերտ, Շապին-Գարահիսար (1806-ից) սանջակներով (գավառներով), 2. Վանի փաշայություն՝ Վան, Խոշաբ, Ջուլամերկ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Բերկրի, Բաղեշ, Խիզան, Մուշ, Չըրխա, Էսբաբերդ, Աղիաքիս, Մոկս սանջակներով, 3. Կարսի փաշայություն՝ Կարս, Կաղզվան, Քեղյան, Ջարուշատ, Խոջևան, Արևմտյան Շորագյալ սանջակներով, 4. Բայազետի փաշայություն՝ Բայազետ, Դիադին, Խնուս, Ալաշկերտ, Խնուր, Թոփրակկալե, Նահին սանջակներով, 5. Չըլդըրի (Ախալցխայի) փաշայության 23 սանջակներից և օջաքլքներից հայկական տարածքներ էին գրավում հետևյալները՝ Ախալցխան, Նարինանը, Օլթին, Ֆենեսկերտը, Թավըսկերտը, Չըլդըրը, Ջավախքը, Աղշորը, Ախալքալաքը, Փոցխովը, Վերին և Ստորին Իմերը, Արտանուջը, Արդահանը, Արդվինը, Կիսկիմը, Բերդագրակը, 6. Դիարբեքիի փաշայությունում կային սանջակներ, քրդական հյուբունմեթություններ,

կիսանկախ հայկական ու ասորական համայնքներ, սանջակներն էին՝ Անիդը, Յանիս, Միաֆարկիներ, Խարբերդը, Սինջարը, Էսֆերիդը, Սևերեկը, Էրկանիս, Անադեն, Յիսնի-Քյոյը, Ճապաղջուրը, Չարսանճագը, Չմշկածագը, Ջերմեկը, Կուլբը, Իլքիսը, Բենեբեքը, հյուքունեթություններ էին Բալուն, Գիեհը, Ջեգիրեն, Էգիլը, Յազգոն, Թերջիլը, Սավուրը, 7. Սվազի (Սեբաստիայի) փաշայության մեջ մտնում էին Սվազ (Սեբաստիա), Ամասիա, Բողոք, Չորուն, Ջանիկ, Դիվրիկ, Արաբկիր սանջակները: Հայկական կամ վաղեմի հայաբնակ շրջաններ կային նաև Տրապիզոնի, Կեսարիայի, Նիկտեի փաշայություններում: Հայկական Կիլիկիան բաժանված էր Ադանայի և Մարաշի փաշայությունների միջև: Ադանայի փաշայությունը բաժանված էր Ադանա, Տարսուս, Ալանիա, Իչիլ, Սիս, Ուզեյր, Բեյլան սանջակների, իսկ Մարաշի փաշայության սանջակներն էին Մարաշը, Մալաթիան, Սամսաթը, Գերգերը: Կային նաև մեծաքանակ կիսանկախ համայնքներ՝ Ալբիստանը, Ջեյթունը և այլն:

Փաշայությունները բաժանվում էին սանջակների (կառավարում էին սանջակբեյերը):

Փաշաներն օժտված էին քաղաքացիական և զինվորական լիազորություններով: Էրզրումի փաշան օժտված էր սերասքյարի (զլխավոր զորահրամանատարի) իրավասություններով, և նրան էին ենթարկվում Արևմտյան Հայաստանի փաշայություններից Չըլդըրը, Կարսը, Բայազետը, Վանը:

Կենտրոնական իշխանության ազդեցությունը թույլ էր հատկապես քրդաբնակ շրջաններում, որոնք կիսանկախ դրություն էին պահպանում: Կիսանկախ գոյություն էին պահպանում նաև որոշ հայկական շրջաններ՝ Սասունը, Շատախը, Մոկսը, Սավուրը, Իսյանը, Խնուսը, Տուժիկը, Մանազկետը, Ջեյթունը, որոնք զինված էին և պաշտպանում էին իրենց իրավունքները թուրք փաշաների, քուրդ խաների ու բեկերի ոտնձգություններից՝ դաշնակցելով տեղաբնակ քրդերի, ասորիների հետ:

Ինչպես մահմեդական Արևելքում ընդհանրապես, Օսմանյան Թուրքիայում հողը պետական սեփականություն էր: Պաշտոնյաներին և զինվորական ծառայություն կատարող մահմե-

դականներին, որպես վարձատրություն, տրամադրվում էին հողատարածություններ, որոնք կոչվում էին խաս, զիամեթ և թիմար: Սրանք ժառանգական տիրույթներ չէին, այլ՝ ցմահ: Օսմանյան սուլթանները Արևմտյան Հայաստանում կալվածքներ շնորհում էին գերազանցապես քուրդ ցեղապետներին՝ հաճախ ժառանգական դարձնելով նրանց տիրապետությունը: Հողատիրության ձևերից էր վակֆային հողատիրությունը, այսինքն՝ մզկիթներին և հայկական վանքերին պատկանող տիրույթները, որոնք տրամադրվում էին մշտնջենական տնօրինության և չէին կարող որևէ ձևով օտարվել: Կային նաև փոքր քանակությամբ մասնավոր սեփականատիրական հողեր՝ մուլքեր, որոնք կարող էին օտարվել:

Շահագործվող ամենաստվար դասակարգը՝ գյուղացիությունը, անձնապես ազատ էր, սակայն քաղաքական իրավազուրկ վիճակը, ըստ էության, ի չիք էր դարձնում այդ ազատությունը: Գյուղացիները մասնավոր օգտագործման իրավունքով տիրում էին համայնքին պատկանող հողերից տրամադրված բաժնեհողերի: Կային նաև մարաբաներ՝ հողազուրկ գյուղացիներ, որոնք հողը վերցնում և մշակում էին կիսարության պայմաններով:

Չնայած երկրագործության համար հարմարավետ հողերի նվազ քանակին՝ Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում մեծ քանակությամբ հացահատիկ էր արտադրվում: Հացահատիկային կուլտուրաների մշակման կարևորագույն վայրերն էին Էրզրումի, Կարսի, Վանի, Չըլդըրի, Սվազի փաշայությունները: Մեծ հռչակ էին վայելում Արևմտյան Շորագյալի, Կաղզվանի, Ալաշկերտի, Խնուսի, Դիադիսի, Երզնկայի, Բասենի, Դերջանի, Խլաթի, Բերկրիի, Արծեկի, Արճեշի, Սվազի, Ամասիայի, Արաբկիրի ցորենը և գարին, որոնք ոչ միայն բավարարում էին տեղական կարիքները, այլև արտահանվում էին հարևան երկրներ: Բանբակի մշակությունը հատկապես զարգացած էր Կիլիկիայում՝ Ադանայի և Մարաշի փաշայություններում: Տրապիզոնի և Ադանայի փաշայություններում զարգացած էր ծխախոտի մշակությունը: Մեծ զարգացման էր հասել շերամապահությունը,

հատկապես՝ Դիարբեքիում: Աճեցվում էին խաղողի, խնձորի, տանձի, ձիթապտղի և մերձարևադարձային այլ կուլտուրաների ընտիր տեսակներ: Երկրի հարավային շրջաններում, հատկապես վաչկատուն ցեղերի ներհոսքի հետևանքով, լայն տարածում ուներ անասնապահությունը: Անասնապահության տարածումը մեծ վնաս հասցրեց երկրագործությանը. բազմաթիվ մշակովի հողատարածություններ վերածվեցին արոտավայրերի: Սուլթանական կառավարության վարած քրիստոնեահալած քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, խաշնարած ցեղերին ու նրանց ցեղապետներին արտոնություններ շնորհելը անկման էին հասցնում երկրագործությունը:

Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության կիրառած հարկային քաղաքականությունը կարելի է անվանել «կազմակերպված կողոպուտ»: Գլխավոր հողային հարկը աշարն էր (տասանորդը), որը գանձվում էր հացահատիկային կուլտուրաներից: Հաճախ աշարը գանձվում էր բերքի 1/7-ի, 1/5-ի, նույնիսկ 1/4-ի չափով: Քրիստոնյա ազգաբնակչությունից գանձվում էր ջիզիե (գլխահարկ), որը ժամանակի ընթացքում գնալով մեծանում էր. 1804-1834-ի ընթացքում 12 դուրուշից հասավ 60 դուրուշի: Պատերազմների ժամանակ արտակարգ ծախսերը հոգալու նպատակով մտցվում էր ավարիզ-դիվանիյե (պատահական) հարկը, որը գանձվում էր պատերազմը ավարտվելուց հետո էլ: Յուրաքանչյուր գերդաստան պարտավոր էր վճարել 300 դուրուշ՝ որպես ավարիզ-դիվանիյե: Ենլաք (նշանակում է անշարժ գույք) կոչվող հարկը գանձվում էր տների, խանութների, դինգերի, ջրաղացների, ձիթհանների, տնամերձների համար: Անասնապահությամբ զբաղվողներից գանձվում էր դամճուռ (արոտների հարկ), որի չափը տարբեր էր տարբեր փաշայություններում. յուրաքանչյուր հարյուր անասունից մեկը գանձվում էր որպես անասնահարկ (տավար ռեսմի): Յուրաքանչյուր գյուղացի, հոր մահից հետո բաժնեհողը ժառանգելիս, պետք է վճարեր 15-ից 50 դուրուշի չափով հարկ (թափուլ)՝ նայած հողի որակին: Գյուղացու մահվան դեպքում նրա անձնական ունեցվածքի 1/10-ը գրավվում էր հարքունիս: Հարկեր

էին գանձվում նաև ամուսնության, մահացած քրիստոնյաներին թաղելու թույլտվություն ստանալու, միրաբներից, գիշերապահներին և այլոց վճարելու համար: Քրդահպատակ շրջաններում, որտեղ լիակատար անօրինություն էր տիրում, երբեմն նույն հարկը գանձվում էր տարին երկու-երեք անգամ: Եկեղեցին և հոգևորականությունը թեև պաշտոնապես ազատ էին համարվում հարկերից, բայց յուրաքանչյուր նորընտիր պատրիարք հաստատման ֆերման ստանալու համար պետք է 140 հազար ակչե վճարեր: Նույնը՝ նաև նոր սուլթանի գահ բարձրանալու կապակցությամբ՝ վերստին հաստատման ֆերման ստանալու: Փաշաներն իրենց հերթին հարկման էին ենթարկում վանքերը: Հայ ազգաբնակչությունը վճարում էր նաև զգալի թիվ կազմող եկեղեցական հարկեր ու տուրքեր՝ ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով:

Արևմտյան Հայաստանում, ի տարբերություն Արևելյան Հայաստանի, մեծ թիվ էին կազմում քաղաքները՝ Երզրում (Կարին), Եվդոկիա, Դիարբեքի, Սվազ (Սեբաստիա), Վան, Ակն, Կարս, Բայազետ, Երզնկա, Բաղեշ, Բաբերդ, Դերջան, Գյումուշխանե, Մուշ, Շապին-Գարահիսար, Կիլիկիայում՝ Հաճըն, Մարաշ, Ադանա և այլն: Հայկական սովոր բնակչություն կար Կ. Պոլսում, Ջնյուռնիայում, Բուրսայում, Կեսարիայում, Ամասիայում և այլուր: Քաղաքային կյանքի բոլոր բնագավառներում էլ հայերը խիստ ակնառու դեր էին խաղում: Բոլոր քաղաքներում էլ զարգացած էին արհեստագործության ավանդական ճյուղերը: Պղնձագործության առաջնակարգ կենտրոնը Եվդոկիան էր, այն զարգացած էր նաև Երզրումում, Երզնկայում: Երկաթյա իրերի արտադրության կենտրոններ էին Խարբերդը, Երզրումը, Սեբաստիան, Դիարբեքիը: Ոսկերչության ճանաչված կենտրոնը Վանն էր: Զինագործությունը զարգացած էր Երզրումում, Վանում, Սասունում, Ջեթունում: Երզրումը հռչակված էր նաև բամբակյա, մետաքսյա, բրդյա գործվածքներով, զորագործությամբ: Մեծ տարածում ունեին կաշեգործությունը, բրուտությունը, մուշտակագործությունը, գորգագործությունը: Աստիճանաբար սկսում են երևան գալ մանուֆակտուրաներ, հատկա-

պես մահուղագործության, բամբակագործության և մետաքսագործության ասպարեզում: Առաջին մանուֆակտուրաներն ստեղծվեցին Սեբաստիա, Ուրֆա, Դիարբեքիր, Եվրոկիա, Ամասիա և այլ քաղաքներում: Սակայն մանուֆակտուրային արտադրությունը դեռևս գտնվում էր զարգացման նախնական փուլում:

Ինչպես արհեստագործությունը, առևտուրը նույնպես գտնվում էր հիմնականում հայերի ձեռքին: Տարանցիկ առևտրի ուղիների վրա գտնվող Էրզրում, Եվրոկիա, Մարաշ, Ադանա, Բաղեշ, Վան, Բայազետ քաղաքները առևտրի նշանակալի կենտրոններ էին: Սակայն հետզհետե նրանց մի մասը կորցրեց երբեմնի նշանակությունը: Արևմտյան Հայաստանի քաղաքներն առևտրական կապեր ունեին Ռուսաստանի ու Պարսկաստանի, Իտալիայի ու Անգլիայի հետ: Նախկինի պես երկրի տնտեսական ու ֆինանսական կյանքում շարունակում էին կարևոր դեր խաղալ հայ ամիրաները:

Արևմտյան Հայաստանում արհեստավորներն ու վաճառականները միավորված էին էսնաֆություններում, որոնք գրեթե նույնական էին համքարություններին՝ կազմակերպական առումով:

Օսմանյան կառավարությունը վարում էր մահմեդականների ու քրիստոնյաներին միմյանց հակադրելու քաղաքականություն: Քրիստոնյաները գյաուրներ էին (անհավատներ), հետևաբար՝ օրենքից դուրս: Կրոնական հալածանքները, բռնի կրոնափոխությունը սովորական երևույթներ էին: Քրեական հանցանքների համար գործում էր միայն շարիաթի դատարանը, որը քրիստոնյաներից վկայություն չէր ընդունում, լիովին բացառված էր արդարադատությունը: Սովորական երևույթ էր կաշառակերությունը: Պատիժները աչքի էին զարնում միջնադարյան վայրագությամբ: Ունևոր դասակարգերի ներկայացուցիչները ևս ենթակա էին պատիժների: Դաժան հալածանքների էին ենթարկվում նաև կաթոլիկ հայերը: Սուլթանական կառավարության այդ քաղաքականությունը տանում էր երկրի արտադրողական ուժերի անկման, երկիրը առաջընթացի ուղիով

տանելու ընդունակ քրիստոնյա ազգաբնակչության և, առաջին հերթին, հայերի ֆիզիկական ու բարոյական բնաջնջման՝ նպաստավոր հող ստեղծելով վաչկատուն անարտադրողական ցեղերի տարածման ու տիրապետության համար:

* * *

Դաժան կեղեքումների և ճնշումների ենթակա հայ ժողովուրդը XIX դ. սկզբին ի վիճակի չէր սեփական ուժերով, առանց դրսի օգնության տապալելու խաների ու փաշաների տիրապետությունը: Ստեղծված պատմական իրադրության մեջ օգնություն կարելի էր ստանալ Ռուսաստանից: Ցարական կառավարությունը, ելնելով իր տնտեսական և քաղաքական շահերից, գործնական քայլեր էր անում Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ: Հայ ժողովուրդը (որի լայն զանգվածներն ունեին ռուսական կողմնորոշում) պարսկա-թուրքական տիրապետությունը կկարողանար թոթափել միայն Անդրկովկաս շարժվող ռուսական զորքերի օգնությամբ. տվյալ ժամանակաշրջանում այդ էր միակ ելքը: Հայերի այդ ակնկալություններն առավել ուժեղացան XIX դ. սկզբին, երբ ռուսական զորքերը մտան Վրաստան: Ալեքսանդր I-ի 1801-ի սեպտեմբերի 12-ի մանիֆեստով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Հայերը խանդավառությամբ ընդունեցին Վրաստանի միացումը, որի հետևանքով Ռուսաստանի հպատակության տակ անցան Վրաստանում բնակվող բավական մեծ թվով հայեր, ինչպես նաև հայկական մի շարք շրջաններ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը և այլն: Վրաստանում իր իշխանությունն ամրապնդելու և պարսկական տիրապետության վերականգնման վտանգը վերացնելու համար Ռուսաստանը դիմեց վճռական գործողությունների: 1804-ի սկզբին նվաճեց Գանձակի խանությունը:

1805-ի մայիսին ռուսական զորքերի՝ Ղարաքիլիսայի ջուկատի հրամանատար գեներալ Նեսվետաևը ներխուժեց Երևանի խանության սահմանները, գրավեց Թալիհի բերդը, Վաղար-

շապատ գյուղը և Էջմիածնի վանքը, որից հետո ետ վերադարձավ: 1805-ին Ռուսաստանին անցավ ստրատեգիական կարևոր դիրք գրավող Շորագյալի սուլթանությունը: 1805-ին Ռուսաստանի դիվանագիտական խոշոր հաջողությունն էր Քյուրակ-չայի պայմանագրի կնքումը Ղարաբաղի Իբրահիմ-խալիլ խանի հետ. վերջինս ընդունում էր Ռուսաստանի հովանավորությունը: Արտաքին քաղաքականության ասպարեզում խանի իշխանությունը խիստ սահմանափակվում էր, բայց ներքին հարցերում լիովին ինքնուրույն էր: Ղարաբաղի խանության և Շորագյալի սուլթանության միացումով Արևելյան Հայաստանի զգալի մասն անցնում էր Ռուսաստանի իշխանության ներքո:

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պայքարի հիմնական թատերաբեմ մնացին Արևելյան Հայաստանի մյուս երկու խանությունները՝ Երևանի և Նախիջևանի: 1806-ին գեներալ Ցիցիանովը վճռեց նոր արշավանք ձեռնարկել Երևան՝ Բաքվի գրավումից հետո: Սակայն նրա ուխտադրուժ սպանությունը Բաքվում միառժամանակ հետաձգեց նոր արշավանքը Երևան:

Ցիցիանովի սպանությունը, 1806-ին սկսված ռուս-թուրքական պատերազմը ոգեշնչեցին Աբբաս-Միրզային նոր հարձակման, և 1806-ին նա վերսկսեց ռազմական գործողությունները Ռուսաստանի դեմ: Սակայն ռուսների փայլուն հաղթանակը թուրքերի նկատմամբ Արփաչայի ճակատամարտում խափանեցին Աբբաս-Միրզայի ծրագրերը:

Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակյա պատերազմի պայմաններում գլխավոր հրամանատարի պաշտոնում Ցիցիանովին փոխարինած Ի. Վ. Գուրովիչը փորձեց հաշտություն կնքել Պարսկաստանի հետ և անգամ հասնել համատեղ ելույթի ընդդեմ Թուրքիայի, պայմանով, որ Պարսկաստանը Ռուսաստանին զիջի Երևանի ու Նախիջևանի խանությունները՝ փոխարենը նրանց խոստանալով Բայազետի, Կարսի և Էրզրումի փաշայությունները: Սակայն պարսկական կառավարությունը անուշադրության մատնեց այդ պայմանները, քանի որ նրա նպատակը Անդրկովկասում իր տիրապետությունը վերականգնելն էր: Պարսկաստանին աջակցում էր

Ֆրանսիան, որը ձգտում էր ստեղծել Ֆրանսիայի, Թուրքիայի և Պարսկաստանի եռյակ միություն ընդդեմ Ռուսաստանի: Անգլիան նույնպես, չնայած դաշնակցային հարաբերություններին, հանդես էր գալիս Ռուսաստանի դեմ:

* * *

Լենքորանի և Ասլանդուզի մոտ ռուսական զորքերի տարած հաղթանակներից հետո 1804-13թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության կնքմամբ, որի համաձայն ամբողջ Հյուսիսային Ադրբեջանը, Դաղստանը, Ղարաբաղը, Վրաստանը և Շորագյալը իրավական առումով ճանաչվեցին ռուսական տիրույթներ: Գյուլիստանի հաշտությամբ ավարտվեց Ռուսաստանին արևելահայկական հողերի միացման առաջին փուլը: Գյուլիստանի «մշտնջենական» հաշտությունը չէր բավարարում ո՛չ Ռուսաստանին և ո՛չ էլ, առավել ևս, Պարսկաստանին, որը չէր կարող հաշտվել իր անդրկովկասյան նախկին տիրույթների մեծ մասի կորստի հետ: Իսկ Ռուսաստանը չհասավ Արփաչայ-Արաքս-Կուր բնական սահմանագծին, որից մտադիր չէր հրաժարվել: Ուստի և Գյուլիստանի հաշտությունը, փաստորեն, եղավ երկարատև զինադադար՝ հղի նոր պատերազմի վտանգով:

Պարսկաստանը ձգտում էր հնարավորին չափ շուտ ուղղել սահմանները հոգուտ իրեն, մինչ Ռուսաստանը խնդրի լուծումը թողնում էր ապագային, ժամանակավորապես առաջնորդվելով խաղաղության և բարիդրացիական հարաբերություններ պահպանելու մտադրությամբ: 1817-ին Պարսկաստան մեկնած Ա. Ժ. Երմոլովի դեսպանության նպատակն էր կարգավորել հարաբերությունները սահմանային վիճելի հարցերի շուրջ: Սակայն բանակցությունները, ըստ էության, ոչնչի չհանգեցրին, քանի որ կողմերից ոչ մեկը չէր ցանկանում գնալ զիջումների:

Ռուսաստանը, ելնելով միջազգային իրադրությունից, 1826թ. գարնանը Պարսկաստան ուղարկեց Ա. Ս. Մենշիկովի ղեսպանությունը՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու առաջարկով: Մինչ Մենշիկովի ղեսպանությունը գտնվում էր Պարսկաստանում, վերջինս սանձազերծեց նոր պատերազմ: 1826թ. հուլիսի 16-ին Երևանի խանության զորքերը հարձակվեցին Միրաքի ռուսական պահակակետի վրա, իսկ հաջորդ օրը պարսկական զորքերը Աբբաս-Միրզայի գլխավորությամբ ներխուժեցին Ղարաբաղ և շարժվեցին Շուշի:

Սկսվեց 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմը: Անդրկովկասի ռուսական փոքրաթիվ ուժերը, հանկարծակիի գալով, սկզբում չկարողացան հարկ եղած դիմադրությունը ցույց տալ պարսիկներին և նահանջեցին: Պարսիկները կարճ ժամանակում գրավեցին Ելիզավետպոլը, Շամախին, Նուխին և հարակից ընդարձակ տարածքներ: Համառ դիմադրություն ցույց տվեց Շուշին, որը, չնայած երկարատև պաշարումին (1826թ. հուլիսի 25- սեպտեմբերի 10-ը), անձնատուր չեղավ՝ շնորհիվ ռուսական կայազորի և հայ աշխարհագորայինների հերոսական դիմադրության:

Ամենուր հայ ժողովուրդը ոտքի ելավ մարտնչելու պարսիկների դեմ. այս պարագան, անշուշտ, դժվարացրեց պարսկական զորքերի գործողությունները: Օգոստոսի վերջին Ռուսաստանից ժամանեցին օգնական ուժեր, և իրերի կացությունը փոխվեց: 1826-ի սեպտեմբերի 3-ին Շամքորի (Շամխորի) ճակատամարտում հայազգի գեներալ Վ. Գ. Մադաթովը 2 հազարանոց ջոկատով ջախջախեց պարսկական 10 հազարանոց մի զորաբանակ, իսկ սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը Ելիզավետպոլի մոտ ջախջախիչ պարտության մատնեցին Աբբաս-Միրզայի 25 հազարանոց բանակին: Սեպտեմբերի 21-ին գեներալ Դենիս Դավիդովը պարտության մատնեց Երևանի սարդարի զորքերին Միրաքի ճակատամարտում: 1826թ. աշնան վերջին պարսիկները լիովին դուրս մղվեցին ռուսական տիրույթներից:

1827-ի գարնանը վերսկսվեցին ռազմական գործողությունները: Ռուսական առաջապահ զորքը, գեներալ Կ. Խ. Բենկենդորֆի հրամանատարությամբ, ապրիլի 13-ին գրավեց Էջմիածինը և ապրիլի 27-ին պաշարեց Երևանի բերդը: Հունիսի 8-ին ռուսական բանակի գլխավոր ուժերը գեներալ Ի. Ֆ. Պասկևիչի գլխավորությամբ հասան Էջմիածին: Երևանի բերդի պաշարումը թողնելով գեներալ Ա. Ի. Կրասովսկու 20-րդ դիվիզիային՝ Պասկևիչը գլխավոր ուժերին միացրեց Բենկենդորֆի զորաջոկատը և շարժվեց Նախիջևան: Նրա նպատակն էր գրավել մինչև Արաքս ընկած տարածքը, Երևանը մեկուսացնել և հարկադրել հանձնվելու: Հունիսի 26-ին գրավելով Նախիջևանը՝ հունիսի 1-ին Պասկևիչը պաշարեց Արաքսի ափին գտնվող Աբբասաբադ բերդը, հուլիսի 5-ին, Արաքսի ձախ ափին՝ Ջևան-Բուլաղի մոտ, պարտության մատնեց Աբբաս-Միրզային, որից հետո՝ հուլիսի 7-ին, Աբբասաբադը անձնատուր եղավ:

Ելնելով ստեղծված իրավիճակից և Պարսկաստանի գործերը շտկելու նպատակով, Աբբաս-Միրզան զինադադար խնդրեց՝ իբր թե հաշտության բանակցություններ սկսելու նպատակով: Մինչ Կարազիադինում տեղի էին ունենում հաշտության բանակցությունները, իսկ Պասկևիչը իր զորքերը քաշել էր Կարաբաբայի լեռները՝ հանգիստ տալու, Աբբաս-Միրզան ընդհատեց բանակցությունները, օգոստոսի 4-ին անցավ Արաքսը և շարժվեց Էջմիածնի ու Աշտարակի վրա: Գրավելով Աշտարակը՝ օգոստոսի 15-ին Աբբաս-Միրզան պաշարեց Էջմիածնի վանքը և փոքրաթիվ կայազորից պահանջեց անձնատուր լինել, բայց մերժվեց: Այդ ժամանակ Երևանը պաշարած Կրասովսկու դիվիզիան տոթի պատճառով քաշվել էր Արագածի լանջերը, վերացրել բերդի պաշարումը: Գաղտնի սուրհանդակների միջոցով տեղեկանալով Էջմիածնին սպառնացող վտանգի մասին՝ Կրասովսկին շտապեց Էջմիածին: Օգոստոսի 17-ին տեղի ունեցավ պատերազմի նշանավոր ճակատամարտերից մեկը՝ Օշականի ճակատամարտը: Ծանր կորուստների գնով ռուսական 3 հազարանոց զորքը փախուստի մատնեց պարսկական 30 հա-

գարանոց բանակին, ձախողեց Աբբաս-Միրզայի մտահղացումները՝ գրավել Էջմիածինը, Թիֆլիսը, Ելիզավետպոլը, ներխուժել Ղարաբաղ: Պասկևիչը, Նախիջևանում թողնելով մի զորաջոկատ՝ գեներալ Էրիսթովի հրամանատարությամբ, հիմնական ուժերով որոշեց գրավել Սարդարապատի և Երևանի բերդերը, որոնք պարսիկների վերջին հենակետերն էին Արևելյան Հայաստանում: Սեպտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը գրավեց Սարդարապատի բերդը, հոկտեմբերի 1-ին՝ Երևանի բերդը: Արևելյան Հայաստանն ազատագրվեց պարսկական լծից:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին գործուն մասնակցություն ունեցավ հայ ժողովուրդը: Հատկապես աչքի ընկան Գրիգոր Մանուչարյանի և Մարտիրոս Վեքիլյանի ջոկատները: 1827թ. մարտից Ներսես Աշտարակեցու և Հարություն Ալամդարյանի նախաձեռնությամբ սկսեցին ստեղծվել հայկական կամավորական զորաջոկատներ, որոնք մասնակցեցին իրենց հայրենիքի մի մասի ազատագրմանը: Դա հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի յուրատեսակ դրսևորում էր: Հայկական շրջաններում ռոմանտիկական ոգևորություն էր տիրում, շատերին երևում էր «վերականգնված» Հայաստանը՝ ռուսական հովանու ներքո:

* * *

Արևելյան Հայաստանի ազատագրման գործում կարևոր դեր խաղացին Կովկաս արքայական ղեկավարները՝ Ե. Լաչինովը, Ս. Պուլչինը, Ա. Բեստուժև-Մառլինսկին, Պ. Բեստուժևը, Պ. Կոնովնիցինը, Ի. Բուրցովը և ուրիշներ:

Երևանի գրավումը խուճապ առաջացրեց պարսկական զորքերի մեջ: Օգտվելով դրանից՝ գեներալ Էրիսթովը հոկտեմբերի 14-ին գրավեց Թավրիզը: Պարսկական կողմը հարկադրված էր հաշտություն խնդրել: 1827-ի նոյեմբերի 6-ից մինչև 1828-ի հունվարի 7-ը Դեհիսառականում (Դեհիսարդան) ընթացած բանակցությունները որևէ արդյունքի չհանգեցրին և ընդհատվեցին, որից հետո ռուսական զորքերը մեկը մյուսի ետևից

գրավեցին Մարաղան, Արդաբիլը, ամբողջ Պարսկահայքը, Խոյը, Սալմաստը, Ուրմիան: Ի վերջո, 1828-ի փետրվարի 10-ին Թավրիզի և Թեհրանի միջև ընկած Թուրքմենչայ գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր: Պարսկաստանի և Ռուսաստանի միջև սահման դարձան Արաքսը և Մասիսը: Երևանի և Նախիջևանի խանությունները և Օրդուբադի շրջանն անցան Ռուսաստանին: Պարսկաստանը պարտավորվեց վճարել տասը քուրուր թուման (քսան միլիոն ռուբլի արծաթով) ռազմատուգանք: Ատրպատականում բնակվող քրիստոնյաներին թույլատրվեց գաղթել ռուսական տիրույթներ: Կասպից ծովում միայն Ռուսաստանը կարող էր ռազմական նավատորմ ունենալ: Կնքվեց նաև ռուսական վաճառականների համար նպաստավոր առևտրական համաձայնագիր:

Ատրպատականից հայերի ներգաղթի կազմակերպումը հանձնարարվեց Երևանի ժամանակավոր վարչությանը, ապա Հայկական մարզի վարչությանն առընթեր ներգաղթի կոմիտեին: Ներգաղթի կազմակերպումը հանձնարարվեց գնդապետ Եղիազար Լազարյանին, որի օգնականներն էին գնդապետ Մովսես Արղության-Երկայնաբազուկը, մայորներ Իվանե Մելիքյանը, Իսահակ Ղանազյանը, Դավիթ և Ալեքսանդր Ղորղանյանները: Չնայած պարսկական կառավարության հարուցած բազմատեսակ խոչընդոտներին, նյութական և այլ դժվարություններին՝ 1828-1829-ի ընթացքում ավելի քան ութ հազար հայ ընտանիք՝ շուրջ քառասունհինգ հազար մարդ, գաղթեց Ատրպատականից և հաստատվեց նախկին Երևանի ու Նախիջևանի խանություններում, մասամբ էլ՝ Ղարաբաղում: Այդ գաղթը կարևոր հետևանքներ ունեցավ Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործում, որովհետև XVIII դարի վերջի, XIX դարի առաջին քառորդի երերուն կացության, քանիցս կատարված արտագաղթերի հետևանքով բնիկ հայ ազգաբնակչության թվաքանակը մեծապես նվազել էր, և հայկական բնօրրանը կանգնած էր ուժացման վտանգի առջև:

Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման և ազգային համախմբման հուսալի օջախ:

Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանի ինքնավարություն ստեղծելու «Հայ հայրենասերների նախագիծ» 1827թ.

1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմը դեռ չավարտված՝ ռուսական արքունիքին և հայ ազատագրական շարժման գործիչներին մտահոգում էր այն հարցը, թե ինչպիսի վարչակարգ պետք է ստեղծվեր Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետությունից հետո:

Հայերը հույս ունեին, որ պարսկական տիրապետության վերացումից հետո վերականգնվելու է հայոց պետականությունը՝ Ռուսաստանի հովանու ներքո: Ցարական կառավարությանը քաջ հայտնի էին հայ ազատագրական շրջանների ձգտումները, ուստի Նիկոլայ I-ի կարգադրությամբ Պետերբուրգում ստեղծվեց հատուկ կոմիտե, որը պետք է զբաղվեր նոր գրավված երկրամասի ապագա կացության հարցով: Ռուսահայ գործիչները՝ Խ. Լազարյանը, Կ. Արղությանը, Ա. Խուդաբաշյանը, ռուսական կառավարությանը ներկայացրին մի նախագիծ, ըստ որի Արևելյան Հայաստանը պետք է ինքնավարություն ստանար ռուսական կայսրության կազմում: Նախագիծը կազմողներն անհրաժեշտ էին համարում վերականգնել Հայոց թագավորությունը (Նիկոլայ I-ը իր տիտղոսների թվում պետք է ավելացներ նաև «հայկական թագավոր» տիտղոսը): Այն պետք է կազմվեր հին հայկական թագավորության մեջ մտնող Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Շաքիի նահանգներից՝ Էջմիածնի Մայր աթոռի գլխավորությամբ: Նախագծում առաջ էին քաշվում նաև հայերի ներգաղթին՝ իրենց հայրենիքում ազգային համախմբմանը, ներքին կառավարմանը ու բարեկարգմանը վերաբերող քաղաքական, տնտեսական հարցեր: Ինքնավարություն ձեռք բերելուց հետո, կամավոր հիմունքներով, հայերից ստեղծվելու էր նաև սեփական զորք, որը պետք է փոխարիներ ռուսական զորքին և սահմանապահ ծառայություն կատարեր: Այն պետք է ստեղծվեր և գործեր նույն հիմունքներով, որով կարգավորվել էր Պետրոս I-ի պարսկական արշավանքի ժամա-

նակ *Հայկական էսկադրոնը*: Հրամանատարները պետք է լինեին հայեր, որոնք պետք է պատրաստվեին Լազարյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում: Հայկական զորքի կազմակերպման գործում նախագծի կազմողները մեծ տեղ էին հատկացնում հոգևորականությանը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին և թեմական առաջնորդներին: Հայկական զորք ստեղծելու գործը գլխավորելու համար Պետերբուրգում պետք է հիմնվեր հատուկ կոմիտե՝ կազմված ճանաչված հայերից: Նախագծի կազմողները մերժում էին ճորտատիրական իրավունքը և պահանջում, որ հայկական թագավորությունում արգելվի մարդկանց վաճառքը՝ մի բան, որը կատարվում էր Վրաստանում: Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի անկախությունը վերականգնելու պահանջով ու նույն բովանդակությամբ նախագիծ, Նիկոլայ I-ի անունով, ներկայացրել է նաև Սերովբե վարդապետ Կարնեցին: Թե ցարական կառավարությունը ինչ վերաբերմունք է ցույց տվել այդ նախագծերի նկատմամբ, պարզված չէ: Հայտնի է միայն, որ դրանք մնացել են անիրագործելի: Կովկասի նոր կառավարչապետ գեներալ Ի. Պասկևիչը, որին հանձնարարված էր Արևելյան Հայաստանում նոր իշխանության կազմակերպման խնդիրը, իսկույննեթ ձեռնամուխ եղավ ցարիզմի գաղութային քաղաքականության իրագործմանը: Քաղաքական ասպարեզից հեռացրեց հայկական պետականության վերականգնման կողմնակիցներին (Ներսես Աշտարակեցի, Եղիազար Լազարյան և ուրիշներ): Հայ ազատագրական շարժման գործիչների պատրանքների հատուցումը եղավ Հայկական մարզի ստեղծումը, որի կառավարումը հանձնվեց ռուս զինվորական աստիճանավորներին:

* * *

Մերձավոր Արևելքում և Բալկաններում նույնպես սրվել էր իրադրությունը՝ կապված հունական ապստամբության և հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հետ:

Սակայն Օսմանյան կայսրությունը մերժեց Հունաստանին ինքնավարություն տալու եվրոպական տերությունների պահանջը, և Նավարինի ծովամարտում պարտվելուց (1827-ի հոկտեմբեր) հետո Մահմուդ II-ը 1827-ի հոկտեմբերի 8(20)-ին չեղյալ հայտարարեց Ռուսաստանի հետ կնքված բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը և նախապատրաստվեց պատերազմի:

Ռուս-թուրքական պատերազմն սկսվեց 1828-ի ապրիլի 14-ին: Պատերազմն ընթացավ Բալկանյան և Կովկասյան ճակատներում: Վերջինիս առաջնահերթ խնդիրն էր հնարավորություն չտալ Թուրքիային ռազմական մեծ ուժեր կենտրոնացնելու պատերազմի գլխավոր՝ Բալկանյան ճակատում, ինչպես նաև ամրանալ Սև ծովի կովկասյան ափերին և ծավալվել Արևմտյան Հայաստանի տարածքում: Կովկասյան ճակատում հիմնական ռազմական գործողությունները ծավալվեցին Արևմտյան Հայաստանում: 1828-ի հունիսի 14-ին ռուսական զորքերն անցան սահմանը և շարժվեցին Կարսի ուղղությամբ, հունիսի 23-ին գրավեցին Կարսը, հուլիսի 23-ին՝ Ախալքալաքը, օգոստոսի 15-ին՝ Ախալցխան, օգոստոսի 22-ին՝ Արդահանը, օգոստոսի 28-ին՝ Բայազետը, սեպտեմբերի 12-ին՝ Ալաշկերտը: Սև ծովի ափերին գրավվեցին Անապան, Սուխումը, Փոթին:

1829թ. փետրվարին, վերսկսելով ռազմական գործողությունները, թուրքերը հարձակվեցին Ախալցխայի վրա: Փետրվարի 17-ից մինչև մարտի 4-ը թուրքերը ճգնում էին գրավել Ախալցխայի բերդը, որի պաշտպանությունը ղեկավարում էր գեներալ Բ. Հ. Բեհբութովը: Պաշարված Ախալցխային օգնության եկած Ի. Գ. Բուրցովի զորաջոկատի օգնությամբ թուրքերը ջախջախվեցին և ետ շարժվեցին: 1829թ. ռազմական գործողությունների նշանավոր դրվագներից էր Բայազետի պաշտպանությունը, որին գործուն մասնակցություն ունեցան հայերը: Թուրքերին չհաջողվեց գրավել Բայազետը: Ռուսական զորքերը, հակահարձակման անցնելով, հունիսի 19-20-ին Սողանլուղում ջախջախեցին թուրքերին, 24-ին գրավեցին Հասանդալան և հայտնվեցին Էրզրումի պարիսպների մոտ: Հունիսի

27-ին Էրզրումը անձնատուր եղավ առանց դիմադրության: Դրանից հետո մեկը մյուսի ետևից գրավվեցին Դերջանը, Քղին, Խնուսը, Գյումուշխանեն, Մուշը: Ինչպես արևելահայերը, այնպես էլ արևմտահայերը զենքը ձեռքին մարտնչում էին ռուսական բանակի շարքերում:

Տեսնելով, որ Թուրքիան պարտվում է, արևմտյան տերությունները դիվանագիտական ճնշում գործադրեցին Ռուսաստանի վրա և ստիպեցին հաշտություն կնքել: Բանակցությունները տեղի ունեցան Ադրիանուպոլսում: Վճռելով, որ ավելի լավ է պահպանել թույլ Օսմանյան կայսրությունը, քան այն մասնատել եվրոպական տերությունների միջև, ռուսական կողմը համեմատաբար մեղմ պայմաններ առաջադրեց: Պայմանագիրը [կնքվեց 1829թ. սեպտեմբերի 2(14)-ին] բաղկացած էր 16 հոդվածներից և Դանուբյան իշխանապետությունների առանձնաշնորհումների վերաբերյալ առանձին ակտից: Դանուբի գետաբերանը, կղզիներով հանդերձ, ինչպես նաև Սև ծովի ափերը՝ Կուբանի գետաբերանից մինչև Ս. Նիկոլայի ամրոցը, անցնում էին Ռուսաստանին: Ռուսաստանին էին միացվում նաև Ախալքալաքն ու Ախալցխան՝ իրենց գավառներով: Թուրքիան ճանաչելու էր Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը: Ռուսական և օտարերկրյա առևտրամավերը կարող էին ազատ երթևեկել նեղուցներով: Դանուբի ձախ ափին Թուրքիան ամրոցներ չպետք է ունենար: Սուլթանը չպետք է միջամտեր Մուղովայի և Վալաքիայի ներքին գործերին և պետք է բավարարվեր միայն տուրք ստանալով: Հաստատվում էր Սերբիայի փաստական ինքնավարությունը, Հունաստանին տրվելու էր ներքին ինքնավարություն: Ի վնաս հայ ժողովրդի, Արևմտյան Հայաստանի գրավված գրեթե ամբողջ տարածքը վերադարձվում էր Թուրքիային: Ադրիանուպոլսի պայմանագրով նախատեսվում էր թույլատրել երկու կողմերի հպատակներին մեկ և կես տարվա ընթացքում արտագաղթել, ուստի արևմտահայերի մի պատկառելի զանգված, որը խանդավառությամբ էր ընդունել ռուսական զորքերին և աջակցել նրանց, վճռեց գաղթել և հաստատվել ռուսական տիրույթներում: Դրա հետևանքով 14

հազարից ավելի ընտանիք (շուրջ 100 հազար մարդ) արտագաղթեց և բնակություն հաստատեց Անդրկովկասում: Երզրունի փաշայությունից գաղթած հայերը հիմնականում հաստատվեցին Ախալցխայում և Ախալքալաքում, Կարսի փաշայությունից գաղթածները՝ Շիրակում՝ Թալինում, Ապարանում, Բայազետից գաղթածները՝ Գավառում, Դարաչիչակում և Սուրմալում: Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչության նվազման հաշվին ավելացավ հայերի թվաքանակը Արևելյան Հայաստանում:

* * *

Երևանի գրավումից հետո, երբ դեռևս շարունակվում էին պատերազմական գործողությունները, անհրաժեշտություն զգացվեց գրաված երկրամասում ներքին գործերը տնօրինելու համար ստեղծել իշխանության ժամանակավոր մարմիններ: 1827-ի հոկտեմբերի 6-ին գեներալ Պասկևիչի կարգադրությամբ ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչություն՝ գեներալ Կրասովսկու նախագահությամբ և Երևանի պարետ, փոխգնդապետ Բորոդինի ու Ներսես Աշտարակեցու անդամակցությամբ: Ժամանակավոր վարչության խնդիրն էր ապահովել զորքերի մատակարարումը պարենամթերքով և երկրի անվտանգությունը: Վարչությունը ապահովեց կարգ ու կանոնը, հաշվառեց ու պետականացրեց սարդարի ունեցվածքը, հայերից կազմեց հեծյալ և հետևակ ջոկատներ՝ ներքին պահակային ծառայության համար:

Ինչպես ռուսական կառավարական շրջաններին, այնպես էլ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներին զբաղեցնում էր նորագրավ երկրամասի ապագա քաղաքական կացության հարցը: Ցարական կառավարությունը, տեղյակ լինելով հայկական պետականության վերականգնման մասին հայերի մտայնությանը՝ Պետերբուրգում ստեղծեց հատուկ կոմիտե՝ Երևանի և Նախիջևանի խանությունների ապագա կացության հարցը վճռելու նպատակով: Սկզբում ցարական կառավարու-

թյունը մտադրվել էր 80 հազար մալոռուս կազակներ վերաբնակեցնել Արևելյան Հայաստանի տարածք՝ սահմանների պաշտպանությունն ապահովելու և երկրամասը յուրացնելու նպատակով: Ի հակադրություն դրան՝ հայ գործիչներից Խ. Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրեց նախագիծ, որը լիովին արտահայտում էր հայ ազգային-ազատագրական շրջանների տրամադրություններն ու ցանկությունները: Ըստ նախագծի՝ ստեղծվելու էր «Հայկական թագավորություն» Ռուսական կայսրության կազմում՝ ներքին ինքնավարության իրավունքով, ռուսական կայսրը պաշտոնապես ընդունելու էր և հայոց թագավորի տիտղոս, Անդրկովկասում գտնվող բոլոր վաղեմի հայկական տարածքները միավորվելու էին «Հայոց թագավորության» մեջ, ստեղծվելու էր հայկական սահմանապահ զորք և կայսերական գվարդիական էսկադրոն: Հայոց թագավորության ամբողջ տարածքում գործելու էին հայկական օրենքները և ռուսական կայսրերի տված առանձնաշնորհումները, Հայոց եկեղեցին պահպանելու էր իր անկախությունը, ճորտատիրական իրավունքը բացառվում էր: Նման պայմաններում ցարական կառավարությունն ստիպված էր հրաժարվել իր նախագծից և որոշ չափով ընդառաջել հայկական ակնկալություններին:

1828-ի մարտի 21-ին Նիկոլայ I-ը ստորագրեց մի հրամանագիր, որի համաձայն Արևելյան Հայաստանի նոր գրաված տարածքում ստեղծվում էր Հայկական մարզ: Նորաստեղծ մարզի կառավարման գործը փոխանցվում էր մարզային վարչությանը, որի պետ նշանակվեց Երևանում տեղակայված ռուսական զորքերի հրամանատար գեներալ ճավճավաձեն (մինչ այդ Պասկևիչը Բեսարաբիա էր արքայապետ Ներսես Աշտարակեցուն, հեռացրել էր գեներալ Կրասովսկուն): Վարչության կազմում իբրև անդամներ մտնում էին երկու ռուս զինվորական և տեղական քրիստոնյա ու մահմեդական ազգաբնակչության վերնախավի մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև երեք խորհրդական, որոնք վարելու էին գործադիր, ֆինանսական, տնտեսական ու դատական գործերը: Վարչական առումով

մարզը բաժանվում էր Երևանի և Նախիջևանի գավառների և Օրդուբադի օկրուգի: Նախիջևանի գավառում և Օրդուբադի օկրուգում իշխանությունը թողնվում էր մահմեդական նախնե-րին (իբր պատերազմի ժամանակ մեծ ծառայություններ էին մատուցել), որը առաջ բերեց հայ ազգաբնակչության խոր դժգոհությունը: Հայկական մարզի վաչկատուն քուրդ և աղը-բեջանցի բնակչությունը մնում էր իր ցեղապետերի կառավա-րության ներքո: Երևանում և Նախիջևանում հիմնվեցին քաղա-քային դատարաններ, գավառներում՝ գավառական դատարան-ներ և ոստիկանական վարչություններ:

Հայկական մարզի ստեղծումը մասնակի զիջում էր հայ ժողովրդի ինքնավարական և ազգային պետականության վե-րականգնման ձգտումներին: Իրականում ցարիզը ձգտում էր այն դարձնել իր գաղութը: 1830-1838թթ. Հայկական մարզի պետն էր իշխան Բ. Բեհբութովը, որը զգալի աշխատանք կա-տարեց մարզում ցարական օրենքների հաստատման և կի-րառման ուղղությամբ: 1833թ. հունիսի 23-ի օրենքով փոփոխ-վեց Հայկական մարզի վարչական քարտեզը: Երևանի գավառը բաժանվեց չորս օկրուգի՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարապատի, Նախիջևանի գավառը և Օրդուբադի օկրուգը պահպանվեցին: Օկրուգների կառավարման համար նշանակ-վեցին ռուսական աստիճանավորներ, իսկ Նախիջևանը և Օր-դուբադը շարունակում էին մնալ նախնեների կառավարչության ներքո:

Ցարիզմին մտահոգում էր Անդրկովկասում միանման վարչակարգ ստեղծելու և ընդհանուր օրենքներով կառավա-րելու խնդիրը: 1837-ին Նիկոլայ I-ի այցելությունն Անդրկովկաս և բնակչության անսքող դժգոհությունն ու բողոքները հա-մոզեցին, որ անհրաժեշտ է շուտափույթ միջոցներ ձեռք առնել՝ դրությունը կարգավորելու և կայուն վարչաձև ստեղծելու համար:

Դեռևս 1833-ին ստեղծվել էր «Անդրկովկասի բարեկարգ-ման հատուկ կոմիտե», որը պետք է զբաղվեր ապագա բա-րեփոխումների խնդրով, նույն նպատակով 1837-ի մարտին

Անդրկովկաս էր ուղարկվել հատուկ հանձնաժողով՝ սեմատոր Գանի գլխավորությամբ, որն ուսումնասիրելով տիրող իրավի-ճակը՝ կազմելու էր համապատասխան օրինագիծ: Երկարատև քննությունից հետո՝ 1840-ի ապրիլի 10-ին, օրինագիծը վավե-րացվեց: Այդ օրենքով Անդրկովկասում ստեղծվում էին Վրացա-Իմերեթական նահանգ՝ Թիֆլիս և Կասպիական մարզ՝ Շա-մախի կենտրոններով: Վրացա-Իմերեթական նահանգի մեջ մտնում էին Թիֆլիսի, Թելավի, Գորիի, Բելկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Գուրիայի գավառները, իսկ Կասպիական մարզի գավառներն էին՝ Շիրվանը, Ղարաբաղը, Շաքին, Բաքուն, Թալիշը, Դերբենդը և Ղուբան: Հիշյալ բոլոր գավառներն իրենց հերթին բաժանվում էին 72 շրջանների: Այսպիսով, 12-ամյա գոյությունից հետո վերացվում էր Հայկական մարզը, որով խորտակվում էին հայկական ինքնավարության պատրանք-ները, երկրամասի վարչական նոր բաժանումով անտեսվում էին ազգային առանձնահատկությունները:

Ապրիլի 10-ի օրենքով տեղական, այսպես կոչված, «բարձր դասը»՝ բեկերն ու աղաները, դուրս էին մղվում վար-չական գործունեության ասպարեզից՝ իբրև ցարիզմի նոր խնդիրներին բոլորովին անհամապատասխան և ավելորդ մի տարր, որի թիվը, Գանի հաշվումներով, միայն Շաքիում, Շիր-վանում և Ղարաբաղում կազմում էր 10750 մարդ: Որոշվեց նրանց թոշակ նշանակել պետական գանձարանից: 1841-ի մայիսի 23-ի օրենքով մահմեդական աղաների կառավարման տակ գտնվող գյուղերն ազատվում էին նրանց ենթարկվելու, տուրքերը վճարելու և անձնական ծառայություններ կատա-րելու պարտավորությունից: Գյուղացիներն այժմ հարկերը տա-նուտերի միջոցով պետք է հանձնեին գանձարանին: Աղաներին և բեկերին վերաբերող օրենքը և նրա ոգուց բխած որոշումները առաջադիմական քայլ էին, քանի որ գյուղացիական լայն խա-վերին ազատում էին այդ պորտաբույծ դասի կամայականու-թյուններից: Սակայն դա կարճ տևեց. բեկերը կարողացան հասնել իրենց նախկին իրավունքների վերականգնմանը, իսկ

աղաների նյութական ապահովության համար որոշվեց նոր միջոցներ փնտրել:

1840-ական թթ. կեսին ցարիզմը Անդրկովկասում տիրապետությունն ամրապնդելու և դասակարգային վստահելի հեմարան ստեղծելու նպատակով նոր միջոց ձեռք առավ, որը պետք է կենսագործեր Կովկասի առաջին փոխարքա Մ. Ս. Վորոնցովը: Մ. Ս. Վորոնցովը Արևելյան Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանի մի շարք շրջաններում ստեղծեց քաղաքացիական վարչություններ: 1846-ի դեկտեմբերի 14-ին կառավարությունը կրկին Անդրկովկասը վարչական բաժանման ենթարկեց: Ստեղծվեցին չորս նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի: Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի գավառները մտնում էին Թիֆլիսի նահանգի մեջ: Միայն 1849-ի հունիսի 9-ին Երևանի նահանգի կազմակերպումով Արևելյան Հայաստանի մի զգալի մասն ամփոփվեց մեկ վարչական միավորի մեջ, որով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսական ու մշակութային առաջընթացի, քաղաքային կյանքի զարգացման համար: Երևանի նահանգի մեջ մտան Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Օրդուբադի և Նոր Բայազետի գավառները:

Ցարիզմը հայ ժողովրդի նկատմամբ գաղութային քաղաքականությունը վարում էր զգուշավորությամբ. Հայաստանի տարածքի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ, իսկ ցարիզմի ռազմաքաղաքական շահերը Թուրքիայում պահանջում էին հաշվի նստել այդ փաստի հետ: Ռուսական պետական գործիչները գիտեին, որ Մերձավոր և Միջին Արևելքում ռուսական արտաքին քաղաքական նպատակադրումներին կարող էր մեծապես նպաստել Հայ եկեղեցին, որի դերը նշանակալի էր հայ ժողովրդի կյանքում (պետականության կորստից հետո Հայ եկեղեցին էր, որ կրում էր համազգային բնույթ և միմյանց շաղկապում հայ ժողովրդի տարանջատված հատվածները, կարևոր դեր խաղում հայ ժողովրդի ազգապահպանման գործում): Ցարիզմը ծրագրում էր Հայ եկեղեցու դիրքն օգտագործել ոչ

միայն իր տիրապետությունն Արևելյան Հայաստանում ամրապնդելու, այլև Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ մնացած և արտասահմանյան երկրներում սփռված հայ զանգվածների վրա ազդեցություն նվաճելու նպատակով: Ուստի անհրաժեշտ էր, որ Հայ եկեղեցին զեթ երևութապես պահպաներ իր նախկին դիրքը:

Ի. Ֆ. Պասկևիչը Թիֆլիսում ստեղծել էր գաղտնի հանձնաժողով, որի կազմում էին Բ. Յ. Բեհբուսովը, Սերովբե Կարնեցին, Հակոբ Շահան Ջրպետյանը և լեհ աստիճանավոր Օչկինը: Հանձնաժողովը պետք է մշակեր Հայ եկեղեցու ներքին կյանքը սահմանող կանոնադրություն: Ի դեպ, Հայ եկեղեցու կառավարման բարենորոգության հարցը դեռ XIX դ. սկզբին էր գրավել որոշ հայ գործիչների ուշադրությունը. մասնավորապես՝ Լազարյանների դրոմամբ 1808թ. Դանիել կաթողիկոսն ստեղծեց Էջմիածնի Բարձրագույն խորհրդարանը կամ Սինոդը, որի կազմի մեջ մտնում էին Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները, և որն ուներ խորհրդակցական մարմնի իրավունքներ: Գաղտնի հանձնաժողովի մշակած կանոնադրության նախագիծը հետագայում քննարկվեց Պետերբուրգում, փոփոխությունների ենթարկվեց և 1836թ. մարտի 11-ին հաստատվեց Նիկոլայ I-ի կողմից: Պատմության մեջ «Պոլոժենիե» անունով հայտնի այդ կանոնադրությունը խոր ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ներքին կյանքի վրա, քանի որ նրա ընդգրկումը շատ ավելի լայն էր, քան Հայ եկեղեցու ներքին կյանքին վերաբերող հարցերը: Հայ ժողովուրդն իրավունք էր ստանում, իբրև մի կրոնական առանձին համայնք, պահպանել իր լեզուն և ազգային-կրոնական առանձնահատկությունները, ազգային-հասարակական կյանքում օգտվել մայրենի լեզվից: Հայ եկեղեցին իրավունք էր ստանում ստեղծել և պահպանել հայկական դպրոցներ: Մյուս կողմից, ռուսական արտաքին քաղաքականության շահերը պահանջում էին, որ Հայ եկեղեցին շարունակեր նախկինի պես վայելել հանուր հայության վստահությունը. առաջին հերթին դա վերաբերում էր արևմտահայերին, որոնց համերաշխու-

թյանը Մայր աթոռի հետ ռուսական կառավարությունը մեծ նշանակություն էր տալիս: Հայ եկեղեցու դավանանքը հռչակվում էր ազատ: Նրանից պահանջվում էր հարգել կայսրության մեջ առկա մյուս դավանանքները և հրաժարվել հավատաորսությունից, թեպետ թույլատրվում էր, որ մահմեդականներն ու հեթանոսներն ընդունեն հայոց դավանանքը: Հայ հոգևորականությունը ազատվում էր մարմնական պատիժներից, հարկերից, կոռ ու պարհակից:

«Պոլոժենիեի» համաձայն՝ Հայ եկեղեցու ստորին վարչական միավորը ծխական համայնքն էր, որն ունենալու էր քահանա և երեցփոխան (ծխականների կողմից ընտրված և եկեղեցու տնտեսությունը վարող անձ)՝ ժողովրդի ընտրությամբ: Եկեղեցական թեմերը կառավարելու համար կաթողիկոսի առաջադրությամբ կառավարությունը հաստատում էր թեմակալ առաջնորդներին, որոնք կառավարում էին կոնսիստորիաների միջոցով: Ի վավերացումն նախնի ավանդույթների՝ Հայ եկեղեցու գլուխը Ամենայն հայոց կաթողիկոսն էր (և ծայրագույն պատրիարքը), որն ընտրվում էր համազգային ընդհանուր ժողովում՝ աշխարհիկ և հոգևոր պատգամավորների քվեներով: Սակայն համազգային ժողովն իր ընտրության մեջ լիովին ազատ չէր, քանի որ պետք է առաջադրվեր երկու թեկնածու, որոնցից մեկին հավանություն էր տալու ցարը: Դրանով կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում և հնարավորություն ստանում կաթողիկոսական գահին բազմեցնելու իրեն հաճո անձնավորության:

Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայության հետ կաթողիկոսը կարող էր կապ պահպանել միայն արտաքին գործերի մինիստրության միջոցով: Կաթողիկոսի իշխանությունը սահմանափակում էր նաև Սինոդը, որը գրեթե կիսանկախ մի հիմնարկություն էր և ամբողջովին գտնվում էր կառավարության նշանակած պրոկուրորի անմիջական հսկողության տակ, թեև Սինոդի նախագահ համարվում էր կաթողիկոսը: Եկեղեցիներին կից ստեղծվելու էին ծխական դպրոցներ, իսկ թեմերում՝ սեմինարիաներ կամ թեմական դպրոցներ: Էջմիածնում

հիմնվելու էր հոգևոր ճեմարան: Դպրոցների վերաբերյալ հողվածները դրական երևույթ էին: Դրվելով ամբողջովին կառավարության հսկողության տակ՝ Հայ եկեղեցին, սակայն, նրանից նյութական օժանդակություն չէր ստանում: Նրա գոյության նյութական հիմքը սոսկ ժողովրդի նվիրատվությունը և եկեղեցական կալվածքներից ստացված եկամուտներն էին: «Պոլոժենիեի» դժգոհությամբ ընդունվեց Հայ եկեղեցու, լայն զանգվածների և հատկապես արևմտահայության կողմից, քանի որ այն դիտվեց իբրև Հայ եկեղեցու և ազգի իրավունքներն ու ավանդույթները սահմանափակող օրենք:

«Պոլոժենիեի» համաձայն՝ 1837-ին հիմնվեցին Էջմիածնի և ռուսահայ վեց թեմերի (Երևանի, Վրաստանի, Ղարաբաղի, Շամախու, Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի, Աստրախանի) կոնսիստորիաները: Թեմական դպրոցներ բացվեցին Երևանում (1837) և Շուշիում (1838):

Տարիզի գաղութային քաղաքականության բնորոշ գծերից մեկն էլ Ռուսաստանից գաղթեցրածների բնակեցումն էր Արևելյան Հայաստանում: Դեռևս 1830-ի հոկտեմբերի 20-ին Պետական խորհուրդը կարծիք էր հայտնել՝ ռուս աղանդավորներին (դուխոբորներ, իկոնոբորներ, մոլոկաններ և այլն) Անդրկովկասում բնակեցնելու և հարմարավետ վայրեր տրամադրելու մասին: 1844-ին հիմնադրվեց Վորոնցովկա գյուղը, 1845-ին՝ Նովո-Միխայլովկան: Այնուհետև նույն (Լոռու) շրջանում հիմնվեցին Պրիվոլնոյե, Պոկրովկա, Ալեքսանդրովկա, Նիկոլաևկա, Ռուս-Գերգեր մեծ բնակավայրերը: Ծրագրվում էր նաև ռուսներով բնակեցված գյուղեր հիմնել Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա-Ջալալօղլի և Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա-Դիլիջան ճանապարհների վրա, սակայն տեղական բնակչության համառ դիմադրությունը խափանեց այդ պլանի կենսագործումը, միայն Համզաչիման գյուղի շրջակայքում հիմնվեցին Նիկիտինո և Վոսկրեսենովկա գյուղերը: Սևանա լճի ափերին հիմնադրվեցին Ալեքսանդրովկա, Նադեժդինա, Ելենովկա, Սենյոնովկա և Կոստանտինովկա, Ջանգեզուրում՝ Բազարչայ և Բորիսովկա գյուղերը, իսկ Դիլիջանի Ջարխեջ և

հարևան սակավահող գյուղական համայնքները հարկադրված էին տեղ հատկացնել Նոր Դիլիջան և Գոլովինո գյուղերին: Ցարիզմը ռուս գաղթականներին արտոնյալ վիճակի մեջ էր դնում, նրանց տրամադրում լավագույն հողաբաժիններ, ինչն առաջացնում էր տեղական ազգաբնակչության դժգոհությունը:

Գյուղացիության զանգվածային առաջին բողոքները և զանգատները եղել են 1837-ին, երբ Նիկոլայ I-ն այցելեց Հայկական մարզ:

Մեծ ծավալ ընդունեցին Նոր Բայազետի 30 հայկական գյուղերում բռնկած գյուղացիական հուզումները: Գյուղացիները խնդրեցին կառավարությանը հարկերը կրճատել, բայց մերժում ստացան: Կառավարությունը որոշեց զենքի ուժով ճնշել ըմբոստությունը, զորքեր ուղարկեց, ձերբակալեց «գլխավոր գրգռիչներին»: Երևանի գավառի Գյուկչայի գավառամասի աղալարական հինգ գյուղերի բնակիչների տևական ու համառ պայքարը աղաների դեմ շարունակվեց մինչև 1870-ական թթ. վերջը և ավարտվեց աղալարական կախումից Չող, Մեծ Մազրա, Փոքր Մազրա, Չախրլու և Ղոշա-Բուլախ գյուղերի բնակիչների ազատագրումով: Սուր էր պայքարը նաև Ջանգեզուրում: Չնայած մասնակի հաջողություններին՝ այդ պայքարը հիմնականում ապարդյուն էր:

* * *

1853-56-ին տեղի ունեցավ Ղրիմի կամ Արևելյան պատերազմը, որը հետևանք էր արևելյան հարցի սրման: Այն զավթողական էր մի կողմից՝ Ռուսաստանի և մյուս կողմից՝ Թուրքիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Պատերազմական գործողությունները ծավալվեցին Դանուբի, Ղրիմի և Կովկասյան ռազմաճակատներում: Անդրկովկասում թուրքական 100 հազարանոց բանակի դեմ կանգնած էին Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի թույլ կայազորները (շուրջ 5 հազար զինվոր): Կազմավորվեց հայ-վրացական 10 հազարանոց աշխարհազոր, Ղրիմից փոխադրվեց 16 հազարանոց հե-

տևակային մի դիվիզիա, ինչը հնարավորություն տվեց 30 հազարանոց զորքը կենտրոնացնել զեներալ Բ. Բեիբուլովի հրամանատարության ներքո: Թուրքական գլխավոր ուժերը (շուրջ 40 հազար) Կարսից շարժվեցին Ալեքսանդրապոլ (ճանապարհին թուրքերը ներխուժեցին Բայանդուր գյուղը, կոտորեցին հայ բնակիչներին), սակայն ռուսական զորամասերին հաջողվեց կանգնեցնել թշնամու առաջխաղացումը: Իսկ թուրքերի Արդահանի ջոկատը (18 հազար), փորձելով շարժվել դեպի Թիֆլիս, 1853-ի նոյեմբերի 14-ին Ախալցխայի մոտ ջախջախվեց զեներալ Ի. Անդրոնիկովի ջոկատի կողմից: Նոյեմբերի 19-ին զեներալ Բեիբուլովի զորքերը (10-11 հազար) ջարդեցին թուրքական գլխավոր ուժերին (36 հազար) Բաշկաղըքլարի ճակատամարտում: 1854-ին գործողությունները Կովկասյան ռազմաճակատում զարգացան հաջողությամբ: Հուլիսի 24-ին Քյուրուկ-Դարայի ճակատամարտում ռուսական զորքերը ջախջախեցին թուրքերին. այդ նույն ժամանակ Երևանյան զորաջոկատը գրավեց Բայազետը: 1855-ի նոյեմբերի 16-ին ռուսական զորքերը գրավեցին Կարսը: Չնայած այդ հաջողություններին՝ Սևաստոպոլի անկումը (1855-ի սեպտեմբերի 8) ուժեղ հարված հասցրեց Ռուսաստանին:

1856-ի մարտի 18-ին Փարիզում ստորագրվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն Ռուսաստանը, ի թիվս այլ պայմանների, Թուրքիային էր վերադարձնում Անդրկովկասում գրաված բոլոր տարածքները, այդ թվում և Կարսը, իսկ Ռուսաստանին վերադարձվում էին Սևաստոպոլը և այլ քաղաքներ:

* * *

Ինչպես XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, հայերը, իրենց ազատագրական հույսը կապելով ռուսական զենքի հաղթանակի հետ, ռազմական և նյութական մեծ օգնություն ցույց տվեցին ռուսական զորամասերին Ղրիմի և Կովկասյան ռազմաճակատներում: Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո հայկական կամա-

վորական աշխարհագրային գումարտակներ կազմակերպվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Վաղարշապատում, Կարսում, Իգդիրում, Ղարաբաղում, Փամբակ-Շորագյալում և այլուր, որոնք ղեկավարեցին Գևորգ Մալինցյանը, Ստեփան Սամսոնյանը, Ի. Թարխանյանը, Ավետիս Տեր-Գրեկուրովը, Դանիել Չարությունովը, Թումանյանը և ուրիշներ: Հայերը հատկապես աչքի ընկան Կարսի պաշարման և գրավման ժամանակ, Բայանդուրի, Ախալցխայի, Բաշկադըքլարի, Քյուրուկ-Դարայի ճակատամարտերում, թուրքական ասպատակություններից սահմանամերձ շրջանների պաշտպանության գործում: Պատերազմում իրենց ռազմական տաղանդով փայլեցին հայազգի ռազմական գործիչներ Մ. Լոռիս-Մելիքովը, Բ. Բեհբուժովը, Լ. Սերբերյակովը:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստեց երկրի տնտեսական կյանքի զարգացմանը, թեև այն շարունակում էր մնալ հետամնաց ագրարային երկիր, որտեղ բնակչության ավելի քան 90%-ը գյուղացիներ էին: 1870-ին մշակվում էր շուրջ 2,5 մլն գամ ավելի հողատարածություն, քան պարսկական տիրապետության տարիներին: Հատկապես ընդարձակվեցին ցորենի, գարու, չալթուկի, բամբակի ցանքատարածությունները: Երևանի, Նախիջևանի և Օրդուբադի գավառներում էին կենտրոնացած խաղողագործությունն ու պտղաբուծությունը, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությունը: Ցարական կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում բամբակագործության զարգացմանը: 1868-ին Երևանում հիմնվեց բամբակը գտելու և մամլելու միջոցով հակավորող գործարան: Լայնորեն զարգացավ շերամապահությունը, և ամբողջ Անդրկովկասը դարձավ ռուսական մետաքսարդյունաբերության հումքի կարևոր և հիմնական հենակետը:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը նպաստեց նաև անասնապահության աճին: 1860-ական թթ. փորձեր են արվել հողի վարձակալման միջոցով կապիտալիստական բնույթի ֆերմերական ցանքատարածություններ ստեղծելու ուղղությամբ: Սակայն այդ ժամանակահատվածում նման

փորձերը հատուկեմտ էին և ցանկալի արդյունք չտվեցին: Այնուամենայնիվ, Արևելյան Հայաստանում հետզհետե զարգանում էր գյուղատնտեսության ապրանքայնությունը, ուշադրություն էր բեռնվում հատկապես տեխնիկական կուլտուրաների մշակության վրա, և երկիրը դանդաղ, բայց անշեղորեն ներգրավվում էր կապիտալիզմի ոլորտը: Բնատնտեսությունն իր տեղը զիջում էր ապրանքային տնտեսությանը՝ դրանով իսկ փոխելով երկրի նախկին ֆեոդալիստական պատկերը:

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առևտրի ու արհեստների, արդյունաբերության զարգացման համար: Հայ առևտրականներն ու արհեստավորները կարևոր դեր էին խաղում Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքների տնտեսական կյանքում: 1840-ական թթ. Անդրկովկասի առևտուրը գրեթե բացառապես գտնվում էր հայերի ձեռքին, իսկ նրա տարեկան շրջանառության գումարը շուրջ 6 միլիոն ռուբլի էր: Երևանի նահանգի արհեստավորներից միայն Ալեքսանդրապոլի արհեստավորներն էին իրենց արտադրանքն ուղարկում Թիֆլիս և արտահանում Թուրքիա: Բավական մեծ թիվ էին կազմում պղնձագործները: Ալավերդիում արտադրված պղնձի շուրջ կեսն օգտագործվում էր կաթսաներ պատրաստելու նպատակով: Արհեստի հիմնական ճյուղերից էին նաև կաշեգործությունը, բրուտությունը, դարբնությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, հացագործությունը, զգրարությունը և այլն:

Արհեստավորները կազմակերպված էին համքարությունների մեջ, որոնք պահպանվում էին, քանի դեռ ռուսական գործարանային արդյունաբերության արտադրանքը քիչ էր ներթափանցել Անդրկովկաս: Թիֆլիսի համքարությունները, որոնց անդամների ճնշող մեծամասնությունը հայեր էին, եռանդուն դիմադրություն էին ցույց տալիս ռուսական արդյունաբերական արտադրանքի տարածմանը: Համքարությունների պաշտպանությամբ 1857-ին հանդես եկան հայտնի մտավորականներ ու հասարակական գործիչներ Գևորգ Ախվերդյանը և Պետրոս Շանշյանը: Նրանք համքարությունների թշնամիներ էին համա-

րում խոշոր դրամատերերին, որոնք առևտրի և արհեստի ազատություն պահանջելով՝ իրենց նյութական հզորության շնորհիվ կամենում էին ասպարեզի միակ տերը դառնալ:

Արևելյան Հայաստանում հատկապես զարգացած էր լեռնարդյունաբերությունը՝ շնորհիվ պղնձի ու աղի հարուստ հանքերի առկայության: Բացառությամբ լեռնարդյունաբերական ձեռնարկությունների, «գործարանային արդյունաբերություն» հասկացության տակ հանդես եկող ձեռնարկությունները, ըստ էության, չնչին չափերի, հաճախ էլ պարզապես տնայնագործական արհեստանոցներ էին: Այդ գործարաններն էլ, ըստ արտադրության ճյուղերի, այսպիսի պատկեր էին ներկայացնում. կաշվի ձեռնարկություններ՝ 40, օճառի՝ 10, ներքնակների՝ 4, օղու արտադրության՝ 13, բրուտագործական՝ 11, աղյուսի՝ 11, կրի արտադրության՝ 9 և այլն: 1860-ական թթ. դրանցից յուրաքանչյուրի տարեկան միջին արտադրանքը, դրամական արտահայտությամբ, չէր գերազանցում 700 ռուբլուց: Աշխատանքային օրը վաղ առավոտից մինչև ուշ երեկո էր, օրավարձը՝ չնչին. 1850-ական թթ.՝ 20-25 կոպեկ, իսկ 1860-ական թթ.՝ 30-50 կոպեկ:

Ցարական կառավարությունը լուրջ ուշադրություն դարձրեց Ալավերդու և Ջանգեզուրի պղնձարդյունաբերությանը: Մինչև 1850-ական թթ. պղնձարդյունաբերության մեջ նույնպես կիրառվում էր հարկադիր աշխատանք: Մ. Ս. Վորոնցովի փոխարքայության տարիներին մտցվեց ազատ վարձու աշխատանքի համակարգ: Պղնձահանքերը կապալով տրվում էին հայ, հույն, գերմանացի արդյունաբերողներին: 1868-ին պղնձարդյունաբերական 10 ձեռնակություններում ձուլվել էր շուրջ 16000 փուֆ պղինձ:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո լայն հնարավորություններ ստեղծվեցին առևտրի զարգացման համար: Առևտուրը և առևտրականները վայելում էին պետության հովանավորությունը: Վերացվեցին ներքին մաքսային պատնեշները, ստեղծվեցին դրամագլուխները գործառնությունների մեջ դնելու հնարավորություններ: Առևտրի զարգաց-

մանը մեծապես խթանեցին անցումը հարկային նոր համակարգի, այն է՝ բնամթերային հարկի փոխարինումը դրամական հարկով, վաճառքի համար տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակումը և այլն: Ռուսական իշխանություններն ամեն կերպ խրախուսում էին հայ վաճառականների գործուն մասնակցությունը Անդրկովկասի տնտեսական կյանքին: Փոխարքա Մ. Ս. Վորոնցովն անձամբ մատնանշում էր, որ հայերը Անդրկովկասում կառավարության գլխավոր ուժերն են՝ կապալների և վարձակալությունների խնդրում: Կապալային համակարգը լայնորեն օգտագործվում էր գործերի մատակարարման, պետական հիմնարկների համար շինություններ կառուցելու գործում: Շատ անգամ կապալով էին տրվում տուրքերի գանձումը, արդյունաբերության որոշ ճյուղեր և այլն:

Արևելյան Հայաստանի առևտրի արտահանության հիմնական առարկաները տեղական գյուղատնտեսական մթերքներն էին՝ բամբակը, բրինձը, չոր մրգերը և այլն: Արտաքին առևտրական կապերը բավական աշխույժ էին Պարսկաստանի և Թուրքիայի հետ: Արտաքին առևտրի մեջ գլխավոր դերը կատարում էին հայ առևտրականները, որոնք առևտրական կապեր հաստատեցին նաև եվրոպական խոշոր քաղաքների հետ:

Քաղաքային առևտրի հիմնական օջախները Երևանը, Ալեքսանդրապոլը և Շուշին էին: Ջարգացող առևտրական գործառնություններին սկսել էր մասնակցել նաև գյուղացիությունը. 1865-ին քաղաքներում առևտուր անելու համար գյուղացիները վերցրել էին 305 վկայական:

* * *

Արևմտյան Հայաստանը թանգիմաթի ժամանակաշրջանում

XIX դ. 30-ական թթ. Օսմանյան կայսրությունը գտնվում էր ճգնաժամի մեջ: Ներքին և արտաքին ծանր կացությունը կառավարող վերնախավին հարկադրեց ձեռնարկել ճգնաժամից դուրս գալու և բարեփոխումներ անցկացնելու միջոցներ:

Բարենորոգումների նպատակն էր կասեցնել Օսմանյան կայսրության քայքայումը, բարելավել վարչական կառավարման համակարգը, կանխել ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Այդ բարենորոգումները, որոնք հայտնի են «թանգիմաթ» (արաբերեն՝ վերակառուցում, բարեփոխում) անունով, սկզբնավորվեցին 1839-ին և շարունակվեցին մինչև 1870-ական թթ. սկիզբը: 1839-ի նոյեմբերի 3-ին հրապարակվեց Գլուխանեի Հաթթը շերիֆը, որով հայտարարվում էր բոլոր հպատակների (անկախ կրոնական և ազգային պատկանելությունից) անձի, պատվի ու գույքի անձեռնմխելիություն, հարկատվության կարգավորում, կապալային համակարգի վերացում, զինվորական ծառայության կրճատում, ֆինանսական, վարչական ու դատական գործերի բարելավում և այլն:

Հաթթը շերիֆը իր շատ կողմերով հակասում էր մահմեդական ավանդույթներին և շարիաթին: Եթե քրիստոնյաները ողջունեցին Հաթթը շերիֆի հրապարակումը, ապա մահմեդականների կողմից այն հանդիպեց կատաղի դիմադրության՝ շատ դեպքերում վերածվելով ելույթների և քրիստոնյաների ջարդերի: Օգտվելով իրերի նման դրությունից՝ 1842-1843-ին Արևմտյան Հայաստանի քուրդ բեկերը ապստամբեցին Բերդերխան բեկի և Խան-Մահմուդի գլխավորությամբ: Մինչև 1849-ը Հայաստանի հարավային շրջանները արյունալի բախումների, կռիվների, կոտորածների թատերաբեմ էին դարձել: Թանգիմաթից ակնկալիքներ ունեցող հայ ազգաբնակչությունը հիմնականում աջակցում էր կառավարությանը՝ հուսալով վերջ տալ ստեղծված դժնի իրավիճակին և հնարավորություններ ստեղ-

ծել բարեփոխումների անցկացման համար, ազատվել տիրող քաոսից ու անիշխանությունից: Կառավարությունը ճնշեց ապստամբությունը, օջաքլըքները և հյուքումեթությունները վերացվեցին, ապստամբ քուրդ բեկերը արքորվեցին: Բայց վերջիններիս փոխարեն առաջ քաշվեցին նորերը, և դրությունը մնաց նույնը՝ ավելի վատթարացնելով հայ-քրդական փոխհարաբերությունները:

Հաթթը շերիֆը գրեթե ոչինչ չփոխեց գոյություն ունեցող դրության մեջ: Այլադավաններին խոստացված հավասարությունը մնաց թղթի վրա:

Նկատելի էր Թուրքիայի ֆինանսական կախվածություն Անգլիայի և Ֆրանսիայի բանկիրներից և պետական գանձարանի ճգնաժամ: Ուժեղանում էր բնակչության դժգոհությունը տիրող իրավիճակից, իսկ ճնշված ժողովուրդները ոտքի էին ելնում ազգային-ազատագրական պայքարի: Անհրաժեշտություն առաջացավ կենսագործել 1839-ին հռչակված ռեֆորմները: Ուժեղացավ նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի ճնշումը Բարձր Դռան վրա, որոնք նույնպես պահանջում էին բարեփոխումների անցկացում: Սուլթանական կառավարությունը 1856-ի փետրվարի 18-ին հրապարակեց բարենորոգումների մասին նոր հրովարտակ՝ Հաթթը հումայունը, որը կրկնում էր Հաթթը շերիֆը, սակայն լրացուցիչ արտոնություններ էր նախատեսում քրիստոնյա հպատակների համար (հոգևոր խորհուրդներ ընտրելու իրավունք): Միաժամանակ արտոնություններ էին տրամադրվում Թուրքիայում եվրոպական կապիտալին:

Վարչական ասպարեզում նախատեսվում էր նահանգական մեջլիսների (խորհուրդների) ռեֆորմ, դրանցում մահմեդական և ոչ մահմեդական համայնքների ներկայացուցիչների ազատ ընտրություն և կարծիքներ արտահայտելու ազատություն:

Հաթթը հումայունում մեծ տեղ էր հատկացված օրենքի առջև ոչ մահմեդականների հավասարության ապահովմանը և ոչ մահմեդական համայնքներին զանազան արտոնություններ

ընծեռելուն: Սուլթանի բոլոր հպատակներին, առանց դավանանքի խտրության, խոստացվում էր իրավունք՝ նշանակվելու պետական ծառայության, ընդունվելու ցանկացած զինվորական կամ քաղաքացիական վարժարան, բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչներին (որոնց նշանակում էր սուլթանը մեկ տարով) վերապահվում էր Արդարադատության բարձրագույն խորհրդի նիստերին մասնակցելու իրավունք, տեղական մեջլիսներին թույլատրվում էր ռեֆորմների նախագծեր ներկայացնել Բարձր Դռանը սուլթանի հավանությամբ: Հաճախ հումայունը նույնպես հանդիպեց մահմեդականների դիմադրությանը:

Թանգիմաթը էական փոփոխություններ չմտցրեց Արևմտյան Հայաստանի հասարակական և տնտեսական ծանր վիճակի մեջ:

Թանգիմաթի տարիներին փոփոխություններ կատարվեցին հողային հարաբերությունների ասպարեզում: 1858-ի հողային օրենքը Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում, սահմանում էր հողերի հինգ կատեգորիա: Մահմեդական հողատերերը բազմաթիվ վայրերում հափշտակեցին հայ գյուղացիների հողերը և նրանց ենթարկեցին իրենց իշխանությանը: Ավելացավ նաև հայ հողատերերի թիվը, որոնք հողեր ունեին Մշո դաշտում, Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի, Սվազի վիլայեթներում: Հարուստ հողատերեր էին նաև Արևմտյան Հայաստանի վանքերն ու եկեղեցիները: Արևմտյան Հայաստանի գյուղացիության զգալի մասը հողագործներ էին կային իրենց հողատարածությունները պահպանած գյուղացիներ: Առավել ծանր էր այն գյուղացիների վիճակը, որոնք շահագործվում էին խաֆիության (արաբերեն՝ պահապան) սկզբունքով. քուրդ ֆեոդալը իրեն հայտարարում էր գյուղացու «պաշտպան» և հարկադրում նրան ի վճար կատարել ծանր աշխատանք: Շահագործման այս ձևը, որը, փաստորեն չձևակերպված կիսաճորտություն էր, տարածված էր Տարոնում, Վասպուրականում և այլուր: Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտես-

սությունն էր, որը մնում էր ֆեոդալական մակարդակի վրա: Այնուամենայնիվ, 1850-60-ական թթ. գյուղատնտեսությունն ապրել է որոշ առաջընթաց: Արևմտյան Հայաստանից արտահանվում էին հացահատիկ, չոր մրգեր, անասուններ, բուրդ, կաթնամթերք: Սակայն Արևմտյան Հայաստանում գյուղատնտեսական արտադրության մակարդակը ցածր էր:

Գյուղացիներից գանձվող հարկերը բազմաթիվ էին: Ամենածանր հարկը տասանորդն էր (աշար): Հարկեր էին գանձվում անշարժ գույքից, եկամուտներից, ոչխարների գլխաքանակից, զինվորական ծառայության փոխարեն, երեխա ունենալիս, հող վաճառելիս, հող ժառանգելիս և տնտեսական գործունեության բազմաթիվ այլ բնագավառներից:

Արևմտյան Հայաստանում արդյունագործության և առևտրի կենտրոնները քաղաքներն էին: XIX դ. 30-50-ական թթ. Թուրքիայում կային ավելի քան 40 հայկական և հայաբնակ քաղաքներ: Քաղաքային բնակչության գերակշռող մասը հայերն էին: Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքներում ապրում էր շուրջ 350000 հայ: Հայկական քաղաքներում մանուֆակտուրային արտադրությունն առավել զարգացած էր Թուրքիայի արհեստավորական կենտրոնների համեմատ: Սակայն որոշ քաղաքներ, կտրված լինելով առևտրական մայրուղիներից, ինչպես նաև Ադրիանուպոլսի պայմանագրին (1829) հաջորդած գաղթի հետևանքով զրկվելով հայ ազգաբնակչության զգալի մասից, վերածվեցին գյուղաքաղաքների (Բայազետ, Բալու, Մուշ, Գյումուշխանե, Դերսիմ և այլն): Արհեստագործության կենտրոններ էին, ինչպես և XIX դ. սկզբին, Կարինը, Վանը, Եվրոկիան, Բաղեշը, Երզնկան, Արաբկիրը, Խարբերդը և այլն: Մի շարք վայրերում հայերը հիմնեցին արդյունագործական ձեռնարկություններ (Նիկոմեդիայի շրջակայքում՝ չուխայի, Կեսարիայում՝ հացի, Կ. Պոլսում՝ գլխաշորի և այլն), որտեղ աշխատում էին հարյուրավոր բանվորներ, մեծ մասամբ՝ հայեր: Վանում և Բաղեշում կային տեքստիլագործական ձեռնարկություններ: XIX դ. կեսից հայ արդյունագործներն ու արհեստավորները մրցակցության մեջ էին օտար-

երկրյա կապիտալի հետ, և շատերը, չդիմանալով մրցակցությանը, քայքայվում ու սնանկանում էին: Հայերի ջանքերը և նվաճումները մանուֆակտուրային և արհեստագործական արտադրության մեջ արգելակվում էին ֆեոդալական կարգի, տնտեսական հետամնացության պատճառով:

Արևմտահայ քաղաքաբնակների մի մասը զբաղվում էր առևտրով: XIX դ. 1-ին կեսին Օսմանյան կայսրության առևտուրը գտնվում էր հիմնականում հայերի և հույների ձեռքին: Քրիստոնյա վաճառականները թուրքական-եվրոպական առևտրի միջնորդներն էին: Հայերը տնօրինում էին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ամբողջ առևտուրը: Կարինը, Բաղեշը, Վանը, Ադանան և այլ քաղաքներ տեղական, եվրոպական և ասիական արդյունաբերական արտադրանքի գնման, վաճառահանման և կարավանային առևտրի կարևոր կենտրոններ էին: Սուեզի ջրանցքի բացումը փոխեց առևտրական ճանապարհները, և Արևմտյան Հայաստանի քաղաքները կորցրին իրենց առևտրական նախկին նշանակությունը: Թուրքիայում առևտրի զարգացմանը խոչընդոտում էին անձի և գույքի անապահովությունը, հարկային ծանր բեռը, բարձր մաքսերը, ազգային խտրականությունը, եվրոպական կապիտալի ճնշումը:

Արևմտահայերի հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր էր խաղում Կ. Պոլիսը, որտեղ գտնվում էր հայոց պատրիարքարանը, այստեղ էր կենտրոնացած մեծ հարստության տեր, սուլթանական արքունիքում մեծ կշիռ ունեցող հայ ամիրայական դասը: 1842-ից հայ ամիրաներին էր հանձնարարված ապահովել հարկերի գանձումը Թուրքիայի ասիական և եվրոպական նահանգներից: Արքունի մանուֆակտուրաները նույնպես հիմնականում գտնվում էին հայ ամիրաների տնօրինության տակ:

1856-ի Հաթթը հումայունի հրապարակումը հնարավորություններ ստեղծեց նաև հայ էֆենդիների դասի առաջացման համար: Սրանք բուրժուական միջավայրից ելած և կրթված անձնավորություններ էին, որոնք պետական տարբեր պաշ-

տոններ էին գրավում և սկսել էին կարևոր դեր խաղալ արևմտահայության հասարակական կյանքում:

Թուրքական կառավարությունը նվաճված ժողովուրդներին դիտում էր իբրև սոսկ կրոնական համայնքներ, որոնց ազգային գործերը միահեծանորեն տնօրինում էին կրոնապետները: Այդ առումով էլ Կ. Պոլսի հայոց պատրիարքները օժտված էին լայն իշխանությամբ, սակայն ամիրաները, օգտագործելով իրենց կապերը Բարձր Դռան և սուլթանական արքունիքի հետ, տնօրինում էին պատրիարքական աթոռն ըստ իրենց հայեցողության:

Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը

Արևմտահայերի կրոնական, կրթական, հասարակական կյանքը տնօրինում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքները և հայ ամիրաներն ու սեղանավորները: Արևմտահայ աշխատավոր զանգվածները զրկված էին քաղաքական և քաղաքացիական իրավունքներից: 1847-ին Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներից ստեղծվեցին հոգևոր (տնօրինում էր կրոնական գործերը, կազմված էր 14 հոգևորականից) և գերագույն (տնօրինում էր կրթական ու մշակութային գործերը, կազմված էր 20 աշխարհականից) ժողովները, որոնց նպատակն էր Կ. Պոլսի պատրիարքի և հայ ամիրաների գործունեության սահմանափակումը: Կ. Պոլսի հայ արհեստավորներն այդպիսով իրավունք ձեռք բերեցին մասնակցելու ազգային գործերի տնօրինմանը: Ժողովների նախագահը Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր:

Ֆրանսիայում ուսանած և 1848-ի հեղափոխությանը մասնակցած մի խումբ հայ երիտասարդներ պայքար սկսեցին ազգային ներքին գործերի կառավարումը դեմոկրատացնելու ուղղությամբ: 1853-ին այդ ժողովների համաձայնությամբ կազմվեց «Ուսումնական խորհուրդ», որի անդամներն էին Ն. Լուսինյանը, Գ. Օտյանը, Ն. Պալյանը, Ս. Վիչենյանը և ուրիշներ: Նրանք մշակեցին ազգային, մշակութային և հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն (1857), որը կազմված

էր բելգիական սահմանադրութեան սկզբունքով և կրում էր 1848-ի Ֆրանսիական հեղափոխութեան ազդեցությունը: Կանոնադրութեան շուրջ պայքար ծավալվեց առաջադիմականների և կղերամիության կողմից:

1860-ի մայիսի 24-ին կանոնադրությունն ընդունվեց և անվանվեց «Ազգային սահմանադրություն»: 1863-ի մարտի 17-ին սուլթանի կառավարությունը վավերացրեց կանոնադրությունը: Կանոնադրութեան նախագիծն ուներ 150 հոդված, սակայն հաստատվեց 99-ը: Արևմտահայերի ներքին գործերը վարելու համար կազմվեցին Ազգային ժողով (օրենսդիր մարմին), Ազգային կենտրոնական վարչություն (գործադիր մարմին), Ազգային կրոնական ժողով (հոգևոր գործերը տնօրինող մարմին), Քաղաքական ժողով (աշխարհիկ գործերը տնօրինող մարմին): Այդ մարմինները երեսփոխանական (ներկայացուցչական) էին: Ստեղծվեցին տարբեր խորհուրդներ՝ ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի, թաղական և այլն: Սահմանադրությամբ որոշվեց նաև աշխարհիկ և կրոնական մարմինների ու պաշտոնյաների ընտրության կարգը, իրավունքներն ու պարտականությունները: Ընտրելու իրավունք ունեին 25, ընտրվելու՝ 30 տարին լրացած տղամարդիկ: Ընտրությունները կատարվելու էին 5 տարին մեկ՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:

Ե՛վ արևմտահայ կյանքում, և՛ ընդհանրապես Թուրքիայում հայերի Ազգային սահմանադրությունը (թեև ավելի շուտ կանոնադրություն էր) նոր երևույթ էր և իր թերություններով հանդերձ՝ կարևոր իրադարձություն: Ազգային սահմանադրությունը գործեց մինչև 1896-ը և արգելվեց Աբդուլ Համիդ II-ի հրամանով:

Արևմտյան Հայաստանում ազգային ճնշումն ու հալածանքներն առավել ծանր էին, քան տնտեսական ճնշումը: Թանձրագիմաթով խոստացված կրոնական ու ազգային խտրականության վերացումը ոչ միայն չիրագործվեց, այլև ընդհակառակը, կառավարությունը հրահրում էր ազգամիջյան ընդհարումներ և վարում էր բացահայտ հայահալած քաղաքակա-

նություն: Հարյուրամյակներ շարունակվող տնտեսական կեղեքումը, բարբարոսական միջոցներով կատարվող ֆիզիկական բնաջնջումը, բռնի հավատափոխությունը առավել ուժեղացան 1850-60-ական թթ., երբ սաղմնավորվող թուրքական բուրժուազիան հանդես եկավ շովինիստական նոր ծրագրերով («Թուրքիան թուրքերի համար» և այլն): Հայերին ծուլելու տարերային գործելակերպը բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի: Մահմեդականացումն իրականացվում էր և՛ ուղղակի, և՛ տնտեսական հարկադրանքով: Այդ ընթացքն առավել ցայտուն արտահայտվեց Փոքր Հայքում, Բարձր Հայքում, Վասպուրականում: Հարստահարումից, մահմեդականացումից, իրավազրկումից զատ թուրքական կառավարությունն սկսեց պետական մարմիններից դուրս մղել հայերին, ավերել հայերի ինքնությունն ապացուցող և համաշխարհային մշակույթի նվաճումներ հանդիսացող պատմական հուշարձանները: Թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև ոչնչացնելու Արևմտյան Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի՝ դարեր շարունակ գոյատևած կիսանկախ իշխանությունները:

Թուրքական կառավարությունը չէր կարողանում հանդուրժել Արևմտյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում գտնվող հայկական կիսանկախ իշխանությունների (Ձեյթուն, Սասուն, Իսյան) գոյությունը և XIX դ. 20-ական թվականներից հետևողականորեն իրագործում էր դրանք վերացնելու քաղաքականություն: Մարաշի փաշայության մեջ մտնում էր Լեռնային Կիլիկիայի Ձեյթուն (Ուլնիա) գավառը, որը, շնորհիվ իր ազատասեր բնակչության և հարմար աշխարհագրական դիրքի, պահպանում էր իր կիսանկախ վիճակը: Ձեյթունում ապրում էր 35-40 հազար մարդ: XVII դ.-XIX դ. 1-ին կեսին թուրքերը 40 անգամ փորձել են նվաճել Ձեյթունը, սակայն անհաջող: 1829-ին Ձեյթուն արշաված Կեսարիայի Քեոսե փաշան Կոկիսոնի մոտ պարտության մատնվեց, 1832-ին Մարաշի Սուլեյման փաշան պարտվեց Ջերմուկի դաշտում: 1830-ական թթ. Ձեյթունը փորձեց գրավել Եգիպտոսի Իբրահիմ փաշան, որը նվաճել էր Սիրիան, Պաղեստինը և Կիլիկիան: Սակայն Իբրա-

հիմ փաշայի բազմաթիվ գրոհները հերոսաբար հետ մղեցին զեյթունցիները: Թուրքական իշխանությունները փորձել են ընկճել Ձեյթունը նաև 1841, 1847, 1856, 1858, 1860-ին, սակայն Ձեյթունը պահպանել է իր կիսանկախությունը: Թուրքական կառավարությունը Ձեյթունի դեմ վճռական գործողությունների դիմեց 1862-ին: 1862-ին Սարաչի նոր վալի Ազիզ փաշան թուրքական 12 հազարանոց կանոնավոր բանակով, որին միացել էին կրկնակի ավել բաշիբոզուկներ, քոչվորներ և մահմեդական այլ խաժամուժ (ընդհանուր առմամբ՝ 40 հազար մարդ), 1862-ի հուլիսի 28-ին մտավ Ձեյթունի գավառ, ավերեց ավելի քան տասը գյուղ, սրի քաշեց դրանց բնակչությանը և մոտեցավ Ձեյթունին:

Ձեյթունցիները, հաշվի առնելով թշնամու թվական գերազանցությունը, առաջարկեցին վճարել փաշայի պահանջած հարկը՝ իրենց գոյավիճակը պահպանելու պայմանով: Սակայն բանակցություններն ապարդյուն անցան, և զեյթունցիները դիմեցին ինքնապաշտպանության: Օգոստոսի 2 (14)-ին թուրքերը մի քանի ուղղությամբ գրոհեցին Ձեյթունը: Ձեյթունի 7 հազար պաշտպանները տարբեր ճակատներում ետ մղեցին թշնամու բազմաթիվ գրոհները, ապա հարձակման անցնելով՝ ջախջախեցին թուրքերին: Թուրքերը նահանջեցին՝ ռազմի դաշտում թողնելով երկու թնդանոթ, գունակի մի մասը և 2000 դիակ: Դրանից հետո թուրքերը պաշարեցին Ձեյթունի գավառը, զեյթունցիներն ընկան ծանր կացության մեջ, սակայն չհանձնվեցին:

Ձեյթունի իրադարձությունները մեծ արձագանք գտան Եվրոպայում: Գործին միջամտեց Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը: Ի վերջո թուրքական կառավարությունը փորձեց փոխզիջումների միջոցով հարթել դրությունը: Ձեյթունցիները պարտավորվեցին վճարել զինվորական հարկ. քաղաք մտավ թուրքական զորախումբ:

Ձեյթունի իրադարձությունները ցույց տվեցին, որ թանգիմաթը ոչինչ չի փոխել Թուրքիայում: Ձեյթունի հերոսամարտը լայն արձագանք գտավ հայ իրականության մեջ: Բողոքի

ցույցեր տեղի ունեցան Վանում, Մուշում, Կարինում, Կ. Պոլսում և այլուր: Պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները մերկացնում էին Օսմանյան Թուրքիայի ազգահալած քաղաքականությունը: Մեծ ժողովրդականություն ստացան բանաստեղծ Մ. Պեշկեթաշյանի՝ Ձեյթունին նվիրված բանաստեղծությունները: Ձեյթունի հերոսամարտը խթանեց ազգային ինքնագիտակցության հուժկու զարթոնքը և նախակարապետը եղավ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի, որը XIX դ. վերջին ընդգրկեց ամբողջ Արևմտյան Հայաստանը:

* * *

Հայաստանի արևելյան հատվածի միացումը Ռուսաստանին բարենպաստ պայմաններ ստեղծեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար: Տնտեսական կյանքի աշխուժացումը, ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը նպաստեցին արտադրողական ուժերի զարգացմանը: Թանգիմաթը, իր սահմանափակությամբ հանդերձ, որոշ չափով նպաստեց բուրժուական հարաբերությունների մասնակի զարգացմանը արևմտահայ կյանքում և ազգային զարթոնքի առաջընթացին: XIX դ. 1-ին կեսին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած տնտեսական և քաղաքական տեղաշարժերը, ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումները եվրոպական երկրներում լայն արձագանք գտան հայկական իրականության մեջ, նպաստեցին դասակարգային ուժերի բևեռացմանը, նոր դասակարգերի կազմավորմանը, հասարակական-քաղաքական հոսանքների առաջացմանը:

Ունենալով որոշակի ընդհանրություններ՝ արևելյան և արևմտյան հասարակական-քաղաքական հոսանքներն ունեին և տարբերություններ, որոնք պայմանավորված էին իրենց սոցիալական միջավայրին բնորոշ հատկանիշներով:

Ե՛վ արևմտահայ, և՛ արևելահայ ազգային-պահպանողականները ողջունեցին Ձեյթունի 1862-ի հերոսամարտը և միջոցներ էին հանգանակում հոգուտ զեյթունցիների, դիմում օտար-

երկրյա միջամտության: Պ. Սիմոնյանը «Մեղու Հայաստանի» լրագրում ընդարձակ նյութեր տպագրեց Ձեյթունի ապստամբության և 1863-ի լեհական ապստամբության մասին: Կ. Շահնազարյանը երազում էր հայ ժողովրդին տեսնել ազատ ու ինքնիշխան. այդ նպատակին հասնելու գործում նա կարևոր տեղ էր հատկացնում արևմտաեվրոպական տերությունների միջամտությանը: Գ. Պատկանյանը քարոզում էր հայրենադարձություն. օտարության մեջ գտնվող մեծահարուստները պետք է վերադառնան հայրենիք. հայրենի հողում պետք է ստեղծվի հավաքականություն, մշակվի ընդհանուր նպատակ՝ միասնական ազգ ստեղծելու համար: Նա անհրաժեշտ էր համարում զարկ տալ մեքենաշինությանը, նոր ձևերով կազմակերպել վաճառականությունը, Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարները կապում էր ազգային լուսավորության հետ:

Արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները, որոնք հիմնականում գավառահայ մտավորականներն էին, սկզբնապես հույսեր էին կապում թանգիմաթի հետ, որ բարենորոգումների միջոցով կբարելավվի արևմտահայության վիճակը, վերջ կտրվի թուրքերի ու քրդերի սանձարձակությամբ: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ թուրքիայում անհնար էր հայրենասիրական գաղափարների քարոզչությանը կամ բարեփոխումների միջոցով գոնե ազգային զարգացման տանելի պայմաններ ստեղծել, և արևմտահայ ազգային-պահպանողականների զգալի մասը հանգեց զինված պայքարի անհրաժեշտության գիտակցությանը:

Լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչները հանդես էին գալիս կղերաառայական և կղերամիայական հոսանքի դեմ՝ հայ հասարակական-քաղաքական կյանքի բուրժուականացման նշանաբանով, հին կարգերը խաղաղ ճանապարհով վերափոխելու և եվրոպական առաջադիմական ուղու վրա դնելու օգտին: Կողմնակից լինելով հայ ժողովրդի ազգային ազատագրությանն ու առաջադիմությանը, դրա միջոցը համարում էին ոչ թե հեղափոխությունը, այլ բարեփոխումները:

Նրանք կարևոր տեղ էին հատկացնում լուսավորությանը, դպրոցի, լեզվի, գրականության և գիտության զարգացմանը: Արևելահայ իրականության մեջ լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչներն էին Ս. Նազարյանը, Գ. Արծրունին և ուրիշներ, արևմտահայ իրականության մեջ՝ Ն. Ջորայանը, Գ. Օտարյանը, Ն. Ռուսինյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչենը) և ուրիշներ:

1858-ին Ս. Նազարյանը Մոսկվայում սկսեց հրատարակել «Հյուսիսափայլ» առաջադիմական հանդեսը, որի նպատակն էր ծառայել ժողովրդին, լինել ազգի ինքնապահպանության զենք: Ըստ Ս. Նազարյանի՝ հայ ազգի ընդհանուր բարեկեցության համախմբման ու ինքնապահովման կարելի է հասնել կապիտալիզմի զարգացման շնորհիվ:

Գ. Արծրունին հայ ժողովրդի ազատագրության հարցի լուծում էր համարում հայ և ռուս զինակցության միջոցով թուրքական բռնատիրության դեմ համատեղ պայքարը: Արևմտահայերը քաղաքական ազատագրություն կստանային Ռուսաստանի օգնությամբ և ժողովրդական ապստամբության միջոցով: Արևմտահայ լիբերալ-բուրժուազիայի ներկայացուցիչների մեծ մասը կրթություն էր ստացել Եվրոպայում և մեծապես ազդվել 1848-49-ի եվրոպական հեղափոխություններից: Ժողովրդի լուսավորությունը համարելով տնտեսական հետամնացությունը հաղթահարելու միջոցներից մեկը՝ պայքարում էին հանուն աշխարհաբարի, կազմեցին ու մշակեցին արևմտահայ աշխարհաբարի քերականություն և 1853-ին Կ. Պոլսում հիմնված «Ուսումնական խորհրդի» միջոցով նրա դասավանդումը ներմուծեցին դպրոց: 1860-ին նրանք ստեղծեցին «Բարեգործական ընկերություն», որի նպատակն էր ապահովել երկրի տնտեսական անկախությունը, զարկ տալ երկրագործության զարգացմանը:

Գ. Օտարյանը և ուրիշներ հետևում էին չափավոր հայացքների՝ գտնելով, որ վերանորոգչական ձեռնարկումները պետք է կատարվեն աստիճանական զարգացման ուղիով: Ն. Ռուսինյանը, առավել ծախս հայացքներ ունենալով, չափավոր վերա-

փոխունների ու ծրագրերի իրականացումը կապում էր ժողովրդի հետ, նա ուզում էր Հայաստանը տեսնել ազատ ու ինքնավար: Ընդհանուր առմամբ՝ հայ լիբերալ-բուրժուազիան հեռու էր կանգնած ժողովրդական շարժումներից և սոցիալական պայքարից:

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը հանդես եկավ և ձևավորվեց XIX դ. կեսին: Հոսանքի ձևավորումն արդյունք էր հայ հասարակական մտքի հետագա զարգացման և Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի ազատագրական, հեղափոխական-դեմոկրատական շարժման ազդեցության:

XIX դ. 50-60-ական թթ. հայ հասարակական մտքի խոշորագույն ներկայացուցիչը հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանն էր: Միքայել Նալբանդյանը ձգտում էր հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական պայքարը կապել ռուսական գյուղացիական հեղափոխության և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում ծավալված ազգային-ազատագրական հեղափոխությունների հետ: Մ. Նալբանդյանը, հայ ժողովրդին դիտելով իբրև մեկ ամբողջություն, ձգտում էր շաղկապել արևելահայ և արևմտահայ դեմոկրատական ուժերը, համընդհանուր միասնական մղումներ ու նպատակներ հաղորդել հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Նա հավասարապես պայքարում էր և՛ արևելահայ, և՛ արևմտահայ հետադիմական ուժերի դեմ: Մ. Նալբանդյանը ժողովրդի ազգային ազատագրության հարցի լուծումը տեսնում էր առաջին հերթին նրա սոցիալական ազատագրության մեջ: Մ. Նալբանդյանը գտնում էր, որ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների վերափոխումը հնարավոր է միայն հեղափոխության միջոցով: Լինելով նաև գործուն հեղափոխական՝ Մ. Նալբանդյանը կապեր է հաստատել ոչ միայն արևմտահայ դեմոկրատների՝ Հ. Սվաճյանի, Ս. Թազվորյանի և այլոց հետ, այլև ռուս և եվրոպական հեղափոխականների ու դեմոկրատների՝ Ն. Չեռնիշևսկու, Ա. Գերցենի, Ս. Տխորժևսկու, Ջ. Մանձինիի և ուրիշների հետ: Նա հեղափոխական գործունեության կարևոր օջախներ էր դիտում Թուրքիան և Կովկասը: Մ. Նալբանդյանի

հեղափոխական հայացքներն ու գործունեությունը կարևոր ազդեցություն ունեցան արևմտահայ դեմոկրատիայի վրա: Արևմտահայ դեմոկրատիայի առաջնահերթ խնդիրը պայքարն էր թուրքական բռնապետությունից հայ ժողովրդի ազատագրության և հասարակական առաջընթացի համար:

Մ. Մամուրյանը, քննադատելով սուլթանական բռնատիրությունը, հայ ժողովրդի ազատագրության հիմնական միջոց համարում էր ժողովրդական ապստամբությունը: Ժողովուրդն ինքը, իր ներքին ուժով, լուսավորությամբ, միության ու հաստատականությամբ կարող է ձեռք բերել իր ազատությունը: Նա Արևմտյան Հայաստանի փրկությունը տեսնում էր նաև մեքենայական արտադրության զարգացման և հայրենի հողին կապվածության մեջ:

Արևմտյան դեմոկրատիայի ամենանշանավոր դեմքը հեղափոխական-դեմոկրատ Հարություն Սվաճյանն էր: Մ. Նալբանդյանի և ռուս հեղափոխական դեմոկրատների մասն, Հ. Սվաճյանը գտնում էր, որ ազատագրության համար մարտնչող ժողովուրդների ընդհանուր հեղափոխական պայքարով կթոթափվի եվրոպական և ասիական բռնատիրությունների լուծը, այնուհետև, ըստ Հ. Սվաճյանի, պայքարի զենքը պետք է ուղղվի սեփական հարստահարողների դեմ: Հետևելով Մ. Նալբանդյանին՝ Հ. Սվաճյանը ամբողջ Հայաստանի ազատագրումը կապում էր ռուսական և համաեվրոպական հեղափոխության հաղթանակի հետ: Իբրև պրակտիկ հեղափոխական՝ Հ. Սվաճյանը ջանում էր հայ ազատագրական պայքարը զուգակցել ռուսական հեղափոխական, իտալական, ազգային-ազատագրական և ստրկացված սլավոնական ժողովուրդների ազատագրական պայքարին:

Հեղափոխական-դեմոկրատական, ազատագրական-դեմոկրատական հոսանքը վիթխարի նշանակություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման համար:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՑ Երևան, 1987, էջ 183-186

Պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր է եղել աշխարհասփյուռ հայկական գաղթավայրերի նշանակությունը:

Հայ ժողովրդի ուշ միջնադարի և մասնավորապես նոր շրջանի պատմության մեջ որոշակի է Ռուսական կայսրությունում ստեղծված հայ գաղթավայրերի դերը: Հայերը ծանոթ էին հին Ռուսիային վաղ միջնադարից: Դեռևս XI դ. նրանք բնակություն են հաստատել Կիևյան Ռուսիայում, Մերձվոլգյան շրջաններում և ստեղծել իրենց առաջին համայնքները: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման առաջացման շրջանում, հատկապես XVII դ. սկզբին, երբ ծավալվում են հայ-ռուսական կապերը, հիմնվում են հայկական նոր գաղութներ, աշխուժանում նախկինում ձևավորված համայնքները:

Ռուսական կառավարությունը դեպի հարավ ծավալվելու և ծով դուրս գալու իր հեռամետ ծրագրերն իրականացնելու համար Հարավային Ռուսիան բնակեցնելու և տնտեսապես յուրացնելու քաղաքականություն էր վարում: Արևելյան առևտրի զարգացմամբ շահագրգռված ռուսական կառավարությունը արտոնություններ շնորհեց հայ վաճառականներին: Միաժամանակ բազմաթիվ հայ վարպետ արհեստավորներ հրավիրվեցին Ռուսաստան՝ արքունական մանուֆակտուրաներ կազմակերպելու նպատակով: Պետրոս I-ի արևելյան քաղաքականությունը, որի իրականացման գործում կարևոր նշանակություն ունեին հայերը և Ռուսաստանի հայկական գաղթավայրերը, շարունակեց Եկատերինա II կայսրուհին: Հրապարակվեցին հայերին տնտեսական և իրավական նշանակալից առանձնաշնորհումներ վերապահող հրովարտականեր, խրախուսվում էր հայերի վերաբնակեցումը Ռուսաստանում: Թուր-

քիայի և Պարսկաստանի դաժան լծից ազատագրվելու համար հայերը, բնականաբար, օգտվում էին ընձեռած նպաստավոր պայմաններից և բնակություն հաստատում Ռուսական կայսրության սահմաններում:

Ղրիմ: Ղրիմը հայերին ծանոթ էր դեռևս Տիգրան Բ Մեծի ժամանակներից, սակայն այնտեղ հայերը զանգվածաբար հաստատվել են XI դարից: XIV-XV դդ. թերակղզու Կաֆա (Թեոդոսիա), Սուդակ, Սուրխաթ (Ստարի Կրիմ), Կեոզլև (Եվպատորիա), Կազարաթ, Ղարասուբազար (Բելոգորսկ), Ուկմեշիթ (Սիմֆերոպոլ), Բախչիսարայ, Օրաբազար (Արմյանսկ) և այլ բնակավայրերում հայերն իրենց պատկառելի քանակով թաթարներից հետո բռնում էին երկրորդ տեղը: XV դ. վերջին քառորդին, երբ Ղրիմում հաստատվեց թուրք տիրապետություն, հայերի թիվը նվազեց: Հայ համայնքները վերստին աշխուժացան XVIII դ. վերջին, երբ 1783-ին Ղրիմը միացվեց Ռուսաստանին: Ղրիմի համայնքների վարչատնտեսական և իրավական գործերը վարում էին հայկական քաղաքային ռատուշան և հայ կաթոլիկների դատարանը: Հայերը նշանակալի դեր էին կատարում թերակղզու տնտեսական կյանքում, հատկապես առևտրում, արհեստագործության և գյուղատնտեսության մեջ: Ղրիմահայ վաճառականները իրենց գործունեությունը ծավալում էին ինչպես ռուսական ներքին շուկաներում, այնպես էլ Կովկասի և Թուրքիայի հետ կատարվող առևտրում: Նրանք Ղրիմ էին բերում մետաքսյա և բրոյա գործվածքներ, բրինձ, շաքար, ձեթ, սուրճ, պղինձ, իսկ արտահանում՝ բուրդ, կաշի, ալյուր, ցորեն, վարսակ և այլ ապրանքներ:

Արհեստներից աչքի էին ընկնում ոսկերչությունը, դերձակությունը, կոշկակարությունը, ներկարարությունը և այլն: Հետռեֆորմյան (1861) շրջանում հայերն ունեին կաշեգործական, կոշիկի, օճառի, կղմինդրի, աղյուսի, մակարոնի և ուրիշ ձեռնարկություններ:

Սակայն Ղրիմահայերի տնտեսական կյանքում առավել կարևոր էր երկրագործությունը: Նրանք զբաղվում էին հատկապես այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, բանջարա-

բուծությամբ: Ղրիմահայերի մեջ կային խոշոր հողատերեր (մինչև 1000 դես.), որոնք մեծ մասամբ ունեկոր առևտրականներ էին: Խոշոր հողատերերի կողքին կային սակավահող և անգամ հողազուրկ հայեր:

Տնտեսական կայուն վիճակը նպաստավոր պայմաններ էր ստեղծում հայ հասարակական, մշակութային կյանքի աշխուժացման համար: Համայնքներում հիմնվել են դպրոցներ, տպարան, հրատարակվել գրքեր, հանդեսներ: Ղրիմահայ առաջին դպրոցը հիմնվել է 1816-ին Ղարասուբազարում: 1858-ին բացվել և տասներեքամյա կյանք են ունեցել Թեոդոսիայի Խալիբյան վարժարանը և տպարանը: XIX դ. 2-րդ կեսին հրատարակվել են «Դաստիարակ» և «Մասյաց աղավմի» պարբերականները:

Ղրիմահայ էին հայ մշակույթի գործիչներ Հ. Այվազովսկին, Ա. Սպենդիարյանը, Կարա-Մուրզան:

Հյուսիսային Կովկաս: Հայերը Հյուսիսային Կովկասում մշտական բնակություն են հաստատել X-XI դդ., իսկ հայկական համայնքներ առաջացել են XVIII դ. կեսերից: Օգտվելով Պետրոս I-ի հրամանագրի (1724-ի նոյեմբերի 10-ի հրամանագրով Հյուսիսային Կովկասում, Մերձկասպյան շրջաններում բնակվող հայերին շնորհվում էին մի շարք արտոնություններ) ընդունած հնարավորություններից՝ Ղզլար ամրոցի հիմնադրումից (1735) հետո բավական թվով հայեր հաստատվել են այնտեղ, ստեղծել համայնք, կառուցել եկեղեցի:

1763-ին հայեր հաստատվեցին Մոզդոկ ամրոցում: XIX դ. 30-ական թթ. այնքան է աճել համայնքը, որ կառուցել են 2 եկեղեցի: XVIII դ. վերջին - XIX դ. սկզբին հայկական համայնքներ են ստեղծվել Ստավրոպոլում, Գեորգիևսկում, Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար), ավելի ուշ՝ Պյատիգորսկում, Վլադիկավկազում և այլուր: 1839-ին չերքեզահայերը հիմնել են Արմավիրը: 1897-ին Հյուսիսային Կովկասի հայ բնակչության թիվը շուրջ 43 հազար էր:

Երկրամասի խոշոր հայ համայնքները՝ հանձին սեփական դատարանների և ծերերի խորհրդի, ունեին որոշ ինքնավա-

րություն և օգտվում էին առանձնաշնորհուններից: Ձբաղվում էին արհեստագործությամբ, մետաքսագործությամբ, այգեգործությամբ, մասնավորապես, խաղողագործությամբ և զինեգործությամբ: Հայկական այս գաղթավայրերի տնտեսական կյանքում կարևոր տեղ ուներ առևտուրը: Հայերը նշանակալի դեր էին կատարում ինչպես Կովկասի լեռնականների և Ռուսաստանի կենտրոնական նահանգների ներքին, այնպես էլ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող արտաքին առևտրում:

1912-ին Արմավիրի հայ արդյունաբերողներին էր պատկանում 40 մեծ ու փոքր ձեռնարկություն: Գրոզնիում հայերի ձեռքին էր կենտրոնացել գործվածքեղենի առևտուրը և նավթարդյունաբերությունը:

XIX դ. 40-ական թթ. հիշյալ գաղթավայրերում բացվել են հայկական դպրոցներ, որոնց թիվը հետագայում աճել է. 1912-ին Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում ազգային դպրոցների թիվը 34 էր: Ստեղծվել են և թատերական խմբեր, արվեստասերների ընկերություններ և այլն:

Աստրախան: Հայերը Աստրախանում հաստատվել են դեռևս XVII դ. սկզբից: 1746-ին նրանց տրվեց սեփական դատարան կամ ռատհաուզ (վարչական լիազորություններով օժտված) ունենալու իրավունք, որն էլ իրականացնում էր գաղութի ներքին ինքնավարությունը: Գաղութի առաջադեմ գործիչներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը, Օհանի որդի Սարգիսը 1765-ին կազմեցին դատաստանագիրք, որը գերազանցապես Մխիթար Գոշի Դատաստանագրքի և հայկական սովորության իրավական նորմերի հիման վրա էր ստեղծված (հայտնի է «Աստրախանի հայոց դատաստանագիրք» կամ «Հայկական դատաստանագիրք» անունով): XIX դ. վերջին հայերի թիվը Աստրախանում շուրջ 7,5 հազար էր, XX դ. սկզբին՝ 8 հազար, իսկ 1915-ին այն հասավ 15 հազարի:

Աստրախանը, հունքի և վաճառահանման շուկաների մոտիկության բարենպաստ պայմաններում, դարձել էր Ռուսաստանի մետաքսյա ու բամբակյա գործվածքեղենի կարևոր

կենտրոն: Այդ ասպարեզում մեծ էր տեղի հայերի դերը, որոնք օգտվում էին պետական հովանավորությունից: Առաջին մետաքսագործական մանուֆակտուրան Աստրախանում հիմնել էին հայերը, 1734-ին: 1804-ին քաղաքի մետաքսագործական 25 ֆաբրիկաներից 23-ը, բամբակագործական 39 ֆաբրիկայից 36-ը և կաշեգործական 15 ֆաբրիկայից 6-ը պատկանում էին հայերին: Հայերը կարևոր դեր էին կատարում նաև մրգեղենի, ծխախոտի, անասունների ու ձկնեղենի առևտրում, հաջողությամբ զբաղվում էին Բաքվից Աստրախան և Վոլգայով դեպի հյուսիս նավթափոխադրման գործով:

Աստրախանի հայկական գաղութը ապրել է հասարակական-քաղաքական ու մշակութային նշանակալից կյանքով: 1795-ին ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանը Աստրախան է տեղափոխել Գ. Խալդարյանի հայկական տպարանը, 1810-ին բացվել է Աղաբաբյան դպրոցը (գոյատևեց ավելի քան հարյուր տարի), 1816-ին լույս է տեսել «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, որը արևելահայերի առաջին պարբերականն էր:

Մոսկվա: Մոսկվայի հայ գաղութը Ռուսաստանի հին գաղթավայրերից է: Հայերի՝ Մոսկվայում լինելու վերաբերյալ հիշատակություններ կան XIV-XV դարերից: Մոսկվայի դերը հայերի կյանքում մեծացավ, երբ XVI դ. կեսին Ռուսաստանին միացվեցին Կազանի ու Աստրախանի խանությունները և հնարավորություն ստեղծվեց անմիջական կապեր հաստատել Անդրկովկասի հետ: Այս շրջանում հայերի այցելությունը Մոսկվա այնքան հաճախակի էր, որ Կրեմլից ոչ հեռու հիմնվեց հայկական իջևանատուն: XVII դ. 2-րդ կեսին Մոսկվայում մշտական բնակություն էին հաստատում ոչ միայն առևտրականներ ու արհեստավորներ, այլև մտավորականներ՝ թարգմանիչներ, դիվանագետներ և այլք: 1666-ին Մոսկվա են եկել Ջուղայի հայկական առևտրական ընկերության 40 ներկայացուցիչներ և 1667-ին պայմանագիր կնքել ռուսական կառավարության հետ, որով նրանց Ասիայի և Եվրոպայի միջև տարանցիկ առևտրի իրավունք էր տրվում (1660-ին Մոսկվա էին եկել Նոր Ջուղայի

նշանավոր վաճառականներ՝ Խոջա Ջաքարի գլխավորությամբ և ցարին հանձնել հայտնի «Ալմաստե գահը», որն այսօր էլ զարդարում է Կրեմլի Ջինապալատը): Պայմանագրի շնորհիվ Մոսկվան դարձավ հայ վաճառականների, արհեստավորների, դիվանագիտական ծառայողների համար կարևոր հանգրվան. այդ տեսակետից հատկանշական է Ստեփան Ռոմոդանսկու և Գրիգոր Լուսիկովի դիվանագիտական գործունեությունը:

Մոսկվայում մշտական բնակություն հաստատած հայ վաճառականների, առևտրականների ու արհեստավորների կողքին հանդես են գալիս վաշխառուներ, հողատերեր, գործարանատերեր, վարպետներ, բանվորներ: 1721-ին Իզմատի Շերիմանը ռուս գործընկերների հետ հիմնել է մետաքսի առաջին գործարանը:

Հայերի հոսքը Մոսկվա ուժեղացել է XVIII դ. կեսին: Մոսկվայում է հաստատվել Լազարյանների մեծահարուստ ընտանիքը: Նրանք կարճ ժամանակում կապեր են հաստատում բարձրաստիճան պաշտոնյաների հետ, 1774-ին ստանում ռուսական ազնվականական տիտղոս: Նշանավոր հայ վաճառական Բարսեղ Խաստանովը (որը Մոսկվայում ուներ մետաքսագործական ֆաբրիկա) 1755-ին Դոնի գետաբերանում հիմնեց ռուսական առաջին բաժնետիրական ընկերությունը:

XVII դ. Պրեսնյայում կառուցվել է հայկական առաջին եկեղեցին՝ Ս. Աստվածածին, իսկ 1779-ին՝ երկրորդը՝ Ս. Խաչ:

Մեծ էր Մոսկվայի հայ համայնքի հասարակական-քաղաքական և կուլտուր-կրթական դերն արևելահայության համար: Առանձնապես մեծ դեր խաղաց 1815-ին Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը, որը ավելի քան մեկդարյա գոյության ընթացքում կրթեց բազմաթիվ հայ պատանիների, և որոնք ազգային լուսավորական արդյունավետ գործունեություն ծավալեցին ռուսահայ և, առհասարակ, հայ իրականության մեջ, ճեմարանը միաժամանակ դարձավ արևելագիտության ու հայագիտության զարգացման կարևոր կենտրոն:

Մոսկվայում հայերը ստեղծել են հասարակական-քաղաքական, մշակութային տարբեր կազմակերպություններ ու ընկերություններ, հրատարակել պարբերականներ:

Պետերբուրգ: XVIII դ. սկզբին Նևայի ափին հիմնադրված ռուսական նոր մայրաքաղաք Պետերբուրգը կարևոր դեր էր կատարում Բալթիկ ծովի վրայով Ասիայի և Եվրոպայի միջև կատարվող տարանցիկ առևտրում:

Պետերբուրգում հայկական գաղութը սկսել է կազմավորվել Վասիլևյան կղզում (հայերից առաջինն այնտեղ հողամաս է ձեռք բերել մշանավոր վաճառական Շիրվանովը): XVIII դ. կեսին Պետերբուրգի կենտրոնում հայ վաճառականները կառուցել են իրենց տներն ու արդյունագործական հաստատությունները: 1758-ին այնտեղ հաստատված նորջուղայեցի Իսախանյան (Իսախանով) եղբայրները հիմնել են Ռուսաստանի առաջին փայտօրհանական ընկերություններից մեկը՝ Պարսկաստանի հետ առևտուր կատարելու համար: XVIII դ. կեսին Ա. Մանուիլովը, Բ. Ախվերդովը, Մանուչարյան եղբայրները հիմնել են մետաքսագործական ֆաբրիկաներ, 1760-ական թթ. Պետերբուրգում են հաստատվել ու իրենց առևտրական գրասենյակը հիմնել Լազարյանները: Նրանք, կապված լինելով ռուսական բարձրաստիճան շրջանների հետ, կարևոր դեր էին կատարում հայ-ռուսական հարաբերություններում, ռուսահայ կյանքում: Հայ գաղութը XVIII դ. վերջին այնքան է ստվարացել, որ կառուցել է երկու եկեղեցի (1770 և 1791-ին):

Պետերբուրգի հայկական գաղութը Մոսկվայի գաղութի հետ դառնում է հայ հասարակական-քաղաքական ու մշակութային մշանավոր կենտրոն: Այստեղ կրթված կամ հաստատված հայ մտավորականները, կապված լինելով ու կրելով ռուս դեմոկրատական շրջանների ազդեցությունը, կարևոր դեր են կատարել հայ իրականության մեջ, հայ հասարակական մտքի զարգացման գործում:

Նոր Նախիջևան: Ռուսաստանի հարավային երկրամասը՝ Նովոռոսիան, բնակեցնելու, տնտեսապես յուրացնելու, ինչպես նաև Ղրիմի խանությունը թուլացնելու և այն կայսրությանը

միացնելու նպատակով ցարական կառավարությունը կազմակերպեց Ղրիմի թերակղզու հույն և հայ բնակչության արտագաղթ: 1778-ին գեներալ Ա. Սուվորովի գլխավորությամբ 12600 հայ գաղթեցվեց դեպի կայսրության հարավային սահմանները: Ղրիմահայերը Ա. Դմիտրի Ռոստովսկի ամրոցի մոտակայքում՝ Դոն գետի աջ ափին, 1779-ին հիմնեցին Նոր Նախիջևան հայկական քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Չալդըր, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեսվիտա հայկական գյուղերը: Եկատերինա II կայսրուհու՝ 1779-ի նոյեմբերի 14-ի հրովարտակով հայերին շնորհվեցին տնտեսական և իրավաքաղաքական մշանակալի արտոնություններ: Կայսերական հրովարտակի հիման վրա ձևավորվեց գաղութի ինքնավարությունը: Կազմակերպվեց հայկական մագիստրատը, որն իրականացնում էր քաղաքի և գյուղերի դատաստանական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները: Դատավարությունն ու գործավարությունը կատարվում էին հայերենով, պետության կողմից ընդունված «Աստրախանի հայոց դատաստանագրքի» հիման վրա: Հայերին տրվեց 87 հազար դեսյատին հողատարածություն, առևտրի, արդյունաբերության և դավանանքի ազատություն: 1811-ին հաստատվեց գաղութի գերբը (վրան պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղուներ ու փեթակներ): Սկսվեց Նոր Նախիջևանի կառուցումը հատուկ նախագծով:

Հայերը հաջողությամբ զբաղվում էին նաև այգեգործությամբ, շերմապահությամբ, անասնապահությամբ:

Դոնի հայերը զգալի հաջողություն ունեցան նաև արհեստագործության և արդյունաբերության զարգացման մեջ: Նրանք հնուտ ոսկերիչներ էին, արծաթագործներ, դարբիններ, կաշեգործներ, թամբագործներ և այլն: Հայ արհեստավորները միավորված էին համքարությունների մեջ: Գաղութում զարգանում էր նաև գերազանցապես գյուղատնտեսական մթերքները նախնական վերամշակման ենթարկող, բրդի, կաշվի, ծխախոտի, մետաքսի, աղյուսի, կղմինդրի, մոմի և հատկապես ճարպի արտադրությունը:

Նոր Նախիջևանը, գտնվելով ցամաքային և ջրային ուղիների հանգույցում (մի կողմից կապվում էր Կովկասի և Կենտրոնական Ռուսաստանի նահանգների, մյուս կողմից՝ Սև ծովի միջոցով արտասահմանյան երկրների հետ), նպաստավոր պայմաններ էր ստեղծում առևտրի համար: Հայերն արտահանում էին հատկապես հացահատիկ, բուրդ, ճարպ, յուղ, ձկնկիթ, ներմուծում՝ բուսական յուղ, ծխախոտ, չոր մրգեր, ձիթապտուղ, համեմունքներ և այլն: Չնայած արտաքին առևտրում ունեցած հաջողությանը՝ Նոր Նախիջևանն աչքի էր ընկնում առավելապես ներքին առևտրում:

Դոնի հայկական գաղութում առաջադիմեց կուլտուր-լուսավորական կյանքը, առհասարակ հայ մշակույթը: Տակավին XVIII դ. վերջին Նոր Նախիջևանում բացվեցին վարժարաններ, այնուհետև Նոր Նախիջևանի թեմական, Արհեստավորական և Գոգոյան օրիորդաց դպրոցները: Պետերբուրգի, Նոր Նախիջևանի և Աստրախանի գաղութներում քսան տարի (1780-1800) գործեց Գ. Խալդարյանի տպարանը, որը կարևոր դեր կատարեց ձեռնարկներով ապահովելու, ժամանակի հուզող հարցերին արձագանքող աշխատություններ հրատարակելու (հայ և ռուս ժողովուրդների պատմական անցյալը վեր հանելու և այլն) գործում:

1830-ական թթ. վերջին գաղութում սկզբնավորվեց թատերական գործը, որը հետագայում առաջադիմեց ու լայն տարածում գտավ: XX դ. սկզբից Նոր Նախիջևանում սկսել են հրատարակվել պարբերականներ, մեծ առաջընթաց են ապրել գրականությունն ու կերպարվեստը: Մեծ էր Նոր Նախիջևանի նշանավոր զավակների՝ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի դերը, որոնք իրենց գործունեությամբ և ստեղծագործություններով մեծապես ազդել և ուղղություն են տվել գաղութի հասարակական-քաղաքական-մշակութային կյանքին:

Գրիգորիուպոլիս: 1787-91-ի ռուս-թուրքական պատերազմից հետո Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Մոլդովայից ու Բեսարաբիայից գաղթած 4000 հայեր Դնեստր գետի ավազանում (Քիշնևի մոտ) հիմնադրել են Գրիգորիուպոլիս

քաղաքը (Գրիգորիուպոլիսի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 1792-ի հուլիսի 15-ին), Իոսիֆովկա և Վասիլևկա գյուղերը: Տակավին 1796-ին խոշոր վաճառականները ստեղծեցին 95 հոգուց բաղկացած առևտրավաճառական ընկերություն, որը զբաղվում էր հատկապես արևելյան առևտրով: Հայ վաճառականները իրենց կապիտալները ներդնում և զարկ էին տալիս արտադրության որոշ շահութաբեր ճյուղերի: Հունքի առատությունը հնարավորություն էր ստեղծում կաշվի արտադրության համար: Եթե գաղութի ձևավորման առաջին տարիներին քաղաքում կար կաշվի մեկ գործարան, ապա XIX դ. 70-ական թթ.՝ 6-ը: Կազմակերպվեց նաև ճարպի, մոմի արտադրություն: Հայ խոշոր առևտրաարդյունաբերողները իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկություններ էին հիմնադրում տնտեսական գործունեության լայն հեռանկարներ ունեցող Օդեսայում: Ունենալով ընդարձակ հողային տարածություն (30 հազար դեսյատին)՝ գաղութը հնարավորություն ուներ զբաղվել գյուղատնտեսությամբ, հատկապես այգեգործությամբ և խաղողագործությամբ:

1806-ին բացվել է Գրիգորիուպոլիսի առաջին հայկական ծխական դպրոցը, 1868-ին՝ իգական (Սրբուհյան) դպրոցը և այլն, հիմնվել են նաև ներգաղութային հասարակական հաստատություններ, կազմակերպություններ:

Ռուսահայ գաղութներն ապրել են հասարակական-քաղաքական ու մշակութային աշխույժ կյանքով: Հայ համայնքի համեստ շրջանակներում նրանք ամրապնդել են հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերը, աշխուժորեն արձագանքել ու մասնակցել ռուսական կյանքի կարևոր իրադարձություններին: Նրանք միաժամանակ կենդանի կապերի մեջ էին Հայաստանի հետ ու լավատեղյակ՝ հայրենի երկրի իրավիճակին, և պատահական չէր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, նրա օգնությամբ ազատագրվելու ձգտումը: Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու գրեթե բոլոր ծրագրերը մշակվել են Ռուսաստանի հայկական շրջանակներում: Դրա վկայությունն է նաև Արևելյան Հայաստանը

Ռուսաստանին միանալու պատմական ակտի նկատմամբ ռուսահայ կենտրոնների դրսևորած ջերմ վերաբերմունքը:

Ռուսաստանի կապիտալիստական զարգացմանը նպաստող վերափոխումներով վերակառուցվում էր կայսրության ողջ վարչաիրավական համակարգը: Այդ պայմաններում վերացվեց հայկական և մյուս գաղութների ինքնավարությունը: Սակայն չվերացավ այդ համայնքների ներքին ազգային կյանքը, քանի որ հիմնվեցին ազգային-բարեգործական հաստատություններ՝ նոր իրավիճակում ինչ-որ չափով փոխարինելու գաղութի ինքնավար մարմիններին:

Ռուսաստանի հայկական գաղութները կարևոր դեր կատարեցին ռուս և հայ ժողովուրդների փոխճանաչման, կայսրության հարավային երկրամասի զարգացման գործում, ինչպես նաև կրելով ռուսական դեմոկրատական մշակույթի ու հասարակական մտքի բարերար ազդեցությունը՝ նշանակալից դեր կատարեցին դրանց ավանդները հայ իրականության մեջ տարածելու ասպարեզում: Նրանք էական դեր խաղացին նաև հայ ազգային մշակույթի ավանդները պահպանելու, զարգացնելու և ռուսական միջավայրում տարածելու խնդրում:

Ռուսահայ գաղթավայրերում ծնունդ առան, ռուսական միջավայրում և հայ-ռուսական հարաբերությունների ղլորտում ձևավորվեցին այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Յ. Այվազովսկին, Մ. Սարյանը, Ա. Սպենդիարյանը, Զ. Կարա-Մուրզան, Ա. Թամանյանը, Ա. Մյասնիկյանը և շատ ուրիշներ:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՑ Երևան, 2002, էջ 801-804

Հայ առաքելական եկեղեցին մշտապես մեծ դեր է խաղացել ռուսահայ համայնքների ազգային կյանքում: Հիմնել է դպրոցներ, մշակութային, բարեգործական, լուսավորչական ընկերություններ և միություններ՝ հանդես գալով որպես հայապահպանության գլխավոր գործոն: Հայկական եկեղեցիներ են գործել Ռուսաստանի գրեթե բոլոր համայնքներում, եկեղեցու շուրջն է կազմավորվել նրանց ազգային կյանքը:

Խորհրդային իշխանության տարիներին Ռուսաստանի հայկական եկեղեցիները փակվել են, մի մասը՝ ավերվել: Ամբողջատիրական համակարգի փլուզումից հետո, ազգային և հոգևոր զարթոնքի պայմաններում, Հայ եկեղեցին կրկին իր տեղն է գրավել Ռուսաստանի հայերի կյանքում: XVIII դ.-ից Հայ եկեղեցին Ռուսաստանում ունեցել է իր թեմերը:

Մինչև 1990-ական թթ. սկիզբը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը ունեցել է 7 եկեղեցի՝ Մոսկվայի Ս. Հարությունը, Սանկտ Պետերբուրգի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Չալդըրի, Վլադիկավկազի, Բուդյոնովսկի (Ս. Խաչ) եկեղեցիները: Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը XVIII դ. վերջից մինչև XX դ. սկիզբը եղել է հասարակական և մշակութային կարևոր կենտրոն: Այս վանքում է բացվել Նոր Նախիջևանի առաջին հայկական դպրոցը (1784-ին) և Ռուսաստանի առաջին հայկական տպարանը (1789-95): Վանքի պատերի մոտ թաղված են հայ մշակույթի նշանավոր գործիչներ Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Յ. Ալամդարյանը և ուրիշներ:

Երկրում կատարված ժողովրդավարական արմատական փոփոխությունների, Հայաստանի անկախացման, հայկական համայնքներում ազգային կյանքի աշխուժացման շնորհիվ

նպաստավոր պայմաններ են ստեղծվել Ռուսաստանի հայկական համայնքներում եկեղեցու գործունեության ծավալման, եկեղեցու դերի բարձրացման համար: Հայկական համայնքները խնդիր են դրել ոչ միայն վերադարձնել հայկական եկեղեցիները, այլև կառուցել նոր եկեղեցիներ (Սարատովում, Վոլգոգրադում, Կոստրոմայում, Տվերում, Ռյազանում և այլ վայրերում): Մոսկվայի Ա. Հարություն եկեղեցին վերադարձվել է համայնքին: Թեմի խնդրանքով Մոսկվայի իշխանությունները մայրաքաղաքում տարածք են տրամադրել՝ հայկական նոր եկեղեցիներ (Ս. Խաչ և Ս. Հովհաննես Մկրտիչ) կառուցելու համար³:

1988-ի ապրիլին գրանցվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սանկտ Պետերբուրգի համայնքը: Նույն թվականին վերաբացվել և հայ համայնքին է վերադարձվել Սանկտ Պետերբուրգի Ա. Հարություն եկեղեցին, իսկ 1993-ին՝ Ս. Կատարինե եկեղեցին (կառուցվել է 1770-ին Նևսկի պողոտայի վրա, XVIII դ. վերջից մինչև XX դ. 1-ին տասնամյակները եղել է հայ հասարակական կյանքի կենտրոն):

1997-ի հունվարին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի կոնդակով Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվել է երեք թեմերի՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմ, Հարավային Ռուսաստանի թեմ, Ուկրաինայի թեմ: Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդը միաժամանակ Մայր աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչն է Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության մոտ: Ներկայումս թեմի վարչական սահմաններն ընդգրկում են Ռուսաստանի Դաշնության տարածքը (բացառությամբ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի և Հյուսիսային Կովկասի ինքնավար միավորումների), ինչպես նաև Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Բելառուսը, Մոլդովան և Մերձբալթիկան: Թեմի առաջնորդն է Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանը (2001-ի ապրիլից):

³ Դրանք կառուցվել են ու գործում են:

Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանք. Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքից հյուսիս, Մյասնիկավանի մոտ, ձորաբլրի գագաթին: Հիմնադրել են 1778-ին Ղրիմից գաղթած հայերը և կոչել Սուրխաթի Ս. Խաչ վանքի անունով: Պատերը զարդարվել են Ղրիմից բերված 13 մանրաքանդակ խաչքարերով: Վանքն ունեցել է մոտ 50 հա հողատարածք, որը վարձակալության է տրվել:

Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում 1784-ին Հ. Արղությանի նախաձեռնությամբ բացվել է դպրոց՝ Ս. Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան անունով, որը գործել է տարրական դպրոցի ծրագրով (դասավանդել են կրոն, վայելչագրություն, թվաբանություն, ձեռքի աշխատանք, գյուղատնտեսությանը վերաբերող առարկաներ), ունեցել է գրադարան, թանգարան: Եղել է առաջին հայկական գիշերօթիկ դպրոցը: Երբ 1791-ին, ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Ա. Սուվորովը գրավել է Իզմայիլը, քաղաքի 30 հայ որբերին բերել են այստեղ, և երեխաները ապրել ու կրթվել են վանքի միջոցներով:

1789-ին Հ. Արղությանը Սանկտ Պետերբուրգից Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանք է տեղափոխել Գ. Խալդարյանի տպարանը, որը դարձել է Հարավային Ռուսաստանի առաջին տպարանն ընդհանրապես: Դպրոցի և տպարանի շնորհիվ Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը հիմնադրման օրից մինչև XX դ. սկիզբը եղել է հայ մշակույթի և կրթության կարևոր կենտրոններից:

XIX դ. վանքից հյուսիս՝ Տեմերնիկ գետի ափին, հիմնվել է 17,5 հա տարածքով վանքի այգին (կոչվել է «Հայկական պարտեզ»), որը դարձել է Նոր Նախիջևանի բնակիչների հանգստավայրը: Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը եղել է Հարավային Ռուսաստանի հայերի ուխտավայրը. տոնախմբությունը կատարվել է Վարդավառի օրը:

1865-ին եկեղեցու առջև թաղվել է գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հայ քննադատության և գեղագիտության հիմնադիր Միքայել Նալբանդյանը, 1892-ին՝ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ Ռաֆայել Պատկանյանը:

1902-ին նրանց գերեզմանների վրա, հանգանակված միջոցներով, դրվել են քանդակագործ Անդրեաս Մարուքյանի պատրաստած կիսանդրիները:

Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը և նրա դպրոցը դադարել են գործել Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց (1917) հետո: 1960-ին քանդել են զանգակատունը, առաջնորդարանի շենքը, հանել և ոչնչացրել են եկեղեցու պատերին ագուցված խաչքարերը, անհետացել է Սուրխաթի Ս. Խաչ վանքից բերված քանդակագարդ փայտե դուռը:

1972-ին Հայաստանի վարպետների ձեռքով Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի եկեղեցին նորոգվել է և վերածվել Ռուս-հայկական բարեկամության թանգարանի:

Ո Ր Պ Ե Ս Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

(Էական ճշմարտության)

Հայ ազգի ու Հայաստանի՝ Ռուսիո հետ ամեն տեսակի հարաբերությունները, համագործակցությունը, ինչպես նաև միասնությունը, փոխադարձ պաշտպանությունը և որևէ կողմի նկատմամբ հնարավորինս համահունչ կեցվածքը, վերաբերմունքը էապես կարևոր են թե՛ Հայաստանի և թե՛ Ռուսիո համար՝ բխելով նրանց ազգային կենսական շահերից ու, մասնավորապես, Ռուսիո հարավարևմտյան շրջանի հարավային ուղղությամբ շահերի պաշտպանության մեջ՝ հայկական կողմի համարյա անփոխարինելիությունից, ինչպես և՛ այդ ուղղության մեջ՝ հայության և Հայաստանի շահերի պաշտպանության հարցում՝ Ռուսիո համարյա անփոխարինելիությունից:

Եվ այս ճշմարտությունը պատմական ըմբռնման ու ապագայի կանխատեսման համար դարավոր փաստարկում ունի: Դրա ժամանակակից օրինակը թեև որոշ ձևով ու չափով նման է ամերիկա-խորայելական հարաբերություններին, սակայն ռուս-հայկական իսկական հարաբերություններն իրենց **հատուկ, համապարփակ ու ազնիվ** մակարդակով պետք է լինեն բոլոր կողմերի հարաբերություններից շատ ավելի բարձր:

Ինչո՞ւ: Որովհետև հայ-ռուսական հարաբերություններն իրենց խորքում սովորական կոնյուկտուրային չեն ու չեն էլ կարող լինել, քանի որ դրանք **էապես բնական են**: Ճիշտ է, որ դրանք հիմնված են աշխարհաքաղաքական իրականության վրա, սակայն ամենակարևորը՝ հիմնված են նաև **իրենց անանց արժեքներով շահերի վրա՝ սկսած երկու կողմերի հավատքից ու հոգեկերտվածքից...** Եվ այդպիսի հարաբերությունները կհարատևեն, եթե հայերը և Հայաստանը, ռուսներն ու Ռուսաստանը հետևողականորեն միշտ, ամենուր, ամեն ինչում լինեն

ու մնան *Աստվածասեր և դրանով՝ հավատարիմ իրենց հավատքին, ազգին ու հայրենիքին՝ միանձամբ սիրով՝ Աստվածային սիրով*: Ու այդպիսով նրանք կլինեն նաև համակված նույն հոգեկանությամբ և բարեմասնություններով ավելի իմաստուն, ավելի հեռատես ու ավելի կարող՝ իրենց մարդկային-ազգային կենսական շահերի հասկացողության և պաշտպանության համար:

Հայությունն ու Հայաստանն ունակ են, կարող են և պետք է պաշտպանեն Ռուսիո ազգային-պետական, ընդհանրական ու կենսական շահերն ամենուր և, մասնավորապես, Կովկասում ու Ռուսիո հարավարևմտյան շրջանի հարավային ուղղությամբ, ներառյալ՝ Մերձավոր Արևելքը՝ ավելի, քան դա արվում է: Եվ Ռուսիան էլ ունակ է, կարող է և պետք է պաշտպանի հայության ու Հայաստանի՝ ազգային-պետական կենսական շահերը՝ ամենուր և, մասնավորապես, Կովկասում ու Մերձավոր Արևելքում, անելով դա ավելի, քան մինչև հիմա արվում է:

Եվ միմյանց ընդհանրական, կենսական ու հեռագնա շահերի երկուստեք պաշտպանությունը կլինի նույնպես երկուստեք օգտակար՝ *Ֆիզիկայում հաղորդակից անոթների օրենքի նման*: Իսկ ընթացիկ շահերի առումով կլինի բավականին նման նրան, ինչ հրեա ժողովրդի ու Իսրայելի պետության կողմից աշխարհում և մասնավորապես Մերձավոր Արևելքում արվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների համար, և փոխադարձաբար ինչ արվում է ԱՄՆ-ի կողմից՝ Իսրայելի պետության ու հրեության համար: Ու եթե ԱՄՆ-ի կենսունակությունն ու հզորությունը էապես օգտակար են Իսրայելի պետության ու հրեության համար, և փոխադարձաբար՝ Իսրայելի պետության ու հրեության կենսունակացումն ու հզորացումը էապես օգտակար են ԱՄՆ-ի համար, ապա նույնը և ավելին՝ փոխադարձաբար կլինի Ռուսիո և Հայաստանի ու համայն հայության պարագայում:

Ու նաև մի շատ կարևոր հանգամանք. ամենայն տրամաբանությամբ, եթե հրեության, Իսրայելի ու Ամերիկայի այդպիսի

համապարփակ և սերտ հարաբերությունները, գործակցությունը ստացվում, իրականացվում են, որովհետև նրանց շահերը նույն «առվով են գնում», ապա հայ-ռուսական հարաբերություններն ու գործակցությունը առավել ևս պիտի այդպես լինեն, քանի որ երկու կողմերի տարբեր շահերից բացի, նրանց *հոգևոր, գաղափարական և բարոյական «շահերը»* ևս *նույն «առվով են գնում»... մինչև հավերժություն*:

Հետևապես հայ և ռուս ժողովուրդների ու, մասնավորապես, նրանց ղեկավարության և մտավորականության կողմից այս ճշմարտության ճանաչումը, ըմբռնումն ու ըստ այնմ փոխադարձ վերաբերմունքը, հարաբերությունները և գործակցությունը երկու կողմերի համար էլ կլինեն շատ ավելի օգտակար, քան մինչև հիմա եղել են (թեև եղածն էլ քիչ չէ):

Ինչո՞ւ: Որովհետև մեր ժողովուրդների՝ այդ ճշմարտությամբ փոխադարձ վերաբերմունքն ու հարաբերությունը *Աստվածապատգամ են, Աստվածահաճո՞ են և պարունակում են մարդկային անանց արժեքներ*:

Հետևապես այդ ճշմարտության ճանաչումը, ընկալումը, ըմբռնումն ու գործադրումը պահանջում են երկու կողմերի ազգային ու պետական գործիչների, հոգևորականների, մտավորականների ու նրանց օրինակով՝ նաև երկու ժողովուրդների լայն խավերի՝ *հավատքի՞ ու դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությանն ու բարոյականությանն հանդեպ նույն հավատարմությունը՝ հետևողական ու հարատև*:

Ու այդ հավատարմության առկայությունն այն շնորհի գործությունն է, որ անքակտելիորեն ցեմենտում-միացնում է հայ և ռուս ժողովուրդներին, Հայաստան և Ռուսիա երկրներն ու պետությունները՝ մեծ ու ազնիվ նպատակների, գործերի և դրանց բարի, հեռագնա ու անանց արդյունքների ստացման համար:

Վարդան Գրիչենց

Հ Ա Տ Վ Ա Ծ
Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այս հատորի նախորդ՝ առաջին հատվածում անդրադառնալով հայության ու Հայաստանի հարաբերություններին՝ սկսած հատկապես մեր նորագույն պատմության մեջ որոշ հարաբերություններից, որոնք ինչ-որ չափով արտացոլում են մեր ունեցած վիճակն ու ընթացքը մինչև մեր օրերը, նկատվեց, որ դրանցում շատ բան կա, որոնց անչվում են ՀԱՅՔ գիտահետազոտական ծրագրային հաստատության նպատակներն ու ծրագրերը՝ արտահայտված հաստատության լույսընծայած 16 Տեղեկագրերում և գրեթե նույն թվով բրոշյուրներում ու մեկ տասնյակից ավելի գրքերում:

Այդ Տեղեկագրերի 1, 2 և 3 համարները, որոնք 1990-1991 թթ. դասական ուղղագրությամբ լույս էին տեսել Սփյուռքում (Լոս Անջելես, ԱՄՆ) և որոշ չափով արտահայտում են ՀԱՅՔ հաստատության տեսակետերը նաև հայության ու Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ, նույնպես սպառված լինելով (իսկ պահանջը միշտ կար)՝ 1998 թվականին վերահրատարակվեցին Հայաստանում, սակայն այս անգամ երեքը մեկտեղ, և հաշվի առնելով հայաստանյան ընթերցողների գործոնը՝ նոր ուղղագրությամբ: Բայց սրանք ևս սպառված են, ուստի «Հարաբերություններ հայության ու Հայաստանի» գրքի հրատարակության կապակցությամբ նպատակային համարվեց դրանք նույնությամբ դարձյալ վերահրատարակել սույն գրքի երկրորդ հատվածում, ինչպես նաև ներառել որոշ հոդվածներ ՀԱՅՔ հաստատության 6-րդ տեղեկագրից՝ հայ ազգային կառավարելիության հարցի վերաբերյալ, 16-րդ տեղեկագրից, որը վերաբերում է Հայ կնոջ տոհմիկ կերպարին և ժամանակակից կոչումին ու դերին: Եվ նպատակահարմար համարվեց նաև ներառել որոշ հոդվածներ Վարդան Գրիչենցի «Հայացք ներսից և դրսից» գրքից, որոնց մեջ նաև «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլընտրանքային հաշվարկ» ծրագրի (համառոտ տարբերակ) գրությունը:

Հայր Հաստատություն


Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Գ Ի Բ



1, 2, 3

Հ Ա Մ Մ Բ Ն Ե Բ Ի
Վ Ե Բ Ա Հ Բ Ա Տ Ա Բ Մ Կ ՈՒ Մ

մարտ 1998



Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Գ Ի Բ

Երկրորդ հրատարակություն

մարտ, 1998թ.

(Տեղեկագրերի թիվ 1, 2, 3 համարների
առաջին հրատարակությունը
եղել է 1990-1991թթ.)

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատևման և զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու և դրա հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունն առաջարկելու մեջ:

ՀԱՅՔ հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ և համահայկական չափանիշով ու հեռանկարով և բացարձակապես զերծ է որևէ հատվածական շահագրգռվածությունից և կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման և դրանց գործնական լուծման համար գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների կատարումը՝ գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների և անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը տարբեր մակարդակներով և ձևերով:

ՀԱՅՔ հաստատությունը հիմնադրված է և ղեկավարվում է և կամ աջակցություն գտնում հայության ճակատագրով մտահոգ և կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից: Նրանք մասնակցում են միայն այն գիտակցությամբ, որ հայ իրականության մեջ նման հաստատության գործունեությունը վաղուց ի վեր կենսական անհրաժեշտություն է:

ՀԱՅՔ հաստատությունը որևէ ձևով չի կապված, չի ազդված ու առավել ևս չի ղեկավարվում որևէ քաղաքական, պետական կամ նման այլ կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ հաստատությունը ազգային շահերին հետևող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ չհետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՀԱՅԲ հաստատության առաջին երեք տեղեկագրերի երկրորդ՝ համատեղ վերահրատարակման առիթով մի քանի խոսք ՀԱՅԲի առաջացման պատմականի մասին:

ՀԱՅԲ հաստատությանը նախորդել է Հայ Ազգային Գիտահետազոտական-ծրագրային ինստիտուտը, որի ստեղծման որոշումն ընդունվել է Հայաստանում 36 տարի առաջ՝ 1962 թվականի ապրիլի 25-ին մի խումբ անձանց կողմից, որոնք նպատակ էին դրել գոյություն ունեցող պայմաններում կատարել հայ ազգային գաղափարախոսական, քաղաքական, ընկերային ու տնտեսական հարցերի վերաբերյալ համակարգված գիտահետազոտական աշխատանքներ:

Այդ որոշումն ունեցել է հասունացման տարբեր փուլեր:

Դեռ 1947-57 թվականների ընթացքում հայ ազգային պայքարի ուրույն բովոլ անցած մի խումբ մարդկանցից ոմանք 1957-ից 1962 թվականներին Հայաստանում, Մոսկվայում և խորհրդային այլ քաղաքներում՝ նոր անձանց հետ տարբեր բնույթի և մոտեցմամբ բազմաթիվ խորհրդակցություններից հետո հանգեցին վերջնական եզրակացության, որ հայ ազգի գոյատևման և զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարների, կարիքների և խնդիրների ըմբռնումը, վերլուծումը և, դրա հիման վրա, տարբեր բնագավառների ազգային քաղաքականության մշակումը կենսական անհրաժեշտություն է:

Միաժամանակ գիտակցվում էր, որ զուտ ազգային նպատակադրմամբ՝ պետական (թեև ազգային պետություն դեռ չկար) և համահայկական չափանիշով քաղաքականության մշակումը պետք է կատարվի արհեստավարժորեն, գիտական օբյեկտիվությամբ և զերծ որևէ հատվածական կամ օտար շահագրգռությունից ու ազդեցությունից: Գիտակցվում էր նաև,

որ տարբեր բնագավառների քաղաքականության մշակումն ու դրա կիրառության ծրագրավորումը հարկ է կատարել անկախ և փակ ազգային հաստատությունում, որը գոյություն չունի հայ իրականությունում, սակայն պետք է ստեղծել:

1962 թվականի ապրիլի 25-ին ընդունված հիշյալ որոշմամբ նկատի էր առնվում երեք գլխավոր հանգամանք:

Նախ, որ նման ազգային հաստատության գոյությունը հույժ կարևոր է հայ ազգի ազատ, անկախ, անվտանգ ու բարգավաճ գոյության նպատակի իրագործման համար այնքանով, որ դրա առաջնային խնդիրը լինելու է ամբողջ հայության բոլոր հատվածների տարբեր բնագավառների կարողության հաշվառումը, ներուժի բացահայտման ու զարգացման հետազոտումը ու դրանց լիարժեք կիրառման տարբեր փուլերի ծրագրավորումը՝ ընթացիկ պայմանների ու ապագայի մրցահրավերների դիմագրավման համար. հատկապես՝ խորհրդային Միության հետագա կազմալուծման առնչությամբ առաջանալիք նոր բնույթի, բարդ ու պատմական նշանակությամբ իրադարձություններում:

Երկրորդ՝ այդպիսի հաստատության ստեղծումն ու գործարկումը պետք է կատարվի անհապաղ: Թե՛ մեր պատմությունը և թե՛ ընթացիկ ժամանակաշրջանը ցույց էին տալիս, որ ժամանակի գործոնը հաճախ վճռորոշ է եղել ազգի պատմական նշանակությամբ լուծումների համար: Դրա վերջին հատկանշական օրինակը համարվում էր խրուշչովյան իշխանության տասնամյա շրջանը. եթե հայությունը նախատեսած լիներ խորհրդային Միությունում տեղի ունենալիք գաղափարախոսական, քաղաքական և այլ զարգացումների տարբերակներ և ըստ այնմ նախապատրաստած լիներ ծրագրեր և դրանց գործադրման համար միջոցներ, համադրում և ղեկավարում, ապա այդ տասը տարվա ընթացքում հնարավոր կլիներ մի շարք կենսական հարցերի հետ «սահուն կերպով» լուծել նաև Ղարաբաղի հարցը լրիվ և Նախիջևանի հարցը՝ առնվազն մասամբ:

Գիտակցվում էր, որ կորցնելով այդ պատմական հնարավորությունը՝ հայությունը պատրաստ չէ պատշաճորեն դիմա-

գրավելու նման և դեռ ավելի պատասխանատու զարգացումներ, որոնք կարող են ստեղծել պատմական նշանակությամբ ամենաբարենպաստից մինչև ամենամաքաբարենպաստ պայմաններ հայության և Հայաստանի համար:

Այս և նման այլ նկատառումներով մշակվեցին Հայ Ազգային Գիտահետազոտական ինստիտուտի նպատակային ծրագրերը և ըստ այնմ ծրագրվեցին նրա աշխատանքները՝ ապահովության նկատառմամբ ապակենտրոնացնելով դրանք ըստ անհատների, խմբերի և տարածաշրջանների:

Անվտանգության առումով անհրաժեշտ համարվող այդ պայմաններով, բացի այն, որ ծրագրերի կատարումը շատ դանդաղ ու անբավարար էր ընթանում, կառույցը ևս ճեղքեր էր տալիս և գործունեության մթնոլորտը հարաճունորեն լարվում էր:

Թեև կործանարար մեծ ցնցումներ ու վնասներ չեղան, բայց ամեն մի ցնցումից հետո գործունեության որոշ սառեցման շրջան էր հետևում, որը պահանջում էր շատ բան նոր իրադրությունում սկսել: Այս պայմաններում հետզհետե ավելի պարզորոշ էր ուրվագծվում, որ անհրաժեշտ է ազգային այս հաստատության գոնե որոշակի օղակների գործունեությունը և հատկապես՝ «հավաքման» գործընթացը և կիրառական ծրագրավորումը տեղափոխել Խորհրդային Միությունից դուրս:

Բազում տարիներ այդ ուղղությամբ ջանալուց հետո, 1978 թվականից Արտաքին Սփյուռքի տարբեր շրջաններում անմիջական աշխատանքներ կատարվեցին ստեղծելու Հայ Ազգային Գիտահետազոտական-ծրագրային ինստիտուտը:

Հիմնականում ԱՄՆ-ում ու Եվրոպայում մի քանի տարի, անցնելով որոշ կազմակերպչական փուլեր, և Ամերիկայի ու Եվրոպայի հայկական գաղութներում ստեղծելով՝ իր բնույթի «օջախներ» 1989 թվականին ՀԱՅՔ հաստատությունը պաշտոնապես հաստատվեց և սկսեց գործել Վաշինգտոնում՝ որպես հայության հարցերով գիտահետազոտական, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, անկախ հաստատություն:

Անմիջապես օգտվելով Խորհրդային Միությունում տեղի ունեցող փոփոխություններից, ՀԱՅՔ հաստատությունը նոր

պայմաններում սկսեց իր գործունեությունը Հայաստանում: 1992 թվականին ստեղծվեցին նրա Երևանյան ու Մոսկովյան մասնաճյուղերը:


* *
* *

ՀԱՅՔ հաստատության առաջին երեք «ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ» հրատարակվել են Սփյուռքում (Լոս Անջելես, ԱՄՆ) 1990թ. նոյեմբերից 1991թ. մարտը, երբ Խորհրդային Միությունը դեռ գոյություն ուներ:

Այս համարներում տեղ են գտել ՀԱՅՔ հաստատության ստեղծման առնչվող իրադարձությունների հակիրճ բնորոշումը, նրա առջև դրված կարևորագույն խնդիրները, տվյալ ժամանակաշրջանի ազգային կենսական որոշ հարցերի արծարծումը, առաջարկներ դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ և այլն:

Այս երեք տեղեկագրերում միաժամանակ տպագրվել են ՀԱՅՔ հաստատության խնդիրներին վերաբերող նախորդ տարիների հոդվածներ:

Սկստի առնելով ՀԱՅՔ հաստատության թ.թ. 1, 2 և 3 սպառված տեղեկագրերի նկատմամբ շարունակվող հետաքրքրությունը՝ հաստատությունը որոշեց վերահրատարակել դրանք անփոփոխ, սակայն համատեղ և հաշվի առնելով հայաստանյան ընթերցողների գործոնը՝ նոր ուղղագրությամբ:



ՀԱՅՔ հաստատությունը նպատակահարմար է համարում այսուհետև տեղեկագրի միջոցով հրատարակել իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների և տեսակետների քննարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ են գտնելու նաև ՀԱՅՔ հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

ՀԱՅՔ հաստատության տեղեկագրերի լույսընծայումը սկսված է սույն թվով և շարունակվելու է պարբերաբար, ըստ համապատասխան նյութերի առկայության:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԴՐՎԱԳՆԵՐԻՑ ՈՐՈՇ ՐԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում մի խումբ անձինք ավելի քան երեք տասնամյակ առաջ սկսած բազմաթիվ ուսումնասիրություններից ու խորհրդակցություններից հետո եկան այն եզրակացության, որ ազգային խնդիրների վերաբերյալ ազգային շահերի տեսանկյունով, պետական մոտեցումով և արհեստավարժ մակարդակով գիտահետազոտական-ծրագրային հարատև աշխատանքների կազմակերպումը հայության համար կենսական անհրաժեշտություն է: Այդ ժամանակ նրանք նպատակադրվեցին Հայաստանի ու ամբողջ հայության գոյավիճակի և դրա հավանական փոփոխությունների ընթացքն ուսումնասիրելու, հաշվարկելու հիման վրա ստեղծել ազգային բոլոր բնագավառների ընթացիկ ու հեռագնա զարգացմանը նպաստող ազգային համապարփակ գործնական ծրագրեր և մասնավորապես ազգային անվտանգության ու ինքնավար պետականության կառուցման նախապատրաստական ծրագրեր:

1960-ական և 70-ական թվերին, շուրջ 17 տարի, այդ ուղղությամբ Հայաստանում և մասամբ Մոսկվայում ու Խորհրդային Միության այլ վայրերում համառ, հետևողական ուսումնասիրություններ, դիտարկումներ, քննարկումներ ու վերլուծություններ կատարվեցին և դրանց հիման վրա կարևոր եզրակացություններ առաջացան ու որոշ ծրագրեր ստեղծվեցին: Սակայն մի կողմից գործի ծավալը, բարդությունն ու կարևորությունը, մյուս կողմից Խորհրդային Միության քաղաքական պայմաններից բխող ընդհանուր դրությունն ու մարդկանց մտայնությունը մեծ ու վտանգավոր դժվարություններ էին հարուցում այդ աշխատանքների շարունակման համար այնպես, ինչպես այդ կարելի էր անել մշտական գործող գիտահետա-

զոտական հաստատություններում և մանավանդ կյանքում դրանց արդյունքների կիրառման կազմակերպման համար:

Այնուհետև, 1970-ական թվերի վերջերից մինչև 80-ական թվերը, Սփյուռքում կատարված ջանքերը՝ ստեղծելու այդպիսի գիտահետազոտական և ծրագրերի մշակման հաստատություն, վերոհիշյալ և նման աշխատանքներն անհրաժեշտ հետևողականությամբ և ծավալով կատարելու համար, հիմնականում արդյունք չտվեցին գլխավորապես երկու պատճառով:

Առաջին՝ Սփյուռքի նույնիսկ ամենազարգացած շրջանակների համար անսովոր էր նման նպատակի համար ժամանակ և մանավանդ հարկ եղած նյութական միջոցները տրամադրելը:

Երկրորդ՝ Սփյուռքում այն ժամանակ քիչ մարդ կար, որ ընդունում էր, թե Հայաստանում (խորհրդային Սփյուռքն ընդհանրապես հաշվի չէր առնվում) լուրջ խնդիրներ կան, որ հայությունը նահանջում է, հետ է մնում ազգերի ընդհանուր զարգացման ընթացքից, կորուստներ է տալիս հոգեբարոյական արժեքների, ազգային ինքնագիտակցության և այլ կենսական բնագավառներում և կարող է հետագայում շատ ավելի դժվար ու վտանգավոր դրության մեջ ընկնել: Եվ շատ ավելի քիչ մարդ կար, որ ընդունում էր, թե Սփյուռքը (հակառակ Խորհրդային Հայաստանի ղեկավարության ուղղակի և անուղղակի կոչերին առ այն, թե Սփյուռքը պետք է Հայ դատի արտաքին հարցերով զբաղվի, այլ ոչ թե Հայաստանի խնդիրներով) պարտավոր է և պետք է վերագնահատի իր դիրքորոշումը, վերակազմակերպվի և վճռականորեն գործի՝ ազգային իմաստով օգնելու Հայաստանին ու Խորհրդային Սփյուռքին հոգեպես, բարոյապես, քաղաքականապես և մանավանդ նախապատրաստվելու՝ հաջողությամբ դիմագրավել անխուսափելի փոփոխությունները և առավելագույնս օգտվել դրանցից: Փաստն այն է, որ այդ ժամանակվա ընթացքում հնարավոր չեղավ Սփյուռքում ընդհանրապես գտնել մարդկանց, որ հավատային, թե Սփյուռքն ի վիճակի է վերոհիշյալ օգնությունը ցուցաբերել Հայաստանին, և պատկերացնեին, թե ինչպես կարելի է այդ անել: Նույնիսկ

հնարավոր չէրավ անգամ դա անկեղծորեն հասկանալ ցանկացողներ գտնել:

Այսպես հասանք 1980-ական թվերի վերջը, երբ հայության ու Հայաստանի համար առկա վտանգավոր դրությունը գոնե որոշ չափով բացահայտվեց գրեթե բոլորին: Ստեղծվեց մի իրավիճակ, մի կացություն, որ վերջին երկու տարիների ընթացքում ազգի կրած մարդկային, տարածքային, դիրքային և այլ կորուստները կարող են միայն սկիզբը հանդիսանալ ավելի մեծ տարողությամբ դրանց կրկնության: Այս հանգրվանում հայ ազգի ու հայրենիքի դիմագրաված ներքին ու արտաքին մարտահրավերները, թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքներով լի, դարձել են ավելի բազմակողմանի, բազմաբնույթ, բարդ ու ճակատագրականորեն կարևոր: Եվ հայությունն ակնհայտորեն դարձյալ (քանիեռորդ անգամ իր նորագույն պատմության ընթացքում) պատրաստ չէ դիմագրավելու դրանք՝ ո՛չ մտայնությամբ, ո՛չ հոգեբանորեն ու բարոյապես, ո՛չ էլ նյութապես և կազմակերպորեն: Այս պամաններում հայության մեջ հատկապես զգալի դարձան նաև գիտական մոտեցումով ու ազգային պետական չափանիշով համապատասխան վերլուծությունների, հաշվարկների և ծրագրերի պակասն ու դրա հետևանքները:

* *
*
* *

Ահազանգը կամ բանաստեղծի ասած՝ զանգակատունը պետք է հնչեցնել նախ մեր սրտերի և մտքերի մեջ, այսօր, երբ դեռ ժամանակ և միջոցներ կան, այլ ոչ թե ազգի ոչնչացումից ու երկրի կորստից հետո:

Ըստ մեր կանխատեսումների ու նախնական հաշվարկների, Հայաստանը և դրանից դուրս Խորհրդային Միության որոշ շրջաններում ապրող հայությունը կարող է նույն սպառնալի և վտանգավոր դրության մեջ գտնվել, ինչպես եղել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից

անմիջապես հետո: Սակայն եթե այսօր հայությունը որոշակի փոփոխություններ կատարի իր ընմբռնումների և վերաբերմունքի մեջ, նոր որակով գործադրի իր ջանքերը և օգտագործի իր հնարավորությունները, կարողություններն ու ներուժը, ի վիճակի կլինի ոչ միայն կանխել իր նկատմամբ ճակատագրական արհավիրքի հավանականությունը Խորհրդային Միությունում, նրա շրջակա երկրներում ու մասամբ նաև միջազգային բեմում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով, այլև նպաստավոր պայմաններ ստեղծել՝ ամրապնդելու իր դիրքերն ու հաստատելու, պահպանելու և զարգացնելու իր ազգային պետականությունը: Հետևապես, այս ըմբռնումով հայությունը պետք է անհապաղ բնորոշի այդ փոփոխությունները, ջանքերը և համապատասխանորեն գործադրի դրանք: Ըստ երևույթին, հայության մինչև այժմ կատարած ջանքերը անբավարար են թե՛ քանակական և թե՛ մանավանդ որակական առումով: Դեռ ավելին, այդ ջանքերը հաճախ այնպիսի ուղղություններով, ձևերով ու մակարդակով են կատարվում, որ վնասում են իր ազգային կենսական շահերին՝ ավելի մեծացնելով ու արագացնելով վերը նշված օրհասական վտանգը: Այս պայմաններում ազգային վերոհիշյալ և նման պահանջների ըմբռնման ու բավարարման լայն ու խոր ընդգրկումը (այլ աշխատանքների հետ) պահանջում է նաև գիտահետազոտական ու ծրագրային համապատասխան աշխատանքների անհապաղ սկիզբ և հետևողական շարունակություն՝ ընդմիջտ, քանի ազգը գոյություն ունի և ցանկանում է գոյություն ունենալ:

ՀԱՅՔ հաստատությունը, ելնելով վերը նշված պայմաններից և այն հանգամանքից, որ ժամանակի գործոնն այժմ ավելի վճռական նշանակություն է ստացել, քան երբևէ, իր գերազույն ջանքերը ներդնելով հանդերձ ազգային կենսական նշանակությամբ որոշակի խնդիրների վերաբերյալ արհեստավարժ մակարդակով գիտահետազոտական-ծրագրային մշտական աշխատանքների անհապաղ ծավալման համար, ներկա հանգրվանում իր կարելիությունները հիմնականում կենտրոնացնում է համապատասխան հանձնախմբերի սեմինարային

խորհրդակցական աշխատանքների վրա՝ այն նկատառումով, որ դա հնարավորություն կտա համեմատաբար ավելի արագ, գեթ որոշ չափով, լրացնել վերոհիշյալ պակասը, բավարարել կենսական կարիքը:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որևէ ազգի առաջնային, հիմնական խնդիրն է պաշտպանել իր գոյությունը: Կազմակերպված ազգն այդ խնդիրը իրագործում է իր գերագույն ջանքերի ներդրումով, համապատասխան քաղաքականությամբ և այն արդյունավետորեն կիրառելու ընդունակ ղեկավարությամբ: Ազգի գոյությունը, այլապես ասած՝ ազգի կենսական շահերի պաշտպանությունը, նախ և առաջ, նշանակում է ազգի ֆիզիկական անվտանգության, մարդկային հիմնական ազատությունների, երկրի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության կամ անկախության և ընդհանուր տնտեսության կենսունակության ապահովում, որոնց վրա հիմնվելով կարելի է ստեղծել ժողովրդի համեմատաբար բարձր կենսամակարդակ և հոգևոր ու նյութական արժեքներ:

Այս գերագույն խնդրի կենսագործումը, որն օրինաչափորեն անհրաժեշտ է բոլոր ազգերի, հետևապես և հայության բնականոն գոյապահպանման համար, կախված է ազգի հիմնականում հոգեբարոյական, կրթական և մշակութային մակարդակից ու ազգային պետական առումով քաղաքական հմտությունից, որն արտահայտվում է նրա երկրաքաղաքական և ներքին ընդհանուր իրավիճակի, կարողության ու հնարավորությունների համեմատ, բոլոր բնագավառներն ընդգրկող պետական քաղաքական դոկտրինի առկայությամբ և այն ամենաարդյունավետորեն կիրառելու ընդունակ ղեկավարությամբ:

Հայությունը դարերից ի վեր չի ունեցել ազգային պետական քաղաքականություն (1918-ին սկսածը չհարունակվեց), որը, մեր կարծիքով, կարող էր ունենալ: Հայության քաղաքականությունը եղել է հատվածական, խավային, կուսակցական, իսկ վերջին յոթանասուն տարիներին, մինչ ազատ Սփյուռքում

շարունակվում էր այդպիսի քաղաքականությունը, հայության մոտ երկու երրորդը՝ Հայաստանում և Խորհրդային Սփյուռքում, ընդհանրապես որևէ տեսակի ազգային քաղաքականություն չուներ: Այս հանգամանքը, այլ երևույթների հետ մեկտեղ, ցույց է տալիս նաև, որ հայությունը զուրկ է եղել ազգային պետական քաղաքականության թե՛ մշակման և թե՛ կիրառման մասնագիտական կառույցներից: Ավելին, Խորհրդային բռնատիրության պայմաններում ապրած մի քանի հայ սերունդներ ընդհանրապես զուրկ են եղել նաև առարկայական, քարոզչությունից զուրկ միջազգային քաղաքականության թե՛ ուսուցումից և թե՛ փորձառությունից:

Այս պայմաններում, ըստ երևույթին, հայ, մասնավորապես Խորհրդահայ մտավորականությունը, ներառյալ նրա գիտական միտքը, ընդհանուր առմամբ չզգաց անհրաժեշտությունը կամ ուղղակի չկարողացավ, շրջանցելով կամ հաղթահարելով Խորհրդային Միությունում ահավոր վտանգներով լի բազմապիսի դժվարությունները, ստեղծել հայ ազգային պետական քաղաքական ընդհատակյա կամ պարզապես ոչ պաշտոնական դպրոցը և ազգային պետական քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, մշակութային և այլ բնագավառների ծրագրերը, որոնք կարելի լիներ գործարկել մասամբ՝ տվյալ սահմանափակման պայմաններում և լրիվ՝ առաջին իսկ հնարավորության պարագային:

Այն հանգամանքը, որ այդ բոլորը չստեղծվեց, ըստ երևույթին, դարձավ նաև հիմնական պատճառներից մեկը, որ ազգը չկարողացավ խուսափել վերջին շուրջ հինգ տարիների ընթացքում (սկսած 1985-ից մինչև 1989-ը՝ առանց հիմնավորված քաղաքական ուղեգիծ ունենալու) ծրագրերի փնտրտուքներում քաղաքական, տնտեսական և այլ բնագավառներում ունեցած խարխափումներից, թանկարժեք ժամանակի վատնումներից և մանավանդ ամբողջ ազգի վրա շատ թանկ արժեցող ու անվերականգնելի թվացող կորուստներով սխալներից: *Մինչդեռ համապատասխան ծրագրերով ու դրանք իրագործելու պատշաճ նախապատրաստությամբ, այդ ժամա-*

նակարնթացքում կարելի կլիներ արդյունավետ կենսագործումներով աննախընթաց արդյունքների հասնել:

Ելնելով այս դատողություններից ու հարցի նման ըմբռնումից՝ գալիս ենք այն եզրակացության, որ Հայաստանը դեռևս այսօր՝ 1990 թվականին էլ չի հասցրել ունենալ պետական չափանիշով և գիտական հիմունքներով մշակված ազգային քաղաքական դոկտրին, որի վրա կարելի լինի հենել իր ներքին ու արտաքին տարբեր բնագավառների քաղաքականությունը և դրանց իրագործման ծրագրերը:

Այժմ, սակայն, ի տարբերություն Խորհրդային տիրապետության անցնող ժամանակաշրջանին, Հայաստանն ու համայն հայությունը՝ ցանկանա թե ոչ, պատրաստ է թե ոչ, արդեն կանգնել է ներքին ու արտաքին այսօրվա և հեռանկարային ազգային պետական գործուն քաղաքականություն վարելու հրամայականի առջև: Այս պատմականորեն պատասխանատու խնդրում և մանավանդ այժմ առաջացած ճգնաժամային պայմաններում ազգը պետք է շրջահայաց և զգույշ լինի, որ ամբոխային զգացմունքները, անհատական նախասիրությունները, հատվածական շահերը և կամ կուսակցական հաշիվները չազդեն և մանավանդ չթելադրեն ազգային քաղաքական ուղղությունները, կեցվածքները կամ գործունեությունը, *որոնք պետք է բխեն՝ ելնելով միայն ազգային գերագույն շահերից:*

Համոզված ենք, որ այսօրվա համար հայ ազգային գերագույն շահը՝ ըստ կարևորության հերթականության, նշանակում է հայության բոլոր հատվածների ֆիզիկական անվտանգության, ինքնիշխանության և տնտեսության կենսունակության ապահովմամբ՝ ժողովրդի կենսամակարդակի միջազգային միջինից բարձրացումը, հոգևոր կյանքի, կրթության, գիտության և մշակույթի ծաղկումը և դրանց հիման վրա ազգային իրավականորեն անկախ պետականության աստիճանական ամրապնդումը:

Համոզված ենք նաև, որ այս ըմբռնումով հայության ազգային գերագույն շահի պաշտպանումը պետք է դառնա ազգային պետական քաղաքական դոկտրինի ելակետը: Այդ

մասին ՀԱՅՔ հաստատության ընկերային-քաղաքական ուսումնասիրությունների հանձնախումբը ցանկանում է արտահայտել իր տեսակետներն ու եզրակացություններն այն ակնկալությամբ, որ դրանք կարող են նկատի առնվել այդ հարցով զբաղվողների կամ հետաքրքրվողների կողմից:

* *
*
*
*

Հայ ազգային իրավիճակն ուրույն է: Այն նման չէ որևէ ազգի և մասնավորապես Հայաստանը շրջապատող ազգերի իրավիճակներին: Հայ ազգի դրությունը համառոտ, բայց նշանակալիորեն կարող է բնորոշվել նրա ցրված, անկազմակերպ, անկառավարելի ներկայով և իր երկրի հետզհետե ավելի անապահով ու միջազգային ճանապարհային ուղղակի հաղորդակցությունից մեկուսանալու ընթացքով:

Հայության համար պատմական ներկա հանգրվանում 1990 թվականին ազգային գերագույն շահը լավագույնս պաշտպանելու համար մշակված Հայաստանի ազգային պետական արտաքին քաղաքական դոկտրինի կիրառումը պետք է ապահովի՝

1. Հայաստանի Հանրապետության ու նրա բոլոր հարևանների միջև երաշխավորված կայուն խաղաղություն:

2. Հայաստանի Հանրապետության բազմակողմանի գործուն, փոխադաձ շահավետությամբ հարաբերությունների և գործակցության ստեղծումը կամ շարունակումը աշխարհի հնարավորին չափ շատ երկրների հետ և առաջին հերթին Մոսկվայի (միութենական, դաշնակցային և կամ ուրիշ ինչպիսի կառավարություն կամ վարչաձև էլ այնտեղ լինի) և Հայաստանի անմիջական հարևանների ու նրանց շրջակա երկրների հետ:

Մինչև այստեղ բերված տեսակետը, ըստ երևույթին, բաժանում է ամբողջ հայությունը, կամ առնվազն նրա ճնշող

մեծամասնությունը: Սակայն դրանից այն կողմ գոյություն ունեցող հարցերը կամ լրիվ և պատշաճորեն չեն արծարծված և կամ եթե արծարծված են՝ իրենց լրիվ և գոհացուցիչ պատասխանները չեն գտել: Բերենք այդ հարցերից մի քանիսը:

- Ինչպե՞ս կարելի է իրագործել ազգային պետական դոկտրինի արտաքին քաղաքական վերոհիշյալ նպատակը, հարևան և այլ երկրների կողմից ի՞նչ պայմաններ կարող են դրվել դրա համար, և հայությունը ի վիճակի կլինի՞ կամ կու՞զենա՞ բավարարել այդ պայմանները: Ու եթե չբավարարի տվյալ կամ հավելյալ հետագա պայմանները, ի՞նչ դրություն կարող է ստեղծվել դրանից Հայաստանի համար:

- Եթե Հայաստանի հարևան երկրներից մեկը կամ մի քանիսը շահագրգռված չլինեն Հայաստանի հետ խաղաղ գոյակցությամբ և իրենց համար որևէ հարմար ժամանակ Հայաստանի դեմ հակամարտ արարքների դիմեն, օրինակ՝ որոշ քաղաքական և կամ տարածքային զիջումների վերաբերյալ անհիմն և վերջնագրային պահանջներ ներկայացնեն, ցամաքային ու օդային ուղիներն արգելափակեն, սահմանների վրա ռազմական և կամ մաքսային ճնշումներ գործադրեն կամ էլ ուղղակի տարածքային զավթումներ կատարելով՝ պատերազմական փաստացի վիճակ ստեղծեն և այլն: Այս և նման պայմաններում.

ա) Հայությունը և մանավանդ Հայաստանն ունի՞ կարողություն միշտ պատրաստ լինելու այդպիսի ծրագրեր կիրառել փորձող երկրներին համոզել, որ իրենց հակամարտ արարքներից ոչ թե կօգտվեն, այլ կտուժեն, և հարկ եղած դեպքում գործնականորեն ապացուցել այդ:

բ) Եթե Հայաստանն այդ երկրներին իր միջոցներով և ուժով ի վիճակի չլինի, չկարողանա դրական կամ բացասական խթաններով շահագրգռել խաղաղ հարաբերությունների մշտական պահպանումը և կամ երթևեկության ազատ ու անխափան ուղիների տրամադրումը կամ էլ չկարողանա կանգնեցնել նրանց թշնամական գործուն արարքները, այդ դեպքում Հա-

յաստանը կկարողանա՞ արդյոք որևէ կողմի օգնությունը ստանալ՝ այդ անելու համար:

զ) Եթե Հայաստանը որոշակի ժամանակաընթացքի համար ի վիճակի չլինի սեփական միջոցներով և կամ այլ կողմերի օգնությամբ շահագրգռել ում որ հարկն է իր գոյության համար կենսական գործակցություն և կամ ի վիճակի չլինի դիմադրել և կասեցնել իր դեմ ուղղված վերոհիշյալ կամ նման տեսակի թշնամական շարունակական արարքները, այդ դեպքում ***ինչպիսի՞ն կլինեն դրա հետևանքները հայության և մասնավորապես Հայաստանի համար:***

Եվ մի հարց ևս: Եթե Խորհրդային Միությունում տեղի ունեցող փոփոխությունների, Հայաստանի՝ Մոսկվայի նկատմամբ որոշակի քաղաքականության և այլ պատճառների հետևանքով վերանա Հայաստանի Հանրապետությունում այժմ գոյություն ունեցող Մոսկվայի ռազմաքաղաքական ներկայությունը, ապա հայությունն ունի՞ հարկ եղած միջոցներ, ուժ և հզորություն՝ լրացնելու սպասվելիք ռազմաքաղաքական դատարկությունը (վակուումը) այս կամ այն չափով ամեն կողմերից բնականորեն առաջացող հարաճուն ճնշումների պայմաններում: Իսկ եթե ոչ, այդ դեպքում ***ո՞վ կամ ովքե՞ր ցանկություն ու կարողություն կունենան լրացնելու ստեղծված պարապությունը: Եվ դարձյալ, եթե այդ պարապությունն ուրիշները լցնեն, ինչպիսի՞ն կլինեն դրա հետևանքները հայության և մասնավորապես Հայաստանի համար՝ անմիջապես և հեռավոր ապագայում:***

Ակնհայտ է, որ այս և նման հարցերին Հայաստանը պատրաստ չէ որոշակի և բավարար պատասխաններ տալու: Մի բան, որը ցույց է տալիս արտաքին հարաբերություններում Հայաստանի թուլությունն ու ազգային գերագույն շահի և հատկապես պաշտպանության խոցելիությունը՝ մանավանդ որպես անկախ պետություն հանդես գալու պարագային: Նույնիսկ հարաբերաբար ավելի թույլ ու խոցելի, քան 1918 թվին: Սակայն առաջին հարցմանը, թե ինչպես կարելի է իրագործել վերոհիշյալ ազգային պետական դոկտրինի արտաքին քաղաքա-

կան նպատակը, մեր համոզմամբ, պատասխանը պարզ է՝ ***ուժով, հզորությամբ, պոստնցիալով:*** Արդարև, կարևոր է, բայց բավարար չէ խաղաղության ձգտելը, նույնիսկ արդար ու քեզ համար կենսական նշանակություն ունեցող իրավունքներից հրաժարվելու գնով, նույնիսկ զգացմունքներդ խեղդելով, ցավդ զսպելով, ամոթդ մոռացության տալով: Ոչ մի արժեք չունի, հզորություն է պետք: Այն ժամանակ կարելի է ունենալ նաև գործնական դաշնակիցներ, բարեկամներ, պաշտպաններ:

Պետությունների հարաբերություններում անգամ խաղաղության քաղաքականության իրագործումը պահանջում է ուժ ու զորություն: Երբեք պետք չէ կարծել, որ օրինակ՝ Շվեյցարիան կամ Շվեդիան պատերազմների մեջ չեն ներքաշվել և խաղաղություն են վայելել միայն նրա համար, որ չեզոք են: Ոչ, դա երկրորդական է: Առաջնային պատճառն այն է, որ նրանք ուժեղ են՝ հոյակապ մարզված, կազմակերպված և ժամանակակից ամենակատարյալ ու մեծ մասամբ սեփական արտադրության զենքերով սպառազինված բանակով, աշխարհի ամենաբարձր արդյունավետության հասնող տնտեսությամբ և այլն, ու ամենակարևորը՝ քաղաքացիական բարձրագույն հատկանիշներով պարտաճանաչ կազմակերպված, աշխատասեր ժողովրդով: Մի խոսքով՝ հզոր են: Եվ դա է բոլոր հնարավոր նախահարձակներին համոզել, որ նրանց վրա հարձակվելուց, նրանց երկիրը գրավելուց ավելի շատ պիտի վնասվեն, քան թե օգտվեն: Երկրորդ գործոնն այն է, որ նրանք իրենց շրջակա երկրների կենսական նկատվող շահերի դեմ ոչ մի պահանջ ու առավել ևս ոչ մի սպառնալիք չեն ներկայացնում: Ընդհակառակը, իրենց կեցվածքով, քաղաքականությամբ, գործունեությամբ այնպիսի դրություն են ստեղծել, որ բոլոր երկրներն էլ քիչ թե շատ օգուտ ունեն նրանցից, և հենց այդ հանգամանքը ևս իրենց համար շահ է ապահովում: Ահա թե ինչու են և կայանում նրանց խաղաղասեր քաղաքականության հաջողության երաշխիքը, որն ապահովում է նրանց անվտանգությունը, ինքնիշխանությունը և բարգավաճումը:

Ուրեմն՝ Հայաստանի համար ևս, հատկապես այսօրվա և տեսանելի ապագայի առումով, իր ստեղծելիք կայուն ու հուսալի հզորության և շրջակա երկրների նկատմամբ իր որոշակի պահանջներն ու գործադրվող ճնշումը նրանց կենսական շահերին սպառնալիք չդրածնելու քաղաքականության համակցումը կարող է ապահովել **բոլոր կողմերի համար ընդունելի կայուն խաղաղություն և փոխադարձ շահավետության հիմունքներով գործակցություն, որոնց վրա միայն կարելի է պաշտպանել ազգային գերագույն շահը:**

Իսկ այդ պայմաններում, տարբեր բնագավառների մեջ խաղաղ մրցակցությունում անդադար հաղթելով և ավելացնելով երկրի պոտենցիալը, հմտանալով պետություն վարելու ասպարեզում՝ **անպայման ի հայտ են գալիս նվիրական իղձերի իրագործման պատմական պահերը:**

Մինչ այդ, մեր համոզմամբ, պատմական ներկա հանգրվանում հայության ազգային գերագույն շահի պաշտպանությունը լավագույնս ապահովելու ընդունակ՝ Հայաստանի պետական արտաքին քաղաքական (բոլորի հետ խաղաղ և փոխադարձ շահավետությամբ գոյակցության) դոկտրինի հաջող կիրառումը կենսական է ազգի համար: Բայց այդ ամելու համար Հայաստանը պետք է ապահովի այդ դոկտրինի երկու հեմարանները. **ա) ուժ, հզորություն և պոտենցիալ, բ) բոլոր կողմերի հետ լարվածության լրիվ վերացում:**

Առաջինը՝ ուժը, հզորությունն ու պոտենցիալը, որ հիմնականում պետք են ճնշումներից ու վերջին հաշվով նախահարձակումներից պաշտպանվելու համար, պարտադրորեն անհրաժեշտ է Հայաստանին հատկապես իր լրիվ անկախացման դեպքում: Այժմ Հայաստանն անհրաժեշտ չափով չունի դրանք ոչ թե անկախություն նվաճելու, եթե նույնիսկ համայն հայությունն այդ ցանկանա, և ոչ էլ որևէ մոտ ժամանակում ակամա անկախանալու պարագայում իր շահերն ու սահմանները պաշտպանելու համար: **Սակայն, քանի որ անկախացման հնարավորությունն իրականում գոյություն ունի, և միայն դրա ժամանակը հայտնի չէ այս արագ փոփոխությունների ժա-**

մանակաընթացքում, նշանակում է հայությունը արագորեն պետք է հատուկ ծրագրով անցնի այդ ուժի, հզորության և պոտենցիալի ստեղծմանը: (Այս նյութը հիմնականում ներառում է ազգային պետական ներքին քաղաքական դոկտրինը և պետք է արժարժվի առանձին):

Իսկ մինչ այդ, մինչև դրանք ստեղծելը, դրանց բացը լրացնելու, ըստ երևույթին, միայն մեկ հնարավորություն կա՝ **հնարավորինս առավել հարմարավետ պայմաններ դասավորելով՝ մնալ մոսկովյան արտաքին պաշտպանական հովանոցի տակ լրիվ և ներքին պաշտպանական համակարգից օգտվել հնարավորին չափով շատ՝ պակասը լրացնելով սեփական միջոցներով:** Այս խնդիրը պետք է կատարել տարբեր միջոցներով ու ձևերով՝ անկախ նրանից, թե Մոսկվայի հաշիվներն այդ տեսակետից ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել կամ ենթարկվելու են դեպքերի բերումով՝ իր քաղաքականության փոփոխությամբ: Սա արդեն **հայ ազգային դիվանագիտության առաջնային խնդիրը պետք է լինի. Հայաստանի ինքնիշխանության նվազագույն գիջումով Հայաստանի պաշտպանությունը ապահովել Մոսկվայի առավելագույն մասնակցությամբ:**

Նման եզրահանգումը գուցե շատ ծանր, մասնաշատ էլ դառն է: Ինչ օրի ենք հասել, որ այսքանից հետո փոխանակ ժամ առաջ Մոսկվայից հեռանալու, հետը ոչ մի գործ չունենալու, հիմա մենք պետք է նախաձեռնենք և ջանանք, որ մոտ մնանք նրան: Այդ ամելն իսկապես որ ծանր է: **Սակայն ազգն ու հայրենիքը տառապանքի, անարգանքի, ոչնչացման ու կորստի իսկական վտանգի առաջ կանգնած՝ այդ միակ միջոցին չդիմելը, այն էլ արագ, վճռական և հարկ եղած քաղաքական և դիվանագիտական հմտությամբ այդ չանելը, ավելի ծանր է: Գուցե մասն ծանր հանցանք է՝ անկախ որևէ պատճառաբանությունից:** Մամավանդ պետք է նայել աշխարհին՝ ինչ երկրներ, որոնք ամենադաժան կռիվներ են մղել միմյանց դեմ, այժմ ինչպիսի հարաբերություններ են վարում: Աշխարհի ամենազարգացած ու ժողովրդավար երկրներն ինչպիսի օգնության

ծեռք են մեկնում նույնիսկ Մոսկվայի նման մի իշխանության, եթե իրենց շահը դա է պահանջում:

Այս դեպքում կա մի դատողություն ևս. յոթանասուն տարի և դեռ դրանից էլ առաջ Մոսկվայի թաթի տակ էինք, որովհետև ինքն էր դա կամենում, իր շահն էր այդպես պահանջում: Հիմա միառժամանակ էլ կարելի է մեր կամքով մնալ, ոչ թե թաթի տակ, այլ կողքին, որովհետև մեր շահն է դա պահանջում, մեր գերագույն շահը, մեր լինել-չլինելու դրությունը: Մի՞թե ավելի հեշտ է քո շահերին ու կամքին հակառակ մեկի կամքին կցված, ծով տառապանքներով, հարյուրհազարավոր զոհերով և նյութական ու հոգեբարոյական արժեքների ահավոր կորուստներ կրելով և հակառակ այդ բոլորին՝ օր ու գիշեր ստիպված նրան գովերգելով քարշ գալը, քան թե քո ազգի ու հայրենիքի գերագույն շահերի համար կամավոր գործակցելը, այն էլ քո հաշիվներից բխող նպատակի համար: Թվում է, թե տրամաբանական պատասխանը մեկն է:

Հայաստանի պետական արտաքին քաղաքական դոկտրինի հաջող կիրառման համար անհրաժեշտ երկրորդ հենարանը՝ բոլոր կողմերի և մասնավորապես հարևան երկրների և Մոսկվայի հետ (դարձյալ՝ ինչպիսի իշխանություններ էլ այնտեղ լինեն) լարվածությունների վերացումը և փոխադարձ շահավետության հիման վրա խաղաղ, բազմակողմանի գործակցությունը պետք է կատարվի արագ և հեռուն գնացող մի շարք հանգամանքներ զգուշորեն հաշվի առնելով՝ համապատասխան հայտարարություններով, կեցվածքներով և դրանց հաջորդող բանակցություններով: Այս հարցերում Սփյուռքի դիրքորոշումը կարող է և, հավանաբար, պետք է, որ առնվազն որոշակի ժամանակամիջոցի համար որոշ տարբերություններ ունենա:

Հայաստանի ազգային պետական արտաքին քաղաքական դոկտրինը, վերոհիշյալ երկու հենարաններից բացի, ազգային գերագույն շահի ավելի հուսալի պաշտպանման համար պետք է հատուկ ծրագրով ապահովի նաև հնարավորին չափով միջազգային և միաժամանակ երկկողմանի (հատկապես Հայաստանի հարևան երկրների՝ անմիջական հարևանների հետ)

պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա երաշխավորություններ՝ անկախ կամ ինքնավար Հայաստանի սահմանների, տարածքային ամբողջականության ու արտաքին ուղիների ապահովության վերաբերյալ:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ

(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Այս համառոտ ակնարկը թեև գրված է շուրջ ինը տարի առաջ՝ 1981 թվականին, Տեղեկատուն նպատակահարմար է գտնում լույս ընծայել՝ նկատառումով, որ դրա որոշ դրույթներն այսօր էլ կարող են հետաքրքիր ու շահեկան լինել:

Հայ ազգային քաղաքական և տնտեսական իրավիճակն ինքնըստինքյան ամենաբարդերից մեկն է աշխարհում: Իսկ եթե հաշվի առնենք նաև նպատակները, որ ազգը ձգտում է իրագործել, այսինքն, եթե համադրելու լինենք մի կողմից պայմանները, հնարավորությունները և ուժերը, որոնք ունի և կարող է ներդնել ազգը, և մյուս կողմից՝ նպատակադրման ծավալը, որը վերջին հաշվով համապատասխան տարածք, դիրք և ազգաբնակչություն ունեցող կենսունակ ազգային պետականության ստեղծումն է՝ Կովկասում և Մերձավոր Արևելքում տարբեր ուժերի առկայության պայմաններում, ապա ակնառու կերպով կուրվագծվի խնդրի կարևորությունը, տարողությունը, բարդությունը, ինչպես նաև հույժ վտանգավորությունը, որ հայությունը դրել է իր առաջ:

Խնդրի հենց այս կարևորությունը, բարդությունը և վտանգավորությունն էլ պայմանավորում են ազգային քաղաքականության մշակման և ծրագրման գիտական լուրջ և հետևողական մոտեցման անհրաժեշտությունը: Դրան զուգահեռ անհրաժեշտ է նաև ազգային ընդհանուր, Հայաստանի անմիջական շրջապատի և միջազգային իրադրության գիտական անընդհատ ուսումնասիրություն և վերլուծություն՝ որոշելու

ուժերի փոփոխվող հարաբերակցությունը ներկա տեսանելի ու աներևույթ և դեռ գալիք դաժան մրցապայքարում, որի մեջ աստիճանաբար ներգրավվում ենք և դեռ, ամենայն հավանականությամբ, պիտի ավելի ներքաշվենք: Հարկ է նշել, որ բացի մշտապես գոյություն ունեցող շրջապատի բնականոն ճնշումից, մեր նպատակադրումներն ինքնըստինքյան մրցակցության և պայքարի հարաբերություններ են ստեղծում ու միշտ պիտի ստեղծեն: Հետևաբար, առաջնային անհրաժեշտություն է որոշելը, թե ինչպիսին է մեր և մրցակից կողմերի տարբեր բնագավառներում ուժերի առկա և պոտենցիալ հարաբերակցությունը, որը, վերջին հաշվով, վճռելու է պայքարի ելքը: Եթե նախնական հաշվարկը պարզի, որ ուժերի հարաբերակցությունը ի վնաս մեզ է, ապա մենք ժամանակ կունենանք փոխելու այդ հարաբերակցությունը և կամ ճշտումներ մտցնելու մեր նպատակադրման մեջ: Իսկ եթե պարզվի, որ ուժերի հարաբերակցությունը հոգուտ մեզ է, թերևս մտածենք խնդիրներն ավելացնելու մասին, որպեսզի օգտագործած լինենք մեր ուժային ավելցուկը: Բացի այդ, հաշվարկման մշտական խնդիր պետք է լինի նաև ազգային ներուժի անընդհատ ավելացումը և կատարելագործումը՝ ծրագրված համապատասխան միջոցներով և ջանքերով:

Բացառված չէ, որ որոշ սխալներ տեղ կգտնեն այդ հաշվարկներում: Դրանք կարելի է ճշտել ու փոխել գործողությունների ընթացքում, դա բացառված չէ, սակայն այնքան էլ սարսափելի չէ, քանի կա հիմնական հաշվարկը, այն արած մասնագետները և մանավանդ այն որդեգրած համապատասխան ղեկավարությունը: Սակայն առանց որևէ հաշվարկի և այն հասկացող ու կիրառելու ընդունակ ղեկավարության՝ նպատակադրվել և այդ նպատակի իրագործմանն անցնելը, մեղմ ասած, արհեստավարժ չէ: Սա զգայական մոտեցում է, անհաշիվ, անտնտեսվար, որի դեպքում եթե հաջողություններ լինեն անգամ, դրանք կլինեն մասնակի, ժամանակավոր, և վերջնական պարտությունը՝ անխուսափելի: Եվ դա զարմանալի չպետք է լինի: Եթե նույնիսկ թվա, թե տվյալ ժամանակահատվածում որևէ

քաղաքական (թեկուզ և հույժ անհրաժեշտ) նախաձեռնություն սկսելու համար պայմանները բարենպաստ են, սակայն մեր և մեր շահերի հետ բախվող կողմերի առկա և պոտենցիալ կարողությունների չհաշվարկված հարաբերակցությունը եւթյան մեջ ի վնաս մեզ լինի, հակառակորդ կողմը հնարավորություն կունենա մեր իսկ նախաձեռնության գործընթացում փոխելու մեզ համար նպաստավոր պայմանները՝ ավելացնելով գործող ուժերն ի հաշիվ իր պոտենցիալի կամ փոխգիշումների գնալով մեր հակառակորդներից կամ բարեկամներից ոմանց հետ և ստանալով նրանց աջակցությունը: Այն ժամանակ ի վնաս մեզ կատարված փոփոխությունն ավելի մեծ անակնկալ կլինի մեզ համար, քան էր չհաշվարկված և չհիմնավորված սկզբնական առավելությունը: Դա կլինի, փաստորեն, հակառակորդի այն խաղաքարտը, որը վերջնական հաղթանակ կբերի նրան ու վերջնական պարտություն՝ մեզ: Պարտություն, որ որոշ դեպքերում կամ մի քանի անգամ կրկնվելուց հետո կարող է հանգեցնել անվերականգնելի, կործանարար կորուստների: Հիշենք թեկուզ մեկ օրինակ. Կիպրոսը Հունաստանին միացնելու՝ հույների իսկ նախաձեռնության շարունակվող հետևանքները:

Այսպիսով, ազգային ներկա և հեռագնա քաղաքականության հաշվարկումը և ծրագրավորումը, հիմնված շրջապատի ուժերի և մեր նկատմամբ նրանց ներկա ու ապագա հավանական դիրքորոշումների, ինչպես նաև ազգի բոլոր հատվածների բոլոր բնագավառների առկա և ըստ որոշակի ծրագրերի դեռևս ստեղծելիք կարողությունների ու միջոցների վրա, ո՛չ շռայլություն է և ո՛չ էլ առանձնահատուկ նվաճում, այլ ամենակենսական, հրատապ ազգային անհրաժեշտություն:

Ո՞վ պետք է կատարի այդ հաշվարկն ու ծրագրավորումը: Պատասխանը մեկն է՝ ազգի պատասխանատուն, ազգային իշխանությունը: Իսկ նրա բացակայության դեպքում՝ ազգային խիղճն ու գիտակցությունը կրող, ազգին ծառայելու նկատմամբ հոգեկան պարտք զգացող, մասնագիտորեն պատրաստված հայ մտավորական խավը: Եթե այն չկա, բոլորովին չկա, այդ դեպքում մեր դրությունն արտակարգ լուրջ է, և պետք է ամեն

ինչ անել, որ այն անհապաղ ստեղծվի: Թե ի՞նչ կերպ կարելի է այդ անել, դա առանձին խոսակցության նյութ է: Իսկ եթե կա, վերոհիշյալ մակարդակի մտավորական խավի թեկուզ մի փոքր մասնիկը, այդ դեպքում անմիջապես այն պետք է համապատասխանորեն կազմավորվի և գործի անցնի ամեն զոհողությունների գնով:

Այս ծայրահեղ միջոցի՝ կամավորության, մտավորական աշխարհագրի, եթե կուզեք, կարիքը չէր զգացվի, եթե մեր Հայրենիքը՝ Հայաստանը, ունենար ազգային իրական և ոչ թե երևութական իշխանություն: Այդ դեպքում վերոհիշյալ հաշվարկմանն ու ծրագրավորմանը կձեռնարկեին Հայաստանի կառավարական մարմինները և գիտական հիմնարկները, Գիտությունների ակադեմիան՝ իր հազարավոր գիտաշխատողներով, և հանրապետության գիտական ծախսերի առյուծի բաժինը չէր հատկացվի տիեզերական խորությունների չափմանն ու աստղային համակարգերի հաշվարկմանը: Այն ժամանակ, երբ այսօրվա դրությամբ՝ վրա հասնող պատմական օրհասը մերկ ձեռքերով՝ բացարձակապես առանց նախապատրաստության է դիմագրավելու հայ ազգը: Եվ մի՞թե հայ գիտնականները ոգին ի բուռ չէին աշխատի՝ հաշվարկելու համար, թե ինչ հավանականություններ ունենք հաղթող դուրս գալու առաջիկա քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և այլ ճակատամարտերում, և ըստ այնմ ծրագրային տարբերակներ մշակելու ազգային զորահավաքի բոլոր բնագավառների համար՝ սկսած կրթական, գիտական, տնտեսական, մշակութային ասպարեզից մինչև քաղաքական, դիվանագիտական, ռազմական: Բայց քանի որ Հայաստանի գիտնականները չունեն այդ աշխատանքը կատարելու հնարավորությունը, ապա արտախորհրդային Սփյուռքի պարտքն է՝ ելնելով այս ցավալի իրականությունից, ի սպաս դնելու իր բոլոր հնարավորություններն ազգի համար կենսական խնդրի իրագործմանը: Նախ՝ խնդրի արժարժումը իր ամբողջ ծավալով, խորությամբ և կարևորությամբ, ապա՝ դրա լուծման աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումը:

Միջազգային Սփյուռքի քաղաքական, հասարակական և գիտական միտքը, թեկուզ և ոչ ամբողջությամբ, պետք է հավատալ, որ համապատասխանում է հայ մտավորական վերոհիշյալ մակարդակին ու հետևապես կարող է և պարտավոր է դա անել ոչ միայն իր համեմատաբար մեծ հնարավորությունների բերումով, այլև այն պատճառով, որ տասնամյակներ շարունակ իր ձեռքում է պահել Հայ Դատի նվիրական գաղափարների դրոշը: Ինքնին երևոյթ էր այդ գաղափարների բյուրեղացումը, անշուշտ, բայց դա բավարար չէ: Տալ գաղափարը, ոգեշնչել ազգն այդ գաղափարների իրականացման պայքարին, առանց հաշվի ու հաշվարկի՝ շատ դեպքերում նույնիսկ կարող է վնասակար լինել: Ուրեմն՝ ազգային ներկա ու հեռագնա քաղաքականության գիտական հաշվարկ և ծրագրում՝ իբրև քաղաքական և գիտական մտքի համապատասխան ներկայացուցիչների անմիջական առաջադրանք, և այդ հաշվարկի ու ծրագրի իրագործման անհրաժեշտության գիտակցում, ընդունում և իր պայմանների համաձայն մասնակցություն յուրաքանչյուր հայի կողմից: Այս է հայության գործնական և կենսական խնդիրն այսօր, որը կարող է այս կամ այն չափով համազգային տարողությամբ գործարկվել:

Այս խնդրի իրագործմանը զուգահեռ, ինչպես նշվեց, հարկավոր է հայության բոլոր հատվածների ընդհանուր իրավիճակի անընդհատ և հանգամանալից քննարկում, վերլուծություն, որը հնարավորություն կտա տեսնելու, թե որո՞նք են գոյատևման համար անհրաժեշտ առաջնային նախադրյալներն առայժմ փաստացի, այսինքն՝ այսպես կոչված՝ ներազգային պետականության ստեղծման համար, թե որքանո՞վ են առկա այդ նախադրյալները մեր իրականության մեջ, ի՞նչն է պակաս, ինչպե՞ս և ինչո՞վ կարելի է լրացնել կամ փոխարինել պակասող օղակները:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ
Նոյեմբեր 1981



**ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(ԽՈՐՀԵՐ)

Մեր ազգի վերջին շուրջ երեք հարյուրամյակի քաղաքական պատմությունը որոշակի տեսանկյունով վերլուծելիս տեսնում ենք, որ հիմնականում պատմական Հայաստանի և նրա շրջակա տարածությունների նկատմամբ նոր և հզոր ուժերի շահագրգռվածության, ինչպես նաև հայ ժողովրդի ազատության, ինքնիշխանության և բարգավաճման բնական ձգտման հետևանքով առաջացած հայ ազատագրական շարժումներն առաջին հերթին եղել են հատվածական ու չեն ընդգրկել և կան ներկայացրել ամբողջ ազգը: Երկրորդ՝ պայքարի ելած հայ ժողովրդի առանձին խավեր և կան հատվածներ նետվել են այդ պայքարի մեջ ու նվիրվել տվյալ պահին հասանելի թվացող նպատակի իրագործմանը, առանց դրա հետ առնչվող բոլոր խնդիրների ու հավանական հետևանքների խոր և բազմակողմանի ըմբռնման, առանց կազմակերպված նախապատրաստության և առանց մշակված հեռագնա ծրագիր ունենալու: Ավելի շատ զգացական, քան հաշվենկատ այս մոտեցման արդյունքը մեծամասամբ եղել է պարտություն և նահանջ՝ հաճախ ծանր կորուստներով:

Այս և դրան առնչված՝ հայության հոգեբարոյական ու ազգային կառավարման համակարգի հարցերին մենք հետևել ենք՝ սկսած ավելի քան երեսուն տարի առաջ և 1958 թվականից Հայաստանում և Խորհրդային Միության այլ վայրերում հայ ընտրյալներին ներկայացնում էինք ազգային համընդհանուր իրավիճակի վերլուծությունը որոշակի տեսանկյունով և ըստ այնմ՝ տվյալ ժամանակի և պայմանների համեմատ, Խորհրդային Միությունում հայ որոշակի մտավորականության ու ղեկավարության համար գործունեության ծրագրեր: Դրանց մեջ զգալի տեղ էին գրավում.

ա) Առանց մեծ վտանգների ենթարկվելու, ազգային որո-

շակի ըմբռնումով կազմակերպվելը և պատմական առանձնահատուկ ժամանակաշրջանն առավելագույն արդյունավետությամբ օգտագործելը՝ Մոսկվայի ստեղծած համակարգին (որի մեջ ստիպված էինք մնալ դեռ որոշ ժամանակ) տալով հոգեբարոյական, նյութական և քաղաքական իմաստով պահանջվածի հնարավորին չափով նվազագույնը և համակարգից ստանալով առավելագույնը:

բ) Պատշաճ նախապատրաստությունը հաջողությամբ դիմագրավելու՝ մոտ և հեռավոր ապագայի, մեզ համար ճակատագրական նշանակությամբ ամեն տեսակի զարգացումներն ու փոփոխությունները (որ նախատեսում էինք, թե օրինաչափորեն առաջանալու էին հատկապես Խորհրդային Միությունում և դրա հետևանքով նաև Անդրկովկասում ու նրա շրջակա երկրներում), որպեսզի դրանից բխելիք անբարենպաստ պայմաններից նվազագույն վնասներով դուրս գանք, իսկ բարենպաստ պայմաններից՝ առավելագույնս օգտվենք: Շատ քիչ բացառություններով՝ պատասխանը լինում էր, որ այդպիսի գործունեության ձեռնարկումը խիստ վտանգավոր է, հետևապես և անիրագործելի:

Սակայն այդ տեսակետը ճիշտ չէր, ըստ երևույթին, խորքում անձնասիրական մակերեսային մոտեցման պատճառով: Ավելի ուշ, սկսած 1985 թվից, այս անգամ արդեն Սփյուռքի տարածքի մեծ մասում, հայ ազգային ընդհանուր իրավիճակի վերաբերյալ մեր դիտարկումները, վերլուծություններն ու այդ առնչությամբ գործունեության ծրագրերը ներկայացվում էին ավելի համապարփակ ու ընդարձակ և, իհարկե, անհամեմատ ավելի բաց ու ազատ: Դրանք ընդգրկում էին Հայաստանում և Խորհրդային Միությունում գտնվող հայության ազգային հոգեբարոյական, ընկերային, կրթական, մշակութային գիտական, տնտեսական, քաղաքական, երկրաքաղաքական, պաշտպանական, միջավայրի պահպանման և այլ բնագավառներում բազմաթիվ տեսակետներից վատթարացող դրությունը, որը կարող էր հետագայի համար էլ մեծ դժվարություններ ու

վտանգներ առաջացնել և անդառնալի կորուստներ պատճառել:

Այս բոլորը ներկայացվում էր համարյա համատարած Սփյուռքում որոշակի մոտեցումով ընտրված այն քչերին, ովքեր, ակնկալվում էր, որ կրթությամբ և փորձառությամբ, քաղաքական իրազեկությամբ և կողմնորոշմամբ, նկարագրով ու ազգային ինքնագիտակցությամբ ամենահարմար անձինք են՝ համահայկական պետական և հեռագնա մոտեցումով վերոհիշյալ ազգային խնդիրների ըմբռնման և դրանց լուծման համար՝ Սփյուռքի անփոխարինելի և կենսական դերի գիտակցության տեսակետից: Այլ մտայնության և կամ մակարդակի անձանց՝ ըմբռնողականության, վստահելիության, հետևապես և որևէ դրական դեր կատարելու առումով անհուսալի նկատվելու պատճառով խուսափում էինք այդպիսիներին մեր տեղեկություններով ու առաջարկներով «նեղություն» պատճառելուց:

Շուրջ երեք տարի՝ 1978-ից 81 թվականները ամենօրյա, իսկ այնուհետև պակաս հաճախականությամբ անխոնջ փնտրատուքների շնորհիվ համապատասխան անձանց հետ մեր հանդիպումներում՝ նրանց ճնշող մեծամասնության պատասխանը լինում էր, որ թեև հետաքրքիր և կարևոր են ներկայացված խնդիրներն ու առաջարկները, սակայն այդ առնչությամբ արտահայտված մտահոգություններն այնքան էլ տեղին չեն, որ Հայաստանն ու Խորհրդային Միության հայությունը ընդհանուր առմամբ լավ ու ապագայի իմաստով հուսալի վիճակում են, հետևապես մասնավոր սպառնալիք, վտանգ չկա: Ինչ վերաբերում է որոշ խնդիրների, դժվարությունների, ասում էին նրանք, ապա ո՞ր ազգը, ո՞ր երկիրը չունի դժվարություններ և խնդիրներ: Մի՞թե Արևմտյան զարգացած երկրները չունեն տնտեսական, ընկերային, միջավայրի պահպանման և այլ դժվարություններ: Կարդացեք նրանց թերթերը, լսեք նրանց պետական ու հասարակական գործիչներին և կզգաք, թե ինչ ահավոր խնդիրների առաջ են կանգնած: Բացի այդ, նշում էին նրանք, տվյալ պայմաններում, երբ բազմաթիվ անմիջական ու հրա-

տապ առաջադրանքներ կան հայապահպանման և Հայ դատի աշխատանքների գծով, և նկատի ունենալով, որ Սփյուռքի մարդկային ու նյութական միջոցները սահմանափակ են, այդ խնդիրներն առաջնահերթ դասել չի կարելի: Այն ժամանակ էլ մենք համոզված էինք, որ նրանք ևս ճիշտ չէին:

Վերջին տարիներին, 1985 թվականից ի վեր, Սփյուռքի տարածքում դարձյալ որոշ ընտրյալներ, որոնք, ինչպես կարելի էր հուսալ, Խորհրդային Միության և մասնավորապես հայ ժողովրդի կյանքում հայտնված նշանակալից իրադարձությունների լույսի ներքո, կարող էին և պետք է ուզենային հասկանալ հայ ազգային վիճակի փոփոխության ընթացքի առաջացրած թե՛ առավելությունները և թե՛ հույժ վտանգավորությունը ու, հետևապես, վերջինս պատշաճորեն ու անվտանգ դիմագրավելու նպատակով վերոհիշյալ և նման բնույթի ծրագրերի մշակմանը մասնակցելու և կամ նեցուկ կանգնելու կենսական կարևորությունը, առարկում էին, թե Սփյուռքի միջոցները լրիվ սպառվելու աստիճանի են հասել և թե բացի դրանից ժամանակ չկա նման լայնածավալ ու հեռագնա խնդիրներով զբաղվելու: Նրանց զգալի մասն ասում էր, որ պետք է լինել «գործնական», և միջոցները տրամադրել «այժմեական» և արագ հատուցվող խնդիրներին:

Համոզված ենք, որ այս մտածողությունն ու եզրահանգումը ևս ճիշտ չեն: Այստեղ կուզենայինք նշել այն հանգամանքը, որ նույնիսկ այդ սակավաթիվ ընտրյալների զգալի մասին ներկայացված ազգային իրավիճակի վերլուծությունն ու դրա հավանական հետևանքների հեռանկարը, և մանավանդ այդ կենսական խնդիրների լուծման համար առաջարկվող միջոցները նրանց կողմից լրիվ և մինչև վերջ չըմբռնվեցին, նաև անհրաժեշտ ժամանակ չհատկացնելու և դրանց մանրամասն ու խորապես չծանոթանալու հետևանքով: Իսկ դրա պատճառներից մեկն էլ, ըստ երևույթին, այն էր, որ այդ անհատների մեծամասնությունը նախ և առաջ մտածում էր այն մասին, թե ակնկալվող գործունեությունը ինչո՞վ կարող է օգնել իր պատկանած կազմակերպությանը, բարձրացնել իր հատվածի հեղինակությունը

կամ բավարարել իր եսասիրական ձգտումները և այլն:

Շատ բան կա զարմանալի մեր ազգային իրականության մեջ, և դրանցից մեկն էլ այն է, որ մինչ շատ դեպքերում ժամանակի և միջոցների վատնումը, իսկ հաճախ նաև դրանք ընդհանրապես չօգտագործելն ահավոր չափերի են հասնում, այլ պարագաներում ժամանակի և միջոցների «խնայողության» պատճառաբանությամբ կարևոր բարձիթողումներ են արվում: Մի՞թե այնքան դժվար է գիտակցելը, թե որոշակի գիտություններ, գիտելիքներ և խնդիրներ պատշաճ չափով ըմբռնելու համար համապատասխան ժամանակ տրամադրելն անհրաժեշտ պահանջ է: Մի՞թե դժվար է նաև գիտակցելը, որ հայության և Հայաստանի անվտանգության և ազգային կենսական շահերի պաշտպանման, ինչպես նաև ազգի բնականոն գոյատևման և զարգացման խնդիրը, որ կարելի էր իրագործել վերջին հաշվով ազգային ազատ, ապահով և կենսունակ պետականության կառուցմամբ, աշխարհի ամենաբարդ ու խրթին խնդիրներից է, որի լուծումը, ի շարս այլոց, բարձրագույն գիտելիքներ և գիտություն է պահանջում:

Իսկ այն հանգամանքը, որ թեև շատ հաճախակի ու հեշտությամբ օգտագործում ենք «համահայկական», «համազգային» և նման արտահայտություններ, սակայն գործնականում մեր տեսադաշտն ու մտահորիզոնն ամփոփվում ու սահմանափակվում են անձնական նախասիրություններով, կազմակերպություններով և կամ տեղայնության իմաստով, և առաջին հերթին մտածում ենք, թե զնահատականը, օգուտը կամ պատիվը ով կամ որ կողմը պիտի ստանա, ապա դա էլ մի այլ ազգային երևույթ է, որ զարմանալի լինելուց ավելի վնասակար է: Վնասակար է մանավանդ այժմ, երբ թվում է, թե համարյա բոլորս էլ անվերապահորեն պետք է ըմբռնած լինենք, որ ազգի ապագան կախված է հայության ազգային պետական գիտակցությունից, վերաբերմունքից ու որակական արագ գործողություններից:

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
1990-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ**

**ՀՐԱՏԱՊ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՅԱՆՋ ԵՎ ԴՐԱ
ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

(ՀԱՄԱՐՈՏ ԱԿՆԱՐԿ)

Այս համառոտ ակնարկը թեև գրված ու վերանայված է տարիների առաջ, տեղեկագիրն այն լույս է ընծայում՝ նկատի ունենալով, որ այժմ էլ այն կարող է շատերի համար հետաքրքիր և շահեկան լինել:

Հայ ազգի իրավիճակին ու դրա զարգացման ընթացքին երկրաքաղաքական, տնտեսական և ազգային-հասարակական տեսանկյունով մոտենալիս պարզորոշ կերպով ի հայտ է գալիս, որ ամբողջ հայության (Հայաստան, խորհրդային Սփյուռք և արտախորհրդային Սփյուռք) գոյության հիմքերը լրջորեն խախտված ու թուլացած են թե՛ ներազգային և թե՛ միջազգային իմաստով: Մեր կարծիքով, այս իրադրության ստեղծման հիմնական պատճառները, որոնք ուղղակիորեն առնչված են հայությանը, հետևյալներն են.

ա) Ազգային պատկանելության հոգեբարոյական, գաղափարախոսական և քաղաքական-հասարակական ըմբռնման վրա հիմնված քաղաքացիական պարտաճանաչության պակասը:

բ) Ազգային պետական որևէ տեսակի կառավարման և ազգային պետական ինքնագիտակցության երկարատև բացակայությունը:

գ) Այն հանգամանքը, որ հայությունը, թե՛ խորհրդային Հայաստանում և թե՛ նրանից դուրս, որոշ բնագավառներում

մասնակի առաջադիմություն է արձանագրել, սակայն ընդհանուր առմամբ շատ ազգերից և իրեն շրջապատող ներկայի և կամ ապագայի մրցակից ազգերից անընդհատ հետ է մնում քաղաքական, տնտեսական տեսակետից և ընդհանրապես պետական չափանիշով նրանց հզորացման հետ համեմատած, առանց կարողանալու իր կենսական շահերի համար փոքրիշատե արդյունավետորեն օգտագործել իր իսկ ներուժը (պոտենցիալը):

Այս իրադրությունը հարաճուն կերպով շարունակում է խորացնել հայության գոյատևման և, առավել ևս, նրա բնականոն զարգացման համար վաղուց գոյություն ունեցող վտանգը:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հայությունը, պատմական ճակատագրական նշանակություն ունեցող աղետների ընթացքում եղեռնագործման ենթարկվելով, կորցնելով իր կարճատև պետականությունը, իսկ իր մեծ մասը՝ կորցնելով նաև հայրենիքը, դարձավ ավելի աշխարհասփյուռ, ավելի մասնատված, ավելի աղճատված ինքնությամբ, իսկ իր ընկալումները, մտածումներն ու ջանքերը դարձան ավելի ապակենտրոն: Այս ընթացքում հայությունը միաժամանակ ենթարկվեց թշնամական ուժերի ճնշման և օտար անհաղորդակից միջավայրերի ազդեցության: Շուրջ յոթանասուն տարի մնալով այս պայմաններում, որոնք մինչև օրս որոշ փոփոխությունների ենթարկվել են, բայց էությամբ մնացել նույնը, հայությունն իր գոյատևման ջանքերը կատարում է միևնույն միջոցներով և ձևերով, հակառակ նրան, որ իր կարողություններն ու կարելիությունները մեծապես ավելացել են թե՛ քանակական և թե՛ որակական տեսակետից (առնվազն նյութական և մտավոր առումով): Յոթանասուն տարիների ընթացքում հայությունը, իր բոլոր հատվածներով, ընդհանուր առմամբ չի ունեցել ազգային իմաստով գաղափարական, քաղաքական և կազմակերպչական-կառույցային որևէ էական առաջադիմություն՝ համեմատած իր աճող կարիքներին ու հնարավորություններին:

Այս իրողությունը ցույց է տալիս, որ այն, ինչ այժմ կատարվում է խորհրդային Հայաստանում և ամբողջ հայության

մեջ, արդյունքն է ոչ թե ազգային ծրագրված նախաձեռնության, այլ միջազգային ուժերի նոր հարաբերության թելադրմամբ՝ Մոսկվայի շահերին համապատասխանող՝ Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող ընդհանուր փոփոխությունների, որոնց, ի դեպ, ազգը դարձյալ ուշացունով և խարխափումներով է արձագանքում: Ազգը մեկ անգամ ևս մի ընդհանուր հոսանքի մեջ է գտնվում առանց նախապատրաստության, առանց հաշվարկի, ծրագրերի և ղեկավարության: Առանց ունենալու ազգային գերագույն և հեռանկարային շահերի, իր իրական կարողությունների և ընդհանուր պայմանների փոխհարաբերությունների վրա հիմնված ներքին ու արտաքին քաղաքականության թեկուզ որևէ բնագավառի մի ուղեգիծ:

Հայության ապակենտրոնացումը, ինչպես նաև ազգային-պետական կենսական շահերի գիտակցության և դրա հիման վրա ազգային ներքին ու արտաքին բոլոր բնագավառների քաղաքականության սկզբունքների ըմբռնումների, ինչպես նաև այդ սկզբունքների վրա հիմնված ռազմավարության, մարտավարության և դրանց իրագործման համար (ըստ ժամանակի պահանջների) ծրագրերի, համապատասխան կառույցների, ղեկավարության և գործելաձևերի պակասը համարյա նույնն է, ինչպես նախկինում:

Հայությունը իր բոլոր հատվածներով, որպես ազգային համակարգ, դեռևս անկազմակերպ է ու անկառավարելի, զուրկ ազգային-պետական գիտակցությունից, մտածելակերպից և շահագրգռվածությունից: Հետևապես, բացի ազգային կենտրոնացված կառավարման և պետական ըմբռնումով ազգային շահերի գիտակցության պակասից կամ բոլորովին բացակայությունից, *հայ իրականության մեջ ազգային անվտանգության խնդիրը չի դրված ազգի իրական կարողությունների ու հնարավորությունների և Հայաստանի ու իր շրջապատի (այսօրվա ու վաղվա հնարավոր մրցակիցների ու դաշնակիցների) դրական կամ բացասական պայմանների փոխհարաբերությունների հաշվարկների վրա նախագծված ու լավապես պատրաստված ծրագրերի գործադրման վրա:*

Այդուհանդերձ, ամենատխուր և վտանգավոր իրողությունն այն է, որ ազգային անվտանգությունը, շրջապատի ու այլ պայմանների արդի և մոտ ապագայի հավանական փոփոխությունների առումով, որպես հարց իսկ չի դրված հայ ազգային իրականության մեջ, էլ չասած, որ չի դրված համապատասխան մասնագիտական կառույցների մեջ՝ որպես պահանջի ուսումնասիրություն և դրա լավագույն ապահովման համար միջոցներ առաջադրելու խնդիր:

Մի խոսքով, ազգային ընդհանուր անվտանգության և հայության կենսական չափանիշով այլ կենսական պահանջների 1980-1990-2000-2010 թվականների ընթացքում բավարարման համար հայության բոլոր հատվածների (պայմաններով տարբեր, բայց ճակատագրերով նույն) ներկայի և ապագայի կարողությունների ու հնարավորությունների (որ կարելի է ստեղծել) հիման վրա նրա գլխավոր խնդիրներն ու գործունեությունը, փաստորեն, չեն ուսումնասիրված և չեն հաշվարկված ու ծրագրված: Հետևապես, ազգի հոգևոր, մտավոր, նյութական, դիրքային, քաղաքական և այլ կարողություններն ու միջոցներն ազգային-պետական առումով մինչև հիմա կամ բոլորովին չեն ներառված և կամ մասնակի ու տարերայնորեն են ներառված նրա գոյատևման և զարգացման գործընթացներում: Այս բոլորի հետ հայությունը, որպես ազգային համակարգ, չի գիտակցում այդ բացը, չի գիտակցում դրա հնարավոր հետևանքներից բխելիք ճակատագրական վնասները և վերջապես չի գիտակցում դրա վտանգը՝ ուղղված իր իսկ գոյության դեմ:

Ինչո՞ւ է հայությունն այս դրության մեջ: Արդյո՞ք անխուսափելի էր հայության ներկա իրավիճակն ու ընթացքը: Եթե ազգն այսօր հասկանա, թե ի՞նչ, ե՞րբ, ինչպե՞ս և ո՞ւմ կողմից պետք է արվեր կամ չարվեր անցյալում, ապա դա մեծապես կօգնի ավելի հստակորեն պատկերացնելու ներկան՝ թեկուզ և փոխված պայմաններում: Ուստի, համառոտակի անդրադառնալով հայ ժողովրդի նորագույն պատմությանը, կարելի է ասել, որ հայության ներկա վիճակը կերտվեց ավելի քան հարյուր տարի առաջ՝ միայն իր կատարածների կամ չկատար-

րածների պատճառով: Այն հանգամանքը, որ շուրջ մի հարյուրամյակ առաջ հայության պայքարի ելած հատվածը չկարողացավ ստեղծել հարկ եղած միջոցները, գտնել ուղիները և որոշել ճիշտ պահը՝ կերտելու իր բնականոն ապագան, այն է՝ կայուն և կենսունակ պետականությունը, որի համար իր հերթին պետք էր կազմակերպել հայությունը գոնե մի նվազագույն անհրաժեշտ որակի, քանակի և կարողության մասնակցության, ապա դրա պատճառն էլ, ըստ երևույթին, այն էր, որ ազգը դրան համապատասխանորեն չնախապատրաստվեց մոտավորապես նախորդ հարյուրամյակի ընթացքում:

Ուրեմն՝ հայության շուրջ երկհարյուրամյա պատմաքաղաքական գոյության ընթացքում ազգային անկախ և կենսունակ պետականության կերտումը, և դրա հետ մեկտեղ ազգային անվտանգությունը չէր նախապատրաստված ու կազմակերպված, ինչպես որ հիմա էլ չի արվում: Այն, ինչին հայ ազգը քիչ թե շատ սկսեց պատրաստվել, դա ազգային գրական-մշակութային վերածնունդին էր վերաբերում, որը խիստ անհրաժեշտ լինելով հանդերձ ընդհանրապես ազգային ինքնագիտակցության զարգացման համար, դեռևս բավարար չէր պետականության կերտման համար, որ, ըստ երևույթին, պահանջում էր նաև ազգային պետականության քաղաքացիական պարտաճանաչություն, ինչպես նաև պետական գիտելիքների ու փորձառության առկայության ապահովումը ազգի գոնե որոշակի հատվածի մոտ: Այդուհանդերձ, մշակութային գործընթացն ազգի բոլոր հատվածների ու խավերի կյանքի մեջ դեռևս չներթափանցած, հայության մի մասը՝ առավելապես բալկանյան ժողովուրդների և Արևմտյան Եվրոպայի օրինակով, զգաց ազգային և մարդկային ազատության կենսական անհրաժեշտությունը և անհապաղորեն նետվեց իր այդ իրավունքին տիրանալու պայքարի մեջ՝ առանց հաշիվ տալու իրեն, որ ազգային և մարդկային ազատության իրավունքի նվաճումն ու գործնականացումը հայության համար նախ և առաջ պայմանավորված են ազգային պետականության առկայությամբ, որը պետք է ստեղծել, այն էլ միայն սեփական ուժերով ու միջոց-

ներով, այլ ոչ թե ուրիշների, ինչքան էլ որ ուրիշներն իրեն խղճան, հարգեն և կամ խոստանան օգնել: Եվ երկրորդ, որ ազգային պետականության կառուցումը պահանջում է անհրաժեշտ բաղկացուցիչ տարրեր, որոնց ստեղծումը պետք է նախապատրաստել, կազմակերպել և կիրառել որոշակի ժամանակամիջոցում և պայմաններում՝ պետական մոտեցմամբ և ազգային-պետական ներքին ու արտաքին քաղաքականության հեռագնա դոկտրինի հիման վրա:

Հզոր ու ճնշիչ պետությունների երկարատև տիրակալության տակ գտնված հայության ազգային պետականության կառուցման համար, մեր համոզմամբ, անհրաժեշտ էին և են հետևյալ բաղկացուցիչ տարրերը.

ա) Ազգային գաղափարախոսությամբ և հոգեբարոյական արժեքներով օժտված, գիտակից, մասնագիտորեն զարգացած և ինքն իր մեջ համապատասխանաբար կազմակերպված ղեկավար խավ, որն ի վիճակի լինի պետական մտածելակերպով, մոտեցմամբ, չափանիշներով և պատասխանատվության զգացումով ըմբռնել ամբողջ ազգի և նրա շրջապատի երկաքաղաքական իրավիճակն ու դրա զարգացման հակումները, միտումները ու հենվելով ամբողջ ազգի ներուճակության վրա՝ ամենաարդյունավետորեն օգտագործել այն:

բ) Համապատասխանորեն գիտակից, զարգացած և կազմակերպված ժողովուրդ, որն իր ազգային պատկանելությունն ըմբռնում է մարդկային և ազգային հոգեբարոյական ամենաբարձր արժեքների վրա հիմնված գաղափարախոսությամբ և քաղաքացիական պարտաճանաչությամբ:

Այն համոզմանն ենք, որ վերոհիշյալ տարրերի առկայությունը հնարավոր կդարձնի այժմ իսկ ստեղծել ազգային պետական կառույցի էությունը կազմող ժողովրդական զանգվածի և նրա կողմից ընտրված ղեկավարության միջև քաղաքացիական փոխհարաբերությունները, այսինքն՝ փաստացի (de facto) պետականություն, նախքան ազգային իրավական (de jure) պետականության ստեղծումը, որի համար պահանջվող պայմանները դեռևս գոյացած չեն: Պատմական կենսական

անհրաժեշտություն է, հետևապես և առաջնահերթ խնդիր, որ ազգը կերտի այդպիսի փաստացի, գործող պետականություն՝ ստեղծելով վերոհիշյալ երկու բաղկացուցիչ տարրերը: Որովհետև այժմյան պայմաններում նման ազգային պետականությանը գործելով միայն ազգը կարող է հույս ունենալ դիմանալու առաջացած և դեռևս առաջանալիք շատ ավելի բարդ, բազմատեսակ, բազմակողմանի և վտանգավոր մարտահրավերների, ճնշումների և մանավանդ խուսափելու կամ նվազագույն կորուստների զնով դուրս գալու և կամ նույնիսկ շեշտակիորեն զգալի օգուտներ քաղելու այն ճակատագրական դրությունից, որ առաջանալու է որոշ ժամանակ հետո Հայաստանում, նրա Կովկասյան շրջապատում և գուցե նաև շրջակա այլ վայրերում որոշակի ժամանակահատվածում՝ այնտեղ առաջանալիք ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական պարապոլյան ու այնուհետև հավանական քաոսի հետևանքով:

Ազգը կարող է հույս ունենալ մեկ անգամ ևս արյունաքամ չլինելու, չանդամահատվելու և աշխարհացրիվ չդառնալու՝ կորցնելով իր վերջին հայրենի հենակետը, այլ ընդհակառակը, դիմանալու տարբեր փոթորիկների և մանավանդ վերոհիշյալ մեծ փոթորկին՝ միայն փաստացի ազգային պետականություն ստեղծելով: Իսկ փաստացի պետականություն ստեղծելուց հետո, եթե ազգը և նրա ղեկավար խավը շարունակի պահպանել ու զարգացնել պետականության համար անհրաժեշտ՝ վերոհիշյալ երկու բաղկացուցիչ տարրերը և դրա հիման վրա ապահովի ազգային փաստացի պետականության գործունեությունը բարձր արդյունավետությամբ (միջազգային միջինից զգալիորեն բարձր մակարդակով), ապա այդ փաստացի պետականության վերածելն իրավական պետականության ժամանակի հարց կլինի միայն: Այդպիսով ազգն անպայման կբարձրացնի միջազգային իր քաղաքական, տնտեսական և մշակութային կարգավիճակը, և եկող սերունդների համար ֆիզիկական անվտանգության, նյութական բարգավաճման և հոգևոր զարգացման համար հիմքերը կամրապնդվեն, ու հորիզոնը կընդլայնվի: Սակայն հարկ է նշել, որ այս խնդիրն անհրաժեշտ է

կատարել որոշակի ժամանակահատվածում, և որ ժամանակի գործոնը վճռական նշանակություն կարող է ունենալ այս դեպքում:

Նման եզրահանգման մեզ բերում է ազգերի հոգեբարոյական և սոցիալ-քաղաքական պատմական ընթացքը՝ որոշակի տեսանկյունով դիտելիս: Մենք առնվազն մեր վերջին երկու հարյուր տարվա մաքառումների մեջ, ըստ երևույթին, չկարողացանք հարկ եղած ըմբռնումով անդրադառնալ այդ իրականությանը, որի հետևանքով շարունակ նահանջեցինք, կորուստներ տվեցինք և հասանք մեր ներկա իրավիճակին, երբ նոր ավելի փառավոր Մայիսի 28-ի կերտման հավանականությունն ավելի մեծ չէ, քան մի այլ Ապրիլի 24-ի՝ այս կամ այն չափով կրկնվելու հավանականությունը: Մենք չկարողացանք մեր ազգային գործերը վարել պետական մտածելակերպով, կազմակերպվածությամբ և գործելակերպով այն ժամանակ, երբ մեր պայքարն ու ընդհանրապես մեր մրցակցական կամ համագործակցական հարաբերություններն ուղղված էին և կատարվում էին հիմնականում պետությունների, պետական կառույցների հետ:

Այդ երևույթի պատճառներն, իհարկե, բազմաթիվ ու բազմազան են, և գլխավորապես պատմական հիմք ունեն: Եվ հարցն այստեղ ինքներս մեզ մեղադրելը կամ պաշտպանելը չէ, այլ իրականությունը տեսնելը, նշելը և վերլուծելը, որպեսզի սովորենք խուսափել անցյալի, թերևս նաև ներկայի սխալներից, ըմբռնենք մեր թույլ ու խոցելի կողմերը և վերացնենք դրանք: Մենք շատ հաճախ արել ենք, այն էլ մեծ զոհողություններով և ըստ ամենայնի, այժմ էլ անում ենք բաներ, որոնք կամ ընդհանրապես չպիտի անեինք, կամ տվյալ ժամանակաընթացքում պետք չէր անել և կամ էլ հենց այնպես, առանց հեռագնա հաշվարկների ու համապատասխան նախապատրաստության պետք չէր անել:

Ըստ երևույթին՝ մենք հաճախ չենք ըմբռնում այն գործնական պարզ ճշմարտությունը, որ թեև անել ցանկանալը առաջնային ու հիմնական նախապայման է, սակայն գործու-

նեության դրական արդյունքի գրավականը անել գիտենալն է: Մոռանում ենք, որ եթե առաջինը որևէ նպատակի, ծրագրի իրագործման ոգին է, ապա երկրորդը՝ գիտենալը, դրա մարմինն է: Ցավով ու զարմանքով ենք տեսնում, որ մեր լավագույն գործիչներից իսկ շատերը իրենց նույնիսկ հասարակ գործերին արհեստավարժ մոտեցում են ցուցաբերում, մինչդեռ երբ խնդիրը զալիս է ազգային հարցերին, այն էլ հայության՝ աշխարհում ամենաբարդ իրավիճակներից մեկին առնչվող, ոչ միայն դրանց արհեստավարժ կատարումը չեն ապահովում, այլև պարզ դատողությունից և առօրյա կյանքի փորձառությունից բխող ծրագրավորման և նախապատրաստման մասին իսկ հոգ չեն տանում: Կենսական պահանջ է, որ այս վիճակը հիմնովին փոխվի. ազգը պետք է ամենաբարձր արհեստավարժությամբ ճշտի ներքին ու արտաքին տարբեր բնագավառների իր քաղաքական ուղեգծերը և մշակի դրանց լավագույն կիրառման ծրագրերն ու կառույցները:

Հակիրճ նշենք, մեր կարծիքով, ազգային քաղաքականության հիմնական դրույթները.

1. Ազգային քաղաքականությունը պետք է բխի հայ ազգի կենսական պահանջներից, պայմաններից, որոնց մեջ գտնվում է ազգը, և իր ունեցած ու դեռևս ստեղծելիք կարողություններից ու հնարավորություններից:

2. Ելնելով ազգի ներկա պահանջներից ու նրա ապագա զարգացման հակումներից, ազգային քաղաքականության որևէ բնագավառ պետք է կառուցվի և կիրառվի այն հաշվով, որ հնարավոր նվազագույն ժամանակում և նվազագույն ներդրումների գնով տա առավելագույն արդյունք:

3. Ազգային քաղաքականությունը պետք է նախատեսի ամեն տեսակի «անակնկալներ», պատրաստ լինի ստեղծվող անբարենպաստ պայմաններից ազգը դուրս բերելու նվազագույն կորուստներով, իսկ դրական պայմաններից՝ առավելագույն օգուտներով:

Համազգային քաղաքականության հիմնական խնդիրները պետք է լինեն՝

- Պաշտպանել և ամրապնդել հայության այժմյան գոյությունը,

- Լավացնել նրա դիրքերը,

- Կազմակերպել և համադրել ազգի ցրված տարբեր հատվածների բազմակողմանի և կայուն համագործակցությունը,

- Մեծացնել ազգի հոգեկան, բարոյական, նյութական, կրթական, մշակութային ու այլ ներուժը և ամենաբարձր արդյունավետությամբ գործարկել դրանք.

- Ամեն տեսակետից լավագույնս պատրաստվել՝ դիմագրավելու հայության համար վճռական պատմական պահը, որն առաջանալու է Խորհրդային Միությունում, հետևապես և Անդրկովկասում ու նրա տարածաշրջանում տեղի ունենալիք անխուսափելի փոփոխությունների հետևանքով:

- Ստեղծել ազատ, ապահով և կենսունակ պետականություն, որի քաղաքացին լինելու ցանկությունն ունենան բոլոր, այդ թվում՝ զարգացած, կարող և բարձր կենսամակարդակ ունեցող հայերը, այլ ոչ թե միայն նրանք, ովքեր ուրիշ տեղ ապրելու ընտրություն չունեն:

Այս խնդիրների իրագործման համար որոշակիորեն հարկ կլինի օգտագործել՝

- Որպես լծակ՝ ազգային փաստացի պետական կառույցը՝ հատուկ դեր հատկացնելով սփյուռքահայությանը:

- Որպես հենարան՝ թե՛ Արևմուտքը և թե՛ Արևելքն իրենց ընծեռած հնարավորություններով:

- Որպես ազդեցության գլխավոր կետեր՝ Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Սփյուռքը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպիսին էլ լինի ազգային քաղաքականությունը, դրա իրագործման ղեկավար կառույցները և այլ հանգամանքները, ազգային ներքին ու արտաքին տարբեր բնագավառների քաղաքականության մշակումն ու ծրագրումը պետք է ընդմիշտ կառուցվել արհեստավարժ մակարդակով ու սկզբունքով, անընդհատ գործող հիմքի վրա և ապահովության համար անհրաժեշտ պայմաններում:

Այլևս չի կարելի հանդուրժել ազգի համար բախտորոշ խնդիրների բացահայտման և լուծման գոյություն ունեցող մոտեցումները:

ՎԱՐՂԱՆ ԳՐԻՉԵՆՑ
Ապրիլ 1979թ.,
Վերանայված՝ մայիս 1988թ.

ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՏԵՍԱԿԵՏ ԱՐԵՎՍՈՒՏՔԻՑ)

Հայաստանի Հանրապետությունը իր ներկա սահմաններում խորհրդային Միության մեջ տարածությամբ ամենափոքր հանրապետություններից մեկն է: Ինչպես աշխարհի բոլոր երկրները և հատկապես փոքր հողատարածություններ գրավողները, Հայաստանն անկախանալու դեպքում պետք է արտադրի միջազգային շուկայի համար վաճառքի ապրանքներ և ներմուծի հումքի իր պահանջքի մեծ մասը, ինչպես նաև՝ արտադրական և սպառողական ապրանքներ:

Ուստի հետաքրքրական կլինի քննության առնել Հայաստանի էներգիայի, վառելանյութի և ոչ վառելանյութային հումքի մատակարարման ներկա վիճակը՝ որոշելու համար Հայաստանի այժմյան կախվածությունը, ինչպես նաև քննության առնել, թե ինչ ապագա հնարավորություններ կարող են գոյություն ունենալ, եթե մատակարարման ներկա վիճակը փոխվի: Այս կարգի հարցերի կարևորությունը խիստ բարձրացել է, այն կապակցությամբ, որ Արևելյան Եվրոպայի երկրները, որոնք նախկինում իրենց հումքը ստանում էին խորհրդային Միության հետ ոչ տարադրամային, բարտերային փոխանակության միջոցով, այժմ սուր տնտեսական դժվարություններ են կրում՝ ստիպված լինելով այդ հումքը ձեռք բերել տարադրամով՝ ըստ միջազգային շուկայի գների: Նաև տնտեսական ապահովության հարցն է առաջ գալիս այն պատճառով, որ Հայաստանը ցամաքային շրջապատված երկիր է և իր ներմուծումն ու արտահանումը պետք է կատարի հարևան պետությունների միջոցով:

Ամեն մի արդյունաբերական երկրի համար հումքի ամենամեծ պահանջը էներգիան է: Հայաստանը ներկայումս չի արտադրում որևէ հիմնական վառելանյութի՝ ածխի, նավթի, բնա-

կան գազի զգալի քանակ: Այս բոլորը մատակարարվում են Խորհրդային Միության այլ շրջաններից: Նավթը և ածուխը Հայաստան է ուղարկվում երկաթգծով՝ Վրաստանի և Ադրբեյջանի միջով, գազատար խողովակները նույնպես անցնում են այդ հանրապետություններով:

1990թ. սեփական ատոմակայանի փակումով Հայաստանն իր էլեկտրական էներգիայի մատակարարմամբ ամբողջապես կախում ունի հիդրոէլեկտրակայաններից (ՅԷԿ) և ջերմաէլեկտրակայաններից (ՋԷԿ): Հայաստանի ՅԷԿ-երի արտադրած էլեկտրական էներգիան նավթով և գազով աշխատող ՋԷԿ-երի արտադրածի 20%-ից պակաս է: Քանի որ ատոմակայանի բացումն անիրագործելի է թվում նրա կառուցվածքի անվտանգության պրոբլեմների և շրջանի վտանգավոր սեյսմիկության պատճառով, ապա էներգիայի պակասը և ապագայի պահանջարկի աճը պետք է բավարարվեն՝ մեծացնելով ՋԷԿ-երի կարողությունը, ինչպես նաև ՅԷԿ-երի օգտագործումը: Ներկայիս գնահատումների համաձայն՝ վառելանյութը պետք է բերվի դրսից, քանի որ նավթի, ածխի և գազի նշանակալից ապրանքային արժեք ունեցող պաշարներ չկան Հայաստանում:

Էներգիայից բացի արդյունաբերական երկրի համար հումքի կարևոր պահանջ է պողպատը: Ներկայումս Հայաստանը չի արտադրում պողպատ կամ երկաթահանք, և նրա պողպատի մատակարարումը կատարվում է Խորհրդային Միության այլ մասերից: Բացի դրանից, Հայաստանում չկան պողպատի արտադրության համար անհրաժեշտ բաղադրիչների, այդ թվում մանգանի և քրոմի հանքեր: Հայաստանի մի քանի նշանակալից երկաթահանքերի պաշարներն ուսումնասիրության փուլում են գտնվում, բայց նրանց տեխնիկական և առևտրական իրագործելիությունը դեռ չի հաստատված: Քրոմի և մանգանի հանքեր նույնպես հայտնաբերված են, բայց կարիք ունեն օգտավետության հետագա գնահատման: Քանի որ երկաթի, քրոմի ու մանգանի հանքային պաշարները հետագա ուսումնասիրման կարիք ունեն, և հանքերը շահագործման հանձնելն ու մետալուրգիական գործարաններ կառուցելը պա-

հանջում են երկար ժամանակ, առնվազն առաջիկա տասնամյակում Հայաստանը կախում է ունենալու ներմուծվող պողպատից:

Չնայած հիմնական հումքերից շատերի բացակայությանը՝ Հայաստանը մի շարք կարևոր մետաղների խոշոր արտադրող է: Այդ մետաղները մասամբ կարող են օգտագործվել Հայաստանի արդյունաբերական պահանջները բավարարելու, իսկ էլ ավելի մեծ չափով կարող են ծառայել տարադրամ ձեռք բերելու համար, եթե արտահանվեն որպես հումք, կիսամշակված կամ մշակված արտադրանք: Այս մետաղներից կարևոր են պղինձը, մոլիբդենը և ոսկին: Հայաստանի պղնձամոլիբդենային հանքերը Խորհրդային Միության ամենամեծերից են, ընդ որում հանքանյութը պարունակում է նաև մի շարք այլ նյութեր, ինչպես սելենը, թելուրը, արծաթը և այլն:

Խորհրդային Միության հանրապետությունների թվում Հայաստանը համարվում է երկրորդը՝ մոլիբդենի և երրորդը՝ պղնձի արտադրությամբ: Չնայած տվյալները գաղտնի են պահվում մինչև այժմ, ըստ գնահատումների Հայաստանը տարեկան արտադրում է 10-ից 20 տոննա ոսկի, որը կարող է տարադրամի զգալի աղբյուր լինել:

Հայաստանն ունի նաև մետաղահանքեր, այդ թվում՝ կապար և ցինկ, ինչպես նաև տիտան, միկել, կոբալտ, վանադիում, վոլֆրամ, բիսմութ, արսենիում, անտիմոն, մագնեզիում, նեֆելինային սիենտ (ալյումինի հումք), որոնք կարող են ապրանքային պոտենցիալ արժեք ունենալ:

Այժմ օգտագործվող և ապագայում օգտագործման պոտենցիալ ունեցող մետաղահանքանյութերը հավանաբար հարկ կլինի ուղարկել Հայաստանից դուրս՝ մետալուրգիական մշակման համար: Միջավայրի աղտոտման լուրջ պրոբլեմների պատճառով Հայաստանը վերջերս փակեց Ալավերդու պղնձածուլարանը և ընդհատեց ալյումինի էլեկտրոլիզային արտադրությունը Քանաքեռի ալյումինի գործարանում: Այդ գործարանների փակումը Հայաստանը դարձնում է ավելի կախյալ

պղնձի և ալյումինի ներմուծումից՝ արդեն իսկ դադարեցնելով նրանց արտահանումը:

Ոչ մետաղական հանքերի պատկերը նույնն է: Հայաստանը չի արտադրում մի քանի շատ կարևոր ոչ մետաղական հանքանյութեր, ներառյալ պարարտանյութեր: Մյուս կողմից, Հայաստանը բավարար չափով արտադրում է մի շարք կարևոր ոչ մետաղական հումքեր, այդ թվում բենտոնիտ, հրակայուն նյութեր, պեռլիտ և մի քանի շինանյութեր, որոնք արտահանվում են այլ շրջաններ:

Այսպիսով, Հայաստանն ունի կարևոր վառելանյութի, մետաղական և ոչ մետաղական հումքերի պակաս, թեև որոշ արժեքավոր հանքանյութերի նշանակալից արտադրող է: Հայաստանը որոշ ժամանակ կարիք պիտի ունենա ներմուծելու իր հումքի պահանջների բավականին մեծ մասը և արտահանելու զգալի քանակությամբ հանքանյութեր, որով մասամբ կվճարի իր ներմուծումների արժեքը: Հետևաբար, Հայաստանը փոխկախյալ վիճակի մեջ կլինի աշխարհի այլ շրջաններից՝ հանքային նյութերի իր կարիքներով: Այնուհետև իր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը հանքանյութերի արտահանման և ներմուծման իր մատակարարման ճանապարհների առումով կախման մեջ կլինի հարևան հանրապետություններից՝ Վրաստանից և Ադրբեջանից, կամ հարևան երկրներից:

Ձեռնտու պայմաններով հումքի մատակարարման ամենահարմար շրջանները, հավանաբար, կմնան Խորհրդային Միության այն շրջանները, որտեղից ներկայումս Հայաստանը ստանում է այդ նյութերը՝ նկատի ունենալով նրանց մոտ լինելը և տրանսպորտային ցանցի առկայությունը: Ներկայումս Հայաստանի հումքի ամբողջ մատակարարումը կատարվում է Խորհրդային Միության մեջ մտնող արտադրողներից: Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրներն իրենք հումքի մեծ մասով կախված են ներմուծումից, ուստի չեն կարող Հայաստանի հումքի պոտենցիալ մատակարարներ լինել: Եթե Հայաստանը հումքով չմատակարարվի Խորհրդային Միությունից, ապա

ստիպված կլինի հումքի աղբյուրներ գտնել այլ տեղերից, ինչպես Աֆրիկայից, Ավստրալիայից, Կանադայից, Միջին Արևելքի և Ասիայի երկրներից, և այդ դեպքում հարկ կլինի վճարել միջազգային շուկայական գներով, այդ թվում՝ ավելի մեծ տրանսպորտային ծախսերի համար: Հայաստանը նաև ենթակա կլինի տնտեսական անվստահ վիճակի, որը կառաջանա աշխարհի տարբեր շրջաններից մատակարարման կախվածության պատճառով, քանի որ այդ շրջաններում քաղաքական փոփոխությունները կարող են վճռականորեն ազդել հումքի մատակարարման վրա:

Ամեն պարագայում, Հայաստանը կարիք կունենա լավ հարաբերություններ ստեղծել հարևան պետությունների հետ: Այդպիսի հարաբերությունների անհրաժեշտությունը ակնհայտ դարձավ Հայաստանի մատակարարումներին Ադրբեջանի գործադրած շրջափակումներով:

Այսպիսով, Խորհրդային Միության սահմաններում մնա թե անկախանա, Հայաստանը կարիք կունենա պահպանելու քաղաքական լավ հարաբերություններ և տնտեսական կապեր Խորհրդային Միության այլ հանրապետությունների հետ՝ ապահովելու համար հումքի իր մատակարարումը:



ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Թևակոխել ենք մի դարաշրջան, երբ որևէ ազգի գոյապահպանումը պայմանավորված է իր պետական գերիշխանությամբ: Այս պահանջը, ըստ երևույթին, անպայման պարտադիր չէր մինչև 19-րդ դարի վերջը, իսկ որոշ տարածաշրջաններում նույնիսկ մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը: Սակայն այժմ պետականությունն այն անհրաժեշտ կառույցն է և հավանաբար ապագայում ևս պիտի լինի, որի մեջ միայն ազգը կարող է իր գոյությունը պահպանել և բարգավաճել: Իսկ թե ինչ աստիճանի կարող է այդ անել, կախված է տվյալ պետականության կենսունակության մակարդակից:

Միաժամանակ, ըստ բազմաթիվ օրինակների, ազգային գերիշխանության միացումը որևէ այլ պետական համակարգի չի խախտում այդ ազգի գերիշխանությունը, հետևապես և բարգավաճելու կարողությունը, այլ ընդհակառակը, նույնիսկ նպաստում է դրան, եթե միացումը կատարված է ազգի անկախ կամքով, նրա ազգային գերագույն շահերից ելնելով, և պահպանված ու երաշխավորված են նրա ազատ ինքնորոշման իրավունքներն ու հնարավորությունները:

Բոլոր ազգերն էլ, այս կամ այն չափով, ուզում և ձգտում են գերիշխան պետականության, սակայն ոչ բոլորն են կարողանում ստեղծել և պահպանել այն: Օրինակ՝ Պաղեստինի արաբները կամ քրդերը:

Որևէ նվաճում կատարելու համար, այս դեպքում՝ ազգային պետական գերիշխանության ստեղծման համար, բնականաբար, անհրաժեշտ է լինում որոշակի ժամանակահատվածում լրացնել որոշակի պայմաններ և կատարել որոշակի պահանջներ՝ համաձայն այն յուրահատուկ իրավիճակի, որում

գտնվում է տվյալ ազգը: Հայության պարագային, մեր հանոգմամբ, դա նշանակում է.

- Հասնել պետական ազգ դառնալու համար անհրաժեշտ հոգեբարոյական մակարդակին, մտածելակերպին և վերաբերմունքին:

- Կատարել ազգապետական քաղաքացիության պահանջները ինքնագիտակցված պարտաճանաչությամբ՝ հոժարաբար, առանց սպասելու վարչական մեքենայի դրական կամ բացասական խթանումների:

- Ձեռք բերել պետական և մասնավորապես իր ազգապետության համար կառավարման գիտելիքներ և փորձառություն՝ դիրքորոշվելու և գործելու համար ներքին ու արտաքին հարաբերություններում՝ ուժերի առկա և պոտենցիալ հարաբերակցության ու ժամանակի գործոնի համաձայն:

- Ի վիճակի լինել ստեղծելու ազգապետական տնտեսության ֆինանսատեխնիկական նախադրյալներն ու հիմքերը:

Տվյալ ազգի ո՞ր տոկոսի մասնակցությամբ և ի՞նչ աստիճանի հարկ է լինում կատարել այս հիմնական պահանջները, կախված է այդ ազգի ներքին վիճակից, նրա երկրաքաղաքական դրությունից, հարևան ազգերի, երկրների նպատակներից, ձգտումներից ու կարողությունից, ինչպես նաև միջազգային ընդհանուր դրությունից և դրա զարգացման հակումներից:

Հայ իրականությունը դիտելով այս տեսակետից՝ պարզորոշ է դառնում, որ հայկական գերիշխան կենսունակ ազգապետության ստեղծման համար անհրաժեշտ պայմանները խիստ են, և պահանջները՝ շատ մեծ:

Ըստ երևույթին, կենսականորեն կարևոր է, որ հայությունը և հատկապես ազգային մտավորականությունն ու ղեկավարությունը հստակորեն տեսնեն այդ և համապատասխան եզրակացություններ անեն: Սակայն ո՛չ թե վիատվելու, ո՛չ թե ազգապետության ստեղծման նպատակներից, ձգտումներից հրաժարվելու համար, այլ ընդհակառակը, ավելի զգոն, մեծ պատասխանատվությամբ ու արհեստավարժորեն մոտենալու այդ

կենսական խնդրին և ամենակարևորը, դրա բավարարման համար ավելի վճռական և լայն զորահավաքի միջոցով կազմակերպելու, զարգացնելու և պատշաճորեն նախապատրաստելու ամբողջ ազգի հոգևոր, բարոյական ուժերը և նրա մտավոր, նյութական և դիրքային կարողություններն ու հնարավորությունները:

Հիրավի, այլ ազգերի համեմատությամբ հայությունը թե՛ քանակական և թե՛ որակական տեսակետից շատ ավելին պետք է անի՝ նվաճելու համար իր ազգային պետականությունը: Ոչ թե ձևական գերիշխանությամբ պետականություն, միայն թղթի վրա կամ ժամանակավոր ու անկայուն պայմաններում՝ շարունակաբար վտանգված և կաշկանդված այլոց զանազան պահանջներից, թելադրանքներից ու ճնշումներից, այլ իրական կայուն և կենսունակ գերիշխանությամբ պետականություն, որն ընդունակ լինի ապահովելու իր ժողովրդի ու սահմանների անվտանգությունը, երկրի բարեկեցությունն ու բարգավաճումը: Իսկ այդպիսի գերիշխանության հասնելու համար անհրաժեշտ են բազմաթիվ և արտակարգ բարձրորակ համազգային ջանքեր: Եվ սա քաղաքական ճաշակի կամ նախասիրության հարց չէ, այլ իրականությունից բխող բնական պահանջ, որը կամ կկատարես, այն էլ ամենայն ճշտությամբ (այստեղ խնամիություն կամ աճպարարություն չի անցնի) և արժանի կլինես հասնելու նպատակիդ, և կամ չես կատարի ու կմնաս լավագույն դեպքում նույն վիճակում, եթե ոչ ավելի, շատ ավելի վատ դրության մեջ: Մանավանդ, եթե անպատրաստ և կամ պատմական ոչ ճիշտ պահին փորձ կատարվի նվաճել պետական գերիշխանությունը:

Երբ խոսքը վերաբերում է հայ ազգային պետականության վերաստեղծմանը, բնական և օրինական է, բայց բավական չէ ոգևորվելը, առավել ևս հայտարարություններ անելը. շատ ավելի կարևոր են սառը հաշվարկներ կատարելը և նախապատրաստվելը՝ նախօրոք, շատ ավելի վաղ, քան հայտարարությունները, որպեսզի ոգևորությունը հիասթափության չփոխվի ու ամենակարևորը՝ այսօրն ու վաղը երեկվանից ավելի վատ

չլինեն: Սա հիմնական խնդիր է, որի ապահովումը, առաջին հերթին, ազգային մտավորականության և ղեկավարության պարտականությունն ու գործն է:

Սարսափելի է մտածել, որ մեր ժողովուրդը որևէ ժամանակ կարող է երանի տալ անցյալին՝ օտարի բռնատիրության լծի ժամանակաշրջանին: Եվ ի՞նչ պիտի ասենք այդ դեպքում: Պիտի ասենք, թե, ախր, մենք չզիտեինք, որ այսպես պիտի լիներ. որ ախր մենք հայրենասեր ենք, մեր ազգի համար տառապել ենք, մենք սրտանց լավն էինք ուզում, բայց բախտ չունեցանք... Այդպես՝ պիտի ասենք: Կամ էլ հին հանգե՞րզը, թե մեզ խաբեցին. նրանք այսպես էին ասել, մենք կարծում էինք այսպես կլինի, սակայն նրանք այդպես արեցին: Եվ դարձյալ պիտի սկսենք ասել, թե մենք լավն ենք՝ աշխարհը վատը, դաժան ու խաբեբա. մենք ճիշտ ենք՝ աշխարհը սխալ, շահամուլ ու անարդար: Երանի թե մենք այդպես լինեինք: Բայց հարցը այս դեպքում դա չէ, այլ այն է, թե ի՞նչ կլինի մեր ժողովրդի հետ: Ի՞նչ դրության մեջ կընկնի նա, ի՞նչ կմնա մեր երկրից և ո՞ւմ կմնա այն, եթե նորից սխալվենք՝ անկախ նրանից՝ դա մեր միամտության, տգիտության կամ այլ պատճառով է, թե ուրիշների խարդախության, ագահության և կամ այլ պատճառով:

Մի պարագա ևս: Հայ ազգային պետականության՝ որպես կենսունակ երկրի վերակերտումը, պահպանումը և զարգացումը՝ ամեն տեսակի պակասների, արգելքների ու դիմադրության առկայության պայմաններում, պարզորոշ է, որ քաղաքական, դիվանագիտական, հասարակական, հոգեբանական, տնտեսական, ֆինանսական, պաշտպանական և այլ բնագավառների՝ աշխարհի ամենաբարդ խնդիրներից մեկն է: Չի կարելի լուծել այդպիսի խնդիրը կարգախոսներով և դրանց առաջացրած ամբոխային խանդավառությամբ: Այդպիսի մոտեցումով այն ժամանակ, երբ առկա են աչալուրջ, փորձված, ավելի զորեղ և ամեն միջոցի, ամեն ձևով դիմելու պատրաստ մրցակիցներ, հակառակորդներ, այդ խնդիրն ավելի կբարդանա և գուցե նաև ընդհանրապես անլուծելի դառնա: Այս հարցում, կարծում ենք, որ տարրական պատասխանատվության զգա-

ցումը թելադրում է չսկսել մի բան, երբ վստահ չես, թե ինչով դա կվերջանա: Եվ երկրորդ՝ սկսել այն ժամանակ, երբ արված են անհրաժեշտ նախապատրաստությունները:

Չենք ուզում ասել, որ ազգապետության կառուցումը ռիսկ չի պարունակում: Մեր ասածն այն է, որ ռիսկը չպետք է վերաբերի հայության ֆիզիկական անվտանգությանն ու Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը և տնտեսական կենսունակությանը:

Բացի այդ, եթե ազգի կառավարումը բնականոն է, այսինքն՝ իրապես ժողովրդավար է և չի ենթարկվում անհատների և կամ կազմակերպությունների բացահայտ կամ թաքուն փառասիրական շահերին, անձնական հաշիվներին և այլն, նվազագույն ռիսկի անգամ չի դիմվում, եթե վտանգը վերաբերում է ազգի ուղղակի գոյությանն ազդող կենսական շահերին: Տվյալ դեպքում՝ ազգային պետականության կառուցման վերջին և հիմնական նախադրյալների կորստին, ինչպիսիք կարող են լինել ազգային հողատարածքների նորանոր կորուստները կամ այդ տարածքներից հայ ազգաբնակչության, տնտեսական անելանելի վիճակի և կամ ֆիզիկական անապահովության պատճառով դատարկումը կամ զգալիորեն նվազումը:

Այդպիսի ռիսկի ոչ ոք իրավունք չունի դիմելու, նույնիսկ, եթե փորձի այդ ներկայացնել որպես «ժողովրդի որոշում»:

Հաճախ լսվում է, որ «եթե հայ ժողովուրդը արժանի չէ անկախության, ուրեմն թող մեռնի»: Տես, մեր ազգային գաղափարախոսությանը խորթ և բացարձակապես անընդունելի են նման մտքերն ու արտահայտությունները: Հայ ժողովուրդը բազում դարերի ընթացքում մեծամասամբ ապրել է ֆիզիկապես ազատագուրկ, սակայն հոգեպես ու բարոյապես՝ ազատ: Նա հավատքով ու հույսով է նայել դեպի ապագան և դրա համար էլ չի ընկճվել, ապրել է, աշխատել, կերտել և նույնիսկ ստեղծագործել՝ հանուն կյանքի, այլ ոչ թե մահվան: Մահ կամ ազատություն տարբերակը կարող է ընդունելի լինել անհատական և կամ խմբային առումով, այն էլ որոշակի և շատ հազվադեպ պարագաներում, սակայն ոչ մի դեպքում՝ ժո-

ղովրդի առումով: Մեր ժողովրդի համար մենք հավատում ենք կյանք և հաղթանակ տարբերակին: Կյանք ու հաղթանակ՝ գիտակցված նվիրումի հարատև ազնիվ աշխատանքով ու պայքարով: Նվիրումի, որը հիմնված է իրական հավատքի, հույսի և սիրո վրա՝ հանդեպ իր Արարչի և Նրա ստեղծած և մարդկության կարևոր ու հարագատ մի մասնիկը հանդիսացող Հայ Ազգի ու Հայրենիքի:

Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե ինչպես և ում կողմից է ներկայացվում որևէ ծրագիր կամ նույնիսկ կարգախոս, որը պարունակում է ազգի ուղղակի գոյությանը սպառնացող թեկուզ մասնակի ռիսկ, դրա համար, վերջին հաշվով, պատասխանատու է տվյալ ժամանակվա ղեկավարությունը՝ մասնավորապես և ազգային մտավորականությունը՝ ընդհանրապես: Նրանք իրավունք չունեն թաքնվելու ժողովրդի թիկունքում և իրենց ուզածն անելով կամ չուզածի համար լռելով և գուցե նաև լռեցնել փորձելով՝ ժողովրդի վրա գցեն նման ռիսկի պատասխանատվությունը: «Ժողովրդի ձայնը» այդպես լսելով, ժողովրդին «հարգելը», ըստ երևույթին, ոչ թե ժողովրդավարություն է նշանակում, այլ դասալքություն: Քանզի որևէ ազգի երկու խավերը՝ մտավորականությունը և հատկապես ղեկավարությունը, իրենք են պարտավոր ժողովրդին ներկայացնել իրենց գաղափարներն ու ծրագրերը, եթե այդպիսիներն ունեն, և ժողովրդին էլ մնում է իր մեծամասնությամբ ժողովրդավարորեն դրանք ընդունել կամ մերժել: Եվ նույնիսկ ժողովրդի կողմից որևէ ծրագրի ընդունումից հետո էլ, եթե այն չհաջողվի, դարձյալ պատասխանատվությունը մնում է ղեկավարության վրա, քանի որ ինքն է ներկայացրել գաղափարը, ծրագիրը: Վերջապես հենց ինքն է խնդրել, հորդորել ժողովրդին (եթե ժողովրդավարության մասին ենք խոսում), որ հավատան ոչ միայն իր բարի ցանկություններին, այլև կարողություններին ու ծրագրերին և ընտրեն իրեն: Ինչո՞ւ: Որպեսզի լավագույնս կազմակերպի և առաջնորդի ազգը՝ երկիրն ավելի անվտանգ, ապահով և բարգավաճ դարձնելու և անկատար իղձերը կատարելու համար, այլ ոչ թե հակառակը:

* *
*

Պատմական ներկա հանգրվանում հայ ազգային պետական իրական և կայուն գերիշխանության հաստատման նպատակով որևէ ղեկավարության կողմից իրագործվող որևէ ծրագիր հաջողելու համար, մեր համոզմամբ, այդ ծրագիրը պետք է առնվազն օժտված լինի հետևյալ հատկություններով.

1. Ընդգրկի ազգի բոլոր խավերն ու հատվածները, նրա կիրառումը լինի համազգային և առաջին հերթին ապահովի Հայաստանի ու ամբողջ հայության հոգևոր, բարոյական, մտավոր, նյութական, դիրքային և այլ կարողությունների, հնարավորությունների և ներուժի զորահավաքը, կազմակերպումը և ամենաարդյունավետ գործարկումը՝ փոփոխվող տարբեր պայմանների ու երկար ժամանակաընթացքի հաշվով:

2. Իր բնույթով լինի պաշտպանական, առաջադիմական: Այսինքն՝ ազգային ամբողջ կարողության ամենաարդյունավետ կիրառմամբ՝ ուղղված լինի միայն ամենաարագ կերպով՝

ա) Կայունացնելու Հայաստանի ու հայության գոյությունը, դիրքերը և ապահովելու հայության ու Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը:

բ) Ապահովելու հատկապես Հայաստանի հայության հոգեբարոյական, մտավոր, կրթական-մշակութային, հասարակական-քաղաքական, գիտատեխնոլոգիական, ֆինանսատնտեսական և կենցաղային ու սոցիալական ապահովության զարգացումը՝ միջազգային միջին մակարդակից զգալիորեն ավելի բարձր մակարդակով:

3. Ի հայտ բերի, զարգացնի և հենվի համայն հայության բոլոր որակական հատկությունների և կարողությունների վրա հետևյալ սկզբունքով՝

ա) Ներկայումս և տեսանելի ապագայում հայության գոյատևման ու զարգացման համար անհրաժեշտ ուժը, հզորու-

թյունը և ճիշտ ու ժամանակին կողմնորոշումն ու ընթացքը հիմնականում հայության որակից է կախված:

բ) Ուժերի և կարողությունների հարաբերակցության ներկա և տեսանելի ապագայի պայմաններում, ազգերի և հատկապես հարևան ազգերի միջև բնական հարատև մրցակցությունում ու պայքարում հայությունը հաջողության հասնելու համար քանակական գործոնից համարյա ոչ մի հույս չի կարող ունենալ: Որպես ազգ արևի տակ իր ինքնիշխան տեղն ունենալու իրավունքը նվաճելու համար հայության միակ հույսը կարող է բխել որակական գործոնից: Որակ՝ ներքնաշխարհի, զգացումների, ընմբռնումների, գիտակցության, կազմակերպման, կառավարման, վերաբերմունքի և գործունեության մեջ: Եվ վերջապես որակ՝ մարդկային ու ազգային ամենաբարձր հատկությունների ու կարողությունների դրսևորման մեջ անձնական, ընտանեկան ու ազգային-հասարակական բոլոր բնագավառներում:

4. Նկատի առնի ժամանակի և նախապատրաստության գործոնը, այն է՝ ազգային գերիշխան պետականության յուրաքանչյուր հանգրվանի հաստատման պատմական պահի ճիշտ ընտրությունը և դրան համապատասխանորեն նախապատրաստված լինելը: Սա պետք է կատարվի այն հասկացողությամբ, որ հայությունը ինքը պետք է ընտրի իրավականորեն անկախ իր պետականության հաստատման պահը, որը կարող է համարվել այն ժամանակ, երբ ինքը գտնվում է ամենաբարենպաստ պայմաններում, այսինքն՝ իր ուժերի ու կարողությունների առավելագույն, իսկ շրջապատի դիմադրության նվազագույն աստիճանում: Այլ ոչ թե քաղաքական այդ խոշորագույն և ամենապատասխանատու ակտը կատարելու փորձն իրեն թելադրվի այլոց քաղաքական հաշիվներից բխող իրերի դրությունից և ստիպվի անկախություն հռչակել անպատրաստ, անկայուն, վտանգավոր պայմաններում՝ որպես միակ ելքը, որպես չարյաց փոքրագույն տարբերակը: Օրինակ՝ ինչպես 1918թ.:

Ազգային պետական իրական և կայուն գերիշխանության հաստատման ծրագրի ստեղծման և հատկապես կենսագործ-

ման համար, մեր խոր համոզմամբ, կա մի նախապայման ևս: Ըստ երևույթին, առաջնային նշանակությամբ: Դա հայության պետականացման համար անհրաժեշտ վերոհիշյալ որակական հատկանիշների ու կարողությունների ամենաբարձր մակարդակի խտացումն իր մեջ կրող հայ մտավորական որոշակի խավի առկայությունն է: Այս ըմբռնումով կենսականորեն անհրաժեշտ ենք համարում, որ նախ և առաջ ու անհապաղ ազգի հոգևորականությունն ու մտավորականությունը ձերբազատվեն բոլոր տեսակի հոգեկան, բարոյական և գաղափարական ախտահարումներից, որոնց կամա թե ակամա ենթարկվեցին երկարատև իրավազրկության ու հավատազրկության պայմաններում, և վերականգնեն կամ նորոգ ձեռք բերեն իրական քրիստոնյայի հավատքը, նկարագիրն ու ազնվությունը:

Հավատացած ենք, որ այդպիսի հոգևորականությունն ու մտավորականությունը և նրանցից ծնունդ առած ղեկավարությունը ի վիճակի կլինեն իրենց կյանքով ու գործով օրինակ ծառայելու ժողովրդին ու ամենակարևորը նոր սերնդին՝ արմատախիլ անելու համար ազգի լայն զանգվածների մեջ արմատացած ախտերը և առաջին հերթին՝ սուտը, կեղծիքը, կաշառքը, անբարոյականությունը, անգթությունը, անտարբերությունը, անհանդուրժողականությունը, ամբարտավանությունը:

Հավատացած ենք նաև, որ ազգային այդպիսի հոգևորականությունից ու մտավորականությունից առաջացած ղեկավար խավը ի վիճակի կլինի կազմակերպել ազգը հաղթանակորեն դիմակայելու բարդ ու վտանգավոր, բազմաթիվ, բազմատեսակ և բազմակողմանի մարտահրավերները և առաջնորդել նրան ամենաբարենպաստ պահին հաստատելու իր ԱԶՎԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՄԱԹԵՈՍ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Մարտ, 1991թ.

**ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵԲԱՐՈՅՎԱԿԱՆ ՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑԵՐԻ
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ժողովուրդների, ինչպես նաև հասարակական որևէ համակարգի համար հույժ կարևոր է ինքնաճանաչումն ու ինքնագնահատումը՝ որոշելու, հասկանալու համար իր հատկությունները, կարողությունները, հնարավորությունները, իր ուժերն ու տկարությունները և մանավանդ իր խոցելի կողմերը: Այդ կարևորությունը հատկապես ավելի է շեշտվում նախքան որևէ հատուկ նպատակի ծրագրելն ու իրագործման անցնելը կամ որևէ նշանակալից իրադարձությունից հետո: Մանավանդ, երբ դրա պատճառով դրությունը բարդացել է, և ակնհայտորեն անհրաժեշտ է դառնում վերահաշվարկելը, վերափոխվելը, վերակազմակերպվելն ու նոր ընթացումներով, հայացքներով, գիտակցությամբ, ծրագրերով, միջոցներով և ուղիներով գործելը:

Ըստ երևույթին, մինչև հիմա հայությունն իր հին ու նոր ձախորդությունների, պարտությունների և կորուստների պատճառները համարյա միշտ տեսել է իրենից դուրս՝ արտաքին երևույթների մեջ և հատկապես ուրիշների վերաբերմունքի, արարքների և գործունեության մեջ: Հայությունը հազվադեպ միայն, այն էլ շատ քիչ է փնտրել իր բազմաթիվ պարտությունների և կորուստների հիմնական պատճառները, որոնք կարող էին և գուցե այժմ էլ կարող են բխել իրենից:

Օրինակ՝ հայության կազմակերպվելու, նախատեսելու և նախապատրաստվելու հմտությունից. ներազգային կյանքում կառավարելու և կառավարվելու համար պետական չափանիշների կիրառման և պետական շահի պաշտպանման ունակությունից. արտաքին քաղաքականությունն ու հարաբերությունները ոչ միայն իր կարիքների և պահանջների արդարացիու-

թյան, այլև իր ու իր հակառակորդների տվյալ ժամանակվա և պոտենցիալ ուժերի հարաբերակցության վրա հիմնելու իրատեսությունից: Սակայն դրանից շատ ավելի հազվադեպ և շատ ավելի քիչ չափով է հայությունը փնտրել իր ձախորդությունների, կորուստների և նահանջների պատճառներն իր ազգային հոգեբարոյական վիճակի, նկարագրի, ընթացումների և իր անհատական ու հավաքական վերաբերմունքի մեջ:

Այս առումով հույժ կարևոր ենք համարում, որ հայությունը, և մասնավորապես մտավորականությունը թեկուզ և շատ ուշացումով, անդրադառնա և համապատասխան կազմակերպվածությամբ, գիտական օբյեկտիվությամբ ու պետական մոտեցումով ուսումնասիրի, վերլուծի և բացահայտի, թե վերոհիշյալ իմաստով իր ազգային հմտությունը, ունակությունը, իրատեսությունը, հոգեբարոյական վիճակը, նկարագիրը, ընթացումներն ու վերաբերմունքը ինչքանով են օգնել, այժմ օգնում են և մանավանդ բավարար են լուծելու ազգի առջև ծառայած կենսական խնդիրները: Եվ առաջին հերթին բավարարեն ապահովելու հայության ֆիզիկական և ներկա Հայաստանի տարածքային անվտանգությունը, տնտեսական զարգացումը և իրեն անհրաժեշտ հոգևոր, մտավոր ու ապրուստի բարձր մակարդակը: Իսկ եթե բավարար չեն, էլ չասած, եթե խանգարում, վնասում են, ապա ինչպե՞ս կարելի է փոխել, ուղղել և կամ լրացնել դրանք:

Խմբագրություն

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 1

Հայությունը, դարերի ընթացքում զրկված լինելով ազգային պետականությունից, գտնվել է ազատագուրկ վիճակում և ենթարկվել երկարատև հալածանքների ու ճնշումների, ընդհուպ իր մի հատվածի եղեռնագործման ու աշխարհասփյուռ կյանքի՝ տարբեր երկրների կրոնների, մշակույթների, լեզուների և քաղաքական, տնտեսական ու ընկերային պայմաններում: Ի հավելումն դրան, վերջին շուրջ 70 տարիների քաղաքական, տնտեսական, ընկերային և այլ պայմանները, որոնք խորհրդային վարչակարգը պարտադրեց հայությանը՝ Հայաստանում և խորհրդային Սփյուռքում, բացի բազմաթիվ մարդկային, նյութական, քաղաքական ու այլ հսկայական կորուստների, ստեղծեցին նաև հայության հատվածների միջև կյանքի համարյա բոլոր բնագավառներում խորթության հասցնող անջրպետներ և զրկեցին նրանց կենսական նշանակությամբ հաղորդակցությունից, փոխհասկացողությունից և գործակցությունից:

Ակնհայտ է, որ այս երկարատև իրավիճակը բացասականորեն է ազդել հայության հոգեբանության, նկարագրի, կերպարի և մանավանդ իր քաղաքական, տնտեսական, ընկերային, պաշտպանական ու ազգային այլ կենսական կարիքների բավարարմանը քաղաքացիական ինքնագիտակցությամբ, պարտաճանաչությամբ և կարգապահությամբ՝ պետականորեն մոտենալու հատկության վրա: Մեր համոզմամբ, այս հանգամանքը զրկում է հայությանը շատ բաներից և հատկապես ազգային պետական չափանիշով հավաքական կազմակերպված ուժ դառնալու և որպես այդպիսին իր շահերն ու իր գոյությունը պաշտպանելու և զարգացնելու կարողությունից ու հնարավոր-

րությունից: Մի հանգամանք, որը խորացնում է ազգի արդեն իսկ հույժ վտանգավոր դրությունը:

Այս իրավիճակից դուրս գալու և իր դրությունը փոխելու համար կենսական պահանջ է, որ ազգը վերաճանաչի, վերագնահատի իրեն և փոխի իր մեջ այն, ինչը նրան պարտադրվել է իր տիրակալների, իր կեղեքիչների կողմից՝ կենսազրկելու համար իրեն ազատ ու պետականորեն ապրելու թե՛ ցանկությունից և թե՛ կարողությունից, այսինքն՝ աճելու, հզորանալու և անվտանգ, ապահով ու հոգևոր և տնտեսական բարգավաճ կյանքով ապրելու հնարավորությունից: Այս առումով, հայության համար այսօր ճակատագրական նշանակություն ունեցող առաջնահերթ խնդիրն է՝ իր տոհմիկ, հարազատ կերպարի վերականգնելը, ճանաչելը իր ազգային հավատամքը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ մարդկային բարձրագույն արժեքներ են, և դրանք գործադրելը ամենօրյա կյանքում՝ անձնական, ընտանեկան, ընկերային և ազգային հարաբերություններում:

Համոզված ենք, որ նշված խնդիրը, բացի շատ այլ բաներից, ունի նաև ազգային քաղաքական, տնտեսական և հատկապես պաշտպանական այն աստիճանի կարևորություն, որ եթե չկատարվի, այն էլ որոշակի կարճ ժամանակամիջոցում, ապա հայությանը, հավանաբար, ոչ մի բան չկարողանա օգնել: Մենք դատապարտված կլինենք:

Այս ըմբռնումով կազմված է ՀԱՅՔ հաստատության թիվ 1 ծրագիրը՝ բաղկացած երկու գլխավոր նյութերից՝

- ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ուսումնասիրում, վերլուծում և բնորոշում է հայության հետևյալ հարցերը, երևույթները, հասկացություններն ու հատկությունները.

ա. Հայ ազգային խառնվածք, նկարագիր և հոգեբանություն:

բ. Դարավոր իրավագուրկ վիճակի ազդեցությունը հայի հոգեբանության, բարոյական կերպարի, մտածելակերպի վրա:

գ. Պետական կյանքով ապրելու դարավոր զրկվածության ազդեցությունն ազգային կյանքի տարբեր բնագավառների մեր ընկալման և արտահայտման վրա:

դ. Ազգային հավատքի, ոգու և նկարագրի, եթե ազդված են, վերականգնման և վերահաստատման քաղաքական-ընկերային նշանակությունն արդի պայմաններում:

ե. Եթե ազդված է, ինչպես կարելի է հայությանը ձերբազատել ստրկահոգության, ստրկամտության, ազգային պետական կյանքի նկատմամբ անգիտակից, անհաղորդ և խորթացած վիճակից:

զ. Հայի տոհմիկ ազգային կերպարի սահմանումը և դրա արժևորումը համամարդկային չափանիշով:

Այդ կերպով ապրելու անհատական, ընտանեկան, ազգային և մարդկային նշանակությունը: Ի՞նչ կստանան դրանից ազգն ու մարդկությունը, հայ ընտանիքն ու անհատը:

Ակնկալվում է, որ հայ ազգային հոգեբարոյագիտության զարգացումը մեծապես կօգնի վերոնշյալ խնդրի կատարմանը՝ առաջացնելով նաև այնպիսի ազգային քաղաքացիական ինքնագիտակցություն և պարտաճանաչություն, որոնք կենսականորեն անհրաժեշտ են ձերբազատվելու հայության տարբեր հատվածներում, տարբեր չափերով ու ձևերով տեղ գտած ընկերային ախտերից:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ուսումնասիրում, վերլուծում և բացատրում է հետևյալ հարցերը.

ա. Գոյություն ունի՞ հայ ազգային գաղափարախոսություն: Ո՞րն է այն, ինչո՞ւնն է այն կայանում և որքանո՞վ է ճանաչված ու կիրառվում հայության կողմից:

բ. Որո՞նք են հայկականության արժեքներն ու արժանիքները համամարդկային ընտանիքում:

գ. Ինչո՞ւ և ինչպե՞ս գոյություն ունի հայությունը:

- Ինչո՞ւ պետք է այն գոյություն ունենա:

- Ո՞րն է այդ գոյության իմաստը՝ անձնական, ազգային և մարդկային տեսակետներից:

դ. Ինչո՞ւ ենք հայ և ինչո՞ւ պետք է հայ լինենք ու նոր սերնդին հայ պահենք: Ի՞նչն է մեզ պարտավորեցնում դրանում: Ո՞րն է դրա օգուտը, եթե այն կա:

ե. Ինչպե՞ս կարելի է հային հայ լինել այսօր՝ գաղափարով, քաղաքացիական կարգավիճակով և գործով՝ անկախ նրանից, թե որտեղ է ապրում և ինչ վիճակ ունի:

Այս և նման հարցերի ուսումնասիրման և վերլուծման արդյունքների հիման վրա բացահայտել հայ ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ տարրերը, բնորոշել դրանց ունեցած պատմական դերը և վերասահմանել դեպի 21-րդ դար առաջնորդելու կարող ազգային գաղափարախոսությունը՝ որպես ազգային իմունիտետ, այսինքն՝ վարակամերժ կարողություն, համահայկական ազգապետության կառույցի շաղախ և ազգային կենսագործունեների հիմք:

Տեղեկագիրն իր նախորդ համարներում տպագրել էր նաև տարիներ առաջ գրված ակնարկներ այն նկատառումով, որ նրանք այսօր էլ կարող են շատերի համար հետաքրքիր ու շահեկան լինել: Նույն նկատառումով լույս է ընծայվում նաև այս գրությունը:

ԱՐԱՋԱՆԳ

ԶԳԱՍՏՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՃԱՆԱԶՄԱՆ, ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ

(Հայոց Ազգային գաղափարախոսության տեսակետից)

Չկա ավելի մեծ իմաստություն, քան հոգևոր իմաստությունը, որի գագաթնակետը Աստուծո Չավատքն է: Եվ ոչ թե ազգը պահպանելու համար է պետք պահպանել հավատքը տիեզերական, հավերժական ճշմարտության հանդեպ, այլ հավիտենական կյանքի հավատքով, այդ կյանքն ապահովելու համար, իբրև առաջնային ուղիներից մեկը՝ պետք է պահպանել ազգը, տվյալ դեպքում՝ հայ ազգը, հայկական պետականությունը:

Ազգը փորձաքարն է հավիտենական կյանքի ուղու: Հայերի համար հավիտենական կյանքի անցագրերը հայկական դրոշմ ունեն, որ անհնար է զեղծել՝ առանց հարվածի տակ դնելու հավիտենական կյանքին արժանանալու իրենց հնարավորությունը: Հային հայությանը կապող հիմնական ուժը հոգու պարտքի զգացումն է եղել. Անմահ հոգու պարտքի՝ տիեզերական հավիտենականության մեջ: Այս ճշմարտության գիտակցումը և դրանից բխող անկեղծ հավատքի վրա հիմնված ազգային ինքնագիտակցությունն ու պարտաճանաչությունը եղել են ու կմնան հայապահպանման հզոր գործոններ ժամանակի ու տարածության մեջ:

Հայ ազգի համար որպես այս Չավատքի եության բովանդակություն եղել է քրիստոնեությունը: Հայությունն այսօր հոգևոր իմաստության մեկ ակունք ունի միայն՝ քրիստոնեություն կամ... ոչինչ, պարապություն: Այս հանգամանքը որպես բացարձակ ճշմարտություն ընդունելով՝ կմոտենանք հոգևոր իմաստության ակունքին: Եվ դա է ազգի գոյատևման առաջնային անհրաժեշտ պայմանը, քանզի առանց հոգևոր իմաստության ազգն անկարող է ունենալ Ազգային Պետականություն: Հոգևոր իմաստությանն անհաղորդ ազգն անկարող է ինքնիշխան ու ազատ լինելու. սպասավոր՝ թերևս: Սակայն ամուլ է բնականոն կյանք, այսինքն՝ ազգապետություն կերտելու համար այն ազգը, որն իբրև ներքին ուժականություն ունի երկու ծայրահեղորեն տարբերվող մտայնություն. մեկը՝ ամենախելացի, ամենատաղանդավոր, ամենաառաքինի, ամենաաշխատասեր, ամենատառապած, ամենաքաջ և այլն, և այլն ազգ լինելու մտայնությունը, մյուսը՝ որպես ծառայամիտ սպասավոր, հավատարիմ ու օգտակար ծառա կոչված լինելու մտայնությունը: Այս ճշմարտության գիտակցությունն իբրև ուսմունք պետք է լինի մեր ազգային-պետական քաղաքականության փիլիսոփայության հիմքում, որպեսզի մենք նախ արժանի լինենք և հետո կարողությունն ունենանք կառուցելու մեր իրապես ազգային, կայուն և կենսունակ պետականությունը:

Մարդկության պատմությանը հայտնի՝ ազգային պետականության ստեղծման ամեն մի շարժում ունեցել է և պիտի ունենա իր գաղափարական հիմքը: Ո՞րն է չափանիշը որոշելու, թե որդեգրված Գաղափարն իսկապես այն է՝ միակը, ճշմարիտը, որ կոչված է և կարող է տվյալ շարժման հիմքը հանդիսանալ. հիմք՝ մշտական և իրական, տվյալ շարժման հուսալի հենարանը: Ամենաէական չափանիշը, ըստ ամենայնի, Գաղափարի տարողությունն է: Այսինքն, Գաղափարը բոլոր դեպքերում պետք է անհամեմատ ավելի մեծ ընդգրկում և արժեք ունենա, քան նրա վրա հենվող շարժումը: Ամեն անգամ, երբ շարժման նպատակն արժևորվում է ավելի, քան ինքը՝ Գաղափարը, շարժման գաղափարական հիմքը թուլանում է. իրա-

կան հիմքը փախչում է շարժման տակից, և ժամանակի ընթացքում շարժումը աստիճանաբար երևում է իր իսկական տեսքով՝ օդից կախված, այսինքն՝ կենսագործման իրական նախադրյալներից զուրկ:

Գաղափարի կորստի այս քաղաքական իրադրությունն է, որ սովորաբար որակում են իբրև «անբախտություն», «անփորձություն», երբեմն՝ «դավաճանություն», «ներքին երկպառակությունների արդյունք», իսկ հաճախ էլ այլ ազգերի շահանդություն, խաբեբայություն, դաժանություն և այլն: Իրականում պատճառներն անհամեմատ լուրջ են ու խոր:

Սկսենք նրանից, որ հայ ազգային պետականության կառուցման գործընթացի մասնակիցն իբրև իր էության անկապտելի մաս, իբրև միս ու արյուն պետք է ունենա Հավատքը՝ հավիտենականության մեջ անմահ հոգու արդար, այսինքն՝ իրեն արժանի հատուցման գաղափարի հանդեպ: Եթե չկա այս Հավատքը, կամ եթե այն առկա է սոսկ որպես մտային պարտադրանք, այլ ոչ որպես կյանքի բոլոր հանգրվաններում կողմնորոշման, դիրքորոշման և վերաբերմունքի սկզբունքի հիմք, ապա տվյալ անհատի մասնակցությունը շարժմանը դառնում է պատահականորեն օգտակար՝ որոշ ժամանակաընթացքում և որոշ իրադրություններում, բայց վերջին հաշվով անտեղի ու անբավարար, քանզի այդպիսի անհատն իր տալիքի պակասությամբ սոսկ տեղ զբաղեցնելով շարքերում, իր հավատազուրկ մասնակցությամբ ինքնաբերաբար տանում է շարժումը խորթ ու անձանոթ ճանապարհներով դեպի ճահիճ:

Հայության ներկա խնդիրը՝ որպես մի ամբողջ ազգի գոյության պահպանման և պետականորեն բնականոն զարգացման խնդիր, մարդկային իրականության բարդ և կարևոր շարժումներից մեկն է: Սակայն այդ շարժումը պատշաճ տարողությամբ, ճիշտ ուղղությամբ տանելու և մինչև վերջ հասցնելու գործը իր իսկ՝ հայության խնդիրն է առաջին հերթին: Ինչ մնում է մարդկությանը, ապա լավագույն դեպքում նրա բաժինը կարող է լինել լոկ օգնելը կամ չխանգարելը հայությանը՝ իր խնդիրը կատարելու: Իսկ ինչպե՞ս, ի՞նչ տեսանկյունով պետք է

մոտենա խնդիրն գլխավոր կատարողը՝ հայ անհատը և հայ հավաքականությունը, առավելագույն օգտակար մասնակցություն բերելու համար շարժմանը. արդյո՞ք իբրև անձնապես շահավետ մի գործ. թեկուզ և դժվար ու վտանգավոր, բայց ինքնահաստատման կամ այլ անձնական բավականության հագուրդ տվող, կամ հաճելի ու թեթև և կամ հետաքրքիր ժամանց, թե՞ իբրև Պարտք, կրկնում ենք, իբրև Անմահ Հոգու Պարտք՝ Հավիտենականության առջև:

Առաջին մոտեցման դեպքում քիչ բան կարելի է սպասել շարժման մասնակցից, քանի որ նմանօրինակ շարժումները, քանի դեռ չեն հասել հաջողության, չեն ունեցել և չեն կարող ունենալ նյութական, բարոյական, դիրքի և հեղինակության հատուցումներ անհատական մասնակցության դիմաց, նրանք չեն տվել նման բաներ, այլ պահանջել ու վերցրել են ժամանակ, նյութական միջոցներ, խանգարել են տնտեսական բարեկեցությանը, ընտանեկան երջանկությանը, որդիական և ծնողական պարտքի կատարմանը, մասնագիտական աճին և այլն: Հետևաբար, ստանալու, վերցնելու ակնկալություն ունեցող անհատը նման շարժմանը չի հարի, իսկ եթե թյուրիմացաբար հարել է, ապա հետ կքաշվի գործից հենց որ զգա, թե կորցնելիքն ավելին է, քան ստանալիքը. կամ՝ որպես ավելի վնասակար վիճակ, կմնա շարքերում սոսկ ֆիզիկապես՝ լրացնելով քանակը, բայց ոչ ամենևին որակը:

Երկրորդ մոտեցման դեպքում տրամաբանորեն արդեն պատճառաբանված է տուրքը. մենք Պարտք ենք տալիս, այլ ոչ թե նվեր: Եվ պարտքը տալիս ենք ոչ թե հանգիստ ծերության, ոչ թե 5-10-20-30 տարվա կյանքի հեռանկարով, այլ Հավիտենական կյանքի անցագրի դիմաց: Եթե հավատում ենք սրան, եթե ընդունակ ենք հավատալու սրան, ուրեմն անկեղծ ենք՝ Հայկի, Մեսրոպի, մինչև երեկվա Վարդանների՝ մեր գնահատումներում և արժևորումներում: Ընդունակ չե՞նք, չե՞նք հավատում կեղծավոր են ուրեմն մեր գնահատումները և հետևապես, ըստ մեզ, հիմարապատումներ են Ավարայրն ու Սարդարապատը, հիմարներ՝ ազգային հերոսները մեր...

Այսպիսով, այսօրվա մեր հավատազուրկ վիճակը ոչ միայն նսեմացնում, այլև, ավելին, ի չիք է դարձնում սուրբ երախտիքը մեր ամբողջ պատմության միլիոնավոր նահատակների ու այսօր նրանց կեցվածքը ժառանգած հազվագյուտ ընտրյալների: Ինչպե՞ս կարող ենք հարգել նահատակների հիշատակը, ինչպե՞ս կարող ենք կոչել հետևելու նրանց օրինակին, ում մոլորյալ պարզամիտներ ենք համարում մեր հոգու խորքում՝ ըստ մեր այսօրվա մտածելակերպի, դատողության ու մեր փաստացի կեցվածքի ու վերաբերմունքի: Ո՞ր մնացին հապա մեր գովերգված ազնվությունն ու ուղղամտությունը, որ փաստելու համար խոսքերի պակաս չենք զգում երբեք:

Իսկ եթե իսկապես անկեղծ ենք, եթե իսկապես ընդօրինակելի ենք համարում նախնյաց առաքինությունները, իմաստությունը, հանճարը, գործերն ու նվիրումը, ապա ինչո՞ւ մեր ազգային գոյության պայքարի քաղաքական փիլիսոփայությունը վերլուծելիս ոչ մի անգամ չենք հարցնում, թե որն էր նրանց այդ փիլիսոփայությունը սնուցող Ակունքը, պայքարի քաղաքականության ավիշը: Չենք հարցնում, որովհետև՝ իբրև «լուսավորյալ» դարի զավակներ, ամաչում, երբեմն նույնիսկ վախենում ենք խոստովանելու՝ թեկուզ ինքներս մեզ, որ Հավատքն էր այդ Ակունքը. Լուսավորչի, Մեսրոպի, Վարդանի, Շնորհալու, Նարեկացու, Սեբաստացու և նմանների Հավատը՝ Քրիստոնեությունը: Այնինչ, պարտավոր ենք ընդունելու այս ճշմարտությունը, քանզի այն փաստված է մարդկության պատմության ողջ ընթացքով: Լինելով ուժեղ, ունենալով ուժերի ակնհայտ առավելություն՝ հարվածել, հաղթելը դժվարին խնդիր չէ: Բայց լինելով թշնամիներով շրջապատված, գտնվելով զորեղների շահերի բախման խաչմերուկում, օտար ու սեփական կրքերի հորձանուտում, լինելով ֆիզիկական ու բարոյական հարվածների թիրախ դարեր անընդմեջ և դիմանալ, ոչ միայն գոյատևել, այլև հարատևել, միաժամանակ ուժ և կարողություն գտնել՝ կերտելու ձեռակերտ և անձեռակերտ կոթողներ, գեղեցիկ ու վեհ արվեստ և գրականություն... Երեցեք, բայց սա ոչ միայն թույլ, այլև միջին ուժականության ազգային

հավաքականության գործ չէ. սա հավատքով ու ոգով զորեղ ժողովրդի պատմությունն է: Որտեղի՞ց էր, ո՞ւր գնաց այդ ուժը, որից այժմ զրկված՝ ուժասպառ և մոլորված, զնալով տկարանում, թուլանում և սպառվում ենք: Եվ ինչպե՞ս հետ բերենք այդ ուժը, արժանանանք դրան, որ դադարենք սեփական պարտքից փախչող, այսինքն՝ ոչ միայն անելիքներս ու տալիքներս, այլև ուրիշների տվածը գողացող, մեր տունը փչացնող, մեր կյանքը ապականող, միմյանց դեմ դավեր նյութող թշնամիներ դառնալուց. դադարենք ուրացող, արհամարհող և հաճախ նույնիսկ թշնամի լինելուց՝ համամարդկային չափանիշներով անգամ արժեք ներկայացնող մեր ազգային արժեքների նկատմամբ. որ մաքրվենք, առողջանանք, իմաստնանանք և հզորանանք, աճենք, բարգավաճենք, ու ընդմիշտ արժանի լինենք վայելելու մեր երկիրը, մեր ազատությունը, մեր լեզուն, մեր Աստվածատուր տաղանդի հոգևոր և ձեռագործ արդյունքները:

Ո՞ր է հասցրել մեզ այս ընթացքը և ո՞ւր է շարունակում տանել. ի՞նչ պետք է ասել և ի՞նչ պետք է անել, որ իրերն իրենց անուններով կոչվեն ի վերջո ու արժևորվեն ճշմարտորեն, և փնտրենք ու գտնենք իսկական հիմքերը և հենվենք նրանց վրա, որ ընթանանք ճիշտ ուղղությամբ, մեր դավանած արժեքներին պատշաճ մթնոլորտում, որից հետո ազգային ապահով, պատվավոր և բարգավաճ գոյության ապահովումը ժամանակի հարց կլինի միայն:

Սակայն մինչ այդ շատ կարևոր է, որ լրջորեն հաշիվ տանք մեզ, որ մեր ներկա ընթացքը հասցրել է մեզ ստրկության և շարունակում է տանել ստրկահոգության, այսինքն՝ բարոյական ու ֆիզիկական վախճանի: Որովհետև ստրկական վիճակը՝ իբրև ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական կարգավիճակ, դեռ ի զորու չէ բացարձակապես ստրկացնելու անձը և հասարակությունը. իրական, բացարձակ ստրկությունն սկսվում է ստրկամտությամբ և ավարտվում է ստրկահոգությամբ: Անձն ազատ է, եթե ստրուկ չէ հոգին: Ազատ հոգին, իր հերթին, հզոր գործոն է ստրկացած մտքի ազատագրման համար, իսկ երբ ազատ է միտքը, անձի կամ ազգի ստրկական

կարգավիճակը դառնում է ժամանակավոր, ու լիակատար ազատագրումը, իր բոլոր հետևանքներով, ժամանակի հարց է միայն: Մինևույն տրամաբանությամբ, բոլոր այն դեպքերում, երբ ստրկամտության ախտը վարակելով միտքը՝ ախտահարում է և հոգին, ախտահարման աստիճանին համապատասխան նվազում և աստիճանաբար զրոյի է հավասարվում ազգի վարակամերժունակությունը (ինունիտետը)՝ ազատագրման հույսը: Ազատ կացությունը՝ ազատ մտքի, իսկ ազատ միտքը՝ ազատ հոգու վրա կարող է հենվել միայն: Ուրեմն, վերջին հաշվով, ազատության հիմքն ու նախապայմանն ազատ հոգին է: Ազատ հոգու պահպանումը, փաստորեն, ազատ կեցության պահպանումն է, այսինքն՝ ազատության պահպանման կամ ձեռքբերման առաջնահերթ և կարևորագույն գործոնը, ազատության, որի առկայությամբ միայն կարելի է նվաճել ազգային կենսունակ պետականություն ստեղծելու իրավունքը և կարողությունը:

Իսկ ո՞րն է հոգու ազատության ակունքը: Պատասխանը դարձյալ մեկն է և աներկմիտ՝ Հավատը: Հավատքը Աստուծո նկատմամբ, Հավատքը Նրա տիեզերական և հավիտենական ուժի նկատմամբ, Նրա բացարձակ արդարության, բարության, կատարելության նկատմամբ: Անմահ է անձը կամ ազգը, որի գոյությունը խարսխված է այս հավատքի վրա. նա ենթակա չէ հոգեկան ստրկացման, քանզի այդպիսի ստրկությունը Մահ է, վախճանը Գոյի, անհարիր՝ անմահության գաղափարին. իսկ Աստծո Հավատքով տոգորված կյանքն իրապես անվախճան է, քանզի դրա բովանդակությունն է Ազատ Հոգին: Հետևաբար, Աստծո Հավատքը կրող անձը կամ ազգն Ազատ Հոգի ունի. եթե Ազատ Հոգի ունի, ստրկություն չի կարող ճանաչել. եթե ստրկություն չի ճանաչում, Անմահ է նա: Ահա թե ինչու են մեր նախահայրերը մեռել՝ ապրելու համար: Հավատո՞ւմ ենք դրան, հավատո՞ւմ ենք, որ Վարդանանք Անմահ են, այսինքն՝ ապրում են իրական կյանքով՝ Տիեզերական ու Հավիտենական կատարելության կյանքով և ոչ թե մեր մտապատկերներում սոսկ, գրական կերպարներ իբրև և կամ որպես քարոզչության

միջոց: Եթե հավատում ենք սրան, ապա պետք է հավատանք նաև, որ Աստված շնորհեց նրանց այդ կյանքը՝ իրենց Հավատքի միջոցով, որով կարողացան ազատ պահել Հոգին: Եվ այդ իսկ պահից Անմահ էին նրանք արդեն, քանզի մերժեցին ստրկությունը, այսինքն՝ Մահը: Ազատ Հոգով՝ ազատ պահեցին իրենց մտքերը. Ազատ Հոգու և Ազատ Մտքի թելադրանքով ընդունեցին նրանք Գիտակցական Մահը, այսինքն՝ հրաժարումը հոգևոր ստրկությունից, հետևաբար և անմահությունը՝ ըստ Աստվածային բնության, որ նրանք ճանաչեցին Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու Խաչով:

Չե՞նք հավատում սրան, ո՞ր է, հապա ո՞րն է ճշմարտությունը... Հավատում ենք, սակայն սոսկ իբրև օգտակար մտահանգում, այլ ոչ իբրև բացարձակ ճշմարտություն: Այդ դեպքում կուզենայինք իմանալ, թե ինչու այդ «օգտակար մտահանգումը» օգտակար արդյունք չի տալիս: Եվ պատասխանում ենք. որովհետև սխալ է ու հակասական նմանօրինակ մոտեցումը: Այն, ինչ ճշմարիտ չէ, չի կարող օգտակար լինել. այն կարող է թվալ օգտակար, բայց չի կարող օգտակար լինել գործնականում իր արդյունքով, և մանավանդ տևականորեն: Եվ վերջապես, եթե հավատում ենք դրա թե՛ ճշմարտացիությանը և թե՛ օգտակարությանը, ապա ինչո՞ւ չենք որդեգրում գաղափարը՝ իբրև գործունեության ուղեցույց՝ ի գիտություն և ի գործադրումն: Անհավատը տեսածին է հավատում, հավատացյալը՝ չտեսածին, բայց մի՞թե իրականում տեսնելու բան չկա: Պատասխանը՝ Ֆիզիկապես, այո, չկա, բայց կա հոգեպես: Անհավատը չունի հոգու աչքեր, որ տեսնի այն, ինչ գոյություն ունի հավատացյալի համար:

Պատանքներ հազմենք հիմնկվանից, այլ ոչ թե վերջին պահին՝ ինչպես Սարդարապատ կռվելու գնացող էջմիածնական միաբանները: Պատանքներ հազմենք մեր մարմնի վրա ժամանակ առ ժամանակ, և մշտապես՝ մեր մտքի մեջ՝ որպես խորհուրդ, որպես հիշեցում, որպես դաստիարակություն և... հոգեկան մարզում:

Եթե պատանքներ հազմեր ոչ թե մեր հազարից մեկը, այն

էլ ոչ թե օրհասական պահին՝ արյունաքամ ու անպաշտպան Երևանի նախադուռ Սարդարապատում, այլ հագած լինեինք մինչ Սարդարապատը՝ Կարինում կամ Կարսի բերդում... Եվ դեռ դրանից շատ առաջ, 1878թ-ից էլ առնվազն հարյուր տարի առաջ, և հագած լինե՞ր ոչ թե հագարից մեկը, այլ գոնե մի զգալի մասը նրանց գլխավորությամբ, ովքեր պարտավոր էին այս մայրուղով ընթանալու օրինակը ծառայելու ազգի համար: Այն ժամանակ կունենայինք մեր ազգային Մայիսը, ոչ թե հանկարծակի, շվարած, արյունաքամ վիճակում, անկենսունակ, մեկուսացած հողապատառիկի վրա, այլ կունենայինք գիտակցորեն նախապատրաստված Մայիսը՝ հզոր ու կենսունակ մի հողային ամբողջության վրա՝ համապատասխան որակական ու քանակական մեր ներկայությամբ, այն հարաճունորեն զարգացնելու կարողությամբ, և չէինք ապրի ֆիզիկական ու բարոյական ազգային ողբերգությունը:

Պատանք կարող է հագնել հոգու պարտք զգացող հայը, և քանի որ այդ պատանունը հոգու հասկացողությամբ է, ապա դա մահվան հագուստ չէ, այլ կյանքի՝ իսկական, լիարժեք կյանքի... Այժմ էլ, եթե այդ պատանքը հագնենք բոլորս և առանց սպասելու տասնմեկերորդ ժամի ազդին՝ յուրաքանչյուրս լծվենք նախ և առաջ սեփական պարտականությունները կատարելուն, այդ դեպքում մեր ազգային գոյությունն այժմ հարցականի փոխարեն կստանա հաստատուն և կենսատու կյանքի հավիտենական երաշխիքը:

Եզրափակենք:

Անձի, ազգի Ազատությունը պայմանավորված է հոգու ազատությամբ, հոգու Ազատությունը պայմանավորված է Աստծո Չավատքով. հայ ազգի համար Աստծո Չավատքը Չիսուս Քրիստոսի Ավետարանի Չավատքն է՝ Վարդանանց Անմահության և մեր այսօրվա գոյության աղբյուրը. այդ աղբյուրը տվել ու կրկին կարող է կյանք տալ մեզ. այդ աղբյուրում ցողված դրոշմ է, որ կարող է մեզ առաջնորդել կերտելու մեր ազատ, ապահով ու բարգավաճ ազգապետությունը:

Անելիքները:

- Վերանայումը մեր կենաց ընթացքի, որն ակներևորեն շեղվել է բնականոն հունից.

- Վերանայումը մեր ազգային կառույցների և նրանց պարտավորությունների համակարգի.

- Վերանայումը հայ անհատի և մանավանդ հայ առաջնորդի պարտավորությունների դրույթների և գործունեության գնահատման չափանիշների.

- Վերանայումը այսօրվա ընդհանուր վերաբերմունքի՝ ազգային ներկա և հեռանկարային խնդիրների նկատմամբ.

- Վերանայումը ազգի նկատմամբ մեր պարտավորությունների չափերի, ձևերի և միջոցների:

Այս վերանայումներն են, որ կառաջացնեն անհրաժեշտ փոփոխությունները մեր ազգային հոգեբարոյական ըմբռումների, հասարակական-քաղաքական հասկացությունների, ընկերային հարցերի մոտեցման և քաղաքացիական պարտաճանաչության մեջ, ինչպես նաև ազգային «մեծ» ու «փոքր», «առաջնային» ու «երկրորդական», «տեղական» ու «ընդհանրական» հարցերի և գործերի արժևորման մեջ՝ ստեղծելով ՊԵՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ անկախ նրանից, թե տվյալ պահին ունե՞նք ազգային իրավական պետություն և կամ Չայաստան՞ում ենք ապրում, թե՞ ոչ:

Ումի՞ց պետք է սկսվեն նշված վերանայումներն ու փոփոխությունները: Մեր կարծիքով, սկիզբը պետք է դնեն և իրենց խոսքով ու գործով օրինակ ծառայեն ազգային Ազատ Ոգին կրող, ազգի գիտակցությունն ու խիղճն ունեցող հայ անձերը և ազգային կառույցները:

Այս հարցում, նախաձեռնողների առաջապահների որպես, մեր հայացքները պետք է ուղղված լինեին, նախ և առաջ, Չայաստանի Ազատ Եկեղեցու՝ մեր կղերի և ապա ազգային ոգին կրող հայ աշխարհիկ մտավորականի և ազգային գործչի վրա: Սակայն իրականում կարո՞ղ ենք այդ անել: Կարո՞ղ ենք նրանցից իրապաշտորեն ակնկալել վերոհիշյալ վերանայումների ու փոփոխությունների սկզբնավորման նախաձեռնությունը և մանավանդ իրենց կյանքով գործնականում օրինակ

ծառայելը... Այս պայմաններում մնում է, որ յուրաքանչյուրը քննի իրեն, և եթե իր ազգային գիտակցությունը և Աստծո առաջ խիղճը թելադրում են իրեն, որ ինքը պարտավոր է և կարող է սկսողներից մեկը լինել, թող վերափոխի իրեն և փնտրի իր նմաններին: Երբ ստացվի անհրաժեշտ քանակը այդ որակի անձանց (Հայ Ազգային կրիտիկական զանգված), թող միանան և սկսեն ազգի վերածննդի գործը՝ Աստուծո օգնությամբ:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ
Նոյեմբեր, 1981թ.

Հ Ա Յ Ք Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԹԻՎ 16 ՏԵՂԵԿԱԳՐԻ

ՀՈՂՎԱԾՆԵՐ

~ ~ ~

ՀԱՅՔ հաստատության ծրագիր թիվ 10

ՀԱՅ ԿՆՈՋ ՏՈՂՄԻԿ ԿԵՐՊԱՐԸ

ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ԴԵՐԸ

ՀԱՅՔ հաստատության թիվ 10 ծրագրի կատարման նպատակն է.

1. Բացահայտել հայ կնոջ տոհմիկ կերպարը և բնորոշել նրա ներկա վիճակը, ձգտումները, դրանց բնույթը և ուղղությունը:

2. Բնորոշել հայ կնոջ կոչումը և նրա ընտանեկան, ընկերային, ազգային և մարդկային դերը, որ կարող է կատարել իր անձի, իր ընտանիքի և իր ազգի կենսունակության բարձրացման և հայության ու Հայաստանի գոյապահպանման ու զարգացման համար:

Տասներորդ ծրագրով ՀԱՅՔ հաստատության գիտահետազոտական աշխատանքները բաղկացած են հետևյալ մասերից.

Առաջին

Պատմագրական և ընկերաբանական ուսումնասիրություններ.

- Բացահայտելու և պարզաբանելու համար հայ կնոջ տոհմիկ կերպարը (հայ մարդու կերպարի ընդմիջից) և ժամանակի ընթացքում այդ կերպարի փոխակերպումները տարբեր տիրապետությունների և միջավայրերի քաղաքական, գաղափարական, կրթական, մշակութային, ընկերային և տնտեսական ազդեցությունների հետևանքով:

- Գնահատելու այդ փոխակերպումների ազդեցության հետևանքները ամբողջ հայության և հատկապես հայ կնոջ հոգեբանության, աշխարհայացքի, մտածելակերպի և վարմունքի վրա:

Երկրորդ

Ընկերաբանական և հոգեբանական ուսումնասիրություններ.

- Բնորոշելու համար հայ կնոջ ներկայիս վիճակը՝ իր ընկալմամբ, հայ տղամարդու ընկալմամբ և գիտական գնահատմամբ՝ Հայաստանում և Սփյուռքում:

- Պարզաբանելու համար հայ կնոջ հոգևոր կոչումը և ուրվագծելու նրա ընտանեկան, ընկերային, ազգային և մարդկային դերը, որ պետք է կատարի իր անձի, իր ընտանիքի և Ազգի կենսունակության բարձրացման և հայության ու Հայաստանի գոյատևման և զարգացման համար՝ Հայ Ազգային Գաղափարախոսության էության և նպատակի հիման վրա (ՀԱՅՔ հաստատության թիվ 1 ծրագիր):

1996թ. փետրվարին երևանում ՀԱՅՔ հաստատությունը կազմակերպեց գիտական սեմինար՝ նվիրված թիվ 10 ծրագրով նախատեսված հարցերի քննարկմանը: Թիվ 10 ծրագրի նպատակն է բնորոշել հայ կնոջ ժամանակակից կոչումը ազգի կենսունակության պահպանման և զարգացման խնդրում՝ ուսումնասիրելով և բացահայտելով նրա տոհմիկ կերպարն ու պատմական դերը: Սեմինարում բացման խոսքով հանդես եկավ ՀԱՅՔ հաստատության նախագահ ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ և շեշտելով թիվ 1 և թիվ 10 ծրագրերի առնչություններն ու ընդհանրությունները՝ պարզաբանեց վերջինի կատարման անհրաժեշտությունը:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Ի՞նչ նկատառումներով է ՀԱՅՔ հաստատությունն ստեղծել «Հայ կնոջ տոհմիկ կերպարը և ժամանակակից կոչումն ու դերը» թիվ 10 ծրագիրը՝ մանավանդ որ այն էապես առնչվում է թիվ 1 ծրագրի հետ, որն ունի 2 նյութ՝ հայ ազգային հոգեբարոյագիտություն և Հայ Ազգային Գաղափարախոսություն: Յետևապես՝ դա վերաբերում է հայությանը, մշանակում է տղամարդկանց, կանանց, բոլոր խավերին, բոլոր տարիքային դասերին: Ի՞նչ կարիք կար թիվ 10 ծրագիրը ստեղծելու: Արդյո՞ք ՀԱՅՔ հաստատությունը տեսնում է տարբերություն կնոջ և տղամարդու միջև: Այս հարցի պատասխանը թե՛ «այո» է և թե՛ «ոչ», և՛ տեսնում է, և՛ չի տեսնում: Տարբերությունը նա տեսնում է այնքանով, որքանով բնությունը տարբերություն է ստեղծել: Այն նպատակով, այն ծրագրով, որ ստեղծվել է մարդկությունը և որքանով բնության միջոցով տրվել են առանձնահատկություններ տղամարդուն և կնոջը, այդքանով ծրագրի մեջ դրված է

տարբերություն: Այդ տարբերությունը բնական է, և այն պետք է հասկանալ որպես բնության տարբերություն, ինչը ՀԱՅՔ հաստատության կարծիքով Տիեզերական և Հավիտենական Ծրագրի իրագործման համար է տրված: Հարգել այդ տարբերությունը և չշեղվել դրանից: Դա բարի, արդար և դրական տարբերություն է, հետևաբար կատարյալ է, ճիշտ է և օգտակար:

Ամեն մի փորձ այդ տարբերությունը վերացնելու, թվում է, կլինի արհեստական և մարդկության դեմ, ազգի շահերի դեմ, հասարակության շահերի դեմ, անհատի շահերի դեմ: Բայց միևնույն ժամանակ մարդը նույն է, և ՀԱՅՔ հաստատությունը կնոջ ու տղամարդու միջև տարբերություն չի տեսնում՝ իբրև հասարակական երևույթ՝ հասարակության անդամների մեջ, ընտանիքի մեջ, ազգի մեջ, մարդկության մեջ և կյանքի բոլոր բնագավառներում ու ասպարեզներում:

Հետևապես, մեր խնդիրն է համամարդկային այդ բնական էության մեջ տեսնել, ճանաչել հայ ազգի մարդկային նկարագիրը և այդ նկարագրի մեջ՝ կնոջ տեղը, առանձնահատկությունը: Այստեղից է բխում և այն, որ խնդիր է դրվում բացահայտել հայ կնոջ տոհմիկ կերպարը, նրա պատմական դերը և նշանակությունը, ինչպես նաև ապագայի կերտման գործում նրա դերն ու նշանակությունը: Խնդիրը կարևոր է այն առումով, որ առանց գիտական հետազոտությունների կատարելու էլ գիտենք, որ թե՛ տղամարդու և թե՛ կնոջ այդ կերպարը շեղված է, մասնավորապես՝ կնոջ դերը ընտանիքում և հասարակության մեջ:

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում բավական երկար ժամանակ գտնվելով տարբեր պետությունների տիրապետության և տարբեր ժողովուրդների մտածելակերպի, գաղափարների ազդեցության տակ, չէր կարող չազդվել դրանցից: Եվ ինչքան դիմացել է, պահպանել է իր ուրույնը, դա արել է իր հավատքին հավատարմությամբ՝ պինդ կառչելով իր մշակույթին, ավանդույթներին և իր մեծերի, սրբերի պատգամներին: Դրա համար հաճախ շատ բարձր գին է վճարել, բայց դիմացել և պահպանել է իր ինքնությունը, ազդվելով հանդերձ որոշա-

կիրեն: Ազդեցությունն ավելի է ուժեղացել XIX դարի վերջերից: Իսկ XX դարը բերեց ավելի մեծ ազդեցություն: Սփյուռքի գոյությունը, Հայաստանի՝ Խորհրդային Միության մաս կազմելը, տարբեր գաղափարներ, հայացքներ, դաստիարակություն՝ քաղաքական և հասարակական, և այժմ էլ՝ գիտատեխնիկական հեղափոխությունը (հաղորդակցության միջոցների աննախադեպ զարգացմամբ): Ու այդ մոտիկությունը, այդ միախառնությունը ավելանում է:

XIX դարից որոշ զարգացած երկրներում նաև Ռուսաստանում ու Հայաստանում սկսվեցին կանանց տարբեր շարժումներ, որոնք արագ ավելանում են. էմանսիպացման գործուն պրոցես, պայքար և այլն: Եվ այսօր հայ գիտական միտքը (այստեղ արդեն կին և տղամարդ չկա) ինչպե՞ս պետք է կարողանա գնահատել այս երևույթները և ինչ հետևություն պիտի անի իր համար, որպեսզի բնորոշի իր կեցվածքը, իր հաստատուն տեղը: Շեղումներ կարող են լինել, բազմակարծություն է: Բայց պետք է ի հայտ բերվեն հիմնական հասկացությունները, և հայ գիտական մտքի աշխատանքի արդյունքը պետք է դառնա ժողովրդի սեփականությունը:

Մենք համոզված ենք (դա ՀԱՅՔ հաստատության՝ տարիների ընթացքում կատարած ուսումնասիրությունների հետևությունն է), հայությունն ունի իր ուրույն նկարագիրը, և հայ կինն ունեցել է իր նկարագիրը, համեմատության մեջ միշտ եղել է առաջադեմ (հավասար է եղել, հարգված է եղել, ազատ է եղել, ազդեցություն է ունեցել): Դա են ապացուցում մեր պատմությունը, մեր գրականությունը: Բայց իր դերը եղել է ուրույն: Եվ երևի մեր նախահայրերը, մեր այն ժամանակվա մտավորականությունը լավ են հասկացել, որ երբ գնում ես բնությամբ պայմանավորված ուղիով, դա և՛ գեղեցիկ է, և՛ արդար ու օգտակար:

Սակայն բացասական շփումների հետևանքով հայ կինը մասամբ կորցրել է իր ազատությունը, նույնիսկ՝ հարգանքը: Այս ամենից նա ուզում է ազատագրվել, սկսվել է շարժում: Ինչպե՞ս պետք է մենք գնահատենք այս երևույթը, ճի՞շտ, թե՞ սխալ: Գիշտը նրանում է, որ ճնշումը կա, դառնում է «փոքրամասնու-

թյուն», իսկ նա պետք է լինի հավասար մաս ամբողջականության: Յետևապես, եթե կա ճնշում, կա իրավագրկում, պետք է լինի հակադարձ ճնշում, գուցե և՛ պայքար: Եվ ՀԱՅՔ հաստատությունը պետք է գիտականորեն մտնի դրա մեջ, այլ ոչ թշնամությանը: Կանանց այն շարժումները, որոնք թշնամություն են առաջացնում և «մենք» ու «դուք» են առաջ բերում, սխալ են, որովհետև հակաբնական են, և, վերջին հաշվով, վնասակար են: Այս մտորումները, թերևս պետք է բացատրեն, թե ինչու է ՀԱՅՔ հաստատությունը որդեգրել թիվ 10 ծրագիրը: Որդեգրել է, որպեսզի այս հարցերը մենք կարողանանք պարզաբանել գիտականորեն՝ ոչ հասարակական-քաղաքական պայքարի ձևով: Դա է նշանակությունը: Ու եթե ինչ-ինչ հասկացություններ պիտի փոխվեն (իսկ պետք է փոխվի երևի շատ բան՝ հասկացության մեջ, արտահայտման ու ընկալման մեջ, կենցաղավարության մեջ), ապա փոխվի շինարար իմաստով, հիմնարար իմաստով և ոչ թե քանդելու: Մենք պետք է բնորոշենք, թե որն է ճիշտը, ինչն է տկարացել, և պետք է զորացնենք, և որն է աճել քաղցկեղի նման՝ ինչ-որ ուռուցք է, այն հանենք: Բայց հակառակը չանենք հանկարծ, առողջը չհանենք: Դա կարող է լինել: Հնարավոր չէ ցավ չզգալ, երբ տեսնում ես, որ ազատություն ասելով՝ հասկանում են գռեհկություն (ծխել, այլանդակ կեցվածք, հագնվածք, արտահայտություններ և այլն): Սա ամենևին հավասարություն չէ, նույնիսկ անհավասարություն է, վիրավորական է: Եվ, վերջապես, կա սերնդի հարցը՝ Աստվածային նպատակը, որ բնության միջոցով առաջացրեց մարդկության առանձնահատկությունները:

Հայ կինը կենսական դեր ունի կատարելու հասարակության մեջ, և հարցը այն է, թե արդյոք կատարող է: Եթե յուրաքանչյուր մարդ-էակի խնդիրը կատարյալ լինելն է, դրանից ավելի բան չկա: Կատարյալ լինելու իսկական ճանապարհն այն է, որ դու հասկանաս ճիշտ և կատարես քո բնական դերը:

Հայ կնոջը հատուկ է նվիրվածությունը ընտանիքին, երեխային: Եվ երբ մենք որդեգրում ենք այս ազատականացում

կոչված կենցաղավարությունը, գաղափարախոսությունը, արդյոք դա օգտակար է նոր սերնդի շահերի համար:

Բնականորեն մոտենալով այս հարցին, մտքից չպետք է հանել, որ, ի վերջո, կնոջ համար տղամարդը դա հայրն է, ամուսինը, եղբայրը, որդին, և տղամարդու համար կինը դա մայրն է, ամուսինը, քույրը, դուստրը: Ո՞ւմ դեմ են պայքարում, ո՞վ է ինձ ճնշում...

Բնությունն է դա արել: Եթե գիտությունը չհասկանա բնության օրինաչափությունները, իսկ առավել ևս, պետությունը, կառավարությունը և ազգի առաջնորդները չհասկանան և ըստ այնմ կյանքը դասավորեն, այն ժամանակ գուցե սխալվենք (և անպայման կսխալվենք), և արդյունքը կլինի բացասական: Ի՞նչ չափի բացասական՝ կախված է նաև ուրիշ գործոններից:

Ահա այս է նպատակադրումը, և ըստ այնմ է ՀԱՅՔ հաստատության թիվ 10 ծրագիրը: Եվ, թեպետ, թիվ 1 ծրագրի հետ էությանը նույնն է, բայց ունի որոշ յուրահատկություններ. ուրեմն նպատակահարմար է, որ դիտվի, ուսումնասիրվի նաև առանձին, և հետևությունները ներկայացվեն մեր ժողովրդին առանձին:

Եվ մի հանգամանք ևս, որ կարծում ենք, հարկ է նշել: Կանանց հարցերով, սովորաբար, կարծես թե միայն կանայք պետք մտահոգված լինեն և զբաղվեն: Այս է ցույց տալիս թե՛ միջազգային և թե՛ ազգային փորձը:

ՀԱՅՔ հաստատության պարագային, երբ հայ կինը դիտվում է նախ և առաջ որպես մարդ էակ, իսկ իր սեռական առանձնահատկությամբ՝ հայ տղամարդու մայրը, քույրը, ամուսինը և զավակը, ապա մեր 10-րդ ծրագրի կատարումը և դրա հարակից հարցերը, բնականաբար, չեն սահմանափակվում հայ կանանց շրջանակով: ՀԱՅՔ հաստատությունը գտնում է, որ դա հայ ժողովրդի մարդկային ու ազգային խնդիրն է: Յետևապես յուրաքանչյուր հայ տղամարդ, տվյալ դեպքում գիտնականը, մտավորականը, տարբեր բնագավառների գործիչը հավասար չափով, եթե ոչ ավելի, պետք է շահագրգռված լինի, պարտականություն զգա և իրեն համապատասխան մակար-

դակով մասնակցի ծրագրի և դրա հարակից խնդիրների կատարմանը:

ՀԱՅՔ հաստատությունը պատրաստ է իր 10-րդ ծրագրի, ինչպես և մյուս ծրագրերի կատարման ասպարեզը բաց պահել բոլոր ցանկացողների համար:

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ (պ. գ. դ.)

ՀԱՅ ԿԻՆԸ՝ ՕՋԱԽԻ ՊԱՅԱՊԱՆ

Հայ ժողովրդի անցած պատմական ուղու վրա հայ կինը խորհրդանշել է մեր ազգի բարոյականությունը, բարությունն ու հպարտությունը: Հայ կնոջ կերպարն ազգային դիցարաններում մարմնավորվել է որպես մայրության, սիրո, լույսի ու գեղեցկության արտահայտություն, իսկ պատմության մեջ՝ որպես հայրենասիրության, անձնագոհության, հերոսության կերպար:

Նրա առաքինություններով են բնորոշվել ընտանեկան հավատարմությունը և հայրենի օջախի ամրությունը: Հայ կինը որքան գթասիրտ, նույնքան էլ անողոր է թշնամու հանդեպ:

Հայ առաքելական եկեղեցին սրբագործել է հայ օջախի պահապան մոր կերպարը, իսկ ազգապահպան շնորհով օժտված եկեղեցին՝ դարձել հայ ընտանիքի հոգևոր պահապանը:

Հայ ընտանիքը հայրենիքում և Սփյուռքում հայուհու անկոտրում կամքի շնորհիվ մնաց մեր ժողովրդի հարատևության խորհրդանիշը:

Հին հայոց ազգային դիցարանում մայրության, սիրո, լույսի ու գեղեցկության մարմնավորումն էին Անահիտը, Նանեն, Աստղիկը, Ծովինարը: Քրիստոնեության արշալույսին (Ա դար) սուրբ Մահատակների լուսապսակին արժանացան Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը և իշխանուհի Ջարմանդուխտը: Երկու դար անց Հայոց հողում սրբացան Հռոմեական կայսրությունից Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից հալած-

ված քրիստոնյա Յոհաննեսյան կույսերը: Նրանց նահատակությունը խոր հետք թողեց հայ կնոջ կյանքում:

Հայ ազգի հարատևությունը մեծապես պայմանավորված է ընտանեկան օջախը սրբությանը պահպանելու՝ հայ կնոջ նվիրվածությամբ: Անհրաժեշտության դեպքում հայ կինն իր ամուսնու կողքին հավասարապես կիսել է բոլոր զրկանքները՝ հանուն Հայրենիքի ազատագրման մեծ գործի: V դարից մեզ են հասել հայ կնոջ անձնագոհությունը վկայող հուզիչ դրվագներ: Ս. Վարդան Մամիկոնյանի գլխավորած Հայոց պատերազմը նկարագրելուց հետո Եղիշեն գրել է. «Երանելի առաքինիների և կապվածների ու պատերազմում ընկածների կանանցն ամբողջ աշխարհում ես հաշվել չեմ կարող... Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթատները...» (Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1989, էջ 372):

Հոգեթով են Վարդան Մամիկոնյանի դուստրերը՝ Վարդենի-Շուշանիկը և Վարդանույշը: Ս. Շուշանիկի մասին Ցուրտավի եպիսկոպոս Հակոբը (476-484) գրել է «Վարք սրբոյ Շուշանկան»: Ս. Շուշանիկն ամուսնացած էր և մայր էր: Նրա ամուսինը՝ վրաց Աշուշա բղեշխի որդին՝ Վազգենը, պարսիկներից արտոնություններ ստանալով, հրաժարվում է քրիստոնեությունից և զրադաշտություն ընդունում: Վրաց օջախում Ս. Վարդանի դուստրն իր առաքինության պատճառով դաժանորեն խոշտանգվում է իր իսկ ամուսնու ձեռքով: Նահատակ Շուշանիկի պայծառ անունը թե՛ հայ և թե՛ վրացի ժողովուրդների կողմից սրբացվեց: Ս. Շուշանիկը համարվել է «Հայ գաղափարական կնոջ միջնադարյան իդեալը» (Մ. Ավդալբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (Ե դար), Եր., 1971, էջ 158): «Նրա կերպարում հայ գրականության մեջ առաջին անգամ մարմնավորվել է նաև կնոջ ազատագրման գաղափարը» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Եր., 1944, էջ 354):

Հայ կնոջ առաքինություններով է բնորոշվում մեր ազգի մեջ դարերով արմատացած ընտանեկան հավատարմությունն ու օջախի ամրությունը:

Փառանձեմ թագուհին օտարուհի Օլիմպիայի ոտնձգությունից պահպանեց իր՝ Հայոց արքունի օջախը, իսկ երբ հերթը հասավ Հայրենիքի պաշտպանությանը, Հայոց թագուհին աննախադեպ անձնագոհությամբ կռվեց թշնամու դեմ՝ դրսևորելով զորավարի կամք: Հերոսուհի հայ կանայք մարմնավորել են ազգի հարատևության աստվածաշնորհ գաղափարը, մինչդեռ համաշխարհային պատմության մեջ տխրահռչակ Շամիրամի՝ Հայոց թագավոր Արա Գեղեցիկին և մեր երկրին տիրանալու վավաշոտ ցանկությունը կանխորոշեց Ասորեստանի կործանումն ու անհետացումը պատմության ասպարեզից: Հայկազուն Արայի մահվան պատճառ դարձած Շամիրամի բնութագիրը տվել է Մովսես Խորենացին. «Շամիրամը հաճախ իր որդիներից հանդիմանվելով իր սաստիկ վավաշոտ և անառակ վարքի պատճառով, նրանց բոլորին կոտորում է...: Նա իր ամբողջ իշխանությունն ու զանձերը բարեկամներին ու սիրեկաններին պարզելով որդիների մասին ամենևին հոգ չէր տանում: Նրա ամուսինը, «գիտենալով նրա ախտասեր և չարասեր բարքը, թողեց թագավորությունը և փախավ...» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց):

Շամիրամի չարագուշակ կերպարը դժբախտության մարմնավորում է ընտանիքի և երկրի համար՝ բոլոր ժամանակներում: Շամիրամի և հայ կանանց զուգադրումներով էլ ավելի է ընդգծվում մեր միջնադարյան պատմիչների բնութագրած հայ նվիրյալ կնոջ պարզ, մաքուր ու սուրբ կերպարը, որը քրիստոնեական վերածննդի ժամանակ խորհրդապաշտվեց Սուրբ Մարիամ Աստվածածնի հոգևոր ուժով: Շարականներում գովերգվում է «Ուրախ լեր մայր Լուսոյ Մարիամ... Արեգականն Օթարան»:

Հայ առաքելական եկեղեցին սրբագործեց հայ օջախի պահպան մոր կերպարը: Ս. Մարիամը պատկերվել է հայ կնոջ

դիմագծերով: Ազգապահպան շնորհով օժտված եկեղեցին դարձավ հայ օջախի հոգևոր պահապանը:

Հիշարժան է հայ կնոջ հոգու վեհության և գթասրտության մարմնավորում տիկին Շուշանը: Նա իր տանն ապաստան տվեց Վարդանակերտի ճակատամարտում (703թ.) Հայոց իշխան Սմբատ Բագրատունուց ջախջախիչ հարվածներ ստացած 300 արաբների: Տիկին Շուշանն ընդառաջ ելավ Հայոց իշխանին և «Բազում աղերսանքներով ու խնդրանքներով փրկեց նրանց մերկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր վիճակում, որոնց վերցնելով իր մոտ, վերքերը կապեց, առողջացրեց ու հանդերձներ հագցրեց: Տվեց նաև գրաստ իր երանակից և առաքեց Իսմայելի իշխան Աբդուլ-Մելիքի մոտ, որի համար նրանից մեծ շնորհակալության և պատիվների արժանացավ» (Ղևոնդ, Պատմություն Հայոց, Ժ): Խղճուկ էր թշնամին, վեհ էր հայ իշխանուհու վարմունքը:

Հայ կինը որքան գթասիրտ, հարյուրապատիկ անգամ ավելի անողոք է թշնամու հանդեպ: Եթե Ս. Սանդուխտը, Ս. Հռիփսիմեն և նրանց ընկերուհիները նահատակվելով սրբացան հանուն հավատի, ապա Այծեմնիկ անունով մի գեղեցիկ ու անարատ հայ աղջիկ սրբացավ՝ իր կյանքը Հայրենիքի ազատությանը նվիրած պայքարում զոհաբերելով: Ականատես պատմիչ Սամուել Անեցու վկայությամբ՝ 1126թ. Այծեմնիկը, «առնացի ստացեալ սիրտ», քարերով հարվածում էր Անիի պարիսպները մագլցող թուրք-սելջուկներին՝ «առ ոչինչ համարելով նետերից ստացած վերքերը»: Այծեմնիկը հենց այստեղ էլ զոհվեց՝ դարեդար հիշատակվելով որպես հերոսուհի: Հիրավի անձնագրոհության վառ դրսևորում: Այծեմնիկը, արհամարհելով ստրկությունն ու մահը, Քրիստոսակոչ ճանապարհով գնաց դեպի հավերժություն:

Այծեմնիկները փրկել են հայոց պատիվը: Թուրք գազանների բթացած հայացքների առջև հազարավոր առևանգված հայուհիներ են իրենց նետել ժայռերից՝ փրկելով ազգն անարգանքից: Այծեմնիկներն են պաշտպանել հայ օջախն ու Հայրենիքը՝ Սասունի, Ջեյթունի, Վանի հերոսամարտերում: «Տիկ-

նայք փափկասունը Հայոց աշխարհի» առյուծացած սրտով թուրք ելուզակների գլուխներին հսկա քարեր ու կրակ էին թափում, բայց և մեծ քնքշանքով ու գորովով էին խնամում իրենց վիրավոր այրերին:

Սուսե մայրիկը չլքեց իր վիրավոր ամուսնուն՝ Սոխորդի, Նեմրուքի ու Բարշենի առասպելական հերոս Աղբյուր Սերոբին՝ ուժերի գերլարումով լեռան գագաթը բարձրացնելով: Ազատասեր արծիվներն արեգակնամերձ լեռնագագաթներին են կնքում իրենց մահկանացուն: Դաժան եղեռնն էլ չկտորեց հայ կնոջ կամքը: Նույնիսկ արյան հեղեղի մեջ էլ նա փրկում էր իր հոգևոր արժեքները՝ ձեռագրերը, որոնց ստեղծմանն էլ է ինքը մասնակցել: Հռիփսիմե, Մարիամ, Մարգարիտ, Հեղինե... նվիրական անուններ, որոնք պահպանվել են նրանց գրչագրերում (Ա. Գևորգյան, Սյունիքի, Վայոց ձորի և Որոտանի մանրանկարիչները, անտիպ):

Հայ ընտանիքը Հայրենիքում և Սփյուռքում հայ կնոջ անկտորում կամքի շնորհիվ մնաց մեր ժողովրդի հարատևության գրավականը: Հիրավի, կինը «պիտի ապրի,-ասում է Պողոս առաքյալը,-որդե՞ծնության համար, եթե մնա հավատով և սիրով և սրբությանը՝ պարկեշտությամբ հանդերձ» (Ա Տիմոթ. Բ, 15):

ՀԱՅ ԿՆՈՋ ՏՈՂՄԻԿ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հողվածը նվիրված է ազգային կյանքի հիմքերից մեկի՝ հայ կնոջ տոհմիկ կերպարի վերաճանաչմանը՝ ըստ գրականության: Վերջինս արտացոլում է հայուհու հնարավորինս ամբողջական կերպարը, որը հեթանոս ու քրիստոնյա ավանդների միահյուսմամբ ներկայանում է իբրև բարձր բարոյականության կրող: Հեղինակը կարևորում է այն, որ գրականության մեջ հայ կնոջ կերպարը, որքան էլ գեղարվեստական, ունի իր պատմական, իրական նախատիպերը, ինչն ակնկալելի է դարձնում այդ կերպարի կարևորագույն որակները կրող հայուհու դաստիարակությունը:

Հայ ժողովրդին բնորոշ հատկանիշները, որոնք արտահայտվել են արդեն էթնիկական ձևավորման շրջանից, դարերի հորձանուտներում ենթարկվել են փոփոխությունների, ցավոք, հաճախ անդարձելի աղարտումներով: «Մեր կյանքի հիմներն անդունդն ընկան և արմոտ միգում ճարձատում են դեռ»։ 20-րդ դարի սկզբին մեր մեծագույն բանաստեղծներից Եղիշե Չարենցը, անդրադառնալով հայոց ազգային ողբերգությանը, անողորմ ճշգրտությամբ տալիս է և մեր բարոյական նկարագիրը՝ հանդիպելով ազգային բարոյականության անդրանիկ բարձրագույն վկայագիր «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելին:

*Այլ է աշխարհը հիմա, այլ է հիմա Նահիրին,
Ոչ մի արքա էլ չկա, որ չտրվի քո հրին:*

Ցավոք, գայթակղումը և բարոյական ապագայնացումը շարունակվում է դարավերջին:

Մինչդեռ ազգային գոյության հարատևումը պահանջում է ինքնամաքում, ազգային իրական արժեքների վերաճանաչում և դրանք կրող սերնդի դաստիարակում:

Այդ արժեքները պիտի փնտրենք և գրականության մեջ, քանզի, ներառելով նաև բանահյուսությունն ու պատմագրությունը՝ այն պահպանել է հայի ամբողջական կերպարը:

Ինչպիսի՞ն է, օրինակ, հայ կնոջ տոհմիկ կերպարն ըստ գրականության: Արտացոլված մի շարք որակներ իրոք ազգային են և բնութագրում են հայ կնոջն առհասարակ՝ թագուհուց մինչև շինական: Ամբողջության մեջ այդ կերպարը ներկայանում է իբրև հեթանոս և քրիստոնյա ավանդների լավագույն միահյուսում:

Ազատականություն և հավասարություն: Հայաստանում կինն առանձնապես ստրկացած չի եղել որևէ, նույնիսկ ստրկատիրության շրջանում (հնագետ-պատմաբան Կարո Ղաֆադարյան): Այս շրջանի հայտնաբերված հայկական դամբարանում քարի վրա պատկերված են իրար ձեռք բռնած տղամարդ ու կին, որը նրանց միասնության ու սիրո ուխտի վկայումն է: Իսկ «Սասունցի Դավիթ» էպոսն իր հերոսուհիների մասին ասում է. «Առյուծն առյուծ է՝ էգ լինի, թե որձ»: Այսպիսին է և «Տորք Անգեղ» առասպելի դյուցազնուհի Հայկանուշը:

Այս ազատությունը, սակայն, իրացվել է յուրաքանչյուրին հատկացված ոլորտում: Հայկական ասացվածք կա. «Տղամարդը որ կա՝ դրսի պատ է, կնիկը որ կա՝ ներսի պատ»:

Հայոց պատմությունը ներկայանում է իբրև մաքառումների պատմություն. եթե ֆիզիկական պայքարը մղել է տղամարդը, ապա հոգևոր պատերազմը վարել է կինը: Միայն հայկական հասարակական-քաղաքական միջավայրը, առանձնապես սահմանափակելով կնոջ գործունեությունը, նրան մղել է ներմաքրման ու նրբացման: Ուստի պատահական չէ, որ հայ կնոջ կերպարն առավել խտացված է գրականության մեջ՝ որ-

պես մոր, կնոջ ու քրոջ: Իբրև մայր՝ հայ կինը ներկայացված է երկու հիմնական գծերով:

1. Բոլորանվեր և անսահման նվիրվածություն: Մայրական սիրո անփոփոխ ու անդավաճան լինելը և անձնուրացությունը լավագույնս ներկայացված են Իսահակյանի «Մայրը», «Մոր սիրտը» և այլ ստեղծագործություններում: Բանաստեղծի նույնիսկ ամեն ինչ ժխտող հերոսը՝ Աբու-Լալա Մահարին, միակ սուրբ է համարում մայրական գիրկը: Ինքը՝ Իսահակյանը, ասում է. «Արժեք ծնվել թեկուզ միայն մայր ունենալու համար»:

Աշխարհում ամեն ինչից հոգնած ու տառապած մարդու համար միակ անխաբ սերը, ըստ Չարենցի, մնում է մայրականը («Մորս համար գազել»): Մայրը նույնպիսի սրբություն է մեր մյուս մեծերի՝ Թումանյանի, Տերյանի, Պ. Սևակի և այլոց համար:

2. Հայրենիքի պատկերի խորհրդանշում: Հայ մայրը որդու դեմ ըմբոստանում և դառը խոսքեր է ասում, երբ վտանգված է հայրենին: Այդպիսի զգաստացնող կերպարներ են Արքայամայրը (Ն. Չարյան, «Արա Գեղեցիկ»), Մամիկոնյան մեծ տիկինը (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»), Մերուժան Արծրունու մայրը (Բաֆֆի, «Սամվել»), Սիամանթոյի («Հայրենի հրավեր»), Վարուժանի («Վարդտի նամակ») հերոսուհիները: Այս հատկանիշի առասպելացումն է հայ մամիկի կերպարը: Ջուր չէ, որ հայերս հայրենիքը, հողն ու լեզուն «մայր» ենք կոչում:

Գրականության մեջ, բնականաբար, առավել հարուստ է ներկայացված հայուհու՝ իբրև կնոջ կերպարը՝ որպես բարձր բարոյականության կրողի: Նրա տարրալուծումն ի հայտ է բերում հետևյալ որակները:

Անձնագրություն: Հանուն հայրենիքի, ժողովրդի, յուրաքանչյուրի զոհվելու պատրաստակամություն. Ծովինար («Սասունցի Դավիթ»), Ռուզան (Մուրացան «Ռուզան»):

Խորապես սիրող ու անքեն հոգի: Լավագույն կերպարներից է Թոթովենցի մայրը («Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»): «Կինը, եթե սիրի, լեռան ծանրություն կարող է կրել իր հոգում»: Ամուսնու մահվանից հետո նրա սիրուհուն

ծանրոց է ուղարկում՝ մղկտալով, թե այդ կինն էլ որբ մնաց: «Սիրելով հորս՝ սիրում էր և նրա մեղքերը»:

Խոնարհություն: Դարձյալ լսենք Թոթովենցին. «Կարծում եմ, որ աշխարհում եղել են երկու քրիստոնյա, մեկը ինքը՝ Քրիստոսը, մյուսը՝ մայրս, հայ»: Հատկապես վերջին երկու հատկանիշների շնորհիվ խաղաղությունն է թագավորել հայ օջախում:

Արժանապատվություն: Նվիրվածությունն ու խոնարհությունն ամենևին էլ ստրկամիտ չեն դարձրել հայուհուն. վկա՝ Նուարդը («Արա Գեղեցիկ»), Փառանձեմ թագուհին (Ջորյան «Հայոց բերդը»), Փառանձեմը («Վարդանանք»), Սաթենիկը (Խանգաղյան, «Մխիթար սպարապետ»), Մարգարիտը (Շիրվանզադե, «Պատվի համար»), Սառան (Նար-Դոս, «Սպանված աղավնի»):

Իմաստնություն: Անահիտ (Դ. Աղայան, «Անահիտ»):

Կենսունակություն: Օվսաննա (Սևա Սևան, «Ռոդոսթո, Ռոդոսթո»), Աղուն (Հ. Մաթևոսյան, «Ծառերը»): Վերջինս, լինելով մերօրյա հայուհու կերպար, վկայում է հայ կնոջ այս որակի անկորնչելի լինելը:

Հոգեկան հարուստ աշխարհ: Անուշ (Թումանյան, «Անուշ»), Շուշանիկ (Շիրվանզադե, «Քաոս»), Թագուկ (Ջուրապ, «Առջի սեր, առջի բարի»): Այս հատկանիշի շնորհիվ է հարկ եղած դեպքում հայուհին բարձրացել շրջապատից՝ ի զարմանս նույնիսկ յուրայինների:

Անանձնական սեր: Սա արդեն իսկական համամարդկայնության դրսևորում է: Հայ կինն օրհնում ու բարին է կամենում նեղության մեջ գտնվող յուրաքանչյուրին: «Աստված թող բոլորին հասնի, հետո էլ՝ իմ զավակներին»: Իսահակյանի մայրական քնարերգությունը այս սիրո արտահայտությունն է:

Հայրենասիրություն և քաջություն: Հայ կինը տղամարդուն հավասար իրեն պատասխանատու է զգում հայրենիքի համար. Նուարդից («Կանթաղան էմ որդուն, և նա կառնի հայկյան աղեղը մեծ») մինչև մարտնչող, զինավառ հայուհիներ՝ Վարդանանց պատերազմի տիկնանց գունդ, Անիի պաշտպան

Այծեմնիկ, Դավիթ-Բեկին աջակից սյունեցի կանայք («Մխիթար սպարապետ»), 20-րդ դարի ազգային-ազատագրական շարժման կին մասնակիցներ: Աղբյուր Սերոբի կինը՝ Սոսեն (Դաշտենց, «Ռանչպարների կանչը»), օժտված է էպիկական հերոսական գծերով. նույնիսկ Ձենով Օհանի պես զորեղ ձայն ունի, և Անդրանիկը հեռվից լսում է նրա օգնության կանչը:

Ազգային ոգու պահպանություն: Իսահակյանը նկարագրում է («Անպարտելի ոգին») 1915թ. սպանդից մազապուրծ հայերի կյանքը անապատում՝ ըստ ականատեսի. մայրերը անապատի ավազը գիրք ու տետրակ էին դարձրել հայ մանուկների համար և ուսուցանում էին նրանց: Հայ կնոջ՝ գրականությանը ներկայացված այս ազգապահ որակի մասին է վկայում և այն պատմական փաստը, որ եղեռնի օրերին երկու հայ կին կիսել են հայերեն ամենածանր մագաղաթյա ձեռագիրը՝ «Մշո ճառընտիրը», և շալակած հասցրել Արևելյան Հայաստան:

Հայ կնոջ այս նկարագիրը ևս պիտի օգնի վերծանելու այն առեղծվածը, թե «հայոց պատմության դժվար ու խավար ճամփին» ինչպես են պահպանվել ու մեր օրերը հասել «գանձերն անգին» (Թումանյան):

Առաքինություն: Այս մեկ բառով բնորոշվող՝ հայ կնոջ հավաքական լավագույն կերպարը ստեղծել է Եղիշեն: Նրա «Վարդանանց պատմությունն» ավարտվում է հուզիչ ներբողով՝ առ տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի: Հայոց այրերը զոհված էին կամ գերի, և այս ձոնն ընկալվում է իբրև կոչ. ձեր ձեռքին է հայրենին, պահեք այն: Այսօր նորից Ավարայր է, և հայ կինը պիտի դառնա դեռևս 5-րդ դարում հայուհուն բնութագրած բարձր բարոյականության ժառանգորդը:

Հայ կնոջ գրական կերպարը հարստացնում է նրա մեկ այլ դրսևորումը՝ քույր լինելը, որը ենթադրում է նշված որակների բարձրագույն արտահայտություն:

Կյանքի դժվարագույն պահերին մեր լավագույն բանաստեղծները սիրած էակին՝ խոնարհ, գթասիրտ, առաքինի, խնդրել են... լինել ավելին՝ քույր:

Այսօր եղիր քրոջ պես...

Եվ այնքան հեզ եք ու այնպես քույր...

(Տերյան)

Հոգիս այնպես կարոտ է սուրբ

Ստերմության... Եղի՛ր ինձ քույր...

(Չարենց)

Քույր իմ նազելի, նայի՛ր քո դիմաց՝

Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել:

(Իսահակյան)

Դու քո ճամփեն գնա, քույրիկ...

(Թումանյան)

Անշուշտ, նշված որակները ներկայացնում են հայ կնոջ իդեալական կերպարը: Բայց գրականությունն էլ հենց կոչված է իդեալներ տալու կյանքին: Բացի այդ, գրականության մեջ հայ կնոջ կերպարը, որքան էլ գեղարվեստական, ունի իր պատմական իրական նախատիպերը: Առավել կարևոր է, որ այսօր ինքը կարող է նախատիպ ծառայել ապագա հայ կին սերունդը ձևավորելու համար:

ՅՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈԶԱ ՓԱՇԻՆՅԱՆ

**ՀԱՅ ԿԻՆԸ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒԲ**

Դարեր շարունակ մղած ազգային-ազատագրական պայքարում ի հայտ եկավ հայի ազատատենչ ոգին, որի հավերժացման փարոսը եղավ Վարդանանց պատերազմը: Այդ ազգային-ազատագրական պայքարում իր խոր հոգեբարոյական ազդեցությունն է ունեցել հայ կինը, որի ազգապահպան դերը մշտապես եղել է մեր պատմիչների ու հոգևոր գործիչների, վիպասանների ու բանաստեղծների ուշադրության կենտրոնում: Հայ կինը խորհրդանշել է ազգի բարոյականությունը, բարությունն ու հարատևությունը:

Ազգային-ազատագրական շարժմանը մասնակցած հայ կնոջ կերպարին են նվիրված ՅՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ՝ «Խոնարի հերոսներ» և ՌՈԶԱ ՓԱՇԻՆՅԱՆԻ «Հայ կանայք արցախյան շարժման մեջ» ելույթները:

«Ուրֆայի հայ կանայք ամբողջ հերոսական դիմադրության տևողությանը իրենց կորոպով, իրենց տոկուն անձնվիրությանը և մանավանդ անօրինակ քաջասրտությամբ ոչ միայն ոչնչով ետ չմնացին իրենց եղբայրներից ու ամուսիններից, հապա և հաճախ գերազանցեցին նրանց, վասնզի հոգիների գերմարդկային ճիգով կարողացան իրենց կանացի թուլությունը մինչև առնական անվեհերությունը բարձրացնել»:

Ավետիս Ահարոնյանի այս անմահ խոսքերը նվիրված են հայ ժողովրդի պատմության ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկին: Ուրֆայեցի կանանց հերոսական պայքարն իր արտացոլումը գտավ 1905 թվին Անդրկովկասի

քաղաքների ու գյուղերի հայության վրա թաթար-ազերիների հարձակումների ժամանակ ինքնապաշտպանական կռիվներում մարտնչող կանանց՝ տիկին Շեկ-Հովսեփյանի, օրիորդ Աննայի, բժշկուհի Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանի և շատ ուրիշների կերպարներում:

Տարոնի, Վասպուրականի, Շապին-Գարահիսարի, Հաճնի, Մուսա լեռան դիմադրության կռիվներում հերոսացան ու նահատակվեցին շատ կանայք: Իրենց քաջությամբ ու հերոսությամբ աչքի ընկան Սոսե մայրիկը, Շենիկցի Շաքեն, Մշո դաշտի սուրհանդակ Մարիամը:

1941-1945թթ. իրենց հայրերի, եղբայրների ու ամուսինների հետ կողք կողքի հարյուրավոր կանայք հերոսաբար մարտընչում էին Երկրորդ համաշխարհայինի դաժան օրերին: Նրանցից շատերի անուններն առհավետ գրանցվեցին պատմության էջերում:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վառ դրսևորումներից է Արցախյան պատերազմը, որի ժամանակ ի հայտ եկան բազմաթիվ Սոսե մայրիկներ, որոնք կրկին հաստատեցին հայ կնոջ ազատատենչ ոգին: Կրկնվեց Վարդանանց մեծ պատերազմը: Այս անգամ արդեն ոտքի կանգնեցին արցախցի շուշանիկները: Հաթերքում ստեղծվեց կանանց ինքնապաշտպանական ջոկատ, որը ղեկավարում էր Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Սոսե մայրիկի կերպարը մարմնավորող Քնարիկ Սիմոնյանը: Ջոկատն անձնագոհաբար թշնամու ճիրաններից ազատեց 13 պատանդ: Արցախյան պայքարում զենքը ձեռքին կռվում էին արցախցի ժանճան, երևանցի Աղավնի Ստեփանյանը, էջմիածինցի Գայանե Մեժլումյանը: Հաղորթուն հերոսի մահով ընկան և անմահացան բուժքույրեր Ռուզան Եսայանը և Հեղինե Բոյանը: Պատերազմի դաշտում կենաց ու մահու պայքար էր մղում նաև 53-ամյա Կիմա Պետրոսյանը:

Մեծ է հայ կնոջ դերը և նշանակությունը հայ ժողովրդի ապագայի կերտման գործում: Այդ իմաստով հոգեբանական մեծ խորհուրդ է ամփոփված Գարեգին Նժդեհի մարգարեական խոսքերում. «Մայրերի ասիերի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը»:

ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԻՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեկուցումների հաջորդ խմբում ընդգրկված են հոգեբան, մանկավարժ-փորձագետների համակարգված ուսումնասիրությունների արդյունքները: Վերլուծությունները կատարվել են՝ բացահայտելու համար այն եզրերը, որտեղ կինը, իր մեջ ուժ ու կորով գտնելով պահպանելու ազգային դիմագիծը և հավատարիմ մնալով իր պատմական առաքելությանը, կարողանա ամբողջությամբ դրսևորել իր լիիրավ ունակությունները նորանկախ Հայաստանի ապագայի կերտման գործում:

Հատկապես կարևորվել է նրա դերը մատաղ սերնդի դաստիարակության, ընտանիքի, ազգային ավանդույթների, ինչպես նաև ազգային հոգեբանության կայունության պահպանման գործում:

Թանկ գին է վճարել մեր ժողովուրդը՝ պահպանելու նախնյաց՝ մեզ ավանդված բարոյահոգեբանական արժեքները, ուրեմն՝ պարտավորեցնող է մեզ տրված Աստվածաշնորհ այդ Սուրբ ժառանգության պահպանումն ու իրականացումը:

Փորձագետ-հոգեբան ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ զեկուցումը վերնագրված է՝ «ԿԻՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ»:

Հաստատելով նախորդ զեկուցողների այն պնդումը, որ մեր պատմության ամբողջ ընթացքում կինը վճռորոշ իրադարձությունների մասնակիցն է եղել՝ նա անդրադարձավ այն հարցին, որ ներկայումս կնոջ դերի բարձրացման, հզորացման

ձգտումը վերաճել է շարժման: Այդ հարցի վերաբերյալ մտքերի լայն փոխանակություն է գնում: Դրան էր նվիրված նաև 1995թ. սեպտեմբերին Չինաստանի մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցած կանանց միջազգային համաժողովը, որի հիմքում ընկած էր ՄԱԿ-ի՝ Մարդկության զարգացման 1995թ. համաշխարհային զեկույցը, ըստ որի, որոշումներ ընդունելու բնագավառում կանանց դրությունը աշխարհի երկրներում շարունակում է մնալ անհավասար: Համաձայն այդ զեկույցի՝ համաշխարհային տնտեսությունը 11 տրիլիոն ամերիկյան դոլար պակաս է ստացել այն պատճառով, որ կանանց աշխատանքը կամ չի վարձատրվում, կամ դա անբավարար չափով է կատարվում:

Համաձայնելով այն մտքին, որ կանանց շարժման հիմքում լուրջ խնդիրներ են դրված՝ զեկուցողը նշեց, որ լայն առումով այդ խնդիրները չեն վերաբերում զուտ կանանց. կնոջ իրավունքները նույն՝ մարդու իրավունքներն են՝ միայն յուրահատուկ մասնավորմամբ:

Հայ հոգեբանը այս խնդրին ցանկացավ մոտենալ այլ տեսանկյունից՝ վկայակոչելով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կարծիքն այն մասին, որ սխալ է կնոջ և տղամարդու հավասարությունը տեսնել թվի, դիրքի կամ պաշտոնի մեջ: Խտրության գաղափար չկա, յուրաքանչյուրն ունի իր հստակ դերը: Նրանց ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ մեջ է կայանում մարդկային կյանքի երջանկության գաղտնիքը:

Կինն ունի իր տեսակային, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները ու դրանով իսկ պայմանավորված՝ սոցիալական դերն ու առաքելությունը: Ո՞րն է կնոջ առանձնահատուկ կոչումը: Պատմական տեսանկյունից դա մայրությունն է, ինչպես որ տղամարդու համար՝ հայրությունը, որով էլ նրանք հատկապես արժևորվում են: Մայրության կերպարը և առաքելությունը սոցիալական առումով ոչնչով հնարավոր չէ փոխարինել. սոցիալական որևէ դիրք և որևէ պաշտոն դրա տեղը չի կարող զբաղեցնել:

Մարդկային ընկերակցությունը կազմվում է ընտանիքով, և ընտանիքում մայրն իր կարևոր տեղն ու դերն ունի. դա երե-

խայի կրթությունն ու դաստիարակությունն է: Սա մանկավարժական ու հոգեբանական ակնհայտ իրողություն է:

Ավանդաբար հայ ընտանիքը յուրահատուկ ինքնավարություն էր՝ հայրիշխանության բոլոր օրենքներով, որտեղ հոր կամքը օրենք էր: Սակայն նույնիսկ այդ ընտանիքում գերիշխողը հոր պաշտամունքը չէր: Ընտանիքի հոր համար անգամ տիրապետողը մայրապաշտությունն էր: Տղամարդը ընտանիքի բարեկեցության ապահովողն էր և պաշտպանը, կինը՝ օջախի ապահապանն ու երեխաների դաստիարակը:

Պատմությունը վկայում է, որ հայ կինը երբեք հեռու չի եղել քաղաքական կյանքից և վճռական պահերին միշտ էլ կարողացել է գորավիզ լինել իր հայրենիքին: Ու չնայած ներկայումս կին քաղաքական գործչի առկայությունը ոչ ոքի չի զարմացնում, և նրա նկատմամբ պահանջները նույնչափ խիստ են, հայերս այս հարցին միշտ էլ վերապահումով ենք մոտենում: Ընդունենք, սակայն, որ ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջն այսօր վստահված են խիստ կարևոր խնդիրներ: Յուրաքանչյուր հայ կնոջ, առավել ևս մոր համար դժվար է այսքան մոտ լինել պատերազմին, հայտնվել սոցիալական բևեռացման դաշտում ու ստիպված ստանձնել բարդ խնդիրներ լուծելու պատասխանատվությունը: Բայց այդպես է: Այսօր կինը նույնքան քաղաքական գործիչ է, որքան և մայր, որը պետք է մեծացնի ու դաստիարակի վաղվա քաղաքացուն, վաղվա զինվորին: Հայաստանը ներկայումս սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ է, կան նյութապես անապահով ընտանիքներ: Նրանց օգնելու, սատար կանգնելու համար որոշակի դեր են կատարում կանանց կազմակերպությունները:

Վերջին տարիներին հայ ընտանիքին վիճակված փորձություններն ավելի են կարևորում կնոջ դերն առօրյա կյանքում՝ նրանից պահանջելով հոգեկան ու ֆիզիկական մեծ լարվածություն, ստիպելով մոբիլիզացնել բնության կողմից իրեն տրված ամբողջ ներուժը: Կինը պետք է իր մեջ լրացուցիչ ուժ գտնի ոչ միայն հոգեկան ապրումները հաղթահարելու, այլև ընտանի-

քում բարոյական մթնոլորտը պահպանելու, ամուսնուն թիկունք կանգնելու, զալիք օրերի հանդեպ հավատ ներշնչելու համար:

Կնոջ բնական, գեներտիկական ֆունկցիան երեխաների ու ընտանեկան օջախի պաշտպանությունն է: Մայրությունը արվեստների արվեստն է: Մարդ դաստիարակելն անհամեմատ ավելի դժվար է, քան մասնագետ պատրաստելը: Տարիքի հետ մարդու հոգում իր մոր կերպարը, եթե հատկապես մանկությունը եղել է երջանիկ, ավելի ամբողջական է դառնում, իմաստավորվում: Ինչպես իր հողվածներից մեկուն պատկերավոր գրել է արժանահիշատակ Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանը, «Ընտանիքը տաճար է, և նրա քահանան մայրն է»: Մեծ ճշմարտություն և խորհուրդ կա այս տողերում:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Փորձագետ, մանկավարժական գիտությունների դոկտոր ԳԱՅԱՆԵ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ զեկուցման թեման էր «Ընտանիքի միաբանությունը՝ ազգային միաբանության նախապայման»:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում դեռևս Մաշտոցը, Կողբացին, Եղիշեն և շատ ու շատ մեծեր մատնանշում էին միաբանության բախտորոշ դերը մեր ժողովրդի պատմական ճակատագրի համար: Նրանք իրենց ժամանակակիցների ու հետագա սերունդների ուշադրությունը սևեռել են ազգային միաբանության, փոխադարձ բարեկամության անհրաժեշտության վրա: Եվ պատահական չէ, որ հասարակության տարբեր խավերի, տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների կենսագործունեության դիտարկումները, զրույցներն ու հարցումները հանգեցրին այն եզրակացությանը, որ մեր ժողովրդի փրկության ու բարգավաճման գործում այսօր էլ մեծագույն դեր ունի միաբանությունը (համախմբվածությունը):

Այս հրատապ խնդիրը պետք է սերմանվի ընտանիքում դեռևս մանուկ հասակից, քանի որ հենց ընտանիքում են ձևավորվում ապագա քաղաքացու անհատականության հիմքերը, և ընտանիքը, որպես համախմբվածության օրինակ, մեծ ազդեցություն է թողնում նրա դաստիարակության գործընթացի վրա:

Հայ ընտանիքը բնութագրող առանձնահատկությունները որոշելու նպատակով անցկացվել են հետազոտություններ, որոնց ընթացքում բացահայտվել են «միաբանություն» կատեգորիայի տիպերը՝ հաշվի առնելով ընտանիքի առանձնահատկությունների հոգեբանական և մանկավարժական չափանիշ-

ները: Հետազոտության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ընտանիքի անդամի այն հատկությունների բացահայտմանն ու ուսումնասիրմանը, որոնք ձևավորված լինելով մանկության տարիներին՝ հետագայում դառնում են ընտանեկան գժտության պատճառ:

Հայ ընտանիքը ներկայումս ենթարկվում է բարդ կառուցվածքային փոփոխությունների: Դեպի գործարար հաղորդակցումը կատարվող արագընթաց անցման գործընթացները խթանում են բնակչության լայնազանգված շարժը: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր գործարար ակտիվության կենտրոնը տեղափոխել է ընտանեկան օջախից հեռու գտնվող քաղաքներ ու երկրներ, ինչը նպաստում է այլ ժողովուրդների մշակութային հաղորդակցմանը, հանգեցնում է հոգևոր հարստացմանը և մասնագիտական աճին: Բայց մյուս կողմից այդ նույն գործընթացները հանգեցնում են բազմապիսի երևույթների մեկնաբանման ու գնահատման հակասականության առաջացմանը, փոխըմբռնման խաթարմանը, բախումների ծագման, ինչպես բուն անհատի կառուցվածքում, այնպես էլ նրա և հայրենիքում մնացած ընտանիքի մյուս անդամների միջև, ինչն էլ ի վերջո հանգեցնում է ընտանիքի անդամների գժտմանն ու օտարմանը:

Եթե նախկինում հայ ընտանիքում գերակշռում էր դաստիարակության անառարկելիության տարրը՝ ավագների նկատմամբ բացահայտ հարգանքի դրսևորում, կրտսերների հնազանդություն, ապա այժմ շատ հաճախ երեխաները չեն ենթարկվում ծնողների պահանջներին, չեն ընդունում նրանց կենսակերպը: Այս ամենը, ինչ խոսք, ազդում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի կարգավիճակի վրա, խորացնում «հայրերի ու որդիների» վաղեմի հիմնահարցը:

Եթե 60-70 տարեկանների խմբում գերակշռում է անտարբերությունը և ստեղծված կացության հանդեպ տրտում հնազանդությունը, ապա 50 տարեկաններն անթաքույց կարոտ են դրսևորում ռոմանտիզմի հանդեպ, բացահայտորեն մերժում են ընկերային-տնտեսական նոր հարաբերությունները: 40 տարեկանները փորձում են հարմարվել և ապրել ընկերային-տնտե-

սական նոր պայմաններում: 30 տարեկաններն ուշադիր ծանրութեթն են անում զարգացած երկրների փորձը և նպատակամետ գործողություններ են ծավալում: 20 տարեկաններին չեն հուզում բարոյականության հարցերը: Գործը կազմակերպելիս շրջապատի հետ փոխհարաբերություններում նրանք դրսևորում են պատանեկան մեծամտություն և օգտապաշտություն: 10 տարեկանները սովորում են լինել քաղաքակիրթ «պրագմատիկներ»: Ուսումնասիրությունը միաժամանակ բացահայտեց ընտանիքի և ամբողջությամբ վերցրած՝ ազգի միասնությանն անհանգստացնող խորքային գործընթացները: Ընտանեկան դաստիարակության համակարգի հիմքում պետք է լինեն ընտանիքի անդամների միջև օտարման բացասական դաշտ ստեղծող՝ անձնավորության՝ ծագումնաբանորեն պայմանավորված հատկությունների համահարթեցմանը նպատակաուղղված միջոցները: Մյուս կողմից՝ այդ համակարգը պետք է կառուցվի ազգի այն ազգագրական առանձնահատկությունների հենքի վրա, որոնք օգնել են նրան պահպանվել և զարգանալ պատմական տարբեր դարաշրջանների ծայրահեղ իրավիճակներում:

Ազգային համաձայնության և բարօրության հնարավոր կլինի հասնել միայն այն դեպքում, երբ մեր հասարակության բոլոր անդամները գիտակցեն ու ընդունեն յուրաքանչյուր անհատի համար ընտանիք-ազգի միաբանության դերի գերակշռությունն ու օգտավետությունը:

ԿԱՐԻՆԵ ՆԱԼՉԱԶՅԱՆ

ԱՐԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Չասարակության, ազգի, ցանկացած հանրության ներդաշնակության ապահովման հիմնական պայմաններից մեկը տղամարդկանց և կանանց միջև դերերի ճիշտ բաշխումն է: Այդ դերերի սխալ բաշխման սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքների մասին է փորձագետ-հոգեբան ԿԱՐԻՆԵ ՆԱԼՉԱԶՅԱՆԻ կողմից առաջադրվող խնդիրը: Վերլուծելով ժամանակակից հայ դպրոցի բազմաթիվ և բազմաբնույթ պրոբլեմները՝ զեկուցողը հատկապես կանգ առավ այսօր մեր առջև ծառայած աներկբայելի և անառարկելի մի իրողության՝ Չայաստանի դպրոցում տղամարդուսուցչի գրեթե իսպառ բացակայության վրա և շեշտեց այն անցանկալի հետևանքը, որ թողնում է այդ երևույթը տղաների շրջանում:

Աշակերտի համար գիտելիքների, գիտության և ընդհանրապես կրթության կրողը ուսուցիչն է: Այս տեսակետից ուսուցչի դերը խորհրդանշական է: Իսկ սեռական աճի ու զարգացման ընթացքում «ես»-ի ձևավորման գործում վճռական դեր ունի տղամարդ-խորհրդանիշը:

Իսկ այսօր մեր երեխաների մտապատկերում այդ խորհրդանիշ-ուսուցչի, գիտելիքների կրողի կերպարը միայն կինն է: Այս զուգորդման հետևանքով կրթությունն ու գիտելիքն արժևորվում և ընկալվում են որպես կնոջը հատուկ և անհրաժեշտ գործոն: Այս դիրքորոշումն իր դրոշմն է թողնում տղայի հոգեկանի ձևավորման վրա: Մինչդեռ դեռահասը թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ ամենուրեք ձգտում է դրսևորել իր առնակա-

նությունը՝ ինքնահաստատվել որպես տղամարդ: Բնականաբար, նշված պայմաններում գիտելիքներ ձեռք բերելը և կրթություն ստանալը դառնում է աղջիկների մենաշնորհը: Դժբախտաբար, այս դիրքորոշումը ներագոյում է անձի ձևավորման վրա և անշրջելի փոփոխություններ առաջացնում: Ահա թե ինչու, հատկապես բարձր դասարաններում, տղաները ոչ միայն վատ են սովորում, այլև շատ հաճախ խուսափում են դասերից: Իրենց սոցիալական դերի կայացման համար դպրոցը չի ընկալվում որպես ցանկալի միջավայր:

Այսօր, հատկապես բարձր դասարաններում, դաս սովորելը, նույնիսկ կանոնավոր դպրոց հաճախելը տղաներն իրենց արժանապատվությունից ցածր են համարում: Ավելին, դեպի գիտելիքը բնական մղում ունեցող և օժտված պատանին շատ հաճախ գիտակցաբար, կանխամտածված քողարկում է իր այդ ձգտումը, թաքցնում իմացածը՝ դասընկերների աչքում տղամարդու իր ինքնագնահատումը չնսեմացնելու համար: Ընդունակ և ջանասեր տղաները հաճախ հալածվում են, որակվում տարբեր պիտակներով, նույնիսկ արժանանում հասակակից տղաների բացահայտ ագրեսիվ վերաբերմունքին: Իսկ աղջիկները լավ սովորող տղաներին թերագնահատում են, նրանցում տեսնում անլիարժեքության գծեր:

Բարձր առաջադիմություն ունեցող, ուսուցչուհիների գովասանքին արժանացող տղան, որպես կանոն, իր հասակակիցների շրջանում սոցիալ-հոգեբանական տեսակետից մերժվածի կարգավիճակ ունի, և ներհոգեկան բախումները խոր հետք են թողնում նրա անձի ձևավորման վրա:

Խնդիրը հասարակական հնչեղություն է ստանում այն առումով, որ հայ տղամարդուն բնորոշ ինտելեկտուալ արժեքներն աղավաղվում են, և այս երևույթը կարող է արմատավորվել ու զգալի վնաս հասցնել մեր հոգևոր կյանքին, խաթարել գրքի, գիտելիքի, կրթության հանդեպ մեր ազգին ներհատուկ սերն ու ակնածանքը: Բնական է, որ մեր ընտանիքներում և դպրոցում երեխային հորդորում են, համոզում, բացատրում գիտելիքներ յուրացնելու և կրթություն ստանալու կարևորու-

թյունը: Բայց տեսական ներգործությունների արդյունքը մեծ լինել չի կարող, քանի որ այսօր երեխայի սոցիալականացման ընթացքն ինքնին չի նպաստում դրան: Ներկայիս դպրոցը կարծես կանանց հաստատություն է դարձել: Հետևաբար, կրթվածության և առնականության գրեթե հակոտնյաներ դառնալու գլխավոր պատճառներից մեկը տղամարդ-ուսուցիչների բացակայությունը և եղածների ցածր սոցիալական կարգավիճակն է: Մինչդեռ ոչ վաղ անցյալում ուսուցչությամբ մեծ մասամբ տղամարդիկ են զբաղվել: Մեր շատ ու շատ վաստակաշատ ուսուցիչներ եղել են բազմակողմանիորեն զարգացած ու ստեղծագործող անձինք՝ Ալիշան, Ադայան, Պերպերյան, Խրիմյան Հայրիկ... Նրանց աշակերտելն իսկ պատվաբեր է համարվել:

Այսօր ոչ մի դպրոցական, բացառությամբ մի քանի աղջիկների, ուսուցիչ դառնալու ցանկություն բացարձակապես չունի: Եվ տղայի իդեալական Ես-պատկերում ուսուցչի դերը մի տեսակ ամփոփվել է կնոջ կերպարում: Ելնելով վերը շարադրվածից, դժվար չէ պատկերացնել, թե որքան մեծ է հայ մարդու հավաքական ինքնությանը, ազգային բնավորության ձևավորմանը հասցված այն հարվածը, որի պատճառը առաջին հայացքից, թերևս, քիչ նկատելի և լուրջ ուշադրության չարժանացող մի իրողություն է: Մինչդեռ այս իրողությունը սպառնում է առաջիկա տասնամյակներում օտարել հայ տղամարդուն մտավոր արժեքներ ստեղծողի (այդքան իրեն հատուկ) ասպարեզից:

Կարծում ենք, նկարագրված երևույթը պետք է դառնա պետական քաղաքականության խնդիրներից մեկը, որի լուծումը կապահովի օժտված տղամարդ-ուսուցչին դպրոցում պահելու սոցիալ-հոգեբանական, տնտեսական, բարոյական և իրավական պայմանները:

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԽՈՍՔ

Ծրագրի նպատակի պարզաբանումը, ըմբռնումը, անշուշտ շատ կարևոր են: Սակայն սա հարցի միայն մի մասն է: Պետք է գտնել դրա գործադրման լավագույն միջոցները: Խնդիրն այն է, որ մենք կարողանանք որոշակի ժամանակահատվածում գտնել պատասխանները այն հարցերի, որոնք համարում ենք կենսական: Կան ընդհանուր երևույթներ, կան պատմականորեն առաջացած դժվարություններ, և կան խնդիրներ, որոնք առաջանում են այս վերջին տարիներին:

Այսօր հույժ կարևոր է տեսնել, թե ինչ միջոցներով կարող ենք ի հայտ բերել և մատուցել մեր հասարակության տարբեր խավերին ազգի հոգեբարոյական կորովի բարձրացման հնարավորությունները: Սա անհրաժեշտ է՝ տարբեր դժվարություններն ու վտանգներն արագ, արժանավայել, քիչ կորուստներով հաղթահարելու համար: Հույժ կարևոր է բացահայտել, թե արդյոք ունենք այնքան վարակամերժ կարողություն, որ դիմակայենք տարբեր «սպիդներին»: Խնդիր դարձնենք այդ վարակամերժ հատկությունների զարգացումը (սա կա ՀԱՅՔ հաստատության թիվ 1 ծրագրում):

Այսօր հայության կեսից ավելին կանայք են, որոնք ունեն բնական առանձնահատկություններ, ունեն ընկերային ուրույն վիճակ և դեր: Սա անշուշտ պետական խնդիր է անկախ Հայաստանի համար, այսինքն՝ ազգային պետության համար: Առաջիկա 20-30 տարիների ընթացքում հայ կանայք, որոնք այսօր կազմում են բնակչության շուրջ 50-60%-ը, դաստիարակելու են ազգի նոր սերունդների 100%-ը: Ինչպիսի՞ն է լինելու ազգը 20-50 տարի հետո, կենսունակ, թե՞ ոչ, և պատրաստ գրավելու իր արժանավայել տեղն ազգերի ընտանիքում, թե՞ ոչ՝ մեծ չափով կախված է այսօրվա այս 50-60%-ից: Այս հասկացողությամբ է ՀԱՅՔ հաստատությունը առաջարկում նայել խնդրին: Դա չի

նշանակում, որ այլ խնդիրներ չկան, բայց հույժ կարևոր է այս էական պատասխանները գտնել և մեր պարտքը կատարել մեր ժողովրդի ու նաև մարդկության հանդեպ: Թող ուրիշները ևս օգտվեն այն «տեխնոլոգիաներից», որոնք հայ ժողովուրդը կմշակի նեղ վիճակից համեմատաբար անկորուստ դուրս գալու համար: Պետական, ազգային ու մարդկային խնդիր է՝ ավելի կազմակերպված, ավելի մոբիլիզացված, ավելի նպատակաուղղված ջանալ արագ դուրս գալ նեղ վիճակից: Մեր ժողովուրդը բազմիցս տեսել է նեղություններ, բայց մատաղ սերնդին Դեր-գործի ավազների վրա այբուբեն է սովորեցրել: Եթե հայ ժողովուրդը կարողանա արժանավայել դուրս գալ վերոնշյալ վիճակից, սա համամարդկային երևույթ կլինի:

Հավատանք, որ մենք դեռ չենք սպառել մեր հնարավորությունները, ունենք մեծ ներուժ այս հարցում. կամք, բարեխղճություն, կազմակերպվածություն և նման հատկություններ, որոնք անհրաժեշտ են, և դրանք զորահավաքի ենթարկելով՝ կկարողանանք կատարել, բավարարել պահանջվածը:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր
ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑԻ
«ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ ԵՎ ԴՐՍԻՑ» ԳՐՔԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՀԱՇՎԱՐԿ
ԾՐԱԳԻՐ
(համառոտ տարբերակ)

ՀԱՅՔ հաստատությունը ազգային խնդիրներին, իր սկզբունքի համաձայն, միշտ ջանացել է մոտենալ գիտական օբյեկտիվությամբ և համահայկական չափանիշով ու հեռանկարով: Միաժամանակ, այդ խնդիրների կատարման գործընթացի ծրագրման համար ՀԱՅՔ հաստատությունը ձգտել է դրանք դիտել փոխկապվածության, ընդհանրության և մեկ ամբողջության մեջ, որն արտահայտված է իր մշակած տասը հիմնական ծրագրերում: Այս առումով ՀԱՅՔ հաստատությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրը դիտում է որպես հայ ազգային սոցիալ-տնտեսական քաղաքականության խնդիր, ինչպես վերջինս՝ հայ ազգային (ներքին) քաղաքականության դոկտրինի բաղկացուցիչ մաս:

Այդուհանդերձ, քանի որ սույն պարագայում խոսքը վերաբերում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլընտրանքային հաշվարկին, ապա հայ ազգային սոցիալ-տնտեսական քաղաքականության ու հայ ազգային (ներքին) քաղաքականության դոկտրինի վերաբերյալ իր տեսակետը ՀԱՅՔ հաստատությունը կարտահայտի առանձին:

Ինչո՞ւ ընտրվեց Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման սույն այլընտրանքային հաշվարկը:

Նախ, որովհետև այդ նյութը բխում է ՀԱՅՔ հաստատության թիվ 9 ծրագրից («Հայաստանի հետ սփյուռքահայության և նրա միջոցով նաև տարբեր երկրների գործարար, մասնագի-

տական և գիտատեխնոլոգիական գործակցություն»): Երկրորդ՝ այս այլընտրանքային հաշվարկը կատարվեց այն նկատառումով, որ Հայաստանի Հանրապետության անցյալ ավելի քան տասը տարիների ընթացքում, ինչպես նաև հայության ավելի լայն իրականությունում, ազգային նպատակների կենսագործման չափերը, ժամկետները և դրա համար անհրաժեշտ միջոցները և նախապայմանները չեն հստակեցվել կամ, լավագույն դեպքում, աղոտ կերպով են նշվել այդ նպատակների իրագործման ծրագրերում:

Այս հանգամանքը, ըստ երևույթին, խիստ դժվարացնում կամ նույնիսկ անկարելի է դարձնում ազգային տվյալ խնդրի կատարման արդյունքը հստակ և ժամանակին նկատելը, գնահատելը և հնարավոր շեղումների պարագայում ըստ այնմ ուղղելը: Եվ ամենակարևորը, որ այդ պատճառով դժվարանում է անկանխատեսելի անկումային ընթացքներից և հիասթափեցնող ու բարոյազրկող վիճակներից խուսափելը: Մի հանգամանք, որն արդեն քանիերորդ տարին է, որ մեր ազգն ու երկիրը դիմազրավում են:

Այս առումով անհրաժեշտ է, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ժամկետներն ու չափերը, դրանք իրագործման համար անհրաժեշտ նախադրյալներն ու միջոցները, ինչպես նաև այդ բոլորի ապահովման գործնական ծրագրերը և ստուգման, գնահատման ու հաշվետվության մեխանիզմները սկզբից ևեթ պարզվեն, հստակեցվեն և մատչելի ձևով ներկայացվեն կատարողներին, շահագրգիռ այլ կողմերին և, հատկապես, ժողովրդին:

Այս և նման նկատառումներով ՀԱՅՔ հաստատությունը կարևորում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորման այնպիսի այլընտրանքային հաշվարկի կատարումը, որը նախ բխի հետևյալ սկզբունքից՝ **ձգտել իրագործել ազգի համար այն, ինչ անհրաժեշտ է, այլ ոչ թե միայն այն, ինչ թվում է՝ կարելի է: Երկրորդ, բացի Հայաստանի սոցիալ-տնտեսական գերխնդրի հաջող կատարմանը նպաստելուց, դրական նշանակություն ունենա նաև հայության քաղաքական**

մշակույթի զարգացման, ազգային-քաղաքացիական գիտակցության բարձրացման և հայության բոլոր հատվածների կողմից «Հայաստան-Սփյուռք» փոխհարաբերությունների դերի կարևորության՝ ավելի գաղափարական, ավելի հստակ ու ավելի կիրառական ընթրնման համար: Մի նախապայման, որն անհրաժեշտ է նաև ազգային այլ կենսական բնագավառներում առավել հաջողության համար:

- Հայաստանից արտագաղթի լրիվ դադարեցում ու արտագաղթածների առնվազն 50%-ի վերադարձ Հայաստան.
- Հայաստանի աշխատուժի առնվազն 90%-ի զբաղվածություն.
- Հայաստանի աշխատավորի ամսական միջին աշխատավարձի աստիճանական աճ 2007թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ՝ նվազագույն միջինի հետևյալ երեք տարբերակներով՝

ա) 150.000 դրամ (\$273, \$1-ը՝ 550 դրամ հաշվով)

բ) 125.000 դրամ (\$227)

գ) 100.000 դրամ (\$182)

Այս առումով որոշ հարցեր և պատասխաններ՝

- Հիմնականում ինչի՞ց է կախված այդ գերխնդրի կատարման հաջողությունը:

Պատասխան. Այդ գերխնդրի կատարման հաջողությունը կախված է հայոց ազգային հավատամքից բխող համայն հայության՝

- հոգեբարոյական վիճակից
- ազգային գաղափարախոսությունից
- ազգային ինքնագիտակցությունից և
- ազգային-պետական ու քաղաքացիական մտածելակերպից, պարտաճանաչությունից, կարգապահ պատրաստակամությունից: Իսկ դրանց հիման վրա կկառուցվի ազգային կառավարման այնպիսի կենսունակ կառույց, որը ոչ միայն համայն հայության հոգեկան, բարոյական, մտավոր, նյութական և դիրքային ներուժը լիո-

վին ու լիարժեքորեն կծառայեցնի ազգի ու հայրենիքի ապահովությանն ու վերելքին, այլև շարունակ կաճեցնի այդ ներուժը քանակապես և, մանավանդ, որակապես... Աստծո օգնությամբ:

- Հայաստանն ու հայությունը հիմնականում ինչպե՞ս կարող են ապահովել այդ գերխնդրի կատարումը:

Պատասխան. Հայաստանն ու հայությունը այդ գերխնդիրը գերազանցորեն կկարողանան կատարել 1700-ամյա քրիստոնեական հավատքի հոգևոր-ազգային վերածնունդով առաջացած անմահ հոգու հատուցման հավատքի և գիտակցության՝ ազգային պարտաճանաչությամբ, ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության,* մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ճակատագիր նշանաբանով:

* * *

Այս այլընտրանքային մեթոդական հաշվարկով ակնկալվում է պարզեցնել և կոնկրետացնել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման կենսականորեն անհրաժեշտ չափորոշիչները՝ դարձնելով դրանք մրցանիշ բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Այս հաշվարկի նպատակն է նաև ցույց տալ, թե ինչպիսի (շատ երկրների համեմատությամբ) անսովոր մեծ առաջադիմություն ու աճ պետք է ապահովենք, որպեսզի երկարաձիգ հինգ տարիներ հետո մեր Հայաստանի ժողովուրդն ու պետությունը զոնե նվազագույն բնականոն նյութական հնարավորություններ ունենան, այսինքն՝ ժողովուրդը կարողանա իր ֆիզիկական գոյությունն ապահովել ու մարդկային արժանապատվությամբ իր հայրենիքում ապրել, իսկ պետությունն ի վիճակի լինի երկրի անվտանգության ու հետագա զարգացման կենսական պահանջները կատարել:

* Տե՛ս «Հայացք ներսից և դրսից» գրքի 34-43 էջերը:

Բացի դրանից, այս մեթոդական մոտեցմամբ, ինչպես ակնկալվում էր, կառաջանա առնվազն երկու պայման:

Առաջինը՝ Հայաստանի ու հայության քաղաքական, հասարակական, գիտական, տնտեսական շրջանակները, շահագրգռվելու պարագայում, կներառվեն ազգի համար կենսական այս գերխնդրի կատարման քննարկմանը՝ հայտնելով նաև իրենց գաղափարները, տեսակետները և մասնակցության բնույթն ու ձևերը, որի միտումն արդեն կարծես կա:

Երկրորդ, եթե որևէ կողմի առաջարկները կամ ծրագրերը չհամապատասխանեն գերխնդրի կատարման պահանջներին, ապա դա կհայտնվի համեմատաբար շուտ, և հնարավոր կլինի դիմել այլընտրանքների:

Իսկ եթե պարզվի, որ ազգն ի վիճակի չէ կատարելու տվյալ գերխնդիրը, այսինքն՝ պարզվի, որ հինգ տարի հետո էլ Հայաստանի ժողովրդի ստվար մի մաս չի կարողանալու նվազագույն կենսապայմաններ ունենալ, այդ դեպքում... գոնե հիմա անմիջապես հնարավորություն կունենանք Ազգային Աղետի Ահազանգը հնչեցնել և անցնել արտակարգ միջոցների կիրառմանը: Քանի դեռ թվում է, թե ժամանակ ու եռանդ մնացել է դրությունը և ընթացքը շտկելու, եթե աչքներս բացվեն, կտեսնենք, թե ո՞ր անդունդն ենք գնում ու եթե խղճներս արթնանա, և կզգանք մեր պարտքը և խելքի կզանք, կուղղվենք ու կկատարենք: **Այլ ոչ թե սկսենք այդ մասին մտածել, երբ բանը բանից անցնի, ազգը դառնա տկար, անզոր, ցրիվ... իսկ հայրենիքը՝ անցյալ...**

Ակնհայտորեն չափն ու սահմանն անցնում է թե՛ մեր ժողովրդի ֆիզիկական ու բարոյական հյուծվածության և թե՛ պարտքով ու ողորմությամբ պետություն գործարկելու ընթացքը, որ գրկում է մեր պետությանը նաև գոնե որոշ անկախություն ունենալուց:

Նման պատասխանատվությամբ մոտեցումը ու ըստ այնմ ազգի նախապատրաստվածությունը, ըստ երևույթին, պետք էր ցուցաբերել դեռ նախքան անկախության հռչակումը: Հայության քաղաքական և գիտական միտքը, եթե չունեցավ զգո-

նությունը և կամ պարտաճանաչության զգացումն այն ժամանակներում, ապա գոնե 90-ականների սկզբին պետք է ունենար:

Նույնը պետք է աներ նաև ամբողջ հայությունը և չպետք է կարճատեսորեն ու անտարբերությամբ համակերպվեր Հայաստանի տնտեսության այդպիսի կազմալուծմանը, զանգվածային գործազրկությանը և 2-10 դոլար ամսական աշխատավարձին և թռչակին, որը, բացի ամեն ինչից, վիրավորական է հայ մարդու արժանապատվությանը, քանի որ այն աներկբայորեն նշանակում էր՝ կամ լքի՞ր հայրենիքդ, հարազատներիդ և կամ... ենթարկվի՞ր դեգրադացիայի՝ կոռումպացմամբ, բարոյազրկմամբ ու այլասերմամբ: Եվ այս վիճակը, որոշ բացառություններով, դեռ շարունակվում է իր բոլոր խորացող կործանարար հետևանքներով:

Այժմ՝ 2002 թվականի ավարտին մոտ, կարելի՞ է սթափվել և վճռականորեն հայտարարել, որ մեր ազգի, երկրի և պետության գոյատևման, դրանց արժանապատիվ կյանքի և ժողովրդի նվազագույն կենսամակարդակի համար ահա՛ նշածողի բարձրությունը, որի՝ հինգ տարի հետո նվաճելու գործընթացն սկսվում է այսօրվանից, և այդ գործընթացի արդյունքները հանրագումարի բերվեն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ և այն էլ՝ ամբողջ ազգի համար, այլ ոչ թե միայն «վեց հոգու» համար:

Հետևապես՝ իշխանություն ու ընդդիմություն, կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, գիտություն ու մտավորականություն և մանավանդ գործարար հայություն, կարելի՞ է, որ այժմ ևեթ *նշածողի նշված բարձրության (իսկ առարկության պարագայում՝ նշածողի իրենց բարձրությունը հայտարարեն) և նվաճման իրենց ծրագրերը և դրանք իրագործելու ունակ իրենց թիմերը ներկայացնեն:* Որպեսզի սա՛լ լինի ժողովրդի և պետության նկատմամբ պարտաճանաչության և այդ պարտքը կատարելու կարողության ցուցանիչը:

Օգուտ չունի և պետք չէ՛ որևէ իշխանավորի հրաժարականը պահանջել՝ առանց հիմնավորելու, որ այդ պահանջողներն ունեն տվյալ հարցի պատասխանը: Ժողովրդավարու-

թյուն, հայրենասիրություն, ընդունակություն և կարողություն դրսևորելու միջոցը թող լինի դրված հարցի, խնդրի ճիշտ և ժամանակին պատասխանելը և լուծելը:

Ազգի, երկրի ու պետության համար կենսական որևէ խնդրի լուծման, որևէ կարիքի բավարարման մրցահրավերը պետք է լինի հստակ և բոլորի մասնակցության համար ազատ ասպարեզ, նաև՝ ազնիվ ասպարեզ ու անվտանգ ասպարեզ:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ նշանակետը մեր ժողովրդի ու հայրենիքի զոյապահպանման նվազագույն պայմանն է: Այնուամենայնիվ, եթե լինեն այդ պայմանի չափանիշի ընտրության վերաբերյալ այլ կարծիքներ, դրանք պետք է անհապաղ ներկայացվեն ու ամենայն ուշադրությամբ հաշվի առնվեն իշխանությունների, հասարակության և բոլոր շահագրգիռ կողմերից: Վերոհիշյալ ու այլ կողմերը պետք է նշաձողի բարձրության իրենց առաջարկած աստիճանը և այն նվաճելու իրենց ծրագրերը, ժամկետներն ու թիվերը ներկայացնեն ազգին առանց հապաղելու: Սակայն եթե ներկայացվածն իջեցնում է նշաձողի բարձրությունը, այդ դեպքում պետք է նաև նշի դրա բազմակողմանի հետևանքներն ու ներկայացնողների պատասխանատվությունը դրանում: Թվում է, թե միանգամայն ակնհայտ է, որ նշաձողի ավելի բարձր աստիճանը միայն պետք է լինի հայ ժողովրդի օրակարգում: *Եվ սպասելու տեղ այլևս չկա, որովհետև քանակական ընկրկումն արդեն ստացել է որակական բնույթ...*

Այս մոտեցումով պետք է հավատալ, որ հնարավոր կլինի նաև սկսել Հայաստանի ու հայության կյանքի ավելի ժողովրդավարական, իրավ հայրենասիրական և իրավ պետականորեն հասուն ու քաղաքականորեն գրագետ գործընթացը, որ անհրաժեշտ է նաև լիովին և բարձրագույն արդյունավետությամբ օգտագործելու համար ազգի Աստվածատուր բազմակողմանի ներուժը ազգի ու հայրենիքի ապահովության, զորացման և վերելքի համար:

Աստուծո օգնությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՐՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայոց ազգային զոյությանը վերաբերող հարցադրումն այս անգամ սկսենք նրանից, թե ինչպե՞ս եղավ, որ աշխարհի 10 միլիոն հայությունը, որի մոտ կեսն ապրում է աշխարհի զարգացած երկրներում և իր միջին կենսամակարդակը այդ երկրների միջին կենսամակարդակից բարձր է, չի կարողանում 30+5 հազար քառակուսի կիլոմետր կազմող հայրենիքի մնացորդը աշխարհի ամենազարգացած տարածքներից մեկը դարձնել:

Ի՞նչ պատահեց մեզ: Ի՞նչ է պակաս և ի՞նչն է խանգարում, որ ապրենք ազգային արժանավայել կյանքով՝ մարդկային ընտանիքում: *Մինչդեռ համայն հայության կարողությունը և մանավանդ ներուժը շատ ավելի մեծ է, քան մեր զարգացման աստիճանը:*

• 2^ե որ երբեք չենք եղել այսքան ազատ և զերծ այլոց տիրապետությունից:

• 2^ե որ երբեք չենք եղել այսքան ուսյալ՝ անցյալ և նույնիսկ ներկա ամենաուսյալ ազգերի համեմատ:

• 2^ե որ երբեք չենք եղել այսքան հարուստ՝ մեր անցյալի և նույնիսկ ներկայիս մեր թվաքանակի համեմատ:

Այդ դեպքում ինչո՞ւ ենք ետ մնում մարդկության ընդհանուր մրցակցության մեջ: Ինչո՞ւ է մեր երկիրը խեղճ, ու պանդուխտները շատանում են:

Ի՞նչ պատահեց մեզ: Ի՞նչն է պակաս և ի՞նչն է խանգարում, որ ապրենք ազգային-պետական ապահով, բարգավաճ ու արժանապատիվ կյանքով և վաղվա վառ հույսով մեր երկրում...

Արդյո՞ք պատճառը մեր մարդկային հայկական որակի հարաճուն անկումն է... Ի՞նչ է անկումը, և ինչո՞ւ այն արագացավ մեր օրերում:

Այս ու հարակից հարցերի ճիշտ պատասխաններն ունենալուց հետո էլ կարող է ի վիճակի չլինենք կասեցնել մեր անկումային ընթացքը ու այն փոխել վերելքի, որովհետև այլ էական նախապայմաններ էլ կան, որ հարկ է ապահովել: Բայց եթե այս ու հարակից հարցերի պատասխանները ճշգրիտ և լրի՛վ չստանանք, մենք հաստատ չենք կարողանալու կասեցնել մեր անկումը ու ապահովել վերելքը:

Գերխնդրի ճշգրիտ ու ամբողջական ճանաչումը դրա լուծման կարևորագույն մասն է... Լուծման մյուս կարևորագույն մասը՝ դրա համար պատրաստ, հմուտ ու բարոյապես արժանի՝ ազգային կրիտիկական զանգված գոյացնելն է՝ *համապատասխան տարրերից*:

ՀԱՅՔ հաստատությունը 40 տարի առաջ՝ 1962թ., ստեղծվել է նաև այդ կարիքի գիտակցությամբ ու իր համեստ հնարավորությունները ներդրել է այդ գերխնդրի լուծմանը-կատարմանը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՐՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախքան ՀԱՅՔ հաստատության՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական այլընտրանքային հաշվարկի ֆինանսական, տնտեսական, արտադրական, արտահանման, կազմակերպական կառավարման ու այլ միջոցների, կառույցների և մեխանիզմների, ինչպես նաև դրանց առնչվող այլ բնագավառների վերաբերյալ ծրագրեր առաջարկելը, հարկ ենք համարում արձանագրել հետևյալ իրողությունը:

Ըստ ներկայացված այլընտրանքային հաշվարկի տեմպերի՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը միայն ֆինանսատնտեսական-առևտրական հարց չէ, այլ ազգային, քաղաքական, կազմակերպական կառավարման և մանավանդ գաղափարախոսական և բարոյական հարց: Հետևապես Հայաստանի, ինչպես նաև ամբողջ հայության տնտեսական և սոցիալական զարգացումը, բարգավաճումը և դրանց հարատև վերելքը (կրթական, մշակութային, առողջապահական, քաղաքական, միջազգային ու այլ բնագավառներով հանդերձ) ուղիղ համեմատական է Հայաստանի ու ամբողջ հայության մարդկային-ազգային հոգևոր, բարոյական և գաղափարական անաղարտությանը և դրանց զորության մակարդակի բարձրության աստիճանին: *Իսկ դրանց անաղարտ ու բարձրագույն աստիճանը կարելի է նվաճել միայն ու միայն մեր 1700-ամյա Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի շնորհքով, գիտությամբ ու զորությամբ: Սա այդ նվաճման հոգին է, մարմինը՝ Հայ ազգային կրիտիկական զանգվածի զորձնական առկայությունը:*

Հետևապես այդ նվաճման առաջնային մղումն ու ձգտումը պետք է լինի ոչ թե մեր նյութական շահագրգռվածությունը, այլ ամենաէականը՝ հոգևորը: Այսինքն՝ առաջնային մղումը պետք է լինի մեր աստվածասիրությունն ու հավատարմությունը Քրիստոսին, և ձգտումը՝ արժանանալը հավիտենական

կյանքին՝ ապրելով և գործելով ըստ մեզ կտակված հավատանքի և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) գաղափարական ու բարոյական արժեքների:

Եվ Աստված կօգնի: Այս հանգամանքը երբեք չպետք է անտեսել, որովհետև Աստված սիրում է հայ ազգն ու երկիր Հայաստանը (դրա ապացույցները բազմաթիվ են և բխում են մեր հավատքից): Եվ Նա դարձյալ կպարզևի հոգու տեսողություն մեր ազգին և մանավանդ մեր հայրապետության, հանրապետության և մտավորականության ղեկավարությանը, և նրանց առաջնորդությամբ մենք կտեսնենք դարձյալ, ինչպես մեր նախնիք, թե՛ երկնային և թե՛ երկրային փրկության ուղին, որով և թե՛ հոգևոր և թե՛ նյութական ապահովության, զարգացման, բարգավաճման և վերելքի ուղին ու միջոցները: Ի բարօրություն նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Եվ այս վերակերտման, վերականգնման հիմքը հայոց հոգևոր վերածնունդն է՝ քրիստոնեական հավատքի Վեմի վրա:

Այս հաստատումները Վարդան Գրիչենցի «Հայացք ներսից և դրսից» գրքում ներկայացված են նաև գրաֆիկական արտահայտությամբ, որտեղ Վեմի վրա՝ հիմքից դեպի վեր, հայությանը սպասում է ամենայն ապահովություն և ազգային վերելք, Աստուծո օրհնությամբ, օգնությամբ:

ՆՅՈՒԹԱԿԱՆԸ ԱՆՐՈՒԺԵՇՏ Է, ԲԱՅՑ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ

Հայաստանի սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացման (տվյալ ծրագրի) համար առաջին իսկ հայացքից երևում է, որ անհրաժեշտ են զգալի չափի համապատասխան նյութական և գործնական միջոցներ: Բայց եթե լայն պատկերով ու հեռանկարային մոտենանք խնդրին, կտեսնենք, որ այդ պահանջն անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Առանց մեր ժողովրդի, հատկապես նրա համեմատաբար կարող մասի գոնե մի հատվածի («կրիտիկական զանգված») հոգեբարոյական և գաղափարական մակարդակի և դրանից բխող ու դրա վրա հիմնված ազգային ինքնագիտակցության համապատասխան բարձրության վրա լինելու, չի լուծվի Հայաստանի, հետևապես և հայության սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացման խնդիրը: Հետևապես չի լուծվի նաև հայ ազգի ու Հայաստան հայրենիքի գոյության ապահովման խնդիրը, էլ չսասած զարգացման, բարգավաճման ու արժանավայել կյանքի ապահովման խնդիրը: Ընդհակառակը, այդ մակարդակի ցածրության համապատասխան կշարունակվի մեր անկումային ընթացքը մինչև մեր գոյության որակական սպառումը:

Ի՞նչ հիմքի վրա է նման եզրահանգումը:

Մարդկության զարգացման և դրա մեջ մեր ազգի զարգացման պատմական օրինաչափության հիմքի վրա. ըստ մեր հավատամքի չափորոշիչների, բոլոր կենսագործումները սկսել և վերջին հաշվով կատարվել են հավատքի, բարոյականության և գաղափարականության հիմքի վրա: Առանց այդ գործոնի ազգային հասարակական, հետևապես և մարդկային զարգացում, առաջընթաց ու վերելք չի եղել: Ընդհակառակը, այդ գործոնի բացակայության աստիճանի համապատասխան եղել է հետադիմություն, լճացում, նեխում ու քայքայում:

Նույնը ճիշտ է նաև մեր ազգի համար:

Պատմությունից բացի մի պահ դիտենք ու անդրադառնանք մեր ազգի ժամանակակից երկու մեծագույն նվաճումներին ու նաև ձախողումներին:

Կատարվեց մեր նախնյաց իղձը: Նրանց դարավոր երազն իրականացավ ի դեմս ազատ հայրենիքի և միջազգայնորեն ճանաչված ազգային պետականության: Սակայն այդ իրականացումը չի համապատասխանում իր կոչումին: Պետականությունը մեծամասամբ կենսագուրկ և ինքնաբավ է, ժողովուրդը հիասթափված է, անհայրենիք, պետականագուրկ ու անապահով հայերի թիվն աշխարհում ավելանում է... Եվ Հայաստանը համայն հայության հայրենիք ու պետություն չդարձավ: Փորձում ենք ունևոր հայերի նախընտրելի զբոսաշրջային երկիր դարձնել:

Ազատագրվեց Արցախը, բայց արցախահայության զգալի մասը խեղճ, աղքատ ու սոցիալապես անապահով է, զուրկ արժանապատիվ կենսամակարդակից, սոցիալական ու հասարակական կյանքից, ինչպես և Հայաստանի՝ հայության զգալի մասը:

Բայց սա անարդար, անտրամաբանական ու նաև անօթալի վիճակ է, թեկուզ միայն նրա համար, որ օբյեկտիվորեն մեր ազգային կարողությունը և մանավանդ համընդհանուր ներուժը շատ ավելի մեծ է, քան մեր զարգացման, բարեկեցության ու ապահովության փաստացի աստիճանը:

Թող ոչ ոք չմտածի, չասի, թե շատերը մեզ նման են, որովհետև պատասխանը կլինի՝ մարդը, տվյալ դեպքում հայ մարդը, երբեք չի գոհացել խեղճին հավասարվելով, թշվառին նմանվելով: Հայը ձգտել, աշխատել և գոհացել է նվաճելով հոգեբարոյական և նյութական բարձրագույն նշանոդեր: Ու այդ բարձրությամբ ապրելով՝ նա գոհացել է նաև ձեռք մեկնելով, օգնելով այլոց, որ բարձրանան...

Իսկ հիմա ի՞նչ է պատահել մեզ:

• 2^ե որ հայ ազգը երբեք այսքան ազատ ու զերծ այլոց տիրապետությունից չի եղել:

• 2^ե որ հայ ազգը երբեք այսքան ուսյալ ու մասնագիտացած չի եղել:

• Եվ չէ՞ որ հայ ազգի մեջ երբեք նաև այսքան հարուստ չի եղել:

Այդ դեպքում ինչի՞ համար և ինչի՞ց է մեր ազգային թշվառության հասնող վիճակը՝ բազմաթիվ չափանիշներով:

Հարցերը շատ են ու կենսական, և հույժ կարևոր է դրանց ճիշտ ու արագ պատասխանների ստացումը:

Բայց մի պատասխան այժմ ևեթ պարզ է ու հստակ: *Այն, որ գրված ինչուների պատճառները մեկ հիմք ունեն. մեր ժողովրդի ու հատկապես ազգի ղեկավարության հոգեկան, բարոյական, գաղափարական և դրանցից բխող ու դրանց վրա հիմնվող ազգային ինքնագիտակցության մակարդակն ընկած է:*

Եվ ազգային պատմական, պետական և ճակատագրական պահանջն է հոգեկան զարթոնքով հավատքի վերածնունդ ապրել և դրանով իմաստնացած ու զորացած բարձրացնել այդ մակարդակը, բարձրացնել մինչև մարդկային ամենաբարձր աստիճանների՝ որպես 21-րդ դարի հայկական հրաշք:

Մենք ունենք այդ հրաշքը կատարելու բոլոր նախապայմանները՝ հավատքի հոգևոր մոտիվությամբ՝ բարոյական և գաղափարական պարտաճանաչության ներուժից, մինչև մեր զենքերի ժառանգակիր հմտության ու կարողության ներուժը: Այն կկարողանանք հոյակապորեն կենսագործել, եթե մենք ճանաչենք, եթե գիտակցենք ու հասկանանք, թե ո՞վ ենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ր ենք գնում:

• Այն ժամանակ կլինենք գործարար, բայց ոչ չարչի...

• Կլինենք ազնիվ, բայց ոչ քաղթենի...

• Եվ կլինենք նաև շահտ հարուստ... բայց ոչ նյութապաշտ:

Քանզի այն ժամանակ կլինենք մա՞րդ, հայ մարդ և մեր կյանքը կիմաստավորենք մեր 1700-ամյա հավատքի ապրումով ու գործերով, որով և անպայման, միշտ ու ամենուր կունենանք վերելք, պատիվ և բարեկեցություն, ի բարօրություն նաև մարդկության և ի փառս Աստուծո...

Սա, այո՛, Հայաստանի սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացման ծրագրի հաջողության նախապայման-հիմքն է, որի վրա կկարողանանք անպայման կառուցել հայոց զարմանահորաշ փառավոր շենքը, որը նաև բաց կլինի ու եղբայրաբար կհասնի բոլոր այլոց կարիքներին...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ներկայացված այլընտրանքային հաշվարկը հատկանշական է, որ ենթադրում է երկու անսովոր հանգամանք:

Մեկը՝ տնտեսագիտության մեջ ազգային արդյունքի բարձրացման անսովոր տեմպերը, երկրորդը այդ տեմպերի ապահովման հիմքում հոգեբարոյական և գաղափարական գործոնի կիրառությունը: Երկուսն էլ ուրույն ու անսովոր են գործարար աշխարհում, բայց իրենց բնույթով օտարոտի չեն մարդկային կյանքում և հայ պատմական իրականությունում: Մեզ մնում է ծանաչել, գիտակցել, որոշել և կատարել:

Մի արագ հայացք երկրորդ գործոնի վրա:

Խեղճ ու կրակ, մրսած ու կիսաքաղց, դեռ կարգին կյանք չմտած մեր պատանիներն ու երիտասարդները, հոգու պարտքի գիտակցմամբ, հայրենասիրությամբ՝ կյանքի մեծ ռիսկով ինքնական զորագրվեցին ու կռվեցին ազգի ու հայրենիքի համար, հաղթեցին ու ազատագրեցին Արցախը օտար բռնակալությունից:

Հիմա մենք ո՛չ խեղճ, ո՛չ մրսած, ո՛չ էլ կիսաքաղց՝ արդեն կյանք մուտք գործած, կյանք տեսած հայ գործարարներս, ձեռներեցներս և մասնագետներս, այդ ջահելների պես հոգու պարտքի զգացումով, հայրենասիրությամբ, ինքնական պիտի կատարե՞նք մեր ազգի ու հայրենիքի պահանջը՝ նրա կենսական կարիքների բավարարումը: Պիտի կատարե՞նք մեր պարտքը: Այն էլ ոչ թե կյանքի մեծ ռիսկով՝ այլ նյութականի մի՛մասի միայն փո՛քր ռիսկով՝ այս կործանարար խեղճությունից ազատագրելու համար Հայաստանը, նաև Արցախը և կովկասահայությանը ու նաև ազատելու ամբողջ ազգի կյանքն ու պատիվը այս կորստաբեր ընթացքից:

Եթե մի քիչ մտածենք ու նաև հիշենք, թե ովքեր են եղել մեր նախնիք, վստահաբար կասենք, որ այս հարցադրման ԱՅՈ պատասխանն այլընտրանք չունի, չի՛ կարող ունենալ... որով-

հետև հավատում ենք, որ Աստված մեր մեջ դեռ պահել է մեր նախնյաց սուրբ ազնվությունը, իմաստությունը, գիտակցությունը և հավատքին հավատարմությունը, որ թույլ չտանք մեզ կեղծ պատճառաբանություններով կառչել սնանկ արժեքների և հրաժարվել ճշմարիտ արժեքների համար մեր պարտքի կատարումից...

Իսկ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը, ներկայացված այլընտրանքային հաշվարկ-ծրագրի համաձայն կատարելու համար *(«կոչենք այն 21-րդ դարի հայկական հրաշքը»)*, անհրաժեշտ կառույցների, մեխանիզմների, մեթոդների կազմակերպական կառավարման ու այլ հարցերի լուծումները, համոզված ենք, որ կարող ենք գտնել հայության մասնագիտական ներուժի անկեղծորեն կազմակերպված ազնիվ աշխատանքով, որը թվում է, թե սկսվում է:

ՀԱՅՈՑ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՎԼՖԱՆ ԵՎ ՕՍԵԳԱՆ, ՍԿԻԶԲԸ ԵՎ ՎԵՐՋԸ

Բոլոր կենսագործումները, որոնք հիմք են դնում, հաստատվում են մարդկային հայոց դարավոր կյանքում, սկսվում ու վերջանում են անմահ հոգու հատուցման հավատքով, գաղափարով ու արարքներով:

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումն իրագործելու հայերի դրդապատճառը (մոտիվը) և մասնակցության որակը, աստիճանն ու հարատևությունը պետք է լինեն այդ հավատքով և նրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությամբ (Հայ Ազգային Գաղափարախոսություն) ու բարոյականությամբ (Հայ ազգային բարոյական արժեհամակարգ):

Պատմության ընթացքում, երբ այդպիսի հիմքի վրա է եղել հայի պարտաճանաչությունը՝ մասնակցելու ազգի ու հայրենիքի կենսական խնդիրների լուծմանը, կարիքների բավարարմանը, դա կատարվել է լավագույն ելքով...

Սա բացարձակ ճշմարտություն է նաև այսօր, լինելու է վաղը և ընդմիշտ, որովհետև այն երկնային հոգևոր ակունք ունի:

Հայ գործարարները (ու ոչ միայն նրանք) առաջին հերթին այս գիտակցությամբ պիտի մասնակցեն Հայաստանի, որով և համայն հայության, սոցիալ-տնտեսական զարգացման պայքարին, որպես մարտիկներ՝ սպաներ, զորավարներ...

Եվ երբ հարց առաջանա, թե շահ կունենա՞ն արդյոք, չե՞ն վնասվի, պետք է իրենք իրենց պատասխանեն. երբ ազգիդ, հայրենիքիդ պաշտպանության համար ես կռվում (բնականաբար), մտածում ես հաղթանակի և փառքի մասին, թեև գիտես, որ վերք ստանալը, նույնիսկ զոհվելը չի բացառվում:

Սա կռիվ է համաժողովրդական՝ ազգի, հայրենիքի, պատվի և կյանքի համար, նաև հավիտենական կյանքի, որովհետև Աստվածապատվեր պայքար է...

Բայց խոսքը միայն հայ գործարարին, ձեռներեցին չի ուղղված, այլ ամբողջ հայությանը ու առաջին հերթին պատասխանատու դիրք գրավող հայերին, նրանք մե՛ծ, շա՛տ մեծ պարտականություն ունեն, որն սկսվում է՝

- Հայաստանի պետական իշխանության երեք հատվածներից,
- հայրապետությունից ու
- ազգի մտավորականությունից և քաղաքական, հասարակական կառույցներից:

Այս կառույցներն իրենց առաջին և երկրորդ դեմքերի պատասխանատվությամբ պարտավոր են ապահովել, որ այս համահայկական պարտքի հատուցումը կատարվի *նախ՝ սրբորեն ու նաև՝ կարգապահ ու հարատևորեն*: Եվ իրենք առաջին օրինակը դառնան:

Սուրբ նշանակում է բացարձակ ազնվության դաշտի ապահովում: Դաշտ, որտեղ ոչ մի կոռուսպացում կոչվող մոլախոտ չի կարող աճել, առավել ևս՝ մնալ: Ազգի ու հայրենիքի կյանքի ու պատվի համար համաժողովրդական պայքարի շարքերը պետք է լինեն *անարատ...*

Ամեն մի շեղում կատարած հայը, ինչ պատճառով էլ լինի, պետք է բնորոշվի որպես էնվերի և Թալեաթի ժառանգ, չարի կամակատար, հայ ազգի, հայրենիքի, կյանքի ու պատվի աստվածամերժ թշնամի:

Հայ ազգի ու Հայաստանի վերելքի ասպարեզը պետք է լրացնի հայոց հարազատ ոգին, միտքը և կամքը...

Աստուծո օգնությամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Խմբագրի կողմից 5
- Կազմողի կողմից 10

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

- Հայ-ռուսական պատմական և ժամանակակից հարաբերություններում բազմաբնույթ համագործակցությունը և կողմերի փոխադարձ վստահության ու հավատարմության խնդիրը 14

Տեղեկություններ, վկայություններ հայ-ռուսական հարաբերությունների մասին (տարբեր աղբյուրներից)

- «Ռուսաստանը հայերի և Հայաստանի ճակատագրերում». Ծատուր Աղայան 18
- «Հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամությունը». Ջավեն Գրիգորյան 21
- «Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքը» աշխատության մասին 23
- **«Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքը». Ա. Ե. Տեր-Սարկիսյանց, Վ. Ց. Խուդավերդյան, Է. Ա. Գեյվանդով**
- Հեղինակների կողմից 27
- 1. Պատմաժողովրդագրական ընդհանուր տեղեկանք ... 28
- 2. Հայերը բազմաթեմիկ ֆոնին 42
- 3. Հակահայկական քարոզչությունը՝ որպես Ռուսաստանի հարավում ազգամիջյան հարաբերությունների ապակայունացման միջոց 44
- 4. Տարածաշրջանի հայերի էթնոմշակույթային վիճակը 62
- 5. Մտորումներ, վերլուծություն, կանխատեսումներ 67
- Եզրակացություններ..... 76

• Հղումներ.....	83
• Հատվածներ «Հայկական Սովետական հանրագիտարանից». Հատոր 13, Երևան 1987	84
• Հատվածներ «Սովետական Հայաստան» հանրագիտարանից. Երևան 1987	145
• Հատվածներ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանից. Երևան 2002	156
• Որպես ամփոփում	160

ՀԱՏՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

• Ներածություն	164
ՀԱՅՔ հաստատության թիվ 1, 2, 3 Տեղեկագրերն ամբողջությամբ	
• ՀԱՅՔ հաստատության կոչումը, նպատակն ու գործունեությունը	167
• Նախաբան	169

Տեղեկագիր թիվ 1

• Մեր ազգային կյանքի դրվագներից որոշ հետևությունների մասին	175
• Հայ ազգային, պետական քաղաքական դոկտրինի անհրաժեշտության մասին	180
• Հայ ազգային քաղաքական, տնտեսական իրավիճակ և հարակից խնդիրներ	191

Տեղեկագիր թիվ 2

• Ազգային կենսական խնդիրների լուծման ուղիների մասին	198
• Հայ ազգային իրավիճակը 1990-ական թվականների շեմին. Հրատապ կենսական պահանջ և դրա բավարար-	

ման ուղիները	203
• Հանքանյութերի մատակարարման վիճակը Հայաստանում	214

Տեղեկագիր թիվ 3

• Ազգային պետական իրական և կայուն գերիշխանության հաստատման խնդիրներ	220
• Հայության հոգեբարոյական ու ընկերային երևույթների և հարցերի քննարկման կարևորության մասին	229
• ՀԱՅՔ հաստատության ծրագիր թիվ 1	231
• Ահազանգ զգաստության, վերաճանաչման, վերահաստատման (Հայոց Ազգային գաղափարախոսության տեսակետից)	235

ՀԱՅՔ հաստատության թիվ 16 Տեղեկագրի հոդվածներ

• Հայ կնոջ տոհմիկ կերպարը և ժամանակակից կոչումն ու դերը. ՀԱՅՔ հաստատություն թիվ 10 ծրագիր.....	246
• Բացման խոսք	248
• Հայ կինը` օջախի պահապան	254
• Հայ կնոջ տոհմիկ կերպարը գրականության մեջ	259
• Հայ կինը ազգային-ազատագրական պայքարում	265
• Կինը և հասարակությունը	267
• Ընտանիքի միաբանությունը` ազգային միաբանության նախապայման	271
• Արանց և կանանց միջև դերերի բաշխումը	274
• Եզրափակիչ խոսք	277

Հատվածներ Վարդան Գրիչենցի «Հայացք ներսից և դրսից» գրքից

- Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլ-
ընտրանքային հաշվարկ-ծրագիր (համառոտ տարբերակ) 279
- «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլ-
ընտրանքային հաշվարկ» ծրագրի իրագործման ուրույն
նախապայմաններ. ներածական 286
- «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլ-
ընտրանքային հաշվարկ». ծրագրի իրագործման ուրույն
նախապայմաններ 288
- Նյութականը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար 290
- Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլ-
ընտրանքային հաշվարկի հատկանշական կողմը 294
- Հայոց կենսագործունեների ալֆան և օմեգան, սկիզբը և
վերջը 296

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Կազմող՝ Վարդան Գրիչենց



Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան

Հրատ. պատվեր № 1111

Ստորագրված է տպագրության՝ 14.09.2021թ.:

Չափսը՝ 60 x 84 1/16, 19 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 600 օրինակ:

Գիրքը վաճառքի ենթակա չէ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: